ՀՍԽՀ ՊԵՏՀՐԱՏ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ Арм. ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

891.99
Պ-34

891.99
Պ-34

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ

ՅԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
Հ.Ս.Խ.Հ. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1932

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ

ՅԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ
ԱՏԱՄՆԱԲՈՒՅԺՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ՅԵՐԿՈՒ ՏԻՐՈՋ ԾԱՌԱ ՄԸ
ՊՌՈՒՅԳ. ՇՈՂՈՔՈՐԹՆ
ՁՈՐՍ ՎԱՐԱԳՈՒՅՐՈՎ ԿԱ-
ՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՄԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1932

-6 NOV 2011

18.07.2013
49975

Պատ. խմբագիր [redacted]
Տեխնիք. խմբ. Տ. Խաչվանքյան:
Շապիկը յեվ անվանաթերթերը Տ. Խաչվանքյանի:

БИБЛИОТЕКА
48930 кн
ՀՍՍՌ
8650-53

ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ

Կատակերգություն յերեք արարով

Ա Ն Ձ Ի Ն Ք

ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ, Անուշի երիկն։

ԱՆՈՒՅՇ, Պաղտասարի կինը։

ԿԻՊԱՐ, Անուշի սիրականը։

ՈԳՍԵՆ, փաստաբան։

ՓԱՅԼԱԿ,
ՅԵՐԿԱԹ,
ՍՈՒՐ, } *Դատաստանական խորհրդի անդամք։*

ԹԱԳՈՒՀԻ,
ՄԱՐԹԱ, } *Պաղտասարի դրացիները։*

ՍՈՂՈՄԷ, Պաղտասարի սպասուհին։

Տեսարանն է Պաղտասար աղբարի տունը

ԱՐԱՐՔ ԱՌԱՋԻՆ

(Թատրոնը կը ներկայէ ընդարձակ և ճոխ կարասիներով զարդարուած սրահ մը, աջ և ձախ յերկերկու սենյակ, պարտեզի և փողոցի վրա պատուհաններ, միջին դուռ մը):

Տ Ե Ս Ի Լ Ա.

ԱՆՈՒՅՇ (փողոցին վրա պատուհանին առջեւ նստած բաճկինակ է ձեռին):

ԿԻՊԱՐ, հետո *ՍՈՂՈՄԷ*

ԿԻՊԱՐ—Տիկին, գործելու ժամ է և վոչ լալու, սրբե արտասուքդ և վայրկյան մ'ինձի մտիկ ըրե։

ԱՆՈՒՅՇ—(Աչերը սրբելով) *Կը խոստանաս ուրեմն պաշտպանել զիս։*

ԿԻՊԱՐ — Վատութեյանց ամենեն սոսկալին գործած կ'ըլլայի, յեթե վայրկյան մ'իսկ մտաբերելի լքանել, Թողուլ զքեզ, զոր տասն տարիներե հետե պաշտած եմ և վորուն յերկիր պետք պագնեմ հավիտյանս։ Հանգարտ յեղիր, ամեն վարպետություն պետք բանեցնեմ ի դերև հանելու համար ամուսնույդ բոլոր հնարքներն և պետք ստիպեմ զինքն հուսահատելու և նույնիսկ քեզմե ներումն խնդրելու։

ԱՆՈՒՅՇ — Դյուրավ հուսահատողներեն չէ, մանավանդ թե սովորականեն ավելի համառ ըլլալով՝ բոլոր ճիգը պետք թափե զիս վատահամբավելու համար… Ա՜հ, սիրելիդ իմ Կիպար, ինձ ամենեն ավելի ցավ պատճառողն անբարոյականության հանցանոք ամբաստանված Դատաստանական Խորհրդո[1]) ներկայանալու փափուկ կետն է և…

ԿԻՊԱՐ — Անբարոյականության նշույլն անգամ չեմ նշմարեր յեստաված մի արարքե, վորբոց իրավունքն հափշտակած ես,

այլոց ժառանգությունն կորզած ես, գողություն ըրած ես, մարդ սպաննած ես... բնավ յերբեք, քավ լիցի... այլ պարզապես երիկդ չես սիրեր և անոր տեղ զիս կը սիրես, այս չե՞ բոլոր թերությունդ, յեթե յերբեք կրնա թերություն համարվիլ այսպիսի վարմունք մը։

ԱՆՈՒՅՇ — Այո՛, զքեզ, զքե՛զ միայն սիրած եմ...։

ԿԻՊԱՐ — Յեվ ինչպես կրնայիր սիրել Պաղտասար աղբարի պես տգեղ, տգետ, տձեվ և տմարդի մարդ մը, վորուն հետ ամեն բանի մեջ հակապատկեր մը կը ներկայացնես. տրամաբանության դեմ, հասարակաց կարծյաց դեմ, ճաշակի դեմ, զգացմանց դեմ, բնության դեմ սոսկալի անիրավություն մը գործած կ'ըլլայիր, յեթե ինքզինքդ Պաղտասար աղբարի համար ծնած կարծեյիր... վո՛չ, վո՛չ, տիկին, այդ կապուտակ աչերն, վոր քանի նային կը նվաղին, այլ չեն մարիր յերբեք, չեն ստեղծված ի վայելս և ի պետս Պաղտասար աղբարի պես կոշտ մարդու մը։ Բնությունն ինձ սահմանած ե զքեզ, իսկ դիպվածը Պաղտասար աղբարին տված ե զքեզ... Պաղտասարն հափշտակիչ մ'ե այսոր, ավազակ մ'ե, վոր հափշտակած ե զքեզ, վոր իմս ես... կախաղանի արժանի ե Պաղտասարն, վոր իր զգացմանց համապատասխանող, յուր վիճակին հարմար կին մ'առնելու տեղ, հանդգնած ե հափշտակել զքեզ, վոր բարձր դասու ընկերությանց մեջ գոհարի պես փայլելու կոչված եյիր...։

ԱՆՈՒՅՇ — Ո՛հ... սիրտ առի քիչ մը քու խոսքերուդ վրա, սիրելիդ իմ Կիպար։

ԿԻՊԱՐ — Հանդարտեցուր ուրեմն խղճմտանքդ. դուն անմեղ ես և քու դատդ սուրբ ե. քաջալերվե՛, հրահանգացս համաձայն շարժե՛ ու մի՛ վախնար. այնպիսի խաղեր պիտի խաղամ անոր, վոր զղջա ըրածին վրա։

ԱՆՈՒՅՇ — Այո՛, խայտառակենք զինքն։

ԿԻՊԱՐ — Թող աշխարհիս բոլոր փաստաբաններեն խորհուրդ հարցնե, վոչինչ պիտի կրնա հաստատել, վոչինչ պիտի կրնա ապացուցանել. յուր բոլոր փաստն սա յե, թե իրեն անծանոթ տունե մը ձեր դուրս յելնելն տեսած ե, և այս փաստը շատ անզոր ե կին մ'արձակելու համար... խնդիրը շատ փափուկ ե։

ԱՆՈՒՅՇ — Թեև զքեզ սիրելով ինձի դեմ ապստամբող զգացմանցս միայն հպատակած եմ, թեև ես ալ գիտեմ թե անհնար ե սրտի հոսանաց դիմադրել, թեև համոզված եմ թե անմեղ եմ այս գործին մեջ, բայց դարձյալ կ'ուզեմ, վոր ամեն մարդ կարծե, թե բնավ սիրած չեմ զքեզ և թե միշտ հավատարիմ գտնված եմ ամուսնույս։

ԿԻՊԱՐ — Անշուշտ... պիտի աշխատինք, վոր իբրև զրպարտիչ դատապարտվի։

ԱՆՈՒՅՇ — Իսկ յեթե չհաջողի՞նք...։

ԿԻՊԱՐ — Անպատճառ պիտի հաջողինք, բավական ե, վոր հրահանգացս համաձայն վարվիս։

ԱՆՈՒՅՇ — Կը խոստանամ։

ԿԻՊԱՐ — Ահավասիկ իմ հրահանգներս. նախ...

ԱՆՈՒՅՇ — (Ամուսնույն գալը տեսնելով պատուհանեն) Յերթամ, ահա կուգա։

ԿԻՊԱՐ — Գնա՛, վերջը կը տեսնվինք... կամ Սողոմեյին հետ կը ղրկեմ քեզ հրահանգներս։

ՍՈՂՈՄԵ — Բաժնվեցե՛ք... վազելով կուգա... (Անույշ կը մեկնի) Քիչ մը խրատեյիք ու հորդորեյիք զինքն, վոր շատ չի հուզվի։

ԿԻՊԱՐ — Կամաց կամաց կը վարժվի...

ՍՈՂՈՄԵ — Յերեկ գիշեր տեսնելու եյիք խեղճն... զիմանալու բան չեր... ժամերով լացավ... քունին Պաղտասար աղբարդ ալ խենդ կով դարձած եր... կատղած եր... բան մ'ալ ըլլա՞ր գոնե... փառք աստուծո, ինչ կա բարկանալու, մարդ աստուծո, կերակուրդ պատրաստված չեր, լաթերդ լվացված չեյին.. անկողինդ շտկված չեր... տուն չեկար, շենքով շնորհքով կերակուրդ կեր, գնա տեղդ պառկե.. չե, չե, առաջվնե ի վեր բծախնդիր ե Պաղտասար աղբարն... պզտիկ բանի մը համար շուտ մը կրակ կը կտրի...

ԿԻՊԱՐ — Այս անգամվանը բոլորովին բծախնդրություն ե։

ՏԵՍԻԼ Բ.

ԿԻՊԱՐ յեվ ՊԱՂՏԱՍԱՐ

ՊԱՂՏ. — (Արագաքայլ մտնելով) Ինձի Պաղտիկ կ'ըսեն.. (առ Սողոմե) Դուրս գնա՛, դուն ալ գոցե և թող մի՛ տար, վոր ուրիշ մարդ ներս մտնե, շո՛ւտ ըրե, շո՛ւտ, դուրս գնա, շուտ...

Ներեցէք, պարոն Կիպար, ձեզ կանչել տալուս համար։ Երբ մարդս փորձանքի մը կը հանդիպի, բնականաբար իր ամենէն մօտ բարեկամներուն կը դիմէ, անոնցմէ խելք սորվելու համար։ Սարսափելի փորձանք մ՚ եկաւ գլխուս. յերեկ իրիկունէ ի վեր խելքս կորսուած եմ, ո՛չ ըրածս գիտեմ, ո՛չ ըսածս. ընտանեկան գաղտնիք մ՚ ունիմ քեզ հաղորդելու, քեզ՝ որ միակ բարեկամս ես, քեզ՝ որու անկեղծութեանը կատարելապէս վստահ եմ։

ԿԻՊԱՐ — Շնորհակալ եմ, այդ ձեր ազնուութիւնն է։

ՊԱՂՏ. — Ես ամեն մարդու գաղտնիք չեմ բանար, թէպէտ և դրսէն կոշտ ու ապուշ մէկը կ՚երևամ, բայց առաջ ասուած, թշնամիս ալ կը ճանչնամ, բարեկամս ալ, ինծի Պաղտիկ կ՚ըսեն, գործս գիտեմ յես։

ԿԻՊԱՐ — Այո։

ՊԱՂՏ. — Վստահ եմ, որ ձեզի հաղորդելիք գաղտնիքս ձեր քովը պիտի մնայ։

ԿԻՊԱՐ — Անշուշտ։

ՊԱՂՏ. — Ուստի աւելորդ է աղաչել ձեզի, որ գաղտնիքս ուրիշին չզրուցէք։

ԿԻՊԱՐ — Աւելորդ է։

ՊԱՂՏ. — Գաղտնիքս այս է, թէ կինս սիրական մ՚ունի....։

ԿԻՊԱՐ — (Բարձրաձայն) Կինդ սիրակա՞ն մ՚ունի....։

ՊԱՂՏ. — Մի՛ պոռար, Սողոմէն կ՚իմանայ, և յես չեմ ուզեր, որ ընտանեկան գաղտնիքս իմանայ Սողոմէն, կամաց խօսէ։

ԿԻՊԱՐ — Կինդ սիրեկա՞ն մ՚ունի, ըսիք... մհ... անհաւատալի է այս։

ՊԱՂՏ. — Հաւատալի է, սիրելիս, հաւատալի։

ԿԻՊԱՐ — Ո՞րչափ ատենէ ի վեր ունի այս սիրականը։

ՊԱՂՏ. — Քանի մը շաբաթէ ի վեր, կարծեմ. թող կուտամ որ յերկար ժամանակ սիրական մ՚ունենայ կինս, անմիջապէս կ՚իմանամ յես, դուն աղէկ նայէ ինծի... ի՞նչ, ուրիշ երիկներու պէս ապուշ գիտեյիր զիս, կը կարծեյիր որ անառակին մէկը կինս պիտի սիրէր ու յես պիտի չիմանայի՞, խելքդ սիրեմ...։

ԿԻՊԱՐ. — Ո՞վ է ուրեմն այս անառակը։

ՊԱՂՏ. — Յես ալ կ՚ուզեմ գիտնալ, թէ ո՞վ է այդ անառակն, այդ լիրբն, այդ օձն, որ պատճառ յեղաւ տունս կործանելու։

Ուստի կ՚աղաչեմ քեզի, որ այդ անառակն գտնելու համար օգնես ինծի։ Դուն կրնաս վարպետութեամբ տիկնոջս բերնէն առնել այդ անառակին անունը։ Գնա տիկնոջս քով և սատանայութեամբ հասկցիր սա լիրբին ո՞վ ըլլալը։

ԿԻՊԱՐ — Շատ լաւ։

ՊԱՂՏ. — Թէպէտ և յես մարդ ղրկած եմ այն գէշ ու վստահամբաւ տունն, ուսկից մեր համեստափայլ տիկինն դուրս յելաւ յերեկ...։

ԿԻՊԱՐ — Ի՞նչ կ՚ըսեք...։

ՊԱՂՏ. — Ինծի Պաղտիկ կ՚ըսեն, ըսի քեզի... մարդ ղրկեցի այն տունն, ստուգելու համար, թէ տիկին Անուշին հետ յերեկ ո՞վ կար հոն։

ԿԻՊԱՐ — (Մեկուսի) Խնդիրը բաւական հառաջ գացած է, յեթէ իմ անունս տան՝ գործն ուրիշ կերպարանք պիտի առնու։

ՊԱՂՏ. — Ի՞նչ կը խորհիս։

ԿԻՊԱՐ — Ոչինչ։ (Մեկուսի) Յեթէ անունս տվին..

ՊԱՂՏ. — Շուտ գնա՛ ուրեմն անդին սենյակն ու ջանա՛ հասկնալու այդ անառակին անունն ու մականունը։ Բայց մի՛ ըսեր Տիկնոջ, թէ ուրիշ միջոցներ ձեռք առած եմ յուր սիրականն ճանչնալու համար։ Աճապարէ, գնա՛, սորվէ, յեկուր... սա յերկու լիրբն ալ դատարաններ քաշեմ այսօր, որ հասկնան, թէ ինծի պէս մարդու մը պատիւն արատաւորելը դիւրին չէ։

ԿԻՊԱՐ. — Ի տեսութիւն։ (Մեկուսի) Նախ և առաջ փութանք մեր գործը կարգադրելու։ (Կը մեկնի)։

ՏԵՍԻԼ Գ.

ՊԱՂՏԱՍԱՐ, հետո ՈԳՍԵՆ ու ՍՈՂՈՄԷ

ՊԱՂՏ. — Ի՞նչպէս վազելով կ՚երթայ իմ գործիս համար, մարդ մը, որ ինծի համար հոգին կուտայ. բարի, պարկեշտ, ազնիւ ու վստահելի անձ մը, որու նմանն գտնելը խիստ դըժուար է ժամանակիս մէջ...։

ՍՈՂՈՄԷ — (Դուրսէն) Թող չեմ տար որ մտնես.

ՈԳՍԵՆ — (Դուրսէն) Պիտի մտնեմ։

ՊԱՂՏ. — Ոգսենն է, մտցանք ապա...։

ՍՈՂՈՄԷ — (Դրսեն) Վո՛չ։
ՈԳՍԵՆ — (Դրսեն) Այո՛։ (Դուռը ճռելով կը բանա ու կը մտնե)։ Ի՞նչ խայտառակութիւն է աս, Պաղտասար աղբար։
ՊԱՂՏ. — Ներեցէ՛ք, խելքս գլուխս չէ...։
ՈԳՍԵՆ — Պաղտասար աղբար, ի՛նչ խայտառակութիւն է աս։
ՊԱՂՏ. — Հանցանքն իմս է...։
ՈԳՍԵՆ — Ի՞նչ նախատինք, ի՞նչ անարգանք, ի՞նչ թշնամութիւն է աս, Պաղտասար աղբար, գլխու տուն կը հրաւիրէք և ձեր ալախնուչն կ՚ապսպրէք որ ներս չընդունի զիս։
ՊԱՂՏ. — Մոռցա...։
ՈԳՍԵՆ — Ի՞նչը մոռցար։
ՊԱՂՏ. — Պատուիրել...։
ՈԳՍԵՆ — Ի՞նչ ըսել է պատուիրել։
ՊԱՂՏ. — Որ թող տայ։
ՈԳՍԵՆ — Ի՞նչ կը նշանակէ որ թող տայ. ի՛նչ հարաբերութիւն ունի, որ թող տայ իմ հարցմանս հետ... որ թող տայ չըլլար...։
ՊԱՂՏ. — Ձեզի ներս մտնել։
ՈԳՍԵՆ — Ոչինչ խօսքեր, անպիտան արդարացումներ... խնդիրը ծանր է, փաստաբան մը, իրաւագէտ մը, արդարութեան գործակատար մը բռնաբարուած է, նախատուած է, անարգուած է, պատուօ գոհացում, փոխարինութիւն կը պահանջեմ։ Գիտէ՞ք որ օրէնքը քանի վոսկիօ տուգանաց կը դատապարտէ այսպիսի հանցանաց հեղինակները, և հետևաբար քանի վոսկի դուք պիտի վճարէք և քանի վոսկի ձեր ալախինը...։
ՍՈՂՈՄԷ — Վոտքդ պագնեմ, յես...։
ՈԳՍԵՆ — Վո՛չ։
ՊԱՂՏ. — Մեծապատիւ Տէր, կաղաչեմ, ներեցէ՛ք, խելքս գլուխս չէ...։
ՈԳՍԵՆ — Վո՛չ։
ՍՈՂՈՄԷ — Յես սխալ հասկցեր եմ։
ՊԱՂՏ. — Յես ձեզի համար չըսի որ ներս չառնե։
ՍՈՂՈՄԷ — Ոտաքական մը կարծեցի զձեզ։
ՊԱՂՏ. — Ձեզի դեմ ինչո՞ւ պիտի գոցենք մեր դռները։
ՍՈՂՈՄԷ — Ամեն որ հրամմե, յեկուր։
ՊԱՂՏ. — Վսեմափայլ Տէր, գթա՛ ինձի, տունս կործանած է...։
ՍՈՂՈՄԷ — Մի՛ սրդողիք... յերթամ անուշ մը բերեմ ձեզի։
ՊԱՂՏ. — Խահվե բեր, օղի բեր, գինի բեր, քոնյաք բեր։

ՈԳՍԵՆ — Բան մ՚ալ չեմ ուզեր. այս դեպքը խրատ մ՚ըլլա ձեզ ուրիշ անգամներ զգուշանալու համար աստնկ անվայել ընթացքներե. չեթե իմ տեղս ուրիշ փաստաբան մ՚ըլլար՝ անմիջապես դատ կը բանար ձեզի դեմ, սակայն յես կը ներեմ, վորովհետև խնդրույն մեջ թյուրիմացություն կը տեսնեմ։ (Առ Սողոմե) Դուրս գնա։
ՊԱՂՏ. — Դուրս գնա... հոս չեկուր .. անա կը պատվիրեմ քեզ, տանս դռները միշտ բաց պիտի մնան պարոն Ոգսենի համար, վոր ալատ է տունս գալու առտու կամ իրիկուն, ցորեկ կամ գիշեր։
ՍՈՂՈՄԷ — Պատվիրելու հարկ չկա։
ՊԱՂՏ. — (Մեկուսի) Այս փորձանքն անցուցինք։
ՍՈՂՈՄԷ — (Մեկուսի) Գ՚նանին տակը անցնիք չերկուքնիդ ալ։

ՏԵՍԻԼ Դ.

ՊԱՂՏԱՍԱՐ և ՈԳՍԵՆ

ՈԳՍԵՆ — Դառնանք մեր խնդրույն։ Ի՞նչպես յեղավ, վոր դուք այս կնոջ հետ կարգվեցաք։ Այս մասին տեղեկություններ կ՚ուզեմ առնել, վորպես զի խնդրույն հիմը լավ ըմբռնեմ։
ՊԱՂՏ. — Յեղավ վոր գիշեր մը Թատրոն գնացի բարեկամի մը հետ... վոտքս կոտրեր ու չերթայի... առաջին արարվածին քովլի օթյակին դռները բացվեցան յեվ օրիորդ մը ու պարոն մը մտան հոն... բարով խերով չմտնեյին... օրիորդը տեսնելուս պես հրապուրվեցա և կամաց կամաց հափշտակվեցա անոր դեղեն, շարժվածքեն, ձևերեն, խոսելու և մանավանդ խնդալու յեղանակեն, ուստի բարեկամիս հարցուցի թե կը ճանչնա՞ր այդ աղջիկն... բարով խերով չհարցնեյի... բարեկամս պատասխանեց, թե կը ճանչնար զինքն, թե վորբ մ՚եր, թե հեզ, բարեբարո, խոնարհ, խոհեմ, կրթված, դաստիարակված աղջիկ մ՚եր, թե զայն կնության առնողն մեծ բարիք մը պիտի գործեր, թե աղքատութենե պիտի փրկեր զայն։
Բանի մ՚որ յետքն այցականներուս և քանի մը բարեկամներուս դիմեցի... բարով խերով չդիմեյի... և անոնց կարծիքն իմանալ ուզեցի։ Ամենքն ալ պատասխանեցին թե անդյուտ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС.ПУБЛ.БИБЛИОТЕКА
ՀՍՍՀ Арм.ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

գանձ մը գտեր եյի և թե առանց ժամանակ կորսնցնելու աշխատեյի վայելել այդ գանձը։ Այս տեղեկութեանց վրա անմիջապես խոս-կապ տվի, շաբաթ մ'յետքը նշանտուութիւնն կատարեցի և յերեք որեն ետո հարսնիքը։

ՈԳՍԵՆ — Ասանկ լավագույն հանձնարարութիւններ ունեցող կին մը, ինչպես անբարոյականութեան մեջ կը գլորի ուրեմն։

ՊԱՂՏ. — Ի՞նչ փույթ ինձ, թե ինչպես գլորած է. յես կ'ուզեմ միայն, վոր իմ տանս պատիվն պահեմ, տունես վռնտեմ այդ լիրբ կինն՝ զոր իբրև կողակից չեմ ընդունիր ըսավ և կը պնդեմ նաև, վոր իր արժանի պատիժն կրե։

ՈԳՍԵՆ — Կը խնդրեմ, մի հուզվիք այնքան, խնդիրը փափուկ է, պաղ արյամբ խորհինք և տեսնենք, թե ինչպես են որինաց տրամադրութիւններն այս մասին։

ՊԱՂՏ. — Ազգային Հիվանդանոց [2]) դրկել, շղթայով կապել, անոթի պահել, ամեն գիշեր ծեծել, վոսկրները ջարդուբուրդ ընել և աշխարհես վերցնել ասանկ լիրբ և անպատիվ կիները։

ՈԳՍԵՆ — Զսպավորեցեք ձեր լեզուն։ Առանց որինաց վճիռն ստանալու իրավունք չունիք այդ կնոջ լիրբ և անպատիվ ըսելու. ձեր տիկինն դեռ պարկեշտ ու պատվավոր կին մ'է աշխարհի և որինաց առջև։

ՊԱՂՏ. — Պարկե՞շտ... պատվավո՞ր... կին մը, վոր վաստահամբավ տունե մը դուրս յելած է...։

ՈԳՍԵՆ — Այդ անպատիվ դուռն կոտրելով ու խորտակելո՞վ ներս մտած է թե դուռը բաց գտնելով ներս մտած է։

ՊԱՂՏ. — Ինչո՞ւս պետք, բավական է վոր մտած է հոն։

ՈԳՍԵՆ — Ինձի պետք է այս պարագան, կ'աղաչեմ վոր ըսեք։

ՊԱՂՏ. — Տեր փողորմյա, ինչ գիտնամ յես .. բայց դուռը կոտրելու և խորտակելու հարկ չկա։

ՈԳՍԵՆ — Ապա ուրեմն բաց գտած է դուռն ու ներս մտած է, անա Ներբացուցիչ դեպք հանցանաց մը.. տեսա՞ք ..։

ՊԱՂՏ. — Ի՞նչ կա.. ո՞վ է Ներբացուցիչ դեպք հանցանաց մը...։

ՈԳՍԵՆ — Այսինքն դեպք մը, վոր հանցանքը կը Ներբացնե, կը բարակցնե...։

ՊԱՂՏ. — Վերջը ի՞նչ կ'ընեն այդ բարակ հանցանքը...,

ՈԳՍԵՆ — Բարակ հանցանքին պատիժն ալ բարակ կ'ըլլա։

ՊԱՂՏ. — Չեմ հասկնար բարակ հանցանքեն, հաստ հանցանքեն։

ՈԳՍԵՆ — Փ աստաբանական լեզվով Ներբացուցիչ դեպք հանցանաց կ'ըսվի։

ՊԱՂՏ. — Խելքս չըռնեց։

ՈԳՍԵՆ — Գաղղիերեն՝ սիրքոնդանս աթենյուանդ։

ՊԱՂՏ. — Չեմ կրնար ըմբռնել։

ՈԳՍԵՆ—Իտալերեն՝ չիրքոստանցա ադդենուանդե։

ՊԱՂՏ.—Իտալերեն չեմ գիտեր։

ՈԳՍԵՆ—Ալմաներեն՝ միլտերունկս—կրունտ։

ՊԱՂՏ.—Ուրիշ լեզվով մը հասկցուր։

ՈԳՍԵՆ—Հուներեն՝ ելաֆրինթիքի բերի ստասիս։

ՊԱՂՏ.—Բերխտասիսը գիտեյի քիչ մը, շատ անգամ լսած եմ, բայց չեմ հիշեր թե ինչ ըսել է։

ՈԳՍԵՆ—Անգլիերեն՝ սիրքըմդդանս ադդենուէյընթ։

ՊԱՂՏ.—Հայերեն հասկցուր սա անպիտանը։

ՈԳՍԵՆ—Ներբացուցիչ դեպք հանցանաց, այսինքն հանգամանքներ, պարագաներ, վոր հանցանքը կը մեղմացնեն, կը թեթևցնեն, կը պզտիկցնեն. մեղմացուցիչ պարագաներ կամ լավ ես՝ պատճառներ, զորս հանցավորը կը փնտռե պատիժը թեթևցնելու, պզտիկցնելու համար։

ՊԱՂՏ.—Սանկ չըսե՞ս, հասկցա։

ՈԳՍԵՆ—Թե վոր տիկինն դուռը կոտրելով ներս մտած ըլլար՝ պատիժն ավելի ծանր կըլլար։

ՊԱՂՏ.—Կ'իմանամ։ Բայց վերջապես մտած է այդ անիծյալ տունը մեկը սիրելու համար։

ՈԳՍԵՆ—Մասնավորապես սիրելու դիտմամբ մտած է հոն՝ թե դիպվածով սիրած է։

ՊԱՂՏ.—Ասոնք իմ տանս պատվույն հետ վերաբերութիւն չունին։

ՈԳՍԵՆ—Սիրականն պատանի՞ յե թե չափահաս։

ՊԱՂՏ.—Գրողը տանի, ո՞վ գիտե։

ՈԳՍԵՆ —Գեղեցի՞կ է, թե տգեղ։

ՊԱՂՏ.—Կը խնդրեմ վերջացուր այս հարցումները։

ՈԳՍԵՆ—Բարի՞ նպատակով սիրած է, թե չար։

ՊԱՂՏ.—Ի՞նչպես կրնա կին մը բարի նպատակով խաբել, մատնել յուր երիկն։ Ի՞նչ խայտառակութիւն է սա...յես հիմը կ'անիծեմ այդ Ներբացուցիչ դեպք հանցանացին ալ, հնարողին ալ...իմ կինս, իմ ընկերս, իմ կողակիցս, իմ լծակիցս

ինձմե զատ ուրիշ անձ մը սիրած է, յեղեռն, ոճիր գործած է, կախվելու արժանի չէ…։

ՈԳՍԵՆ—Շատ կ'աճապարեք վճիռ տալու. համբերեցեք վոր օրենքն խուզարկե, հետազոտե, քննե, սերտե և ուսումնասիրե այն պատճառները, վոր ստիպած են կինդ սիրական մ'ունենալու։ Թերևս իրավունքներ ունի ուրիշ մը սիրելու։ Թողեք ուրեմն վոր սերտեմ խնդիրն, վորպես զի չկորսնցնենք դատը։ Դուք կ'ուզեք վոր ձեր վկայության վրա անմիջապես պատժվի ձեր տիկինը։ Կարելի չէ այդ։ Շատեր ձեզի պես իրենք զիրենք անմեղ կարծելով, դատ վարած են իրենց կնոջ դեմ և ինքյանք հանցավոր և պարտավոր յելած են դատարանեն։

ՊԱՂՏ.—Ըստ ձեզ անմե՞ղ է ուրեմն կինս։

ՈԳՍԵՆ—Ըստ իս այժմ ամեն ինչ մթության մեջ է. չեմ ըսեր թե կինդ անմեղ է, ի վերա այսր ամենայնի չեմ ալ ըսեր թե մեղավոր է. վոչ կրնամ արդարացնել կամ դատապարտել կնոջդ սիրականը, վոչ ալ կրնամ համարձակիլ վճռելու թե հանցավորն դուք եք։

ՊԱՂՏ.—Հավանականություն կա՞ վոր յես ալ հանցավոր ըլլամ այս խնդրույն մեջ։

ՈԳՍԵՆ—Ամեն բան հավանական է։

ՊԱՂՏ.—Ըսել է թե այդ կինն կարելի չէ այսօր Փրկիչ[3]) գնել։

ՈԳՍԵՆ—Անհնար է։ Նրբացուցիչ դեղք հանցանաց այնչափ հառաջ գնացած է, վոր յեթե կինդ բարի նպատակով մը սիրած է ուրիշ մը, այսինքն՝ ի նպաստ ազգային հառաջադիմության և լուսավորության, կամ հօգուտ վորբեր, հաշմանդամներ, ծերեր, անկարներ, աղքատներ ու տնանկներ պատսպարելու գովելի և ազգօգուտ ձեռնարկի մը, կինդ կ'ըսեմ, լրագրաց մեջ կ'անցնի, գովեստներ, դափնյա պսակներ կ'ընդունի, վորովհետև մասնավորին շահն ընդհանուրի շահուն զոհելու դյուցազնությունն ունեցած է, և այս պարագային մեջ…

ՊԱՂՏ.—Յե՞ս եմ ուրեմն հանցավորն։

ՈԳՍԵՆ—Իսկ ընդհակառակն՝ յեթե սիրեր տգեղ կամ ծեր հակակիր անձ մը՝ բնականաբար կը ծանրացներ հանցանքը. թողունք օրենքն, հասարակաց կարծիքն կը դատապարտեր

զինքն, ըսելով. «Գոնե սիրածն գեղեցիկ յերիտասարդ կամ համակիր մե՞կն ըլլար»։

ՊԱՂՏ.—Վաղը կրնա՞նք Փրկիչ գնել։

ՈԳՍԵՆ—Անկարելի չէ։ Իսկ յեթե դուք ձեր կնոջն անհավատարիմ գտնվելով, կամ նախանձելով, կամ հետն խստությամբ վարվելով պատճառ տված եք իրեն սիրական մ'ունենալու, այն պարագային մեջ մեծ պատասխանատվություն կը հրավիրեք ձեր վրա։

ՊԱՂՏ.—Խենթի պես կը սիրեյի զինքն. ուրիշ կնկան յերեսն անգամ նայած չունիմ։

ՈԳՍԵՆ—Վստահ յեղեք ուրեմն։ Ժամանակս սուղ է, հարկ է վոր յերթամ։ Պիտի աշխատիմ իրավաբանական և փաստաբանական բոլոր կարողությամբս այդ դատին մեջ ձեզ անմեղ հանդիսացնելու և ձեր կինն հանցավոր շինելու։

ՊԱՂՏ.—Նրբացուցիչ դեղը հանցանացին շատ կարևորություն մի տար։

ՈԳՍԵՆ—Իմ պարտքս պիտի ըլլա զորավոր և հաստ փաստերով ջախջախել նրբացուցիչ դեղքերը։

ՊԱՂՏ.—Շնորհակալ եմ։

ՈԳՍԵՆ—Ի տեսություն։ (Կ'երթա)։

ՏԵՍԻԼ Ե.

ՊԱՂՏԱՍԱՐ

ՊԱՂՏ.—Յերթաս բարով, Նրբացուցիչ փաստաբան… քիչ մնաց վոր հանցավոր ըներ զիս մեր մեծապատիվ իրավագետը։ Յեթե թույլ բերան ու ապուշ մարդ մ' ըլլայի՝ տարակույս չկար, վոր հանցանքն վրաս ծանրացնել պիտի ուզեր և բուն հանցավորին արդարացնել պիտի աշխատեր։ Անառակ կինն մաքուր ազամնի պիտի դառնար, վորովհետև Նրբացուցիչ դեղք հանցանաց ունի յեղեր, վորովհետև այս Նրբացուցիչն գաղղիերեն, իտալերեն, հունարեն, ալմաներեն ու անգղիերենն ալ ունի յեղեր, վորովհետև սիրելու դիտավորությամբ սիրած չէ յեղեր, այլ դիպվածով սիրած է յեղեր, վորովհետև սիրածը ծեր ու տգեղ չէ յեղեր, վորովհետև չար նպատակով սիրած չէ յեղեր, այլ բարի նպատակով սիրած

է եղեր, բարեգործություն մը ընելու համար սիրած է ըլլեր, վորովհետև... ինչ գիտնամ, այս վորովհետևաններուն վերջը չգար կոր, և բոլոր այս վորովհետևանները այդ լիրբին, այդ անհավատարիմ կնոջ, այդ դժոխային էակին անմեղությունը կ'ապացուցանեն չեղեր։ Ինչքեր պտուկը սիրեմ, տեր փաստաբան, մենք ալ կը հասկնանք քիչ մը փաստաբանութենե,—մենք ալ քեզի չափ Ջեն Հոգեր[1]) խառնած ենք ժամանակին. անանկ նրբացուցիչ բաներ կլլողներեն չենք։ Վողորմած հոգի հայրս ալ անանկ էր, շատերը կ'երթային իրմե խելք սորվելու, մեծ հայրս ալ խելացի չէր, մենք ցեղով անանկ ենք, բնականեն փաստաբան ենք և անմիջապես կը հասկնանք թե վորու քովն է իրավունքը...

ՏԵՍԻԼ Զ.

ՊԱՂՏԱՍԱՐ և ԱՆՈՒՅՇ

ԱՆՈՒՅՇ—Ալ չեմ կրնար հանդուրժել անարգանացդ...։
ՊԱՂՏ.—Տակավին երես ունի՞ս դիմացս ելլելու։
ԱՆՈՒՅՇ—Յեվ կուզեմ վոր հիմա անմիջապես բաժնվինք։
ՊԱՂՏ.—Յեթե քիչ մը խիղճ ու ամոթ ունենայիր՝ պիտի յերթայիր սենյակիդ մեջ մազերդ փետտելու և...
ԱՆՈՒՅՇ—Ինչո՞ւ մազերս փետտեմ չեղեր... մանավանդ թե մազերուս անուշահոտ յուղեր պիտի քսեմ ապերախտ մարդու մը ձեռքեն փրկվելուս համար։ Ափսոս, բյուր ափսոս քեզի բարձր դասու ընկերությանց մեջ մտցնելուս համար. կարգված ժամանակդ շենքով շնորհքով բարև մը տալ չեյիր գիտեր. ավաղ այն ջանից, զոր ըրի վրադ գլուխդ շտկելու, մարդու պես հագվեցնելու համար, ավաղ այն հոգերուն, զոր բարձի քեզի պարել սորվեցնելու համար. կարգված տարիդ շիտկե-շիտակ քալել անգամ չեյիր գիտեր. ափսոս, ափսոս իմ զոհողությանցս... հետս կարգվելեդ ի վեր է, վոր քիչ մը մարդ ճանչցար. առաջ լայն վարտիքովդ ու յերկար վերարկուովդ խոհարար կը նմանեյիր, այնպես վոր ամենքը Պաղտասար աղբար կը կանչեյին քեզի, և այսօր, վոր քիչ մը մարդու կարգ անցար, յես անտառակ յեղա, անպատիվ յեղա, այնպես չէ՞...։

ՊԱՂՏ.—Մեր ցեղը քիչ մը ապերախտ է...
ԱՆՈՒՅՇ—Ինձի պես կնիկ մը քեզի համար շատ էր ու ծանր, գիտեյի վոր չպիտի կրնայիր տանել զիս, վորովհետև դարուս լուսավորության վոգին ըմբռնած չեյիր, վորովհետև կինն իբրև ստրուկ կը նկատեյիր, այս ամենը գիտեյի, բայց կը համբերեյի, անիծելով միայն այն օրն, ուր խոսք տվի քեզի հետ ամուսնանալու։
ՊԱՂՏ.—Բարով խերով չտայիր...։
ԱՆՈՒՅՇ—Դրացիներս կը ջանային համոզել զիս, վոր չկարգվիմ հետդ. այն փառքի կարգին հետ ինչպես պիտի ապրիս, կըսեյին, իսկ յես կը պատասխանեյի իրենց, թե նշանածս աղեկ մարդ էր։
ՊԱՂՏ.—Բարով խերով չըլլայի...։
ԱՆՈՒՅՇ—Ամուսնանալես վերջը քանինե՜ր ըսին ինձ, թե այդ ավանակին հետ ինչպես ժամանակ կ'անցունես. և յես պաշտպանեցի այն ատեն քեզի, պատասխանելով անոնց, թե ամուսինս խելացի մարդ է։
ՊԱՂՏ.—Այդ քանիներն են ավանակները... և դու չես խղճիր ասանկ խայտառակ խոսքեր ընելու...։
ԱՆՈՒՅՇ—Բնավ չեմ մոռնար, օր մը քու բարեկամներեդ մին ըսավ թե «Սիրտդ չկոտրի, Պաղտասարն աղեկ մարդ է, բայց կոշտ է, հետը խոսք չըլլար ընավ»։ Այս խոսքին վրա տուն դարձեր եմ և յերկու ժամ նստեր, լացեր եմ։ Վոմանք ալ, չգիտնալով վոր կինդ եմ—վորովհետև չկա մեկն վոր զքեզ վայլեցնե ինձի—զքեզ կը բամբասեյին և անանկ ծիծաղաշարժ գործերդ կը պատմեյին, վոր, լսելով, կամչնայի հայտնել թե կինդ եմ։ Ի՞նչ կ'ընեյի, սիրտս կը դնեյի, կուլայի և քեզի բան մը չեյի ըսեր. միշտ կը ջանայի սակայն, վոր մարդ ըլլաս և ընկերությանց մեջ մտնես ելնես, և այս բոլոր ջանքերս րոպեյի մը մեջ մոռցվեցան։ Աղեկ, աղեկ։
ՊԱՂՏ.—Յեվ այս ամենը կընեյիր ուրի՞շ մը սիրելու համար։
ԱՆՈՒՅՇ—Զո՞վ սիրած ունիմ։
ՊԱՂՏ.—Դուն ինձմե աղեկ գիտես։
ԱՆՈՒՅՇ—Նախանձը խանգարած է քու դատողությունդ և հաճեր ես յերևակայել, վոր անպատիվ անձ մը դուրս յելած ըլլամ։

ՊԱՂՏ.—Աչքերովս տեսայ։

ԱՆՈՒՅՇ—Այնուհետև փաստաբաններու դիմեր ես զիս արձակելու միջոցներուն վրա խորհրդակցելու, զիս աշխարհի աչքին ծաղր ու ծանակ ընելու յեվ վորպես թե բանաբարկայ պատիվդ պաշտպանելու համար։

ՊԱՂՏ.—Այս ամեն միջոցները պիտի դիմեմ, վորպեսզի ժամ առաջ բաժնվինք իրարմե։

ԱՆՈՒՅՇ—Վորոշած եմ արդեն չընդունիլ զքեզ իբրև ամուսին, խոպառ բաժնվիլ քեզմե և ընալ անունդ բերանս չառնել։

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՒՅՆՔ և ԿԻՊԱՐ

ԿԻՊԱՐ—Բարեբախտ պիտի համարեի ինքզինքս յեթե կարենայի ձեր խնդրույն միջամտել, հաջողեի հաշտություն գոյացնել...։

ՊԱՂՏ.—Անկարելի յե։

ԱՆՈՒՅՇ—Անհնար է։

ԿԻՊԱՐ—Յեվ ձախող բաժանման մ'առաջքն առնել։

ԱՆՈՒՅՇ—Իրեն համար ատելութենե ուրիշ զգացում չունիմ։

ՊԱՂՏ.—Սատանե մ'ավելի զզվելի յե ինձ։

ԿԻՊԱՐ—Մտիկ ըրեք, խնդրեմ...։

ԱՆՈՒՅՇ—Այդ առաջարկությունն մի ըներ, կաղաչեմ։

ՊԱՂՏ.—Այս գործին մեջ մի մտներ։

ԿԻՊԱՐ—Ամուսնության մեջ սանկ պարագաներ կրնան պատահիլ. խոհեմությունը կը պահանջե վոր...։

ՊԱՂՏ։—Հանցավորը պատժվի։

ԱՆՈՒՅՇ—Այո, յես ալ կը պահանջեմ, վոր հանցավորն պատժվի և հասկնա թե կինն ստրուկ չե։ Յենթադրենք վայրկյան մը թե սիրական մ'ունիմ խոսք և դնենք թե սիրական մ'ունենալս հայտնվեցավ, ինչ ընթացք բռնելու պարտավոր եր... ամեն բան տակնուվրա՞ ընել, փաստաբաններո՞ւ դիմել, պոռա՞լ, կանչե՞լ...։

ՊԱՂՏ.—Այո, այո։

ԿԻՊԱՐ—Պարտավոր եյիր նախ կինդ կանչել...։

ԱՆՈՒՅՇ — Պաղարյամբ խոսիլ...

ԿԻՊԱՐ — Գործն իրմե ստուգել...

ԱՆՈՒՅՇ — Առանց բարկանալու...

ԿԻՊԱՐ — Յեվ յեթե խոսք սիրական մ'ունի...

ԱՆՈՒՅՇ — Ներել ու խրատել...

ԿԻՊԱՐ — Վոր ուրիշ անգամ...

ԱՆՈՒՅՇ — Սանկ պակասության մեջ չգտնվի...

ԿԻՊԱՐ — Յեվ յեթե յերկրորդ անգամ գտնվի...

ԱՆՈՒՅՇ — Յերկրորդ անգամ ներել..

ԿԻՊԱՐ — Խրատել, հորդորել...

ԱՆՈՒՅՇ — Յեվ ըսել թե աղեկ բան չե...

ԿԻՊԱՐ — Սիրական մ'ունենալը...

ԱՆՈՒՅՇ — Ուրիշ սիրականներ ալ ունենալու կ'առաջնորդե...

ԿԻՊԱՐ — Յեվ թե շատ սիրականներ ունենալն...

ԱՆՈՒՅՇ — Հաճո չթվիր ամուսիններուն...

ԿԻՊԱՐ — Վերջապես շարունակ բարոյախոսելով...

ԱՆՈՒՅՇ — Հորդորելով...

ԿԻՊԱՐ — Համոզելով...

ԱՆՈՒՅՇ — Խրատելով...

ԿԻՊԱՐ — Զախելով...

ԱՆՈՒՅՇ — Շոյելով...

ԿԻՊԱՐ — Սպառնալով...

ԱՆՈՒՅՇ — Ներելով...

ԿԻՊԱՐ — Տան պատիվը պահելու յե...

ԱՆՈՒՅՇ — Յեվ տան պատիվը ալ սանկ կը պահվի...

ԿԻՊԱՐ — Բոլոր աշխարհին ըրածն այս է...

ԱՆՈՒՅՇ — Մեր հորեն ու մորեն տեսածն ալ այս է...

ԿԻՊԱՐ — Յեվ վոչ թե...

ԱՆՈՒՅՇ — Կրակ կտրիլ...

ԿԻՊԱՐ — Փաստաբաններու դիմել...

ԱՆՈՒՅՇ — Խորհուրդ հարցնել...

ԿԻՊԱՐ — Բաժանում պահանջել...

ԱՆՈՒՅՇ — Դատարաններու մեջ խայտառակվիլ...

ԿԻՊԱՐ — Ամենուն բերանն իյնալ...

ԱՆՈՒՅՇ — Մատի վրա փաթթվիլ...

ԿԻՊԱՐ — Բարեկամաց յերեսեն իյնալ...

ԱՆՈՒՅՇ — Տանը գռները գոցել...

ԿԻՊԱՐ — Ընտանիք մը կործանել...

ԱՆՈՒՅՇ — Վերջին զղջալ...

ԿԻՊԱՐ — Ներկա կուզեմ ըսել... (Անույշ յեվ Կիպար խոսքերն այնքան շուտ կառնեն իրարու բերնեն, վոր Պաղտասար յերկուքին մեջտեղ կեցած միջոց չգտներ խոսելու):

ԱՆՈՒՅՇ — Զկրնալ առնել...

ԿԻՊԱՐ — Լալ...

ԱՆՈՒՅՇ — Վողբալ...

ԿԻՊԱՐ — Արտասվել...

ԱՆՈՒՅՇ — Հառաչել...

ԿԻՊԱՐ — Աշխարել...

ԱՆՈՒՅՇ — Կոծել .

ԿԻՊԱՐ — Վ՞ր մեկն ըսեմ...

ԱՆՈՒՅՇ — Վ՞ր մեկն համրեմ...

ԿԻՊԱՐ — Կսկիծ ու ցավ զգալ...

ԱՆՈՒՅՇ — Վիշտերով բեռնավորվիլ...

ԿԻՊԱՐ — Խորհիլ, մտմտալ...

ԱՆՈՒՅՇ — Մտատանջությամբ ժամանակ անցունել...

ԿԻՊԱՐ — Անորժակե զրկվիլ...

ԱՆՈՒՅՇ — Զկրնալ քնանալ...

ԿԻՊԱՐ — Հալալ...

ԱՆՈՒՅՇ — Տքալ...

ԿԻՊԱՐ — Յեվ վերջապես..

ԱՆՈՒՅՇ — Մեռնիլ...

ԿԻՊԱՐ — Այս չ՞ ըլլալիքը...

ԱՆՈՒՅՇ — Պարապ տեղ բերանս կը հոգնեցնեմ... այս մարդը չի համոզվիր:

ՊԱՂՏ. — Յես ներող երիկներեն չեմ:

ԿԻՊԱՐ — (Պաղտասարին ականջին ի վար) Բերնեն բան մը չկրցի առնել

ԱՆՈՒՅՇ — Կ'աղաչեմ, մի ստիպեր զինքն վոր հաշտվի, վասն զի յես ուխտած եմ ընավ չսիրել զինքն:

ՊԱՂՏ. — (Ցած առ Կիպար) Միշտ աշխատե սա սիրականին անունն սորվելու: (Բարձր) Հաշտությունն անկարելի յէ. պարապ խոսքեր մտիկ ընելու ժամանակ չունիմ. յերթամ փաստաբանս գտնելու և խնդիրը Դատաստանական Խորհրդո ատյանը հանելու: (Կը մեկնի):

ՏԵՍԻԼ Ը.

ԿԻՊԱՐ և ԱՆՈՒՅՇ

ԿԻՊԱՐ — Հաստատապես վորոշած է գլխուն մեջ դրածը կատարել. ապուշը կը կարծե թե Դատաստանական խորհրդո դիմելով ուզածը ընել պիտի տա. վերջը պիտի զղջա, բայց ինչ օգուտ, զմեզ պիտի հոգնեցնե քիչ մը: Վնաս չունի, բավական է, վոր մենք համաձայնությամբ գործենք և իրարմե չբաժնվինք: Տարակույս չկա վոր բարեր պիտի կորե ինձմե յերբ սորվի թե նույն որն մեկտեղ եկինք Պալծառին տունը, թող կորե, անիծ մ'ալ տված պիտի լինի ինձ քեզի հետ ավելի սերտ կապով կապվելու:

ԱՆՈՒՅՇ — Փաստաբանն չենք կրնար մեր կողմը շահել...

ԿԻՊԱՐ — Փաստաբաններու մեծ մասն արդարությունն և իրավունքը հոն կըգտնեն, ուր շատ վոսկի կ'ունենան, սակայն չեմ կարծեր, վոր Ոգսենն այս մասին վերաբերի: Յեթե հաջողիմ իրեն հետ համաձայնություն մը գոյացնել, աղեկ. յեթե վոչ՝ դատին պաշտպանությունն յես պիտի ստանձնեմ ու պիտի շարունակեմ խաղալ մեր խաղերը: Դուք այժմ վստահ ըլլալու յեք, վոր հաստատակաց կարծիքը մեզի նպաստավոր պիտի ըլլա:

ԱՆՈՒՅՇ — Մեծապես շնորհակալ եմ, սիրելիս, վոր կը խոստանաս քաջությամբ պաշտպանել զիս և այս զոհողությունդ կը կրկնապատկե սերն, զոր ունիմ քեզի համար...:

ՏԵՍԻԼ Թ.

ՆՈՒՅՆՔ և ՈԳՍԵՆ

ՈԳՍԵՆ — Շատ հանդգնություն ցույց կ'ուտաք, տիկին, ձեր անդորրության խանգարման պատճառ ըլլալով անձն ձեր քովը պահելով նույնիսկ այն վայրկյանին, ուր անհավատարմության հանցանքով ամբաստանված դատարան ներկայանալու կոչնագիր պիտի ընդունիք: Փոխանակ արդարանալու միջոցներ փնտրելու, ձեր գործած վոճիրն հաստատելու ապացույցներ կը վորոնեք: Մեծ հանդգնություն. .

ԿԻՊԱՐ — Արդարանալու պէտք չունի, որովհետեւ հանցանք չունի…

ՈԳՍԷՆ — Յետ դուք ընտանիք մը փճացնելու աշխատելէն ու հաջողելէն յետքը տակաւին կը համարձակի՞ք ձեր լրբութիւնն աւելի առաջ տանելու։

ԿԻՊԱՐ — Շատ առաջ կ'երթաք։

ՈԳՍԷՆ — Ընդհակառակն, չեմ կրնար. դուք իրմէ շատ աւելի հանցաւոր էք, որովհետեւ դուք գայթակղեցուցեր էք զինքն, հետեւաբար իրմէ շատ աւելի ծանր պատժի պիտի դատապարտուիք։

ԿԻՊԱՐ — (խնդալով) Կը խնդրեմ, գթացէք քիչ մը, Տէր փաստաբան…

ՈԳՍԷՆ — Կը ծաղրես… դու միայն պիտի պատժուիս եւ պիտի աշխատիմ, որ ուրիշն ընաւ հանցանք չունենայ. այնպիսի դարձուածք մը պիտի տամ դատաւարութեան, որ բոլոր հանցանքը քու վրադ ծանրանայ եւ տասը տարի բանտարկութեան դատապարտուիս։

ԿԻՊԱՐ — Մեղք եմ, (խնդալով) չորս տարուան դատապարտել տուէք…

ՈԳՍԷՆ — Դուրս հրամմէ եւ մինակ թող զիս պաշտպանեալիս կնոջը հետ։

ԿԻՊԱՐ — Ո՛չ։

ՈԳՍԷՆ — Պաշտպանեալիս կինն իմ կինս ըսել է, դուրս ելիր։

ԿԻՊԱՐ — Իմ հոգիս է այն… կը նախանձիմ։

ՈԳՍԷՆ — Ձեր խոստովանութեան հարկ չկայ, արդէն ապացուցուած եւ հաստատուած է այն. դուրս ելիր եւ մի ստիպեր զիս խիստ միջոցներու դիմել։

ԿԻՊԱՐ — Ո՛չ։

ԱՆՈՒՅՇ — Կը խնդրեմ, մի կռուիք ինձի համար։

ՈԳՍԷՆ — Հարկ անհրաժեշտ է որ դուրս ելնես անպատճառ, փաստաբանական պարտքս կը պահանջէ, որ քիչ մ'առանձին մնամ ձեզի հետ։

ԿԻՊԱՐ — Իմ պատիւս ալ կը պահանջէ, որ ընաւ առանձին չմնաք անոր հետ։

ՈԳՍԷՆ — Ի՞նչ կը նշանակէ այս ընդդիմութիւնը։

ՏԵՍԻԼ Ժ.

ՆՈՒՅՆՔ ԵՒ ՊԱՂՏԱՍԱՐ

ՊԱՂՏ. — Ի՞նչ է… ի՞նչ կայ…

ՈԳՍԷՆ — Այո, առանձին տեսակցութիւն մ'անհրաժեշտ պէտք է։

ԿԻՊԱՐ — Առանձին տեսակցութիւն մը ընաւ հարկաւոր չէ։

ՊԱՂՏ. — (Առ Կիպար) Անիկա փաստաբան է, խիստ մի խօսիր հետը։

ԿԻՊԱՐ — (Հրելով Պաղտասարը) Դուն մի խառնուիր, խնդիրը ուրիշ կերպարանք առած է։

ՈԳՍԷՆ — Փոխանորդիս կինն է, ինչու թոյլ չես տար, որ հետը խօսիմ յիրկու վայրկեան։

ՊԱՂՏ. — (Առ Ոգսէն) Ան ալ բարեկամ է, մի վշտացներ…

ՈԳՍԷՆ — (Հրելով Պաղտասարը) Խնդիրը քեզմէ ելած է, դուն մի խառնուիր մեր գործին։ (Առ Կիպար) Դուրս պիտի ելնէք, ըլլայ թէ ոչ…

ՊԱՂՏ. — (Առ Կիպար) Քիչ մը դուրս ելիր, նայինք, ինչ պիտի ընէ…։

ԿԻՊԱՐ — (Հրելով Պաղտասարը) Դուրս պիտի չելնեմ ընաւ եւ կը հրամայեմ որ դուն ելնես դուրս…։

ՈԳՍԷՆ — Հիմա իմաց կ'ուտամ ու որ անկ է։

ԿԻՊԱՐ — Յերթաս բարով։

(Պաղտասար մեյմը Կիպարին յետ մեյ մը Ոգսէնին կ'երթայ յետ խոսիլ կուզէ մեջերնին համաձայնութիւն գոյացնելու համար, յետ յերկուքէն ալ հրվելով կը մերժվի սոյն տեսիլին մինչեւ վերջը)

ՈԳՍԷՆ — Ի պարտ ու պատշաճ անօրէնութիւն։

ԿԻՊԱՐ — Կանակդ տեսնեմ։

ՈԳՍԷՆ — Հետեւաբար եւ բնականաբար, հետեւանքն չկրնար նպաստաւոր ըլլալ քեզի համար։

ԿԻՊԱՐ — Բարեկամիս կինն առանձին ձգելու չեմ յեղեր մեծապատիւ փաստաբանին հետ։

ՈԳՍԷՆ — Իմ նպատակս բարի չէ. (Առ Պաղտասար, որ ուժով կը քաշեր թեւէն) Գնա սրկէ, աստուածդ սիրես, դուն ինչ քիթըդ կը խոթես այս խնդրոյն մէջ, թող տուր որ խօսիմ։

ԿԻՊԱՐ — Թող տուր որ փաստաբանն, փաստաբանական պարտքը կը պահանջէ յեղեր, որ առանձին տեսակցութիւն մ'ը

ունենա յեղեր պաշտպանելու կնոջ հետ։ (Առ Պաղտասար. վեր ձեռքով Կիպարին բերանը գոցել կուզեր) Դուն ի՞նչ կը խառնուիս մեր գործին, քեզի ի՞նչ, մենք կը կռուինք, կը հաշտուինք... քեզի բան մ'ըսող կա՞յ. գնա հանգիստ նայէ։

ՊԱՂՏ. — Թող չեն տար վոր խոսիմ... հիմա պիտի ճաթիմ...

ՈԳՍԵՆ — (Առ Պաղտասար) Դուն ինծի չհանձնեցի՞ր...։

ՊԱՂՏ. — Այո։

ՈԳՍԵՆ — Կի՞նդ։

ՊԱՂՏ. — Այո։

ՈԳՍԵՆ — Բանդ գնա ուրեմն և մի խառնուիր փոխանորդիդ գործերուն։

ՊԱՂՏ. — Բայց... (Անույշ յեվ Կիպար կը մեկնին)։

ՈԳՍԵՆ — Շատ լավ, բայց գիտցիր վոր չարաչար պիտի պատժուիս, պ. Կիպար. (Դռնեն պոռալով) տասներկու տարի բանտարկություն պիտի քաշես և հետո... հետո... ան ալ վերջը կը խորհինք։

Տ Ե Ս Ի Լ Ժ Ա.

ՊԱՂՏԱՍԱՐ և ՈԳՍԵՆ

ՊԱՂՏ. — Վազելով, հեւալով յեկա լսելու համար կարեւոր հայտնություններն, զոր ունիք յեղեր ինծի ընելու. կուլին գլուխ չվերուցիք վոր...։

ՈԳՍԵՆ — Անպիտան քեզի, կեցիր դուն, կ'սորվեցնեմ քեզի փաստաբանի մը հետ վարվելու յեղանակը։

ՊԱՂՏ. — Սա կարեւոր հայտնություններն...։

ՈԳՍԵՆ — Անզգամ քեզի, ինծի հետ առանձին չե՞ս ձգեր Անուշը... մի ձգեր, վերջը կը տեսնես։

ՊԱՂՏ. — Պիտի ըսե՞ք սա կարեւոր հայտնություններն...

ՈԳՍԵՆ — (Դեպի դուռը դառնալով) Լիրբ, յես պատվավոր մարդ եմ, քեզի հետ խոսելու իսկ չեմ զիջանիր... (Մեկեն ի մեկ դուռը վազելով յեվ պոռալով) Սրիկա, ո՞վ կարծեցիր դուն ինծի, վոր թող չտվիր քիչ մը տեսակցիլ տիկին Անուշի հետ, քեզի պես անպատի՞վ կարծեցիր, քեզի պես, վոր մտերիմ բարեկամիդ կնոջը հետ գաղտնի հարաբերություններ կը հաստատես, խեղճ կինը կը դայթակղեցնես, կը մոլորեցնես,

հետը ուրիշին տունը կ'երթաս և ժամերով կը խմես, կ'երգես կը պարես. ինքզինքդ գիտցար գի՞ս, լիրբ թշվառական, վատ։

ՊԱՂՏ — Բարկությունը չանցավ վոր սա կարեւոր հայտնություններն իմանայինք։

ՈԳՍԵՆ — Ոձի պես կը սողսկիք ամեն տուներու մեջ և վոր տնեն վոր յելնեք, այն տան պատիվն ու խաղաղությունն ալ ձեզի հետ մեկտեղ կ'ելնեն, խաբեբաներ, դավաճաններ...։

ՊԱՂՏ. — Կ'աղաչեմ, հերիք է ալ... սա կարեւոր հայտնություններն...։

ՈԳՍԵՆ — Յեթե իշխանություն ունենայի շղթաներու տակ կ'վոչնչացնեի ձեզի պես յերիտասարդները։ Ի՞նչ պատիվ կրնա ունենալ քեզի պես արարած մը, վոր տասը տարի յե ի վեր մտերիմ բարեկամիդ՝ Պաղտասարին կինը կը սիրես, տասը տարի յե ի վեր։

ՊԱՂՏ. — Պաղտասարի՞ն... ի՞նչ կը լսեմ .. տասը տարի յե ի վեր...

ՈԳՍԵՆ — Ապուշին մեկը գտեր ես և ուզածիդ պես խաղացեր ես, նենգավոր։

ՊԱՂՏ. — Ուրիշ Պաղտասար է .. մեկեն ի մեկ կա՞րծեցի թե յես եմ ու...։

ՈԳՍԵՆ — Յեթե յես ըլլայի Պաղտասար աղբարին տեղ, քեզ բղիկ բղիկ կընեյի...

ՊԱՂՏ. — Պաղտասար աղբա՞ր ըսավ... չեմ հասկնար ..

ՈԳՍԵՆ — Ինքնիրմե անցած ու ցնդած մարդ մը խաբելը դժվար չե. յեկուր գիս խաբե. թշվառական, չվառական։

ՊԱՂՏ. — Սա Պաղտասար աղբարն ո՞վ է արդյոք... ինչ ավանակ մարդ է յեղեր .։

ՈԳՍԵՆ — Յեվ սակայն որինաց ամենեն խիստ տրամադրությանց համաձայն դատապարտել պիտի տամ քեզ իբրև վոճրագործ և պիտի ջանամ փրկել տիկին Անուշը...

ՊԱՂՏ. — (Պոռալով) Հերիք, պարոն փաստաբան, հերիք, մոտ յեկուր վոր գիտար հասկնանք... սա կարեւոր հայտնություններն զրուցե ինծի։

ՈԳՍԵՆ — Հայտնություններ ինծմե՞ ընելու... ամեն բան հայտնվեցավ արդեն, կնկանդ սիրականը Կիպարն է..

ՊԱՂՏ. — Կիպա՞ր ըսիր։

ՈԳՍԵՆ — Այո, Կիպար։ Սակայն հանդարտե, անոր քթեն բերնեն

պիտի հանեմ բոլոր ըրածները։ Արդեն շատոնց ի վեր քենով եյի հետը և բնավ չեյի ախորժեր բռնած ընթացքեն. ասիկը ներկայացավ վոր փաստաբանության բոլոր թույները թափեմ վրեժս լուծելու համար իրմե։ Ոն ուրեմն, գործի սկըսինք։ Նախ և առաջ իմ ադյանի աշխատությանցս փոխարեն հատուցանելի վարձուց քանակությունն վորոշենք։ Մենք փաստաբաններս սովորություն ունինք յերեք վճարումով ընդունիլ մեր վարձքը. առաջին վճարումը կը կատարվի գործին սկիզբը, յերկրորդը տեղի կ'ուննա գործին միջոցը, յերրորդը գործին կատարածը...

Պ.Ա.Ղ.Տ. — Կիպա՞րն, և ըսիք։

ՈԳՍԵՆ — Հետևաբար պարտավոր եք նախ հիսուն վոսկի վճարել հետո միջոցին հիսուն վոսկին, և յետքը կատարածին հիսուն վոսկի, ամբողջ գումարը հարյուր հիսուն վոսկի, վոր չնչին գումար մ' է անհավատարիմ կնիկե մը բաժնվիլ հաջողելու համար։ Կը հուսամ թե դուք անմեղ պիտի յելնեք դատարանեն և ձեր հակառակորդը պիտի կրե արժանավայել պատիժն. իսկ յեթե բոլոր ջանքերուս հակառակ չկարենանք մեր հուսացած արդյունքն ձեռք բերել, այն ատեն ալ իրավունք պիտի ուննենամ իմ հարյուր հիսուն վոսկիս գումարն պահանջելու, ըստ վորում աշխատության միշտ աշխատություն է...

Պ.Ա.Ղ.Տ. — Սխալ չհասկնամ, կարծեմ Կիպար ըսիք, այնպես չէ՞։

ՈԳՍԵՆ — Այո, կեն ինի կի, պե այլ րե պար — Կիպար..

Պ.Ա.Ղ.Տ. — Այ թշվառական... վորո՞ւ մտքեն կանցնեիր... ու տասը տարի յե ի վեր կը սիրե՛ յեղեր...

ՈԳՍԵՆ — Այո։

Պ.Ա.Ղ.Տ — Ո՞վ կը հավատար։

ՈԳՍԵՆ — Ի՞նչ պիտի պատասխանեք առաջարկության։

Պ.Ա.Ղ.Տ. — Ի՞նչ պատասխանեմ... ապրիս, Կիպար, ապրիս...։

ՈԳՍԵՆ — Պատասխանելու յե, վոր ըստ այնմ գործի սկսինք կամ չսկսինք։

Պ.Ա.Ղ.Տ. — Ապրիս, շատ ապրիս, Կիպար։

ՈԳՍԵՆ — Հարյուր հիսուն վոսկին մեծ գումար մը չէ, անհավատարիմ սրտակիցե մը և վատ մտերիմե մը բաժնվելու համար։

Պ.Ա.Ղ.Տ. — Այդ գումարով յերեք կին կ'առնվի, յեղբայր։

48930 кн

ՈԳՍԵՆ — Իրավունք ունիք, կին մը արձակելն ավելի սուղ է՝ քան առնելը։

Պ.Ա.Ղ.Տ. — Գոնե վստա՞հ եք թե պիտի շահինք դատը։

ՈԳՍԵՆ — Շատ վստահ եմ. Նրբացուցիչ դեպք հանցանաց չունին բնավ։

Պ.Ա.Ղ.Տ. — Լավ. բավական է վոր բաժնվիմ աս սատանա կնիկեն։

ՈԳՍԵՆ — Աճապարեցեք ուրեմն առաջին վճարումն ընելու, վորպեսզի նախնական գործողություններն ավարտենք։ Ինչպես գիտեք, այս գործողություններն քիչ մը յերկար են. աղերսագիրը նախ նախագահին կը մատուցվի, վոր նախաձեռնության ատյանը կը հղե, նախաձեռնության ատյանը ձեռնհասության ատյանը կը հղե, ձեռնհասության ատյանը հարաբերության դիվանը կը հղե. հարաբերության դիվանը խմբագրության դիվանը կը հղե, խմբագրության դիվանը իրավասության դիվանը կը հղե, իրավասության դիվանը տնտեսական դիվանին, տնտեսական դիվանն ուսումնական դիվանին, վորմե կերթա դատաստանական խորհրդո, վոր խնդիրը քննելու համար հանձնաժողով մը կը կազմե, այս հանձնաժողովն ալ խնդիրն ուսումնասիրելու համար մասնաժողով մը կը կազմե, վոր մասնախումբ մը կը կազմե խնդիրը մանրամասնորեն սերտելու և տեղեկագրելու համար, այս մասնախումբն ալ ոժանդակ մասնախումբ մը կընտրե, վորպեսզի իրեն ոգնե, այս ոժանդակ մասնախումբն ալ յուր ճյուղերը կ'ուննա խնդիրն յուր բոլոր ճյուղերով քննելու համար և այս ճյուղերուն յուրաքանչյուրն ալ մեկ մեկ մասնաճյուղեր կուննա, վոր, խնդիրն յուր մասնաճյուղերովը քննելեն վերջը կը հանձնեն իրենց ճյուղին, ճյուղն ոժանդակ մասնախումբին, ոժանդակ մասնախումբն՝ մասնախումբին, մասնախումբն մասնաժողովին և այսպես խնդիրը կերթա հոն՝ ուսկից ճամբա յելած էր, հետո նորեն կուգա Դատաստանական խորհրդը, ուր կը կատարվի դատավորությունը։ Յերթանք...։

Պ.Ա.Ղ.Տ. — Աս ինչ յերկար ճամբորդություն է...

Վերջ առաջին արարին

ԱՐԱՐՔ ՅԵՐԿՐՈՐԴ

(Թատրոնը կը ներկայե միյեվնույն սրահը։ Աջ կողմը սեղան մը՝ կանաչ ասվիյով ծածկված ու պզտիկ զանգակ մը, կաղամար, թուղթ յեվ գրիչ դրված են սեղանին վրա)։

ՏԵՍԻԼ Ա.

ՊԱՂՏԱՍԱՐ հետո ՈԳՍԵՆ

ՊԱՂՏ.—Կինս անհավատարիմ գտնված է յուր պաշտոնին մեջ. յուր անհավատարմությունն հաստատված է. հետևաբար և բնականաբար հարկ է, վոր բաժնվինք իրարմե և ըստ օրենքի արտոնեք զիս ուրիշ կին մ'առնելու։ Կինս անհավատարիմ գտնված է յուր պաշտոնին մեջ. յուր անհավատարմությունն հաստատված է. հետևաբար և բնականաբար հարկե վոր բաժնվինք իրարմե և ըստ օրենքի արտոնեք զիս ուրիշ կին մ'առնելու։ Կինս անհավատարիմ գտնված է յուր պաշտոնին մեջ. յուր անհավատարմությունն հաստատված է. հետևաբար և բնականաբար հարկ է վոր բաժնվինք իրարմե և ըստ օրենքի արտոնեք զիս ուրիշ կին մ'առնելու։ Ահա Դատաստանական Խորհրդո առջև իմ ընելիք խոսքերս, վոչ բառ մ'ավելի, վոչ բառ մը պակաս. այսինքն՝ կինս անհավատարիմ գտնված է յուր պաշտոնին մեջ. յուր անհավատարմությունն հաստատված է. հետևաբար և բնականաբար հարկ է վոր բաժնվինք իրարմե և ըստ օրենքի...

ՈԳՍԵՆ — (Մտնելով) Դատաստանական Խորհրդո անդամներն տեսա, դեպի հոս կ'առաջանան, դասդ աղեկ սորվեցի՞ր։

ՊԱՂՏ.—Ջուրի պես. կինս անհավատարիմ գտնված է...

ՈԳՍԵՆ —Լավ։ Խրատներուս համաձայն շարժելու յես։

ՊԱՂՏ.—Այո։

ՈԳՍԵՆ —Մազ մը խոտորելու չէ այն ճամբեն, զոր ցույց տվի։

ՊԱՂՏ.—Վոչ։

ՈԳՍԵՆ —Այս յեղանակավ միայն կրնանք հաջողիլ։

ՊԱՂՏ.—Հարկավ։

ՈԳՍԵՆ—Յեթե ուրիշ ընթացք մը բռնես, դատդ կը կորսվես։

ՊԱՂՏ.—Անտարակույս։

ՈԳՍԵՆ —Դատավորները կրնան քեզի պատ ի պատ հարցումներ ուղղել զքեզ ծուղակի մեջ ձգելու համար. դուն անոնց հարցումներուն պիտի պատասխանես այն խոսքերով միայն, զորս սորվեցուցի քեզ։

ՊԱՂՏ.—Այո, կինս անհավատարիմ գտնված է յուր պաշտոնին մեջ. յուր անհավատարմությունն հաստատված է. հետևաբար և բնականաբար հարկ է վոր բաժնվինք իրարմե և ըստ օրենքի արտոնեք զիս ուրիշ կին մ'առնելու։

ՈԳՍԵՆ —Կեցցես։

ՊԲՂՏ.—Շատ պատիվ պիտի ընեմ իրենց, վորպեսզի դատս աղեկ քննեն։ Խահվե, գինի, անուշ, օղի, օշարակ...

ՈԳՍԵՆ —Կարծեմ կ'ուգան... յեկան։

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՒՅՆՔ և ՓԱՅԼԱԿ, ՅԵՐԿԱԹ, ՍՈՒՐ (Դռան առջեվ)

ՓԱՅԼԱԿ—Առ Յերկաթ) Մտեք, կ'աղաչեմ։

ՅԵՐԿԱԹ—(Առ Սուր) Կ'խնդրեմ, անցեք.

ՍՈՒՐ—(Առ Փայլակ) Առաջ դուք մտեք։

ՓԱՅԼԱԿ—Ինձի չվայլեր ձեզմե առաջ մտնել։

ՅԵՐԿԱԹ—(Առ Փայլակ) Պատշաճից օրենքը կը պահանջե վոր ամենեն յետքը յես մտնեմ։

ՍՈՒՐ—(Առ Յերկաթ) Բնավ յերբեք, չենք ընդունիր։

ՓԱՅԼԱԿ—(Առ Սուր) Դուք մտեք ուրեմն նախ և առաջ։

ՍՈՒՐ—(Առ Փայլակ) Չեմ ընդունիր, դուք ինձմե նախապատիվ եք։

ՓԱՅԼԱԿ—(Առ Սուր) Ձեր ազնվությունն է վոր այսպես կարծել կուտա ձեզ։

ՍՈՒՐ—(Առ Փայլակ) Ձեր ազնիվ զգացումներն են, վոր այդպես խորհիլ կուտան ձեզ։

ՓԱՅԼԱԿ —(Առ Սուր) Ձեր առ իս ունեցած համակրութիւնն է որ այնպէս խօսիլ կուտայ ձեզ։
ՍՈՒՐ —(Առ Փայլակ) Ձեր զգացմանց փափկութիւնն է վոր...
ՅԵՐԿԱԹ —(Առ Սուր) Ժամանակ չանցունենք, մտէք, կաղաչեմ։
ՍՈՒՐ —(Առ Յերկաթ) Դուք մտէք։
ՅԵՐԿԱԹ —Ոչ, թող տէր Սուրը մտնէ։
ՍՈՒՐ —Ոչ թող տէր Փայլակը մտնէ։
ՓԱՅԼԱԿ —Ոչ, յես կարգս գիտեմ։
ՍՈՒՐ —Յերեքնիս մեկեն մտնենք, ոն։ (Յերեքը մեկեն կը մտնեն յեվ սեղանին առջեվ կուգան)։
ՓԱՅԼԱԿ —Նստելու համար ալ ժամանակ չանցունենք, կ'աղաչեմ։ (Կը նստին)։
ՍՈՒՐ—(Առ Ոզսեն) Կարծեմ հայտարարվեցավ ձեզ թե ամուսնական դատերու մեջ փոխանորդութիւն չընդունվիր։
ՈԶՍԵՆ —Այո, պիտի մեկնիմ։ (Կը մեկնի, բարեվելով դատաստանական խորհրդո անդամները)։
ՍՈՒՐ—Նախնական գործողութիւններ ունինք կատարելու. կըրնաք դուրսը սպասել քիչ մը և ներս մտնել, յերբ զանգակին ձայնը լսեք։ (Պաշտօնեայ գլուխը ծռելով կը մեկնի)։
ՓԱՅԼԱԿ —(Առ Սուր) Դուք չըսիք ձեր կարծիքը։
ՍՈՒՐ —Ոչ, վորովհետև վճռաբանութիւնն ընդմիջելու սովորվեցանք։
ՅԵՐԿԱԹ —Ասանկ խնդրոց մեջ նախապաշարումներու շատ կարևորութիւն տալու չէ։
ՓԱՅԼԱԿ—Այսուամենայնիվ այլոց վկայութեանց հենլով վճիռ ալ արձակելու չէ։
ՅԵՐԿԱԹ — Յես կուսակցական վոգիով չեմ շարժիր։
ՓԱՅԼԱԿ —Ոչ ալ յես։
ՅԵՐԿԱԹ —Խնդիրն սկզբունքի տեսակետով քննելով բարկանալու իրավունք չունիք ինձի դեմ։
ՓԱՅԼԱԿ —Սակայն դուք այնպիսի ակնարկութիւններ ըրիք վոր արժանապատվութիւն վիրավորելու բնութիւն ունեյին. հասկցնել կուզեյիք ինձ թե կուրակուրայն կը պաշտպանեմ այն կողմը։
ՅԵՐԿԱԹ — Ամենեվին, շատ սխալ ըմբռնած եք իմ խոսքերուս իմաստը։ Յես ըսի պարզապես թե ճերմակ գինին խնձորով կը խմվի, մինչդեռ սեվ դեղձով ավելի ախորժելի յե քմաց։
ՓԱՅԼԱԿ —Յեվ ավելցուցեք թե սեվ գինիով խնձոր ուտողներն ճաշակե զուրկ են։
ՍՈՒՐ —Ըստ իս, ճաշակի խնդրոց մեջ ճշմարտութիւնն միշտ ծակամուտ կը պահվտի, հետևաբար յերկու կողմն ալ կրնա իրավունք ունենալ։ (Սողոմե խանըմ կը հրամցնե)։
ՓԱՅԼԱԿ —Իրավունք ունեյի ուրեմն յերբ կը պնդեյի թե ճաշակի խնդրոց մեջ վճիռ արձակելն տղայութիւն է։
ՅԵՐԿԱԹ —Ոչ. յես կը պնդեմ միշտ թե դեղձով ճերմակ գինի չի խմվիր։
ՓԱՅԼԱԿ — Յես ալ չեմ դադրիր պնդելե թե խնձորով ճերմակ գինի խմելու տրամադիր վոչ քիմք ունիմ, վոչ ստամոքս...
ՅԵՐԿԱԹ — Իրավունք ունիք, և յես ալ կը ջանայի ձեզ համոզելու թե ըստ ձեր քմաց ուրիշին քիմքը դատելու իշխանութիւն չունեյիք։
ՊԱՇՏ. – (Դրան առջեվ) Կարծեմ զանգակի ձայն մը...
ՍՈՒՐ — Ոչ, նախնական գործողութիւններն չավարտեցան տակավին։ (Պաշտօնեայ կը մեկնի)։
ՓԱՅԼԱԿ — Ոչ ալ պարտավոր եյի իմ քիմքս ձեր քմաց համաձայնեցնել։
ՅԵՐԿԱԹ — Անտարակույս. վորչափ քիմք այնչափ գինի։
ՓԱՅԼԱԿ — Վորչափ խնձոր այնչափ քիմք։
ՅԵՐԿԱԹ — Բայց մեծամասնութիւնը...։
ՓԱՅԼԱԿ — Մեծամասնութիւնն իմ քովս է։
ՅԵՐԿԱԹ — Ոչ։
ՓԱՅԼԱԿ — Այո։
ՍՈՒՐ — Կաղաչեմ, փակեցեք այս խնդիրն։
ՅԵՐԿԱԹ — Ո՞ւր լսված է, յեղբայր, ճերմակ գինիով դեղձ ուտել։
ՊԱՇՏ. — (Դրան առջեվ)։ Մտնե՞նք։
ՓԱՅԼԱԿ — (Ոտքի յելնելով)։ Ինչո՞ւ կ'աճապարեք, ազգը մեզի ամսական չտար ձեր գործերը կարգադրելու համար. մենք ազգասիրաբար, անձնանվիրաբար հանձն առած ենք հոս գալու և ձեր խնդիրը քննելու։ Մենք գործի տեր մարդիկ ենք, մենք զավակներ ունինք, վորոնց ապրուստ և հագուստ հոգալու պարտավոր ենք, և այսօր մեր գործերն յերեսի վրա թողլով յեկած ենք հոս ձեր ամուսնական խնդիրը քննելու.

մենք ձեր ծառան չենք, հասկցա՞ք. մենք ձեր գերին չենք, հասկցա՞ք, մենք ձեր ստրուկը չենք, հասկցա՞ք. դուք պարտավոր եք մեզի յերախտագետ ըլլալ, սակայն մենք ձեր յերախտագիտությունն ալ չենք ուզեր, այլ կը փափաքինք միայն, որ ազատ թողուք զմեզ գործելու. համբերեցեք ուրեմն որ լմնցնենք տնտեսական գործողությունները և ներս կանչենք զձեզ: (Պաղտասար կը մեկնի): Յես ճերմակ գինի կը խմեմ, յեղբայր, որենքը կը դատապարտե ճերմակ գինի խմողները:

ՅԵՐԿԱԹ — Ինչո՞ւ դատապարտե, սիրելիս:

ՓԱՅԼԱԿ — Ի՞նչ կուզես, ուրեմն:

ՍՈՒՐ — Վերջացուցեք: Ատյանը բացված է: (Գրպանեն թուղթեր հանելով) Մեր գրասեղանի վրա յերեք թուղթ կա: Առաջինն Տեր Կիպարի կողմե տրված է: Այս թուղթով Տեր Կիպար կը բողոքե Տեր Պաղտասարի կողմեն հերյուրված զրպարտության մը դեմ և պատիվ կը պահանջե. Տեր Կիպար ամբաստանված է յեղեր Տեր Պաղտասարի կնոջ սիրականն ըլլալու հանցանոք: Յերկրորդն ստորագրված է տիկին Անույշեն, որ չկրնալով հանդուրժել երկան կողմե հաճախ տեղի ունեցող զանակոծությանց և հայտնելով միանգամայն թե վերջին զանակոծությամբ յուր թեն կոտրած է՝ կը խնդրե որ երիկն յերաշխավորության ներքև դրվի, յերաշխավորություն մը, որ ապահովե տիկինն թե չպիտի սպանվի երիկեն: Յերրորդն է Տեր Պաղտասարին, որ յուր կնոջ անբարոյականության մեջ գտնվիլն հայտնելով, կ՚ուզե, որ արձակե զայն և ուրիշ կին մը առնու: Ըստ իս, առաջնությունն տալու յե տիկին Անույշի խնդրագրույն, որ թեև յերկրորդ է թվականի կարգավ, այլ առաջինն է ստիպողականության կարգավ, ըստ որում մահու և կենաց խնդիր է: (Սողոմե անուշ կը բերե):

ՅԵՐԿԱԹ — Այո, շատ աղեկ ամփոփեցիք խնդիրները:

ՓԱՅԼԱԿ — Ամփոփում մը, որ ամեն ինչ մանրամասնորեն կը պատմե. համառոտ ընդարձակություն մը...:

ՍՈՒՐ — (Զանգակը հնչեցնելով) Տեր Պաղտասար և տիկին Անույշ ներս գան:

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՒՅՆՔ և ՊԱՂՏԱՍԱՐ, ԱՆՈՒՅՇ (ձախ թեվը կապած)

ՍՈՒՐ — Նստեցեք: Տեր Պաղտասար, հանձնաժողովս անդամներս, որ անդամ ենք նաև Դատաստանական Խորհրդո, կը փափաքինք լսել ձեր արդարացուցիչ փաստերն այն ընթացից մասին, որով վարված եք ձեր կնոջ հետ, ընթացք մը, որ գլխովին հակառակ է դարուս ոգուն, ընթացք մը, որ յերբեք չկրնար արդարանալ քաղաքակիրթ աշխարհին առջև, ընթացք մը, որ պատվավոր մարդու չվայլեր, ընթացք մը, որ կը դատապարտվի ամեն կարգի խիղճերե, վերջապես ընթացք մը, որ ամենուն ահ ու սարսափ կ՚ազդե: Ի՞նչ պիտի պատասխանեք, Տեր Պաղտասար:

ՊԱՂՏ. — Կինս անհավատարիմ գտնված է...

ՍՈՒՐ — Լավ: (Սողոմե ոստրակ կը բերե):

ՓԱՅԼԱԿ — Լեզուդ քեզի քաշե:

ՅԵՐԿԱԹ — Խորհրդարանական լեզվով խոսե:

ՍՈՒՐ — Ի՞նչ հարկ ստիպեց զքեզ ծեծել զկինդ և թեը կոտրել:

ՊԱՂՏ. — Յուր անհավատարմությունն հաստատված է:

ՍՈՒՐ — Խնդրեմ դուրս կ՚ելնեք:

ՅԵՐԿԱԹ — Խնդրեմ մի շեղիր:

ՓԱՅԼԱԿ — Խնդրեմ մի խոտորիր:

ՍՈՒՐ — Յեվ միմիայն քեզի ուղղված հարցումներուն պատասխան տուր:

ՊԱՂՏ. — Հետևաբար և բնականաբար հարկ է որ բաժնվինք իրարմե և ըստ որինի արտոնեք զիս ուրիշ կին մ՚առնելու:

ԱՆՈՒՅՇ — Մեծապատիվ Տիարք, յես կը ներեմ իրեն, միայն կը խնդրեմ որ յերաշխավորություն մը տա ապագային մեջ այսպիսի ընթացքի մը մեջ չգտնվելու համար:

ՍՈՒՐ — Ի՞նչ վեհանձնություն:

ՅԵՐԿԱԹ — Զգայմանց ի՞նչ փափկություն:

ՓԱՅԼԱԿ — Ի՞նչ հեզություն.

ՍՈՒՐ — Յեվ ասանկ ընտիր կիներն բարբարոսներու ձեռք կը իյնան ընդհանրապես: Վահ, Տեր Պաղտասար, վահ, որ ասանկ կին մը ունիս և յերջանկությունդ չես զգար:

ՊԱՂՏ. — (Մեկուսի) Յեթե չճաթիմ, աղեկ:

ՍՈՒՐ — Այս վայրկյանես աշխատե յերաշխավոր մը գտնել, յեթե վոչ այս տունը մտնելու չես։
ՑԵՐԿԱԹ — Այո։
ՓԱՅԼԱԿ — Իմ կարծիքս ալ այս է։
ՊԱՂՏ. — Կինս անհավատարիմ գտնված է յուր պաշտոնին մեջ։
ՍՈՒՐ — Քեզի քանի քանի անգամ ըսվեցավ, վոր անձնականության չդարձնես խնդիրն։
ՑԵՐԿԱԹ — Ի կարգ հրավիրեցեք զինքն։
ՊԱՂՏ. — Յուր անհավատարմությունն հաստատված է։
ՓԱՅԼԱԿ — Խնդրեն դուրս խոսիլն արգիլյալ է։
ՊԱՂՏ. — Հետևաբար...
ՍՈՒՐ — Մի խոսիր։
ՊԱՂՏ. — Յեվ ընականաբար...
ՍՈՒՐ — Խոսք չունիս։
ՊԱՂՏ. — Հարկ է վոր բաժնվինք իրարմե...
ՍՈՒՐ — Խիստ միջոցներ ձեռք առնելու պիտի ստիպվիմ։
ՊԱՂՏ. — Յեվ ըստ որինի արտոնեք զիս...
ՍՈՒՐ — (Զանգակն ուժգնակի հնչեցնելով) Լռե...
ՊԱՂՏ. — Ուրիշ կին մ'առնելու... կինս անհավատարիմ...
ՍՈՒՐ — Քանի մը վայրկյան դադար։ (Անդամք սենյակը կը քաշվին)։
ՊԱՂՏ. — Գտնված է յուր պաշտոնին մեջ, յուր անհավատարմությունն հաստատված է. հետևաբար և ընականաբար հարկ է վոր իրարմե բաժնվինք և արտոնեք զիս ուրիշ կին մը առնուլ։
ԱՆՈՒՅՇ — (Բարձրաձայն) Ա՜յ... ա՜յ... ա՜յ... ոգնություն...

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՒՅՆՔ և ԿԻՊԱՐ

ՍՈՒՐ — Ի՞նչ է, ի՞նչ յեղավ
ԱՆՈՒՅՇ — Ա՜հ... ա՜հ...
ՓԱՅԼԱԿ — Ի՞նչ ունիք, տիկին։
ԱՆՈՒՅՇ — Ա՜հ... սիրտս...
ՑԵՐԿԱԹ — Ի՞նչ կզգաք, տիկին։
ԱՆՈՒՅՇ — Ա՜հ, ա՜հ, ա՜հ, սիրտս...

ՍՈՒՐ — (Մեկուսի) Երկանը ըսած խոսքերուն չկրցավ հանդուրժել խեղճը և մարելիք յեկավ վրան։
ԱՆՈՒՅՇ — Ահ, ահ,... մազ մնաց վոր...
ՍՈՒՐ — Վոր...
ՓԱՅԼԱԿ — Մազ մնաց վոր ի՞նչ։
ԱՆՈՒՅՇ — Մազ մնաց վոր... ա՜հ...
ՑԵՐԿԱԹ — Վոր... ի՞նչ պիտի ըլլար։
ԱՆՈՒՅՇ — Վոր...
ՍՈՒՐ — Լավ, վոր... ի՞նչ...
ԱՆՈՒՅՇ — Վոր... ա՜հ... վոր...
ՑԵՐԿԱԹ — Վորեն անդին չկրնար ըսել վոր։
ՓԱՅԼԱԿ — Մազ մնաց վոր... վերջը։
ԱՆՈՒՅՇ—Վոր... վոր... պիտի...
ՍՈՒՐ—Պիտի... ի՞նչ...
ԱՆՈՒՅՇ—Պիտի...
ՍՈՒՐ—Ի՞նչ պիտի...
ԱՆՈՒՅՇ—Խղդեր զիս, ա՜հ...
ԿԻՊԱՐ—Ի՞նչ անգթություն։
ՓԱՅԼԱԿ—Ի՞նչ բարբարոսություն։
ԱՆՈՒՅՇ—Ա՜հ... ա՜հ... ա՜հ...
ՑԵՐԿԱԹ—Տեր Պաղտասար, ձեր հանցանքն յերթալով կը բազմապատկվի և ծանրանալու կերպարանք կառնու։ Ի՞նչ իրավունք ունիք վայրենաբար վարվելու այս խոնարհ ու համեստ կնոջ հետ։ Ի՞նչու համար խեղդել կուզեք զինքը։
ՊԱՂՏ.—Ո՞վ կուզե խեղդել զայն։
ՍՈՒՐ—Դուք։
ՊԱՂՏ.—Յե՞ս...
ՓԱՅԼԱԿ—Ուրանալ կը ջանաս։
ՑԵՐԿԱԹ—Ամենուս առջև կատարված իրողություն մ'է։
ՍՈՒՐ—Յեթե մեր ներկայությանն այսպես գազանաբար հոշոտել կուզես զինքն, ո՞վ գիտե ինչեր չես ըներ առանձին յեղած ժամանակնիդ։
ՓԱՅԼԱԿ—Մեղք, մեղք, հազար մեղք, Տեր Պաղտասար։
ՊԱՂՏ.—Սուտ է, սուտ... յես իրեն դպած չունիմ։
ԱՆՈՒՅՇ—Ա՜հ... ա՜հ...
ՊԱՂՏ.—(Առանձին) Աս ի՞նչ դժոխային կնիկ է յեղեր։

ԱՆՈՒՅՇ — Ա՜հ... ա՜հ...
ՍՈՒՐ — Հանուն մարդասիրության կաղաչեմ ձեզ, Տէր Կիպար, որ սա խեղճ կինն առնեք և սա սենյակը տանիք, որ քիչ մը հանգստանա, չե՞ք տեսներ, նստելու կարողություն չունի։ Կաղաչեմ քիչ մը խնամք տարեք։
ՅԵՐԿԱԹ — Յես ալ կը խնդրեմ հանուն գթության, որ քովեն չբաժնվիք, զի մի գուցե վայրենի գազանն նորեն վրան հարձակի։
ՓԱՅԼԱԿ — Կը հուսամ թե մեր յիրեքին սիրույն համար հանձն կառնեք այս նեղությունն։
ԱՆՈՒՅՇ — Ա՜հ... ա՜հ...
ԿԻՊԱՐ — (Վարանելով) Բայց... կարծեմ թե...
ՍՈՒՐ — Վարանելու ժամանակ չէ, կաղաչեմ շուտ ըրեք։ (Կիպար վերցնելով Անույշը կը տանի)։ Դուռը գոցեցեք։
ՅԵՐԿԱԹ — Յեվ դուն հոս պիտի մնաս. մինչև որ չելնենք, անպիտան։ (Սենյակը կը փակվի)։
ՓԱՅԼԱԿ — Տեղեդ չպիտի յերերաս, գաղան։ (Սենյակը կը մտնէ)
ՍՈՒՐ — Հոս մեր չելնելուն պիտի սպասես, վայրենի։ (Սենյակը կը մտնէ)։

ՏԵՍԻԼ Ե.

ՊԱՂՏԱՍԱՐ (Առանձին)

Ըսելիք չըմնաց, աս բոլոր դռները գոցեց։ Անպիտան, գազան, վայրենի յեզա. ինչո՞ւ, որովհետև անհավատարիմ կինն մը բաժնվիլ կուզեմ։ Սակայն ինչ որ ըսեն, ինչ որ ընեն, միշտ իմս է իրավունքը. պիտի հայտնվի անշուշտ թե այդ լիրբ կնոջ ո՛չ թևը կոտրած եմ, ո՛չ ալ խղդել ուզած եմ զինքը։ Չպիտի հուսահատիմ բնավ և պիտի աշխատիմ հաստատել, թե այդ կինն խորամանկ է, ստախոս է և անբարոյական. պիտի ջանամ, նույնիսկ մեծ կորուստներ ընելով բաժնվիլ այդ ոձեն։ Մեր փաստաբանին ալ բան մը չհասկցա որ...

ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՒՅՆ և ՍՈՂՈՄԵ (Խոհանոցի հագուստով)

ՍՈՂՈՄԵ—Ի՞նչ կա, ինչ յեղավ, ինչ յեղեր է...
ՊԱՂՏ.—Ոչինչ։
ՍՈՂՈՄԵ—Ինչպես ոչինչ... դրացիներն դուռն ափ առին ներս մտան ու խոհարան յեկան ինձ հարցնելու թե ով մարեր էր։ Մեր խոհանոցեն ալ բան մը չլսվեր որ... ո՞վ մարեցավ... չըլլա՞ որ տիկինը մարի... ո՞ւր է տիկինս... տիկինս ո՞ւր է... ինչո՞ւ չես պատասխաներ, տիկինս կ'ուզեմ յես...
ՊԱՂՏ.—Գլուխդ փարատէ տիկինդ։
ՍՈՂՈՄԵ—Ո՞ւր է տիկինը։
ՊԱՂՏ.—Գործդ գնա, հիմա վոտքիս տակը կ'առնեմ գլուխդ ու հոգիդ կը հանեմ։
ՍՈՂՈՄԵ—Բան մ'ալ չես կրնար ընել։
ՊԱՂՏ.—Խոհանոցդ գնա ու գործդ նայե։
ՍՈՂՈՄԵ—Վո՛չ։
ՊԱՂՏ.—(Բարկանալով) Խոսքս մտիկ պիտի ընե՞ս թե վոչ։
ՍՈՂՈՄԵ—(Գոռալով) Չե՞ս խպնիր, չե՞ս ամչնար...։

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՒՅՆՔ և ՓԱՅԼԱԿ, ՅԵՐԿԱԹ, ՍՈՒՐ, ԿԻՊԱՐ, ԱՆՈՒՅՇ

ՍՈՒՐ.—Ի՞նչ յեղաք նորեն...
ՍՈՂՈՄԵ—Անգամ մը գլխուդ մազերուն ճերմակությանը նայե...
ՓԱՅԼԱԿ—Ի՞նչ պատահեցավ։
ՍՈՂՈՄԵ—(Մինչ առ Պաղտասար) Յես քուկին գիտցած կիներեդ չեմ, խելքդ գլուխդ ժողվե, չը խպնած, պատկերի պես կին մ'ունիս և կելնես ուրիշ կիներու կը քովիս. ով գիտցար դուն ինծի...
ՅԵՐԿԱԹ—Աս ի՞նչ է, Տէր Պաղտասար։
ՍՈՂՈՄԵ—Կնիկ կա կնիկ ալ կա, չամչցած, ամեն կնիկ մեկ չէ։
ՍՈՒՐ — Աս ալ նոր տեսարան։
ՊԱՂՏ. — Ասոնց ամենը խոսք մեկ ըրած են այսոր զիս զրպարտելու։ (Առ Սողոմե) Ո՞վ քովեցավ քեզի, անզգամ։

ՍՈՂՈՄԷ — Ո՞վ պիտի քալէ. ինչու թեւս կը կամթես...
ՊԱՂՏ. — Պապանձէ, սատախոս, և հիմա դուրս ելիր տունէս, չեմ ուզեր քեզի։
ՍՈՂՈՄԷ — Տեղ մ'ալ չեմ յերթար, ես տիկնոջս հրամանին միայն կը հնազանդիմ. ամէն որ և աս, ամէն որ, քաշվելու բան չէ ալ... «Սողոմէ, քեզի համար կը խենդենամ, Սողոմէ, քեզի շատ կը սիրեմ, Սողոմէ, քեզի նոր կօշիկ պիտի ապրսպրեմ. Սողոմէ, ամսականդ պիտի աւելցնեմ»...։ Չեմ ուզեր վո՛չ կօշիկդ, վո՛չ դքեզ, կըսեմ, կը ձգեմ, կը փախչիմ, յետեւես կուգա, թեւս կը քաշէ։ Մինչեւ այսոր պահեցի...
ՊԱՂՏ. — Ի՞նչ խաղեր են ասոնք։
ՍՈՂՈՄԷ — Մեկու մը բան չըսի, բայց հիմա վոր տեսա թե խեղճ կինդ կը չարչարես, ա՛լ չկրցի համբերել, անամօթ մարդ։ (Կերթա)։

ՏԵՍԻԼ Ը.

ՊԱՂՏԱՍԱՐ, ՓԱՅԼԱԿ, ՅԵՐԿԱԹ, ՍՈՒՐ, ԿԻՊԱՐ, ԱՆՈՒՅՇ

ՍՈՒՐ — Ճշմարիտը խոսելով, չկրցինք վայլեցնել ձեզի վոր գեղեցիկ կին մ'ունենալով գիջանեցիք այդ սպասուհւոյն քծնել։
ՓԱՅԼԱԿ — Շիտակը մարդուս հաւատալիքը չգար։
ՍՈՒՐ. — Ինչ վոր է, փակենք այս խնդիրն ալ և ատյանը բանանք։ (Զանգակը հնչեցնելով) Ատյանը բացված է. խոսքը ձերն է, Տեր Կիպար։
ԿԻՊԱՐ — Տեր Պաղտասար այնպիսի գրույցներ տարածեր է հրապարակի վրա, վորք պատիվս արատավորելու և գիս մարդկային ընկերութեանց մեջ մտնելու անարժան եակ մը ցույց տալու հանգամանքն ունին։ Կը խնդրեմ, հարցնեցիք Տեր Պաղտասարին թե յե՞րբ ըսած եմ իրեն, թե յուր կինը կը սիրեմ։
ՍՈՒՐ — Խոսքը ձերն է, Տեր Պաղտասար։
ՊԱՂՏ. — Ի՞նքը պիտի ըսեր թե կը սիրե կինս։
ՍՈՒՐ — Կի՞նդ ըսավ։
ՊԱՂՏ. — Վոչ։
ՍՈՒՐ — Ո՞վ ըսավ ուրեմն
ՊԱՂՏ. — Վստահամբավ տան մը մեջ գիրար սիրելնին հաստատեցինք։
ՍՈՒՐ — Վկաներ ունի՞ք։ Ո՞վ տեսած է ասոնց գիրար սիրելը։

ՊԱՂՏ. — Ով տեսած է։
ՍՈՒՐ — Այո։
ՊԱՂՏ. — Վստահամբավ տան մը մեջ...
ՍՈՒՐ — Վստահամբավն բավական չէ. զորավոր ապացույցներ պետք է հաստատելու համար Տեր Կիպարի հանցանքն, և մենք համոզվելու յենք վորպեսզի ըստ այնմ վորոշենք անօրինվելիք պատիժը։
ԿԻՊԱՐ — Կը խնդրեմ վոր պահպանեք պատիվս, և մաքրեք գիս սարսափելի արատե մը։ Ինքը ուրիշ կնոջ հետ կարգվելու համար ազատ է զրպարտել յուր կինն իբրեւ անհավատարիմ, և կինն ալ կարող է ինքնզինքն պաշտպանել. բայց չեմ ընդունիր վոր ասանկ զրպարտութեան մը գործիք ըլլամ։ Հատուցում կը պահանջեմ։ Գոնե յերեքհարյուր վոսկի տալու յե ինձ, վոր սրբվիմ այս աղտեն։
ՍՈՒՐ — Ի՞նչ պիտի պատասխանեք։
ՊԱՂՏ. — Վստահամբավ տան մը մեջ ի՞նչ գործ ուներ կնոջս հետ։
ԿԻՊԱՐ — Ատ ալ զրպարտություն մ'է։
ՍՈՒՐ — Կամ հաստատել պետք է, ի՞նչ վոր կ'ըսեք կամ գոհացնել Տեր Կիպարը։
ՊԱՂՏ. — Լումա մը չեմ կարող տալ։
ԿԻՊԱՐ — Ուրեմն յետ առեք ձեր խոսքն և ներումն խնդրեցեք։
ՊԱՂՏ. — Վոչ։
ԿԻՊԱՐ — Գիտնալ պետք է սակայն թե այլոց պատիվն ձեր խաղալիքը չէ։
ՊԱՂՏ. — Վոչ ալ իմս այլոց։
ՅԵՐԿԱԹ — Պարապ խոսքերով ժամանակ մի անցունեք. մենք ալ գործ ունինք, պիտի յերթանք, մենք ամսականով չենք, մեր տղաքներն հաց կ'ուզեն իրիկվան։
ՓԱՅԼԱԿ — Այո, այո, շուտ մը հաշտվեցեք, լմննա յերթա։
ԿԻՊԱՐ — Պատիվ կը պահանջեմ։
ՊԱՂՏ. — Պատիվս յես կը պահանջեմ։
ՅԵՐԿԱԹ — Ուշ մնացինք։
ՓԱՅԼԱԿ — Դուն անոր ճակտեն համբուրե, ան ալ քու ձեռքդ պագնե, գործը կերկարի։
ՊԱՂՏ. — Կինս անհավատարիմ գտնված է։
ՍՈՒՐ — Խնդիրը հիմա Կիպարի վրա չէ։

ՅԵՐԿԱԹ — Կիպար անանկ տղա չէ… յես զինքը պզտիկուց կը-ճանչնամ, հայրն ալ ազնիվ մարդ մ'է, Դերենիկ կըսեն։
ՓԱՅԼԱԿ — Ի՞նչ կըսես, Դերենիկին տղա՞ն է։
ՅԵՐԿԱԹ — Այո։
ՓԱՅԼԱԿ — Կը ճանչնամ, ազնիվ ընտանիք. մայրն ալ ազնվական տոհմե սերած է։
ՅԵՐԿԱԹ — Անգյուտ ընտանիք մ'է։
ՓԱՅԼԱԿ — Ի՞նչ կ'ընե հայրդ, աղե՞կ է։
ԿԻՊԱՐ — Աղեկ է, յուր հարգանքները կը մատուցանե։
ՓԱՅԼԱԿ — Ի՞նչ ըրավ ձին։
ԿԻՊԱՐ — Կը պահե։
ՓԱՅԼԱԿ — (Առ. Յերկաթ) Ձի մ'ունի, որ տեսնելու արժանի բան է, սքանչելի ձի մը, գեղեցիկ ձի մը, որ շոգեկառքի հետ կրնա մրցիլ։ (Առ. Կիպար) Քանի՞ տարեկան է հիմա այդ ձին։
ԿԻՊԱՐ — Ութը լմնցուց ինը պիտի մտնա։
ՓԱՅԼԱԿ — Քալած ժամանակը կը ցատկե՞ միշտ։
ԿԻՊԱՐ — Այո։
ՓԱՅԼԱԿ — Անոր վրա կայնիլն քիչ մը դժվար է, բայց հոգըդ համար աշխարհիս ամենեն դյուրին բանն է. շիտակը յես կը վախնամ. (Առ. Սուր) Ցատկած ժամանակը տասը կանգուն վեր կը բարձրանա և քսան կանգուն անդին կը նետե ինքզինքը։ Շատ աղեկ ձի մ'է։ (Առ. Կիպար) Քանի՞ի առած է այդ ձին։
ԿԻՊԱՐ — Քսան և հինգ ոսկիի։
ՓԱՅԼԱԿ — Բայց յեթե այսօր ծախելու հանես՝ կարծեմ քառասուն ոսկի կուտան։ Տեր Պաղտասար, տեսա՞ծ եք այդ ձին։
ՊԱՂՏ. — Տեսած եմ. (Մեկուսի) Այդ սատկելիք ձիուն խոսքն ո՞վ հանեց։
ՓԱՅԼԱԿ — Ի՞նչպես է։
ՊԱՂՏ. — Աղեկ է։ (Մեկուսի) Սատանան տանի։
ՓԱՅԼԱԿ — Այդ ձիով նապաստակ որսալու յերթալու յէ։ (Առ. Պաղտասար) Նապաստակ կերած ունի՞ք։
ՊԱՂՏ. — Ոչ։
ՓԱՅԼԱԿ — (Առ. Յերկաթ) Կըսեն թե միսը քիչ մը թթու յէ։
ՅԵՐԿԱԹ — Այո, անհամ է, բայց յեթե աղեկ համեմվի՝ կուտվի։

ՍՈՒՐ — Յես բնավ կերած չունիմ։ Դուք կերած ունի՞ք, Տեր Յերկաթ.
ՅԵՐԿԱԹ — Ոչ, քանի մ'անգամ լորամարգի կերած եմ։
ԿԻՊԱՐ — Ատոր միսը պատվական է։
ՓԱՅԼԱԿ — Յեփելու վրա յէ գործը։
ՍՈՒՐ — Բնականաբար յեթե խնամով պատրաստվի…։
ՅԵՐԿԱԹ — (Առ. Պաղտասար) Ժամավաճառ չըլլանք, ինչ պիտի պատասխանեք, պիտի համառի՞ք ձեր պահանջմանց մեջ թե պիտի հաճի՞ք հաշտությամբ վերջացնել այս խնդիրը։
ԿԻՊԱՐ — Յես յուր անձնականին հետ բան չունիմ. կը հարգեմ զինքն իբրև բարի և պատվավոր մարդ, այսուամենայնիվ կը պահանջեմ որ խնդիրն ըստ օրինի քննվի և յուր լուծումն ստանա։
ՍՈՒՐ — Տեր Պաղտասարն ալ բարի մարդ է, ան ալ կը հարգե զձեզ. կերևի թե թյուրիմացություն կա ձեր մեջը։
ՊԱՂՏ. — Ի՞նչ թյուրիմացություն… աչքերուս տեսա…
ՍՈՒՐ — Թյուրատեսություն ուրեմն…
ՓԱՅԼԱԿ — Կարծեմ թե վրան քիչ մ'ալ գինի կը սրսկեն յեփ յելած ժամանակը։
ՅԵՐԿԱԹ — Հաշտվեցե՛ք, հաշտվեցե՛ք, Տեր Պաղտասար։
ԿԻՊԱՐ — Անկարելի յէ։
ՍՈՒՐ — Կը խնդրեմ, քիչ մը դուրս յելեք և առանձին թողեք զմեզ որ խորհրդակցինք։ (Կիպար, Պաղտասար, յեվ Անույշ մեկնելու վրա)։ Հանձնաժողովս կը խնդրե Տեր Պաղտասարեն, որ դուրսը խելոք նստի և նորեն չհարձակի տիկնոջը վրա (Կելլեն)։

ՏԵՍԻԼ Թ.

ՓԱՅԼԱԿ, ՅԵՐԿԱԹ, ՍՈՒՐ, ներս ՍՈՂՈՄԷ

ՓԱՅԼԱԿ — Ոն, ժամավաճառ չըլլանք, աշխատինք դարմանելու այն վնասն, զոր մենք ըրինք այսօր բացակա գտնվելով մեր վաճառատուներեն։ Օգուտ քաղենք ուրեմն այս կորսված օրեն և ջանանք արդյունավորել զայն։
ՅԵՐԿԱԹ — Համամիտ եմ ձեզի։
ՍՈՒՐ — Շատ իրավունք ունիք։

ՓԱՅԼԱԿ — Կանչենք ուրեմն Սողոմեն և զրուցենք իրեն, որ մեզի քիչ մ'ընտիր ողի, կտոր մ'ապուխտ, կտոր մը պանիր, կտոր մը ձիթապտուղ, կտոր մը հաց, կտոր մը խորոված ձուկ, կտոր մը...
ՅԵՐԿԱԹ — Ի՞նչ պիտի ընենք ավելին։
ՍՈՒՐ — Յեվ քիչ մը զվարճանանք, այնպես չէ՞։
ՓԱՅԼԱԿ — Այո. և արդեն այսօրվան համար ուրիշ գործ չունինք, մեր այս ավուր նիստն բավական արդյունավոր յեղավ։
ՅԵՐԿԱԹ — Դատաստանական Խորհրդո անդամ ընտրվելնես ի վեր սանկ արդյունավոր և կանոնավոր նիստ ըրած չունեյինք։
ՍՈՒՐ — Անույշին և Կիպարին խնդրագրերն մեր ուշադրության նյութ ըրինք նախ և արդարությունը քիչ մը յերևան բերինք. Մնաց Պաղտասարին ամբաստանագիրն, որ մյուս յերկուքեն կարևորն է և զոր ողի խմելով ալ կրնանք մեր խորհրդածության առարկա ընել. Թող որ մեր ընտրած մասնաճյուղն ալ այսօր զբաղած է ստուգելու թե Կիպար և Անույշ ճշմարտապես տեսակցած են այդ վատահամբավ տան մեջ։ Ավելորդ է ըսել, թե մասնաճյուղին ներկայացնելիք տեղեկագրեն կախումն ունի մեր ընելիք տնօրինությունը, թեև ըստ իս, Պաղտասար պարզապես զրպարտիչ մ'է։
ՅԵՐԿԱԹ — Անպիտանին մեկն է։
ՓԱՅԼԱԿ — Վերջապես արդարությունը չկորսվիր, այս կարծիքես չեմ խախտիր ընավ.
ՍՈՒՐ — Ճշմարիտ է, ստությունն անիրավությունն և զրպարտությունն միշտ կը խայտառակվին։
ՓԱՅԼԱԿ — Ձեռքս խղճիս վրա դնելով կրնամ վկայել թե մեր ստանձնած պաշտոնն խղճի մտոք կը կատարենք և այսօր բավական գործ տեսանք։ Բայց ի՞նչ օգուտ, մեր մեջ գործ տեսնողն ալ չտեսնողին հավասար պատիվ կը վայելեն։
ՅԵՐԿԱԹ — Յեթե ազգային մյուս ժողովներն, խորհուրդներն, հանձնաժողովներն և այլն մեզի պես աշխատեյին՝ ազգն քանի մը տարվան մեջ զգալապես կը հառաջդիմեր։ Բայց ո՞վ պիտի ճանչնա մեր յերախտիքը...
ՓԱՅԼԱԿ — Գոցենք այս կետը և Սողոմեն կանչենք։ (Զանգակը հնչեցնելով) Սողոմե, Սողոմե, Սողոմե... (Սողոմե կը մտնե) Տիկին Սողոմե, դուն տանտիկին մեկն ես, մեզի սանկ քիչ

մ'ողի, կտոր մ'ապուխտ, կտոր մը պանիր, կտոր մը...։
ՍՈՂՈՄԵ — Գլխուս վրա, հիմա, անմիջապես։ (Մեկուսի) Յերթամ շուտ մը կատարեմ իրենց հրամանն, որ ներկա գտնվիմ մեր ապուշին խաղցվելիք նոր խաղին։ (Բարձր) Հիմա, շուտ մը... (Կմեկնի)։
ՓԱՅԼԱԿ — Մի՛ ուշանար։
ՍՈՒՐ Կուզե՞ք որ Պաղտասարին ամբաստանագիրն ընթեռնում։
ԹԱԳՈՒՀԻ — (Դուրսեն) Կախաղան ելնելու կին մ'ես դուն։
ՄԱՐԹԱ — (Դուրսեն) Աստուծմե չվախցած, չամչցած...
ԹԱԳՈՒՀԻ — (Դուրսեն) Ստախոս։
ՓԱՅԼԱԿ — Ի՞նչ աղմուկ է սա։
ՄԱՐԹԱ — (Դուրսեն) Կավատար։
ՊԱՂՏ. — (Դուրսեն) Ի՞նչ կա... ինչո՞ւ կը քաշկռտեք զիս... Թող տվեք օձիքս։

ՏԵՍԻԼ Ժ.

ՆՈՒՅՆՔ, ԹԱԳՈՒՀԻ, ՄԱՐԹԱ և ՊԱՂՏԱՍԱՐ

ԹԱԳՈՒՀԻ — (Պաղտասարին թևեն քաշելով) Յեկուր սա մեր գործը մաքրե։
ՊԱՂՏ. — Ի՞նչ գործ։
ՍՈՒՐ — Ինչո՞ւ կը կռվիք, տիկիններ, ի՞նչ կուզեք։
ԹԱԳՈՒՀԻ — Տանս խաղաղությունն ավրեց, կռվելու բան է, Պաղտասար աղբար, սուտ չպիտի խոսիս։
ՄԱՐԹԱ — Յեղածին պես պատմե թող, ի՞նչ իրավունք ունիս տանս դուռն ափ առնելու և փողոցին անվայել խոսքեր ընելու ինծի։
ԹԱԳՈՒՀԻ — Կ'ընեմ ա, աղջիկս ձեռքես պիտի ելլա։ Ըսե նայիմ, Պաղտասար աղբար, այս կնկան հետ կարգվելու մի՞տք ունիս յեղեր։
ՊԱՂՏ. — Յե՞ս։
ՄԱՐԹԱ — Պաղտասար աղբար, դուն չեյի՞ր՝ տարիե մ'ի վեր ինծի խոստացողն թե...։
ՊԱՂՏ. — Յե՞ս....
ՄԱՐԹԱ — Դուն, դուն, ինչո՞ւ կը պահես կոր։

ՊԱՂՏ. — Ուրիշ մէկը չըլլայ։
ՄԱՐԹԱ — Ո՛չ, դուն ես։
ՊԱՂՏ. — Ես տեղեկութիւն չունիմ։
ԹԱԳՈՒՀԻ — Յեթէ տեղեկութիւն չունիս՝ շուտ ըրէ ուրեմն յերթանք մեր տունը, որովհետեւ աղջիկս կը մարի, կը մարի կ'երթայ։
ՊԱՂՏ. — Ինչո՞ւս պէտք ըլլին։
ԹԱԳՈՒՀԻ — Հապա որո՞ւն ինչուն պէտք է. գնա համոզէ զինքը, ըսելով թէ սուտ է այդ լուրն, թէ իրեն ըրած խոստումներուդ վրայ հաստատ ես։
ՊԱՂՏ. — Ի՞նչ խոստում։
ԹԱԳՈՒՀԻ — Զգինայլեն մ'ի գար, աշխարհ արարած գիտէ, որ աղջիկս պիտի առնես։ Շուտ ըրէ, յերթանք։ (թեւէն քաշելով)
ՓԱՅԼԱԿ — Ի՞նչ հայտնութիւններ։
ՊԱՂՏ. — Աղջի՞կդ մի պիտի առնեմ։
ՄԱՐԹԱ — (Պաղտասարին թեւէն քաշելով) Անիկա իմ ապագայ ամուսինս է։

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆՈՒՅՆՔ, ԿԻՊԱՐ, ԱՆՈՒՅՇ, ՍՈՂՈՄԷ (Ոգի բերելով)

ԹԱԳՈՒՀԻ — Ո՛չ, իմ ապագայ փեսաս է։
ՄԱՐԹԱ — Ձէ, իմ ապառնի երիկս է։
ՊԱՂՏ. — Աս ի՞նչ դժոխային սուտեր են... թո՛ղ ավէք զիս. ով խայտառակութիւն է ձեր ըրածը...։
ՍՈՒՐ — Հիմա կը հասկցվի թէ ինչո՛ւ կը զրպարտէ ու կ'ամբաստանէ յուր անմեղ կինը։
ՓԱՅԼԱԿ — Ապրիս, Պաղտասար աղբար, ապրի՛ս։
ՊԱՂՏ. — Մի հաւտաք, սուտ է անոնց ամէն ըսածը. աս կնիկները որչափ կը սիրեն յեղեր զիրար... կնոջդ անբարոյականութեան դէմ բողոքողը կանանց բանակ մը կը հարուցանէ յեղեր իրեն դէմ։
ԹԱԳՈՒՀԻ — Ասոնք ավելորդ խօսքեր են... տուն յերթանք, աս աղջիկս խալսենք, բժի՛շկ պիտի բերես, ի՞նչ պիտի ընես, ըրէ՛, վա՛հ աղջիկս, (լալով) վա՛հ աղջիկս...։
ՄԱՐԹԱ — Թող չեմ տար որ յերթայ, յես սեր տված եմ իրեն,

անիկա իմս է... սատված գիտէ, յեթէ տեսնամ որ տունդ կ'երթայ... չեմ ապրիր... կը մեռնիմ (լալով), անմիջապէս կը մեռնիմ...
ԱՆՈՒՅՇ — (Մարելով) Ա՜հ...։
ՍՈՒՐ — Պաղտասար աղբար, վերջ տալու յէ այս տեսարանին։
ԹԱԳՈՒՀԻ — (Լալով) Յերթանք, սիրելի փեսացուս։
ՄԱՐԹԱ — (Լալով) Մի՛ յերթար, սիրելի մեծավորս։
ՓԱՅԼԱԿ — Գոհացուր զիրենք և վերջացուր այս խայտառակութիւնը, գաւաթ մ'ալ խմեցի, քիթես բերնես հանեցիր։
ՊԱՂՏ — Սուտ է ըսածնին։
ԿԻՊԱՐ — Որքան կ'ըներ խաբեր է... Դուրսէն բարի մարդ մը կերեւար։
ՅԵՐԿԱԹ — Պաղտասար աղբար, արդարանալու յոյս չմնաց քեզի համար։ Արդարութիւնը չի խղդվիր, պարապ տեղ մի՛ աշխատիր ինքզինքդ արդարացնելու. հանցաւոր ես դուն։
ՄԱՐԹԱ — (Լալով) Ինչո՞ւ համար հանցաւոր ըլլայ, մինթէ յերկրորդ անգամ կարգվիլը հանցա՞նք է։
ԹԱԳՈՒՀԻ — (Լալով) Ժամանակ չանցունենք, յերթանք։
ՊԱՂՏ. — Կորսվեցէ՛ք, գնացէ՛ք աչքիս առջեւէն։ (Կը փախչի տեսարանին վրայ, Մարթա յեւ Թագուհի կը հալածեն) Ասանկ բան ալ գլխուս չեկած չուներ... (Պոռալով) Ես կարգվելու չեմ, կարգվելու ժամանակ չունիմ։ (Տեսարանէն դուրս կը փախչի, Մարթա յեւ Թագուհի անոր յետեւեն կը վազեն)։
ԿԻՊԱՐ — (Յած առ Անույշ) Շատ աղէ՛կ կատարեցին իրենց դերը։
ԱՆՈՒՅՇ — (Յած առ Կիպար) Իրքէ առաջին կարգի դերասանուհիներ։
(Պաղտասար տեսարան կը մտնէ վազելով, յետեւեն Մարթա յեւ Թագուհի)։
ՊԱՂՏ. — Ազատեցէ՛ք զիս այս կնիկներու ձեռքէն, պիտի սպաննեն զիս։
ՍՈՒՐ — Տիկիններ, չափն անցուցիք, ըստ որինի ներկայացուցէք ձեր խնդիրն Խորհրդույս, որ արդարութեամբ քննէ և իմաստասիրէ ձեր գործը։
ԹԱԳՈՒՀԻ — Շատ լաւ. գիտէք արդէն, թէ որքան ծանր բան է անփորձ աղջիկ մը խաբելը։
ՄԱՐԹԱ — Հարկավ մեզմէ աղէկ գիտէն թէ որքան ամօթալի բան է իմ տարիքիս կին մը գլխէ հանելը։

ՊԱՂՏ. — Ո՛չ, գլխէ հանել…։
ԱՆՈՒՇԾ — Շատ, շատ կը ցավիմ ականատես ըլլալուս համար տեսարանի մ'որ կենացս կեան ալաւեց։
ՓԱՅԼԱԿ — Հոգ մի՛ ընէք, տիկին, ամէն բան կանցնի և կը մոռցուի։
ԱՆՈՒՇԾ — Զգացում և պատիվ ունեցող կնկան մը համար շատ դառն է տեսնել յուր ամուսնույն խայտառակութիւնները։ (Վազելով Պաղտասարը կը փակէ), կը ներեմ քեզի։ (Աչերը կը սրբէ)։
ՍՈՒՐ — Այս դառն է մանավանդ Անուշի մը։
ՊԱՂՏ. — Ցես չեմ ներեր քեզի, վոր միակ պատճառ ես բոլոր այս սատանայութեանց։
ՓԱՅԼԱԿ — (Ոտքի ելլելով) Ամենքդ ալ նստեցէք, լավ խորհուրդ մը հղացայ։ Աղյանն արդեն շատոնց փակված է…։
ԹԱԳՈՒՀԻ — Բայց իմ գործս…։
ՄԱՐԹԱ — Ապա իմի՞նս…։
ՓԱՅԼԱԿ — Դուք ձեր խնդիրներն գրով ներկայացուցեք մեզի և վստահ յեղեք, վոր անաչառութեամբ պիտի քննվին։
ԹԱԳՈՒՀԻ — Խոսք կուտա՞ք ուրեմն։
ՅԵՐԿԱԹ — Այո։
ՄԱՐԹԱ — Շնորհակալ ենք։
ԿԻՊԱՐ — Ի՞մ խնդիրս։
ՓԱՅԼԱԿ — Ձեր խնդիրն կրնաք վերջացած համարել, հայտնի յէ, թէ անդամոցս կարծիքներն նպաստավոր են ձեզ։ Արդ, ատյանը փակված է…։
ԿԻՊԱՐ — Թույլ տվեք ուրեմն իմ շնորհակալութիւնս և յերախտագիտութիւնս հայտնել այն ուղղութեան համար, վորով պատվարժան հանձնաժողովդ վարվեցավ, խնդիրն պարագաներովը քննեց և արդարութիւնն յերևան բերավ։
ԱՆՈՒՇ — Չեմ կարող բառ գտնել յերախտագիտական զգացումներս հայտնելու այն անաչառութեան և անկողմնակալութեան համար, վորմե առաջնորդվեցավ պատվարժան հանձնաժողովդ և գտացավ տկար եյակի մը անմեղութիւնն ի լույս բերելու. կենացս մինչև վերջին շունչը շնորհապարտ պիտի մնամ ձեզ։
ՓԱՅԼԱԿ — Շնորհակալ ենք ձեր արտահայտած զգացումներեն և կը խոստանանք միևնույն ուղղութեամբ ընթանալ մինչև դատին վերջը։

ՊԱՂՏ. — Իմ թուղթս ի՞նչ յեղավ։
ՍՈՒՐ — Ձեր թուղթը հաջորդ նիստին։
ՓԱՅԼԱԿ — Թող չմնի՛ք, վոր հղացած խորհրդույս ծնունդ տամ։ Քանի վոր հոս ներկա յեն չորս այր և չորս կին, պատճառ մը չունինք, կարծեմ, չը պարելու։ Ի՞նչ կըսեք։
ՅԵՐԿԱԹ — Սքանչելի խորհուրդ։
ՍՈՒՐ — Ընտիր գաղափար։
ՓԱՅԼԱԿ — Պետք չէ մոռնալ սակայն թէ այս պարն պաշտոնական հանդամանք չպիտի ունենա։
ՅԵՐԿԱԹ — Ի հարկէ։
ԱՆՈՒՇԾ — Մեծ անքաղաքավարութիւն կըլլար մեր կողմեն, յեթէ մերժեյինք պատվարժան հանձնաժողովույդ սույն առաջարկն. կարծեմ տիկիններն ալ կը հաճին ընդունիլ ձեր հրավերն։
ՍՈՒՐ — Կոչում կընեմ ուրեմն տիկնանց վսաքերուն ազգասիրական զգացմանց և կը խնդրեմ, վոր ընդունին մեր հրավերն։
ՅԵՐԿԱԹ — Ո՞վ պիտի նախագահե պարին։
ՊԱՂՏ. — (Բինն խոսելով) Գործ ունեցի՛ր և սանց հանձնե։
ՍՈՒՐ — Պաղտասար աղբարն ավելորդ է, ան ալ կրնա հանդիսական ըլլալ, յեթէ կըբաղձա։
ՊԱՂՏ. — Ցես վոչ հանդիսական կուզեմ ըլլալ, և վոչ ալ պարական, յես կուզեմ վոր գործս մաքրվի, կինս պատժվի։
ՍՈՒՐ — Տեր Յերկաթն, վոր լավ պարող մ'է, կը նախագահե պարին։
(Պարը կ'սկսի յեվ տասը վայրկյանի մեջ կը վերջանա, պարի ժամանակ Կիպար դիտմամբ Պաղտասարին՝ վար կը ծռի ստամ-ոքսին վրա՝ ոտքը կը կոխէ կամ կը բաղխի անոր դեմ յեվ ներումն կը խնդրէ)։
ՊԱՂՏ. — (Պարի միջոցին մեջք ընդ մեջք ընդհատելով) Որու՞ մաքեն կանցներ թէ այս տեսակ դժբախտութիւններ պիտի ըլլային իմ վրաս… անիծյալ ըլլա այն օրն, ուր այս դժոխային կնկան հետ կարգվեցա, ինչո՞ւս պետք իմին կարգվիլ… կարգվիլն ի՞նչ՝ ըսել է… աշխարհ մտանք… մտանք և անանկ մտանք, վոր դուրս յելնելն անկարելի յէ… ա՛ռ քեզի աշխարհ ու նստէ… կարելի բան չէ… առնել նստիլ այս կնիկը, անկարելի յէ… յեթէ չկրնամ ապացուցանել… բայց վոչ, պիտի ապացուցանեմ… իսկ յեթէ չկրնամ՞

ՊԱՂՏ. — Ո՜հ, գլխի հանել...:
ԱՆՈՒՅՇ — Շատ, շատ կը ցավիմ ակամատես ըլլալուս համար տեսարանի մ'որ կենացս կեսն պաշտեց:
ՓԱՅԼԱԿ — Հոգ մի ընեք, օրիորդ, ամեն բան կանցնի և կը մոռցվի:
ԱՆՈՒՅՇ — Զգացում և պատիվ ունեցող կնկան մը համար շատ դառն է տեսնել յուր ամուսնույն խայտառակությունները: (Վազելով Պաղտասարը կը փակէ), կը ներեմ քեզի: (Աչքերը կը սրբէ):
ՍՈՒՐ — Այս դառն է մանավանդ Անույշի մը:
ՊԱՂՏ. — Ես չեմ ներեր քեզի, որ միակ պատճառ ես բոլոր այս սատանայության:
ՓԱՅԼԱԿ — (Ոտքի ելլելով) Ամենքդ ալ նստեցեք, լավ խորհուրդ մը հղացա: Աւյանն արդեն շատոնց փակված է...:
ԹԱԳՈՒՀԻ — Բայց իմ գործս...:
ՄԱՐԹԱ — Ապա իմինս...:
ՓԱՅԼԱԿ — Դուք ձեր խնդիրներն գրով ներկայացուցեք ինծի և վստահ եղեք, որ անաչառությամբ պիտի քննվին:
ԹԱԳՈՒՀԻ — Խոսք կուտաք ուրեմն.
ՅԵՐԿԱԹ — Այո:
ՄԱՐԹԱ — Շնորհակալ ենք:
ԿԻՊԱՐ — Իմ խնդիրս:
ՓԱՅԼԱԿ — Ձեր խնդիրն կրնաք վերջացած համարել, հայտնի է, թե անդամոցս կարծիքներն նպաստավոր են ձեզ: Արդ, ատյանը փակված է...:
ԿԻՊԱՐ — Թույլ տվեք ուրեմն իմ շնորհակալությունս և երախտագիտությունս հայտնել այն ուղղության համար, որով պատվարժան հանձնաժողովդ վարվեցավ, խնդիրն պարագաներովը քննեց և արդարությունն յերևան բերավ:
ԱՆՈՒՇ — Չեմ կարող բառ գտնել երախտագիտական զգացումներս հայտնելու այն անաչառության և անկողմնակալության համար, որմե առաջնորդվեցավ պատվարժան հանձնաժողովդ և գտյացավ տկար եյակի մը անմեղությունն ի լույս բերելու. կենացս մինչև վերջին շունչը շնորհապարտ պիտի մնամ ձեզ:
ՓԱՅԼԱԿ — Շնորհակալ ենք ձեր արտահայտած զգացումներեն և կը խոստանանք միևնույն ուղղությամբ ընթանալ մինչև դատին վերջը:

ՊԱՂՏ. — Իմ թուղթս ինչ եղավ:
ՍՈՒՐ — Ձեր թուղթը հաջորդ նիստին:
ՓԱՅԼԱԿ — Թող չմոռնեք, որ հղացած խորհրդույս ծնունդ տամ: Քանի որ հոս ներկա յեն չորս այր և չորս կին, պատճառ մը չունինք, կարծեմ, չը պարելու: Ինչ կըսեք:
ՅԵՐԿԱԹ — Սքանչելի խորհուրդ:
ՍՈՒՐ — Ընտիր գաղափար:
ՓԱՅԼԱԿ — Պետք չէ մոռնալ սակայն թե այս պարն պաշտոնական հանդամանք չպիտի ունենա:
ՅԵՐԿԱԹ — Ի հարկե:
ԱՆՈՒՅՇ — Մեծ անքաղաքավարություն կըլլար մեր կողմեն, յեթե մերժեյինք պատվարժան հանձնաժողովույդ սույն առաջարկն. կարծեմ օրիորդներն ալ կը հաճին ընդունիլ ձեր հրավերն:
ՍՈՒՐ — Կոչում կընեմ ուրեմն օրիորդաց վոտքերուն ազգասիրական զգացմանց և կը խնդրեմ, որ ընդունին մեր հրավերն:
ՅԵՐԿԱԹ — Ո՞վ պիտի նախագահե պարին:
ՊԱՂՏ. — (Ինքն իրեն) Գործ ունեցիր և սոնց հանձնե:
ՍՈՒՐ — Պաղտասար աղբարն ավելորդ է, ան ալ կրնա հանդիսական ըլլալ, յեթե կըբաղձա:
ՊԱՂՏ. — Ես վոչ հանդիսական կուզեմ ըլլալ, և վոչ ալ պարական, յես կուզեմ որ գործս մաքրվի, կինս պատժվի:
ՍՈՒՐ — Տեր Յերկաթն, վոր լավ պարող մ'է, կը նախագահե պարին:
(Պարը կ'սկսի եւ տաս վայրկեանի մէջ կը վերջանայ, պարի ժամանակ Կիպար դիտմամբ Պաղտասարին՝ որ կը նստի սեղանին վրայ՝ ոտքը կը կոխէ կամ կը բաղխի անոր դէմ եւ ներումն կը խնդրէ):
ՊԱՂՏ. — (Պարի միջոցին մերթ ընդ մերթ ընդհատելով) Որու մտքեն կանցներ թե այս տեսակ զբաղմունքներ պիտի ըլլային իմ վրա... անիծյալ ըլլա այն օրն, ուր այս դժոխային կնկան հետ կարգվեցա, ինչու պետք իմին կարգվիլ... կարգվիլն ինչ՝ ըսել է... աշխարհ մտանք... մտանք և անանկ մտանք, վոր դուրս յելնելն անկարելի յե... մտ քեզի աշխարհ ու նստե... կարելի բան չէ... առնել նստիլ այս կնիկը, անկարելի յե... յեթե չկրնամ ապացուցանել... բայց վոչ, պիտի ապացուցանեմ... իսկ յեթե չկրնամ՞

կրօնքս կը փոխեմ, կամ հռովմէական կըլլամ կամ բողոքական, ձեռքես ուրիշ ի՞նչ կ'ուգա... կամ քաղաքը կը թողում կը փախ-չիմ... ա՜հ, կնիկներ, ա՜հ... բոլորովին զզվեցա ձեզմե... կը վախնամ կոր... կնիկ մը տեսնելուս պես դող կ'ուգա կոր վրաս... կը վախնամ կոր... հապա սա ոճ կինն, որ կըսե թե աղջկանը խոսք տված եմ... հապա մյուսն... խափածն... ցնդածն... հիսուն տարու կա և գլխե հանեք եմ ցեղեր զին-քը... հապա մեր Սողոմե խաթունը... ասոնց ամենն ալ Կի-պարին վարպետությունները են, մեկս չունի... կին ունե-ցողն համբերող ըլլալու չե... վհատելու չե, հարկավ պետի հաս-տատեմ թե այս կանանց խոսքերուն ականջ կախելու չե, թե զրպարտիչ են անոնք, թե Անուշին հանցանքը թեթեցնելու կամ պարտկելու համար շինված են... իրենց խելքովը որ-պես թե նրբացուցիչ դեպք հանցանաց պետի գտնեն... թող ընեն, ինչ որ կուզեն. չեթե արդարությունն վերցված չե աշխարհես, անպատճառ պետի հայտնվի իմ անմեղությունս... անիծյալ պարն ալ դեռ չլմնցավ որ քանի մը խոսք ընեյի սըվոնց...:

Պարը կը վերջանա յեվ պարողք թեվ թեվի պտըտիլ կսկսին):

ԹԱԳՈՒՀԻ — (Առ Յերկաթ). Յերկար ատեն չեմ կրնար մնալ, ձեր սիրույն համար ընդունեցի պարը, կ'աղաչեմ որ թողուք գիս յերթալ և աղջկանս հուզմունքն հանդարտեցնել:

ՅԵՐԿԱԹ — Կրնաք յերթալ, Պաղտասար աղբարին թեը կ'առաջար-կեմ ինձի համար: (Պաղտասարին հետ թեվ թեվի կ'սկսի պտըտիլ):

ՊԱՂՏ. — Համբերություն, ուրիշ ճար չկա:

ԹԱԳՈՒՀԻ — Տյարք իմ, ահա կ'երթամ յես վստահելով միմիայն ձեր ազգասիրական զգացմանց և հուսալով թե պիտի պաշտ-պանեք խեղճ աղջկան մը դատը:

ՍՈՒՐ — Հանդարտ յեղեք: (Թագուհին կը մեկնի):

ՓԱՅԼԱԿ — Բաժակ կ'առաջարկեմ տիկին Անուշի կենացը համար: (Ամենքը կը խմեն, բացի Պաղտասարե):

ՅԵՐԿԱԹ — Դուք ինչո՞ւ չեք խմեր, Պաղտասար աղբար, քաղա-քավարությունը կ'պահանջե...:

ՍՈՒՐ — Ոչ թե կ'պահանջե, այլ կը հրամայե...:

ՅԵՐԿԱԹ — Զմերժել զավաթն, որ կ'առաջարկվի ի կենդանու-

թյուն ձեր տիկնոջ, մանավանդ այնպիսի մեկ տիկնոջ, վորու շնորհիվ միայն կրցած եք բարձր ընկերության մեջ մուտ գտնել...:

ՍՈՂՈՄԷ — Խոսիլ սորվիլ:

ՅԵՐԿԱԹ — Տիկնոջ մ'որ ձեր փառքն ու պարծանքն ավելցու-ցած է:

ՍՈՂՈՄԷ — Պարել սորվեցուցած է:

ՅԵՐԿԱԹ — Տիկնոջ մ'որ յուր դաստիարակությամբն և կրթու-թյամբն զձեզ յերջանիկ ըրած է:

ՍՈՂՈՄԷ — Հագվիլ սորվեցուցած է:

ՅԵՐԿԱԹ — Տիկնոջ մ'որ ի բաց վանելով այն ամեն հաճույք-ներն և զվարճալիքներն, զորս յուր գեղեցկությունն, յերի-տասարդությունն, հրապույրն լիաբուռն կընձեռեին իրեն, շատացած է այն վիշտերով, զորս պատճառած եք և դեռ կը պատճառեք:

ՍՈՂՈՄԷ — Ձյան պես սպիտակ...

ՅԵՐԿԱԹ — Տիկնոջ մ'որ...:

ՍՈՂՈՄԷ — Ձյան պես սպիտակ շապիկներ հագցուցած է:

ՅԵՐԿԱԹ — Տիկնոջ մը, որ վերջապես անգին գանձ մ'է ձեզի համար, ուստի կը հրավիրեմ, որ խմեք յուր կենացը:

ՊԱՂՏ. — Շնորհակալ եմ յուր ըրած ծառայություններեն և կը-բարեհաղթեմ, որ ձեր կինն ալ անանկ ծառայություններ ընե ձեզի. բայց գինի չեմ կրնար խմել: (Մեկուսի) Ծառա-յություննե՜ր...

ՍՈՒՐ — Պատշաճից որենքն կը պահանջեր, որ խմեյիք. ձեր այս վարմունքով կը հաստատեք ձեր տիկնոջ անմեղությունը:

ՓԱՅԼԱԿ — Կը խմեմ ի կենդանություն ներկայից:

ՅԵՐԿԱԹ — Կը խմեմ ի կենդանություն բացակայից:

ԱՆՈՒՅՇ — Բաժակ կ'առաջարկեմ պատվարժան հանձնաժողովո անդամոց որերուն յերկարության համար: (Կը խմեն):

ԿԻՊԱՐ — Ո՛ն, խմենք հանձնաժողովո մեծապատիվ անդամոց որերուն յերկարության համար: (Կը խմեն).

ՍՈՒՐ — Մեկնելու ժամ է:

ՓԱՅԼԱԿ — Այո, յերթանք:

ՍՈՒՐ — (Առ Պաղտասար) Դուք մինչև որ յերաշխավոր մը ցույց տաք՝ չեք կրնար այս տան մեջ մնալ:

ՅՐԿԱԹ — Յեմ այս վայրկյանին դուրս ելնելու չէք:

ՊԱՂՏ. — Ինչու, տունն իմս չէ՞, ծվ կը խառնվիս այս տունին:

ՍՈՒՐ — Չեմ կարծեր, որ ստիպեք զմեզ խիստ միջոցներու դիմելու:

ԱՆՈՒՅՇ — Յես չեմ կ'ուզեմ խնդիրս և կ'աշխատիմ միջոց մը գտնել ինքզինքս պաշտպանելու յուր հարձակմանց դեմ:

ՍՈՒՐ — Շատ լավ, ահա կը մեկնինք մենք:

ՏԵՍԻԼ ԺԲ.

ՊԱՂՏԱՍԱՐ, ԱՆՈՒՅՇ, ՄԱՐԹԱ, ՍՈՂՈՄԵ

ՄԱՐԹԱ — (խնդալով) Հահ, հահ, հահ...:

ՊԱՂՏ. — Ինչու կը խնդաս...

ՍՈՂՈՄԵ — Հահ, հահ, հահ...:

ԱՆՈՒՅՇ — (խնդալով) Հահ, հահ, հահ, ինչու կը խնդաք:

ՊԱՂՏ. — Աներեսներ: (Յերեքը մեկեն կը խնդան) Զամչցածներ, լիրբեր... ուհ...:

ՍՈՂՈՄԵ — Դյուրին է կին մը զրպարտել և աշխարհի առջև ծաղր ու ծանակ ընել: Գնա տիկնոջդ ձեռքը համբուրե, հաշտվե հետը, յեթե վոչ դեռ շատ կը քաշես. կինը թողուլ ուզողն շատ խաղերու պատրաստվելու յէ (Կը մեկնի):

ՄԱՐԹԱ — Մնաք բարով, Պաղտասար աղբար, ի տեսություն (Կը մեկնի):

ՊԱՂՏ. — Դժողք:

ԱՆՈՒՅՇ — Յերկնից շնորհն կը հայցեմ քեզի համար և կ'աղոթեմ, որ յերկինք իմաստություն շնորհե քեզ, վորպեսզի խելքդ գլուխդ ժողվես և հասկնաս թե այս ճամբան անել է, թե կինդ անմեղ է, թե ուղեղի հիվանդություն մը յերևակայել կուտա քեզ, թե Կիպարը կը սիրեմ:

ՊԱՂՏ. — Ուղեղի հիվանդություն չունիմ յես:

ԱՆՈՒՅՇ — Իրողությունը հակառակը ցույց կ'ուտա (Կը մեկնի):

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՊԱՂՏԱՍԱՐ, հետո ՈԳՍԵՆ

ՊԱՂՏ. — Աղեկ, աղեկ, աղեկ անզգամություն, աղեկ հանձնաժողովություն... ձի... նապաստակ, լոբամարգի, ճերմակ գինի...

խնձոր... սև գինի... գեղձ... գինի... ողի... ադուխտ... պար... ցատկտուք... ասիկա պարզապես պարահանդես յեղավ... և ասանկ մարդիկ իմ գործս պիտի քննեն և տնօրինություն պիտի ընեն... կարելի չէ հուսահատիլ... բայց հուսահատելն ալ հնար չէ... ամեն սատանայությանց, ամեն խաղերուն կը հավատան և արդարությունն յերեվան յելած կը համարին, ի՞նչ տեսակ արդարություն է աս... խելքս չպառկեցավ...:

ՈԳՍԵՆ — Ի՞նչ լուր:

ՊԱՂՏ. — Աղեկ լուր:

ՈԳՍԵՆ — Գործերը հաջող են, այնպես չէ՞:

ՊԱՂՏ. — Հաջող են:

ՈԳՍԵՆ — Ի՞նչ հասկցար գործոց ընթացքեն:

ՊԱՂՏ. — Գործոց ընթացքեն աս հասկցա, որ մենք չպիտի կըրնանք գլուխ յելնել այս կնկան հետ:

ՈԳՍԵՆ — Ինչու. միթե չկրցի՞ր հաստատել թե կինդ անհավատարիմ գտնված է յուր պաշտոնին մեջ, թե...:

ՊԱՂՏ. — Յուր անհավատարմությունն հաստատված է, հետևաբար և բնականաբար և այլն, և այլն...:

ՈԳՍԵՆ — Ուրեմն:

ՊԱՂՏ. — Պարել, ցատկել, ողի խմել...:

ՈԳՍԵՆ — Չեմ հասկնար, չըլլա որ սխալ խոսք մը փախցուցած ըլլաս բերնեդ:

ՊԱՂՏ. — Խոսիլ չտվին արդեն, որ սխալ խոսք փախցուցած ըլլամ:

ՈԳՍԵՆ — Իրենց արժանապատվությունը վիրավորեցիր:

ՊԱՂՏ. — Վոչ:

ՈԳՍԵՆ — Իմ հրահանգացս համաձայն չշարժեցա՞ր:

ՊԱՂՏ. — Շարժեցա:

ՈԳՍԵՆ — Հոգ մի՛ ըներ ուրեմն, անկարելի յէ որ կորսնցնենք այս դատը: Մասնաճյուղն քննեց այսոր մյուս խնդիրն և կարծեմ թե նպաստավոր է մեզի: Իմացածիս նայելով, պիտի տեղեկագրե թե Կիպար Անույշի հետ գտնված է այն վատահամբավ տան մեջ:

ՊԱՂՏ. — Իրա՞վ կըսեք:

ՈԳՍԵՆ — Վայրկյանե վայրկյան լուր կը սպասեմ:

ՊԱՂՏ. — Կարծես թե քիչ մը սիրտս բացվեցավ. ահ, հոս ըլլալու եյիք և տեսնեյիք ինչեր դարձավ...

ՈԳՕԵՆ — Ինչե՞ր։

ՊԱՂՏ. — Վերջը կը պատմեմ, միայն սա չափն ըսեմ քեզի, վոր կիները վախնալ սկսա... կին մը տեսնելուս պես կարծես գլխուս վրա պաղ ջուր կը թափեն...

ՈԳՍԵՆ — Համբերություն և հարատևություն... ասանկ դառնը շահելն շատ դյուրին չէ։

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՆՈՒՅՆՔ և ՍՈՒՐ

ՍՈՒՐ — Ի դիմաց հանձնաժողովի պատիվ ունիմ ձեզ հաղորդելու թե վաղը հոս պիտի գտնվինք վերջնական վորոշում տալու համար ձեր խնդրույն, վոր ուրիշ գույն առավ։

ՊԱՂՏ. — Ի՞նչ գույն առավ։

ՍՈՒՐ — Մինչև հիմա ունեցած գույնը փոխեց, ավելին չեմ կըրնար ըսել. վստահ յեղեք, վոր մենք արդարությունը պիտի պահպանենք։

ՊԱՂՏ. — Շնորհակալ եմ։

ՍՈՒՐ — Հանձնաժողովույս սույն վորոշումը հաղորդվեցավ նաև ձեր կնոջ. վորոշում մ'որ փողոցի վրա տրվեցավ մասնաճյուղին տեղեկագրին յերբակայության վրա և զոր գրով հաղորդելու համար ժամանակ կը պակսեր, պաշտոնապես գիտեք ուրեմն այժմ թե վաղը հոս պիտի գումարվինք։

ՊԱՂՏ. — Բարի յեկաք, հազար բարի։

ՏԵՍԻԼ ԺԵ.

ՊԱՂԴԱՍԱՐ, ՈԳՍԵՆ

ՊԱՂՏ. — Արդարությունն հիմա հայտնվեցավ։

ՈԳՍԵՆ — Ըստ մեր պայմանագրության պարտավոր եք ուրեմն այսոր վճարել ինձ հիսուն վոսկի ևս, վորովհետև վճռագիրն վաղը պիտի տրվի։

ՊԱՂՏ. — Մաղ մնաց վոր պիտի դատապարտեյին զիս։

ՈԳՍԵՆ — Ուրախ եմ, վոր հաջող են գործերը՝ կրնա՞ք հատուցանել ինձ յերկրորդ վճարումը, հիսուն վոսկին...։

ՊԱՂՏ. — Այնչափ աճապարելու հարկ չկա։ Յերթանք քիչ մը զվարճանալու։

ՈԳ ՍԵՆ — Յերթանք, վոչ թե զվարճանալու, այլ խորհրդակցելու համար այն ուղղության վրա, զոր պարտիք ունենալ վաղը, բայց սա հիսուն վոսկվո գործը...

ՏԵՍԻԼ ԺԶ.

ՆՈՒՅՆՔ և ՍՈՂՈՄԵ

ՍՈՂՈՄԵ — Ինչ վոր ըսեք, ինչ վոր ընեք, անօգուտ է, տիկին Անույշ անմեղ է, հասկցա՞ք, դահիճներ։

ՊԱՂՏ. — Լռե՛, ճնճո՛ց։

ՍՈՂՈՄԵ — Շատ ստակ ունիս նե՝ տուր աս մարդուն։

ՊԱՂՏ. — Բոլոր ստակս աս մարդուն պիտի տամ։

ՈԳՍԵՆ — Պատիվ կը պահանջեմ։

ՊԱՂՏ. — Ասոր խոսքին ականջ մի՛ կախեր, անիկա խենդ է։

ՈԳՍԵՆ — Սա հիսուն վոսկին, կ'աղաչեմ։

ՊԱՂՏ. — Թող չեք տար վոր ազատ շունչ մ'առնեմ, հիսուն վոսկին տանք պիտի։

ՈԳՍԵՆ — Շնորհակալ եմ։ Դուք ալ հարկավ շնորհակալ եք դատը վաստկած ըլլալնուդ համար։

ՍՈՂՈՄԵ — Դատը մենք վաստկած ենք։

ՊԱՂՏ. — Կրնա՞մ վստահ ըլլալ թե վաստկեցանք։

ՈԳՍԵՆ — Այո։ Բարեհաճեցե՛ք, կ'աղաչեմ, սա հիսուն վոսկին։

ՍՈՂՈՄԵ — Մեղք վոսկիներուն... գտեր են ապուշ մը, կը կթեն ու կը կթեն։

ՈԳՍԵՆ — Չե՞ք պատասխաներ հիսուն վոսկվո մասին։

ՊԱՂՏ. — Ի՞նչ պատասխանեմ։

ՈԳՍԵՆ — Յեթե այդ գումարը հիմա չվճարես՝ կինդ կարդարացնեմ և զքեզ դատապարտել կ'ուտամ։

ՊԱՂՏ. — Յեկուր առ, յեղբայր։

ՍՈՂՈՄԵ — Քսակդ տուր իրեն, լմննա յերթա։

Վերջ յերկրորդ արարին

ԱՐԱՐՔ ՅԵՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

ԿԻՊԱՐ, ՊԱՂՏԱՍԱՐ

ԿԻՊԱՐ — Չեմ կրնար ցաւս և զարմանքս չյայտնել այն պաղ ընդունելութեան վրայ, որով կընդունիք զիս քանի մը ժամանակէ հետէ, և անկարող մեկնելու ձեր այս պաղ վարմունքն՝ միշտ կը հարցնեմ խղճիս, թէ Պաղտասար աղբարին բարեկամութիւնը պաղեցնելու բնութիւն ունեցող հանցանք մը գործած եմ արդեօք և խղճիս ո՛չ պատասխանը կ՚ընդունիմ...

ՊԱՂՏ. — Խիղճդ քեզմէ աւելի անամօթ և դուն խղճեդ աւելի լիրբ։

ԿԻՊԱՐ — Ըսէ, կ՚աղաչեմ, ի՞նչ պատճառներ կը հարկադրեն զքեզ անվայել լեզու գործածել մտերիմ բարեկամի մ՚որ աշխատած է միշտ ամրապնդելու քեզի հետ ունեցած բարեկամութեան կապերը...

ՊԱՂՏ. — Ամրապնդելո՞ւ... կապերը ամրապնդելո՞ւ... ո՛հ, անզգամ, լուծելու ըսէ սովոր, քակելու ըսէ սովոր... դաւաճա՛ն...

ԿԻՊԱՐ — Մեծապէս կը սխալիք, եթէ կը կարծեք տակաւին թէ հեղինակն եմ կարծեցեալ հանցանքին. բնաւ չեք խորհիր, որ արդարութիւնն յերեւան պիտի գայ և ամօթապարտ պիտի ընէ զձեզ։

ՊԱՂՏ. — Այո՛, հարկաւ յերեւան պիտի գայ։

ԿԻՊԱՐ — Յետ պիտի համոզուիք թէ Կիպար անմեղ է.

ՊԱՂՏ. — Յետ հասարակութիւնն պիտի հասկնայ թէ Կիպարի պէս մեղաւոր մարդ չկայ աշխարհիս վրայ։

ԿԻՊԱՐ — Ըստ ձեր կարծեաց գլխատուելու մարդ մ՚եմ ես, այնպէս չէ՞...

ՊԱՂՏ. — Ողջ ողջ կրակի մէջ նետուելու գազան մ՚ես՝

ԿԻՊԱՐ — Կը ցաւիմ թէ հին մարդոց պէս կը խորհիք և ձեր կարծիքներն բնաւ չեն համապատասխաներ դարուս լուսաւորութեան ոգւոյն։ Պաղտասար աղբար, եթէ ձեր կնոջ սիրականն իսկ ըլլայի, բնաւ պարտականութիւն չունէիք մարսել ձեր լեզուն, որ արժանապատուութիւնս կը վիրաւորէ։ Գիտցէք թէ սիրած եմ ձեր կինն, բայց քեզի ի՞նչ ըրած եմ, որ անձնականութիւնս կը դպչիս. գիտնալու էիք թէ դարուս ոգին կը դատապարտէ անձնականութիւն վիրաւորելը։ Ես մինչեւ այսօր կը յարգեմ ձեր անձն և կը փափաքիմ իսկ, որ մեր բարեկամութիւնն անեղծ մնայ։

ՊԱՂՏ. — Տունս կը քանդես և կը յարգե՞ս իմ անձս։

ԿԻՊԱՐ — Ո՞վ կըսէ թէ կը քանդեմ ձեր տունը, յենթադրելով թէ կը սիրեմ ձեր կինն, ուրիշ բան մը ըրած չեմ ըլլար, այլ պարզապէս սկզբունք մը պաշտպանած կըլլամ, բայց այս սկզբունքը ձեր սկզբանց կը հակառակի եղեր. Վնաս չունի, թող սկզբունքները կռուին...

ՊԱՂՏ. — Սկզբունք։

ԿԻՊԱՐ — Այո՛, պէտք է, Պաղտասար աղբար, անհրաժեշտ պէտք է ժամանակիս յառաջադիմութեան հոսանքին մէջ նետուիլ, եթէ կուզենք հանգիստ ապրիլ։ Տասնեւիններորդ դարն ողջ ողջ կրակի մէջ նետուելու չդատապարտեր այն յերիտասարդն, որ յուր մտերիմ բարեկամին կինը սիրելու կը դատապարտուի բնութենէ։ Դարուս քաղաքակրթութիւնն կ՚որոնէ այն պատճառներն, որոնց համար յերիտասարդն ստիպուած է յուր բարեկամին կինը սիրելու...

ՊԱՂՏ. — Այդ աղւոր խօսքերը պահէ՛ դատաստանական Խորհրդոյ առջև զրուցելու համար, անզգա՛մ... կինս գլխէ կը հանես, աշխարհի առջև զիս ծաղր ու ծանակ կընես, տունս կը կործանես և առանց ամչնալու կըսես թէ սկզբունք մը կը պաշտպանես. .

ԿԻՊԱՐ — Այո՛, և այս փաստերս կը յայտնեմ զքեզ ցաւելուս համար, զքեզ համոզելու համար որ յետ քաշուիս այդ դատէն, ուր քեզի համար յաջողութեան բնաւ յոյս չկայ... ի տեսութիւն...

ՏԵՍԻԼ Բ.

ՊԱՂՏԱՍԱՐ եւ ՈԳՍԵՆ

ՊԱՂՏ. — Պիտի սորվիս դուն սկզբունք պաշտպանելը... այնչափ ալ աներեսութիւն բնավ տեսած ու լսած չունեյի... թե վոր յես ասանկ հանցանք մը գործեյի, աստված մի՛ արասցե, փողոց յելնելու պիտի ամչնայի... ու հիմակվան յերիտասարդներն շատ կարևորութիւն չեն տար կոր ամչնալու... գողութիւն ալ կընեն կոր և բարեգործութիւն ընողներեն ավելի ազատ, ուրախ և զվարթ կը մնանն կոր ընկերութեանց մեջ... զարուս վոգին ասանկ կը պահանջե յեղեր։

ՈԳՍԵՆ — Ի՞նչ ջուրի վրա չեն գործեր...։

ՊԱՂՏ. — Ինչպես վոր գիտեք։ Մասնաժողովի անդամներն պիտի գան, խնդիրը պիտի քննեն և պիտի տեղեկագրեն Դատաստանական Խորհրդո, ուր պիտի ներկայանանք դատվելու համար։

ՈԳՍԵՆ — Շատ լավ։ Թեպետ և վստակած ենք դատն, այսուամենայնիվ պետք չե գոռոզանալ և խիստ լեզու գործածել մասնաժողովի անդամոց։ Հարկ և շոյել, փողոքել զիրենք մեղմ և անուշ բացատրութիւններով, նամանավանդ պետք և այսուհետև անոնց սրտին դիպչել և վոչ թե մտքին։ Սրտի դիպողներն ունայնաձեռն յետ չեն դառնար։ Ուստի հարկ չկա այլես փաստաբանելու, աղաչելը հերիք ե։ Ուրեմն յերբ ներկայանան հոս՝ անմիջապես կը ծնրադրենք անոնց առջև ու աղերսանաց, հեծութեան, հառաչանաց ձայնիվ կ'աղաղակենք և կ'ըսենք կականաբերձ. «Տյարք, իմ, կոչում կընեմ ձեր գթութեան, ձեր խղճին, ձեր սրտին, ձեր արդարասիրական զգացմանց, և կաղաչեմ խնայեցե՛ք գերդաստանիս պատվույն, խնայեցեք իմ կենացս և իրավունք ըրեք, Տյարք իմ, յեղբարք իմ, գթացեք... գթացեք... գթացեք...

ՊԱՂՏ. — Այո՛, այո, շատ աղեկ պիտի ըլլա ասանկ, շատ աղեկ խորհեր ես սիրկա, աղաչելը միշտ աղեկ ե...

ՈԳՍԵՆ — Ըրե՛ նայիմ, ինչպես պիտի ընես։

ՊԱՂՏ. — Տյարք իմ...

ՈԳՍԵՆ — Մի՛ այդպես բարկութեամբ, այլ ասանկ... Տյարք իմ... ասանկ՝ Տյարք իմ... աղաչելու պես, տես, Տյարք իմ... այնպես, վորպես թե վողորմութիւն պիտի խնդրես իրենցմե... Տյարք իմ...

ՊԱՂՏ. — Տյարք իմ...

ՈԳՍԵՆ — Ձայնդ այնչափ հաստ մի՛ հաներ, ավելի բարակ ու ավելի գրավիչ ձայն մը գործածե, ասանկ... Տյարք իմ...

ՊԱՂՏ. — Տյարք իմ...

ՈԳՍԵՆ — Ապրիս։

ՊԱՂՏ. — Կոչում կ'ընեմ։

ՈԳՍԵՆ — Կոչումին վերջի վանկը յերկնցնելով և անմիջապես կ'ընեմը հնչե, իրարմե շատ մի՛ զատեր զանոնք, վոր իրենց ազդեցութիւնը չկորսնցունեն։

ՊԱՂՏ. — Կոչո՛ւո՛ւմ կ'ընեմ

ՈԳՍԵՆ — Բազուկներդ տարածե։

ՊԱՂՏ. — (Բազկատարած) Կոչում կ'ընեմ ձեր գթութեան։

ՈԳՍԵՆ — Կանգ ա՛ռ... քիչ մ'ավելի բարձր։

ՊԱՂՏ. — Ձեր խղճին։

ՈԳՍԵՆ — Մի՛ ճեղեր, կես աստիճան բարձր։

ՊԱՂՏ. — Ձեր գթութեան։

ՈԳՍԵՆ — Շունչ ա՛ռ, քառորդ աստիճան ավելի բարձր։

ՊԱՂՏ. — Ձեր սրտին...

ՈԳՈԵՆ — Աղեկ... ավելի բարձր։

ՊԱՂՏ. — Ձեր արդարասիրական զգացմանց...

ՈԳՍԵՆ — Ի ծունր և բազկատարած։

ՊԱՂՏ. — (Ի ծունր յեվ բազկատարած) Կ'աղաչեմ...

ՈԳՍԵՆ — Քթիդ ծակերը քիչ մը բացվին...։

ՊԱՂՏ. — Խնայեցե՛ք գերդաստ...

ՈԳՍԵՆ — Խնայեցեեեեեեեեեեեեք գերդաստանիս պատվույն...։

ՊԱՂՏ. — Խնայեցե ե ե ե ե ե ե ե ե ե ե եք գերդաստանիս պատվույն...։

ՈԳՍԵՆ — Բերանդ ալ կես բաց պիտի մնա չխոսած ժամանակդ, քթիդ ծակերն միշտ ընդլայնին պիտի...։

ՊԱՂՏ. — Խնայեց ե ե ե ե ե ե ե ե ե ե ե ե ե ք։

ՈԳՍԵՆ — Հերիք ե ալ...։

ՊԱՂՏ. — ... Եք իմ կենացս...։

ՈԳՍԵՆ — Կամաց կամաց պիտի մտնենս հանձնաժողովի անդամոց, վորպես թե անտեսանելի զորութիւն մը զքեզ մղեր...

ՊԱՂՏ. — Յեւ խրախուսեք զիս, Տյարք իմ։
ՈԳՍԵՆ — Լաւ։
ՊԱՂՏ. — Յեղբարք իմ։
ՈԳՍԵՆ — Յերկրպագութիւն...
ՊԱՂՏ. — Գթացեք...
ՈԳՍԵՆ — Գլուխդ ձեռներուդ մէջ։
ՊԱՂՏ. — Գթացեք։
ՈԳՍԵՆ — Քիչ մը լաւ։
ՊԱՂՏ. — Հի, հի, հի... գթացեք... հի, հի, հի։
ՈԳՍԵՆ — Շատ աղեկ ըրիք։
ՊԱՂՏ. — Քանի մ'անգամ ալ ինքնիրենս վարժութիւն կ'ընեմ... բայց կը հոգնի կոր մարդ...
ՈԳՍԵՆ — Պատճառն այն է, որ գթութեան առջեւ ներկայանալու համար կատարվելիք ձեւակերպութիւնները քիչ մը դժվար են։ Շատ փաստաբաններ կարեւորութիւն չտալով ասոնց, կը կորսնցնեն իրենց դատերը։
ՊԱՂՏ. — Շնորհակալ եմ, որ սորվեցուցիք ինծի։ Այս ձեւակերպութիւնները կատարելէն յետքը, դատն անպատճառ վաստըկինք պիտի, այնպես չէ՞։
ՈԳՍԵՆ — Այո։
ՊԱՂՏ. — Այդ անգամ կինն ալ գիտէ՞ արդյոք այս ձեւակերպութիւնները։
ՈԳՍԵՆ — Չեմ կարծեր... այսու ամենայնիւ ջանա որ կատարել չտաս իրեն։
ՊԱՂՏ. — Իմ կարծիքս ալ աս է։
ՈԳՍԵՆ — Առանձին կը թողում զքեզ, Պաղտասար աղբար, և վստահ եմ թե դարձիս հաջող լուրեր և յերրորդ վճարումն հիսուն ոսկին պիտի ընդունիմ։

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՊԱՂՏԱՍԱՐ

Բարի մարդ է, շիտակ մարդ է, բայց բոլոր խոսքերը հիսուն ոսկիով կը վերջանան։ Գոհ սրտով պիտի վճարեմ այդ գումարն ալ, բավական է որ ազատիմ աս կնոջ ձեռքեն, պատիվս պաշտպանեմ և խայտառակ չըլլամ բարեկամաց առջեւ։ Աս մեր դասն անգամ մ'ալ սերտենք։ (Կը ծնրադրէ) Տյարք իմ... վո՛չ, Տյարք իմ... կոչում կ'ընեմ ձեր գթութեան (Բազկատարած), ձեր խղճին (Սուր, Փայլակ ու Յերկաթ դուռն առջեւ կ'երեւան) ձեր սրտին, ձեր արդարասիրական զգացմանց, և կաղաչեմ, խնայեցեք զերդաստանիս պատվույն, խնայեցեք...

Տ Ե Ս Ի Լ Դ.

ՊԱՂՏԱՍԱՐ, ՍՈՒՐ, ՓԱՅԼԱԿ, ՅԵՐԿԱԹ

ՍՈՒՐ — Պաղտասար աղբար...։
ՊԱՂՏ. — (Չլսելով) Իմ կենացս և խրախուսեք զիս, Տյարք իմ...
ՓԱՅԼԱԿ — Պաղտասար...։
ՊԱՂՏ. — Յեկա՞ք, հոս ե՞ք... յե՞րբ յեկաք, չիմացա, ներեցեք, հրամմեցեք, նստեցեք ձեր աթոռներուն վրա։ (Կը նստին)։
ՍՈՒՐ — Ձեր խնդիրն...։
ՊԱՂՏ. — (Հրահանգաց համաձայն) Տյարք իմ, կոչում կ'ընեմ ձեր գթութեան, ձեր խղճին, ձեր սրտին, ձեր արդարասիրական զգացմանց, և կ'աղաչեմ, խնայեցեք զերդաստանիս պատվույն, խնայեցեք իմ կենացս և խրախուսեք զիս, Տյարք իմ, յեղբարք իմ, գթացեք... գթացեք...։
ՍՈՒՐ — Հանդարտ, Պաղտասար աղբար, արդարութիւնն ի լույս յեկած է։ Հանձնաժողովս ամեն միջոց ձեռք պիտի առնու գոհացում տալու համար ձեր պատվույն և հագուրդ՝ ձեր արդար կրից... արդեն ձեր կինն թաղական խորհրդարանը բանտարկված է...
ՊԱՂՏ. — Մեծապես շնորհակալ եմ... Տունս կործանեցավ...։
ՓԱՅԼԱԿ — Թեպետեւ կան ինչ ինչ դեպք նրբացուցիչք հանցանաց...։
ՊԱՂՏ. — Վոտքերնիդ պագնեմ, այդ ինչ ինչը չկա։
ՅԵՐԿԱԹ — Բատ վորում կին մ'և աղջիկ մը խաբել ուզեր եք...։
ՊԱՂՏ. — Սուտ է։
ՓԱՅԼԱԿ — Այսու ամենայնիւ Հանձնաժողովս նախ պիտի զբաղի զձեզ ձեր կնիկեն բաժնելու խնդրով և հետո ձեռք պիտի առնու մյուս խնդիրը։
ՊԱՂՏ. — Մյուս խնդիրը սուտ է։

ՍՈՒՐ — Ձեր վկայութիւնը բաւական չէ։
ՅԵՐԿԱԹ — Կարդացէք ուրեմն մեր տեղեկագիրն։
ՍՈՒՐ — Սքանչելի տեղեկագիր մ'ըլլայ։
ՓԱՅԼԱԿ — Բոլոր հանցանքը կնոջ վրայ կը թողու։
ՍՈՒՐ — Թէև մենք պարտականութիւն չունինք բնաւ ձեզ կարդալու տեղեկագիրն, որ Դատաստանական Խորհրդոյն ուղղուած է, սակայն ցոյց տալու համար թէ Հանձնաժողովս ինչ անաչառութեամբ և արդարութեամբ քննած է խնդիրն, կը կարդանք ձեզ անոր եզրակացութիւնը։ (Կը կարդա)։ Արդ նկատելով որ Պաղտասար աղբարի և կնոջ միջև անհամաձայնութիւն ծագած է ինչ ինչ պատճառներու համար, որոնց հայտնութիւնն դանց կ'ընէ Հանձնաժողովս, նկատելով որ այդ անհամաձայնութեամբ Պաղտասար աղբարի և կնոջ միջև համաձայնութիւն չկայ, որոշեց անոնց բաժանումը հետևյալ պայմաններով. Պաղտասար աղբար ոտք չպիտի կոխէ տունը։
ՊԱՂՏ. — (Որ ծունկի չոքած էր, վեր կ'ելնէ) Ի՞նչ կ'ըսէք...։
ՍՈՒՐ (Շարունակելով) Յեվ ամբողջապես կնոջը տրամադրութեան ներքև պիտի թողու զայն։ Պաղտասար աղբար ամեն ամիս յերեսուն ոսկի պիտի վճարէ յուր տիկնոջ, որպեսզի սա կարենա այդ գումարով յուր ապրուստը հոգալ և պատուավոր կերպով ապրիլ։
ՊԱՂՏ. — Այս կնիկը նորեն ինձի կուտաք կոր...։
ՍՈՒՐ — (Շարունակելով) Յեվ այդ վճարումն պատուավոր յերաշխավորութեամբ ապահովելու պարտական պիտի ըլլայ։ Իսկ այն պարագային մէջ, ուր կինն ուզէ վերստին յուր երիկն ընդունիլ՝ Պաղտասար աղբար վոևէ ընդդիմադրութիւն ընելու իրավունք պիտի չունենայ։
ՅԵՐԿԱԹ — Զհավնեցա՞ք այս եզրակացութիւնը...։
ՊԱՂՏ. — Հաւնելու՞ բան է... պատիժն ինձի տվեր էք...։
ՓԱՅԼԱԿ — Կ'ուզեյի՞ք որ կինն անոթութենէ մեռցնեյի՞նք։
ՊԱՂՏ. — Վա՜յ, բայց...։
ՍՈՒՐ — Յեթէ ձեր կինն օր մը գա ձեր ձեռքը համբուրէ ու մեղա ըսէ, դարձյա՞լ պիտի չընդունիք զինքը։
ՊԱՂՏ. — Հարկավ պիտի չընդունիմ, սատանան տեսնէ յերեսը...։
ՍՈՒՐ — Ուրեմն անկարելին կը պահանջէք դուք... Պաղտասար,

աղբար, Պաղտասար աղբար, ինձի նայէ, դուն տղայ չես և համոզվելու չես, որ մշտնջենական կերպով չես կրնար կնիկէդ բաժնվիլ, դուք յերկուքդ մէկ մարմին էք...։
ՊԱՂՏ. — Հապա Կիպրը...։
ՍՈՒՐ — Ատիկա պաշտոնական կերպարանք չունի, այդն պաշտոնապես մէկ մարմին կը ճանաչէ զքեզ և կինդ. մենք անկարող ենք այդ մարմինը բաժնելու մշտնջենապես։
ՓԱՅԼԱԿ — Հետևաբար Հանձնաժողովույս ըրած կարգադրութիւնն սիրով ու շնորհակալութեամբ ընդունիլ պարտ էր ձեզ։
ՊԱՂՏ. — Ըսել է թէ մինչև որ մեռնիմ, այս փորձանքէն չպիտի կրնամ խալսիլ։
ՍՈՒՐ — Այսինքն ձեր կնոջմէն։
ՊԱՂՏ. — Ա՜հ, որուքս կտրեր ու թատրոն չերթայի այն գիշեր, ինչո՞ւս պետք էր իմին թատրոն... թատրոնս պակաս էր... տունդ նստէ, Նարեկդ կարդա, մարդ աստուծո...։
ՓԱՅԼԱԿ — Խեղճ ո՜ւր էր այն ատեն։
ՅԵՐԿԱԹ — Ինչո՞ւ վիճակիդ համար կին մը չառիր։
ՊԱՂՏ. — Կարգվիլն ինչ մեծ հանցանք է եղեր... բայց, ինչ որ ալ ըլլայ, չեմ կրնար ձեր եզրակացութիւնն ընդունիլ։
ՍՈՒՐ — Բռնի ընդունիլ պիտի տանք։
ՅԵՐԿԱԹ — Յեթէ հարկը պահանջէ՝ մինչև անգամ բանտը պիտի դնենք զքեզ։
ՓԱՅԼԱԿ — Մենք չենք կրնար մեր նախնեաց աւանդութեանց հակառակիլ։ Դուն անոր օրինավոր ամուսինն ես. քիչ մը ժամանակի համար միայն կրնաք բաժնվիլ։
ՍՈՒՐ — Յերթանք ուրեմն, մենք գործ չունինք այլ ևս հոս. Դատաստանական Խորհրդոյն անկ է յուր վճիռը հաղորդել և գործադրութիւնը պահանջել։

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԱՆՈՒՅՇ

ԱՆՈՒՅՇ — (Յերեսը բնականեն ավելի ճերմկցուցած, ունքերն ավելի սեվցուցած, յեվ հաստցուցած, գլխուն ծինծու մազ անցուցած յեվ արտասանելով այնպե՛ս, վորպես թե առջեվի յերկու ակռաներն ինկած ըլլային) Կեցեք, Տյարք իմ, անմեղ մը զոհ կերթա

ինձի համար... յես եկի, վոր Կիպարի հետ այդ տունեն դուրս կ'ելնեյի և վոչ թե Պաղտասար աղբարին կինը։
ՍՈՒՐ — Դո՞ւք եկեք։
ԱՆՈՒՅՇ — Յես։
ՓԱՅԼԱԿ — Դիտեցե՛ք վորչափ կը նմանի Անույշի։ Քի՛չ մ'ավելի ճերմակ ե և ընքվիներն ավելի սև և ավելի հաստ։
ՅԵՐԿԱԹ — Այդպես ե, կարծես թե յերկվորյակ են. սառը ձայնն ավելի հաստ ե և կը ծեթևեթե։
ՊԱՂՏ. — Վո՛չ, վո՛չ, աս չեր... իմ կինս եր։
ՍՈՒՐ — Արդարությունն վերջապես յերևան ելավ։
ՅԵՐԿԱԹ — Աղեկ վոր տեղեկագիրն տված չենք։
ԱՆՈՒՅՇ — Կը խնդրեմ, խնայեցե՛ք այդ կնոջ պատվույն, ազատեցե՛ք զինքն այս անխիղճ մարդեն, այս վայրենի մարդեն։
ՊԱՂՏ. — Ի՞նչ խոսքեր են ասոնք։
ԱՆՈՒՅՇ — Յես կը ճանչնամ զքեզ, ինչպես նաև քու ամուսնական հավատարմությունդ։
ՅԵՐԿԱԹ — Պաղտասար աղբար, ի՞նչ կ'ըսե։
ՊԱՂՏ. — Մի՛ հավտաք, սուտ ե...
ԱՆՈՒՅՇ — Ինքը շատ աղեկ կը ճանչնա զիս։
ՊԱՂՏ. — Առաջին անգամն ե, վոր կը տեսնեմ։
ԱՆՈՒՅՇ — Սակայն յես կրնամ հաստատել թե զիս ալ գլխե հանողը դուն ես, թե դուն ես պատճառ իմ թշվառության։ Անգո՛ւթ մարդ... ինքզինքդ բարեպաշտ ու միամիտ ցույց տալ կուզես, բայց զիս ալ չես կարող խաբել։ Բացե՛ք, տյարք իմ, աջ թևը և տեսեք հոն կարմիր նշան մը։ (Կը բանան ու կը գտնեն կարմիր նշանը)։
ՍՈՒՐ — Յես կը պատռեմ այս տեղեկագիրը։
ՅԵՐԿԱԹ — Ի՞նչ խաբեբա մարդ ե յեղեր աս։
ԱՆՈՒՅՇ — Ո՜հ, գթացե՛ք խեղճ կնոջ, այդ առաքինի կնոջ...։
ՓԱՑԼԱԿ — Յերթա՛նք, բարեկամ, յերթա՛նք. և դուն ալ պատրաստվե բանտ յերթալու, վոճրագործ...։
ՅԵՐԿԱԹ — Ազգային իշխանության հետ այսպես խաղալը շատ սուղի պիտի նստի ձեզի։ Ա՛լ ամեն բան հայտնված ե։
ՊԱՂՏ. — Թող չեք տա՛ր վոր յես ալ խոսիմ... ասոնց բոլորը վարպետություն ե, նենգություն ե, խորամանկություն ե, յես

այս կերպարանքով կին չեմ ճանչնար... կնոջս կողմե պատրաստված խաղեր են ասոնք։
ՍՈՒՐ — Լա՛վ, անպիտան, լա՛վ։
ՓԱՅԼԱԿ — Լա՛վ ու քալե՛, մեզի հետ մեկտեղ պիտի գաս, վոր իշխանության հանձնենք զքեզ։
ՊԱՂՏ. — Բայց ի՞նչ գիտնամ, վոր նույն ինքն կինս չե... կեցե՛ք... աս... թողե՛ք վոր ապաց...
ՍՈՒՐ — Դեռ կը համարձակի՞ս... կինդ թաղական խորհրդարանն ե... քալե՛։
ՅԵՐԿԱԹ — Ավելորդ խոսքեր չենք ուզեր։ Քալե՛։
ՊԱՂՏ. — Վո՛չ։
ՓԱՅԼԱԿ — Բռնի պիտի տանինք, յեթե կամովդ չգաս։
ՊԱՂՏ. — Խոսիլ չեք տար վոր...։
ԱՆՈՒՅՇ — Ա՜հ... տակավին խոսի՞լ կ'ուզես։ Նորանոր զրպարտություններ սարքելու համար անշուշտ, անվանարկելու համար կին մ'որ յուր անբասիր վարուքն կրնա տիպար հանդիսանալ գեղեցիկ սեռին. ո՜հ... Մեծապատիվ Տյարք, խոսիլ մի՛ տաք այս մարդն...։
ՓԱՅԼԱԿ — Պաղտասար աղբար, պարապ տեղը մի ջանար ինքզինքդ արդարացնելու, ամեն բան հայտնված ե և արդարությունն ցույց տված ե յուր լուսաճաճանչ դեմքը։
ՊԱՂՏ. — Ինչո՞ւս պետք եր իմին թատրո՛ն...։
ԱՆՈՒՅՇ — Յեթե արդարախոհ և բարեսիրտ յերիտասարդ մը չխոստանար ձեռք կարկառել ինձ և գնացքս ուղղել՝ պիտի կորսվեյի այն ճամբուն մեջ, ուր առաջնորդեց ինձի նենգությամբ և խորամանկությամբ։ Այո՛, մեծ հույս ունիմ, վոր այս թշվառությունս քիչ ժամանակի մեջ յերջանկության փոխվի, վորովհետև Կիպար խոսք տված ե ինձ՝ հետս կարգվելու։ Վստահ եմ յես Կիպարի անկեղծության. շատ լավ գիտեմ թե զիս միայն կը սիրե, և հետևաբար կը պնդեմ թե տիկին Անույշի հետ ընավ սիրային հարաբերություն ունեցած չե։
ՍՈՒՐ — Կը խնդրեմ, մի՛ հուզվիք, օրիորդ, Հանձնաժողովս քաջ վերահասու յեղած ե արդեն Պաղտասար աղբոր բանած ընթացքին, և վորոշած ե արժանն տնօրինելու։
ՊԱՂՏ. — Յեթե հիմա խելքս չփախցնեմ, ընավ փախցնելիք չունիմ։

ԱՆՈՒՅՇ — Ահ, քանի ծանր է ինծի երկրորդ անգամ խաբուիլը և եթէ իմանամ թէ Կիպար կը խաբէ զիս, թէ Կիպար ուրիշի մը նուիրած է սիրտը, ո՛հ, այն ատեն ուրիշ բան չմնար ինծի ընել, եթէ ոչ ատրճանակով...
ՓԱՅԼԱԿ — Հանդարտէ, որիորդ, հանդարտէ...։

ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՒՅՆՔ և ԿԻՊԱՐ

ՅԵՐԿԱԹ — Կիպարն եկաւ ահա։
ԱՆՈՒՅՇ — Կ'աղաչեմ, ըսէք ինծի, իրա՞ւ է թէ դուք կը խաբէք զիս։
ԿԻՊԱՐ — Ի՞նչ հարցում է այդ։
ԱՆՈՒՅՇ — Թէ Տիկին Անուշը կը սիրէք։
ԿԻՊԱՐ — Մի՞թէ կարելի՞ է ձեզմէ բաժնուիլ և զրժել խոստմանս։ Ո՛հ, կը խնդրեմ, ուրիշ անգամ այդ տեսակ հարցում մի՛ ուղղէք ինծի, եթէ չէք ուզեր սիրտս վիրաւորել։ Դուք իմ միակ երջանկութիւնս էք, իմ հոյսս էք, իմ կեանքս էք, իմ հոգիս էք, և ի՞նչպէս կրնամ մերժել զքեզ (Կը գրկէ Անուշը)։
ՊԱՂՏ. — (Բարկութեամբ) Ի՞նչպէս հանձնաժողով էք դուք...։
ԿԻՊԱՐ — Յեւ ամէն բան պատրաստուած է քանի մը օրէն մեր ամուսնութեան հանդէսը կատարելու և չար լեզուները կարկելու համար։ Բայց ի՞նչ հարկ ստիպեց զձեզ հոս գալու։
ԱՆՈՒՅՇ — Անմեղ կնոջ մը պատիվը պահպանելու հարկը, Տիկին Անուշը պաշտպանելու պետքը, որուն սիրականն կը կարծէ զձեզ Պաղտասար աղբարը։
ԿԻՊԱՐ — Հիմա կը հասկնամ... հիմա միտքս կուգա թէ ինչպէս Պաղտասար աղբար ունեցած է այդ սխալ կարծիքը... կարծեմ թէ զձեզ Տիկին Անուշի նմանցուցած է։
ԱՆՈՒՅՇ — Ո՛չ թէ միայն նմանցուցած է, այլ կը պնդէ, որ ես Տիկին Անուշ ըլլամ։
ՍՈՒՐ — Ատոր պնդելուն մեծ կարեւորութիւն կուտա։
ԿԻՊԱՐ — Դուք Տիկին Անուշն էք եղեր... խեղճ մարդ...։
ՊԱՂՏ. — Դուն ես խեղճ մարդ։
ԿԻՊԱՐ — (Առ Սուր) Կարծեմ թէ այդ մարդուն ուղեղը փչացած է և բարեսիրական գործ մը կը կատարէք, եթէ Փրկիչ դնէք զինքն ու բժշկաց խնամոց հանձնէք։

ՊԱՂՏ. — Ես խենդ չեմ։
ՅԵՐԿԱԹ — Ես ալ կամաց կամաց կ'սկսիմ կարծել թէ ուղեղի պզտիկ հիւանդութիւն մ'ունի այդ մարդը։
ՓԱՅԼԱԿ — Յերկու օր ժամանակով մը Փրկիչ դրկելու է ուրեմն զինքն. մեղք է խեղճ մարդուն։
ՊԱՂՏ. — Խե՞նդ էք, ի՞նչ էք։
ՍՈՒՐ — Քիչ մը դուրս ելնենք, Պաղտասար աղբար։
ՊԱՂՏ. — Ո՛չ, այս տունն իմս է, տուն տէրն ես եմ։
ՓԱՅԼԱԿ — Մի՛ ստիպեր զմեզ խիստ միջոցներու դիմել։
ՊԱՂՏ. — Դիմեցէք։
ՅԵՐԿԱԹ — Պարտաւոր էք գիտնալ թէ պաշտօնական մարմին մը կարող է յուր առաջադրած նպատակին հասնիլ, ուստի քաղցրութեամբ կը հրաւիրեմ զքեզ հոժարակամ ընկերակցիլ մեզ։
ՊԱՂՏ. — Ես խենդ չեմ։
ՍՈՒՐ — Բոլոր խենդերն այդպէս կ'ըսեն։
ԿԻՊԱՐ — Յեթէ խենդ չէ, չարագործ մ'է։
ՅԵՐԿԱԹ — Յերթանք, Պաղտասար աղբարս, երթանք։ (Աջ թեւէն կը բռնէ)։
ՓԱՅԼԱԿ — Յերթանք, սիրելիս, երթանք։ (Ձախ թեւէն կը բռնէ)։
ՍՈՒՐ — Ուրախ եմ թէ Պաղտասար աղբար չստիպեց զմեզ խիստ միջոցներ ձեռք առնելու։
ՊԱՂՏ. — Ինչո՞ւ կը քաշէք թեւերս։ (Կ'ընդդիմանայ չուզեր երթալ)։ Ի՞նչ ամարդութիւն է աս...։
ՅԵՐԿԱԹ — Պաղտասար աղբարը բարի մարդ է։ (Միշտ քաշելով)։
ՓԱՅԼԱԿ — Պաղտասար աղբարը խոհեմ մարդ է։ (Թեւէն կը քաշէ)։
ՊԱՂՏ. — Թող տուէք թեւերս։ Ի՞նչ ըրի ես ձեզի... ի՞նչ բռնութիւն է աս... ի՞նչ անիրաւութիւն է աս... ի՞նչ բարբարոսութիւն է աս։
ՍՈՒՐ — Հանձնաժողովս բարեբաստ կը համարի ինքզինք նկատելով, թէ Պաղտասար աղբար դժուարութիւններ չհարուցաներ...
ՊԱՂՏ. — Անբարոյական կին մը կը պաշտպանէք և պատւաւոր ճնալ ուղող ամուսին մը կը քաշկռտէք։ Ո՞ւր կերթանք... ինչո՞ւ կը քաշկռտէք... չէ՞ք ամչնար... չէ՞ք խղճնիր....
ՅԵՐԿԱԹ — Քայլ մ'ալ։

ՓԱՅԼԱԿ — Քալէ՛, եղբայրս, քալէ՛։

ՊԱՂՏ. — Մի՛ քաշէք... փաստաբանս կ՚ուզեմ... փաստաբանս ալ հետս պիտի տանիմ, փաստաբանս...։ (Կը մեկնին)։

ՏԵՍԻԼ Է.

ԱՆՈՒՅՇ, ԿԻՊԱՐ

ԱՆՈՒՅՇ — Ի՞նչպես կատարեցի գերս, հավնեցա՞ր։

ԿԻՊԱՐ — Առաջին կարգի դերասանուհիի մը պես։

ԱՆՈՒՅՇ — Պետք է խոստովանիլ սակայն թե հանձնաժողովի անդամներն ալ բավական նպաստեցին մեզի։

ԿԻՊԱՐ — Այո՛, վորովհետև նախապես անոնց յուրաքանչյուրին հետ մասնավոր տեսակցութիւններ ունեցա և խոստացա գոհ ընել զիրենք։ Պատիվդ անարատ պահելու համար ըրի ինչ վոր կարող եյի ընել։ Ջանքերս ապարդյուն չմնացին։

ԱՆՈՒՅՇ — Յերախտապարտ թողուցիր զիս, սիրելի Կիպար. առանց քեզի կարելի չեր ինձ պատրվակել հանցանքս։ Աշխարհի առջև նախատանաց արժանի, զզվելի եյակ մը պիտի ճանչցվեյի և ով գիտե ինչ տխուր կյանքի մը մեջ անոք և անօգնական պիտի տառապեյի...

ԿԻՊԱՐ — Յերևակայական դժվարութիւններու վրա տրտմելու հարկ չկա։ Ամեն վտանգ անցած է, սակայն մեր պաշտոնը դեռ լրացած չէ։ Սենյակդ գնա՛, յերեսդ լվա՛, իսկական դեմքըդ ստացի՛ր, հագուստդ փոխե՛ և ինձի սպասե՛։

ԱՆՈՒՅՇ — Կը հնազանդիմ։ Ի տեսութիւն։ (Կը մեկնի)։

ՏԵՍԻԼ Ը.

ԿԻՊԱՐ

Գործը թեև հաջող յերևույթ մ՚ունի այժմ, սակայն կրնա փոխվիլ, յեթե մեր խոստումը չկատարենք և չվճարենք այն նվերներն, զորս խոստացանք և վորոնց միայն պարտավոր ենք մեր խնդրույն հաջողութիւնը։ Հիմակվնե աշխատինք ուրեմն այդ նվերները Պաղտասար աղբարեն փրցնելու միջոցներուն վրա խորհիլ։

ՏԵՍԻԼ Թ.

ԿԻՊԱՐ, ՓԱՅԼԱԿ, ՊԱՂՏԱՍԱՐ

ՓԱՅԼԱԿ — Ասանկ պարագաներու մեջ խոհեմութեամբ վարվիլ հարկ է. սխալ մը վորքան շուտ ուղղվի, այնքան փոքր կ՚ըլլա վնասը։ Կը շնորհավորեմ ուրեմն զձեզ, վոր վերջապես ճանչցաք ձեր սխալն և վորոշեցիք ուղղել զայն՝ հաշտվիլ ուզելով ձեր կնոջ հետ, վոր կանանց դասուն մեջ իր առաքինութեամբն կը փայլի։

ՊԱՂՏ. — Այո՛, այո՛։ (Մեկուսի) Յես գիտեմ ընելիքս։

ՓԱՅԼԱԿ — Այս յեղանակավ գայթակղութիւնը կը բառնա ի միջոյ, չար լեզուները կը պապանձին և հանձնաժողովս ալ ինքզինքն բարեբախտ կը համարի ձեր և ձեր կնոջ մեջտեղ պատվավոր հաշտութիւն մը գոյացնելուն համար։

ԿԻՊԱՐ — Յերբ առաջին անգամ Պաղտասար աղբար ինք հայտնեց այս խնդիրն և զիս Տիկին Անույշին քով ղրկեց, վոր գործն ստուգեմ, ձեռքս խղճիս վրա դնելով խնդիրն յուր բոլոր մանրամասնութեամբն քննեցի և սա յեզրակացութեան հասա թե կինն անմեղ է և թե խնդրույն մեջ թյուրատեսութիւն կա։ Յեզրակացութիւնն հայտնեցի իրեն և մանավանդ քիչ մ՚ալ առաջ յերթալով՝ հորդորեցի զինքն, վոր Դատաստանական Խորհրդո դիմելու գաղափարն մեկդի նետե, նույն իսկ յեթե կինն սատանայեն խաբվելով գործած ըլլա իրեն վերագրյալ հանցանքը։ Պաղտասար աղբար քիչ մը անրնական գտնեց իմ հորդորներս, որք կը կըկնվեյին նաև կնոջը կողմե։

ՊԱՂՏ. — Իրավունք ունի Կիպար։ (Մեկուսի) Վոճրագործ, գաղան։

ԿԻՊԱՐ — Գիտեյի վորովհետև թե այրն, վոր յուր կինն իբրև անպատիվ կ՚ամբաստանե՝ ուրիշ բան չըներ, յեթե վոչ կը հրավիրե հասարակութիւնն, վոր բարեհաճի յուր կինն սիրելու։

ՓԱՅԼԱԿ — Շատ ճիշտ կը խոսիք։

ԿԻՊԱՐ — Մինչդեռ տան պատիվը պահպանելու համար պատվավոր այր մը յեթե կնոջը մեկ թեթև պակասութիւնն իսկ տեսնե, չտեսնելու զարնելու յե։

ՊԱՂՏ. — Անանկ է։

ՓԱՅԼԱԿ — Այր մը յուր պատիվն պահելու համար պզտիկ անպատվություններ ընդունելու է։

ԿԻՊԱՐ — Յեթե այսպես վարվիլ հարկ է պակասության մեջ գտնված կնոջ մը համար, վորքան ուրիշ շրջահայեցությամբ վարվիլ պետք էր կնոջ մը համար, վորուն դեմքին վրա պարկեշտությունն և անմեղությունն կը փայլին։ Մեծ սխալ գործեցիք, Պաղտասար աղբար, զրպարտելով ձեր կինն և անոր հետ ձեր մտերիմն, վոր այնքան սեր, վստահություն ու համակրություն կը տածեր ձեզի համար։

ՓԱՅԼԱԿ — Հանձնաժողովը յուր խորին ուշադրության առարկա պիտի ընե այն կետն և այնպիսի տեղեկագիր մը պիտի խմբագրե, ուր պատվավոր կերպով պիտի ուղղվի այդ սխալն, ուր պիտի բժշկվին գայթակղյալ միտքերն, ուր արևուպես հայտնի պիտի յերևա թե Պաղտասար աղբարն ալ անմեղ է, կինն ալ անմեղ է և դուք ալ անմեղ եք։

ՊԱՂՏ. — Ի՞նչպես։

ՓԱՅԼԱԿ — Պարզապես պիտի գրվի տեղեկագրին մեջ թե Պաղտասար աղբար իրավունք ուներ սխալելու յուր կինն կարծելով կին մը, վոր կարծես թե յուր կինն էր, այնքա՜ն նըմանություն ուներ յուր կնոջ հետ և թե մանրաքննելին աչոք դիտել հարկ եր զանոնք իրարմե վորոշելու համար։

ԿԻՊԱՐ — Այս իմաստով շարադրված տեղեկագիր մը կարող է միայն կործանված պատիվ մը վերականգնել։

ՓԱՅԼԱԿ — Յեվ անցյալն իբրև վոչ յեղալ համարել տալ։

ԿԻՊԱՐ — Այո՛, պարզապես թյուրատեսություն մը։

ՓԱՅԼԱԿ — Այո՛, կատարյալ թյուրատեսություն։

ԿԻՊԱՐ — Մանավանդ թե առավել քան զթյուրատեսություն։

ՓԱՅԼԱԿ — Յեվ սանկ թյուրատեսության մը համար վո՞ր պատվավոր մարդ կրնա մեղադրել Պաղտասար աղբարը։

ԿԻՊԱՐ — Վոչ վոք։ Մարդս սխալական է։

ՓԱՅԼԱԿ — Մանավանդ թե ամեն մարդ անգամ մ՚ալ պիտի տեսնե փորձով թե քանի նախանձախնդիր է Պաղտասար աղբար յուր պատվույն։

ԿԻՊԱՐ — Անտարակույս։ (Մեկուսի) Յերթանք նվերներն ու Թագուհիին ու Մարթային տրվելիք վարձքն ճարելու ճամբա մը գտնել։ (Կերթա)։

ՓԱՅԼԱԿ — Այս կերպով ձեր պատիվը ավելի ևս պիտի բարձրանա։

ՊԱՂՏ. — Մեծապես շնորհակալ եմ։ (Մեկուսի)։ Յերեսանց հաշտվելու է և այս դժոխքին ուրիշ մեկ ելքը փնտռելու է։

ՓԱՅԼԱԿ — Յեվ առաջվընե ավելի սիրով պիտի ապրիք յերջանկության մեջ, վոր շատերու նախանձը պիտի շարժե։ Ամուսնության մեջ պզտիկ վեճերն յերբեմն սերն ավելցնելու կը ծառայեն։ Գոհ յեղեք, վոր սանկ պզտիկ վեճ մ՚ունեցաք։

ՏԵՍԻԼ Ժ.

ՆՈՒՅՆՔ, ՅԵՐԿԱԹ, ԱՆՈՒՅՇ

ՅԵՐԿԱԹ — Թյուրատեսության վրա հիմնված սխալ մը վերջապես կ՚ուղղվի ի մեծ գոհունակություն հանձնաժողովույս. զույգ մը սիրասուն ամոլներ, վորք թյուրատեսության պատճառավ քիչ մը ժամանակ բաժնված եյին իրարմե՛, կուգան այժմ վերստին միանալ։

ԱՆՈՒՅՇ — Կը խնդրեմ, միացման վրա մի խոսիք։ Ուխտ ըրած եմ այսուհետև առանձին ապրիլ։

ՓԱՅԼԱԿ — (Առ Պաղտասար) Գնա ուրեմն խնդրել։

ՅԵՐԿԱԹ — Առանձին ապրելու համար ստեղծված չեք դուք, տիկին։

ԱՆՈՒՅՇ — Վոչ ալ սանկ մարդու մը հետ, վոր ամեն վայրկյան առիթ կը փնտռե յուր կինն վատահամբավելու և աշխարհի առջև ծաղրու նշավակ ընելու։ Ա՜հ... վարժված չեմ յես թաղական խորհրդարաններու մեջ բանտարկվելու և հանդուրժելու, վոր ներս մտնողն քալի ինձի։ (Կուլա)։

ՊԱՂՏ. — (Մեկուսի) Ո՜հ, ո՜հ, ո՜հ... ուրիշներն ալ քալեր են... ուրա՛խ լեր, Պաղտասար։

ԱՆՈՒՅՇ — (Լալով) Մեկը շրջազգեստս քաշե, մյուսը կսմթե, աս աչք ընե, ան համբույրներ ուղարկե, յես վարժվա՞ծ եմ սանկ խայտառակության։

ՅԵՐԿԱԹ — Մի լաք, ազնիվ տիկին, թյուրիմացության արդյունք է այդ...։

ՓԱՅԼԱԿ — Վոր չկրնար յերկրորդ անգամ տեղի ունենալ։

ՊԱՂՏ. — (Մեկուսի) Յեթե Փրկիչն աչքս չվախցներ...։

ՓԱՅԼԱԿ — (Առ Պաղտասար) Նկատելով վոր դուք եք այդ տխուր թյուրիմացության հեղինակ՝ կը հրավիրենք զձեզ, վոր մխիթարական խոսքերով սրբեք ձեր տիկնոջն արտասուքը։

ՅԵՐԿԱԹ — Յես կարելի յեղածին չափ շուտ, յեթե չեք ուզեր Փրկիչի ճամբան բռնել։

ՊԱՂՏ. — (Անուշին մօտենալով) Մի լար, տիկին մի լար, սրբե արցունքդ... յես յեղա թյուրիմացության պատճառ... դուն անմեղ ես, յես ալ անմեղ եմ, Կիպարն ալ անմեղ է, թյուրատեսություն կա գործին մեջ։

ՓԱՅԼԱԿ — Այո, և տեղեկագիրն ընդարձակորեն պիտի խոսի այս կետին վրա։

ՅԵՐԿԱԹ — Ջանացեք անցյալն մոռնալու, տիկին։

ԱՆՈՒՇ — Կրնա՞ք յերաշխավորել զիս, վոր ուրիշ անգամ սանկ թյուրատեսության մեջ չպիտի գտնվիմ։

ՓԱՅԼԱԿ — Այո, կ՚ապահովենք զքեզ։

ՊԱՂՏ. — (Մեկուսի) Հետն ապրելու միտք չունիմ վոր...

ԱՆՈՒՇ — Կը հնազանդիմ ձեր կամաց...

ՓԱՅԼԱԿ — Կեցցե տիկին Անուշ, վոր հաճեցավ իրավախոհ ըլլալ և դյուրացնել մեր փափուկ պաշտոնը։

ՅԵՐԿԱԹ — Գնացեք ձեր սենյակը քաշվեցեք և հանդարտեցեք, վորովհետև շատ հուզվեցաք։ (Անուշ կը մեկնի)։

ՓԱՅԼԱԿ — (Առ Պաղտասար) Ջանացեք այսուհետև զինքն գոհ ընելու, ձեր կինն գոհար մ'է։ (Կը մեկնի)։

ՅԵՐԿԱԹ — (Առ Պաղտասար) Սեր և միաբանություն կը բարեմաղթեմ, Պաղտասար աղբար։ (Կը մեկնի)։

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՊԱՂՏԱՍԱՐ (Առանձին)

Այսպե՜ս են յեղեր աշխարհիս գործերը... բնությամբ Փրկիչ կը տանին կոր իբրև խենդ... Անգամ մը հոն յերթալեն վերջը իբրև խենդ, աշխատե՛ ու աշխատե՛, վոր խենդ չըլլալդ հաստատես, վորքա՛ն պիտի հասկցնես... յեթե հաշտվելու համար խոսք չտայի՝ մինչև հիմա խենդերու քովը գնացած պիտի ըլլայի...։ Ա՛լ համոզվեցա թե այս անպատիվ կնիկեն բաժնվիլ կարելի չէ, բայց վորովհետև անպատիվ

ապրիլն ալ անհնար է ինձ, քիչ մը ժամանակ ալ ակռաներս կը սեղմեմ, գործերս ուզածիս պես կը կարգադրեմ և որ մը կ'ելնեմ Ամերիկա կը փախչիմ... ուրիշ ճար չկա։ Վա՜յ անոնց, վոր իմինիս պես կնիկ ունին, աստված վողորմի... Իրավունքն ու արդարությունն իմ հետս ըլլան ու չկարենամ դատը վաստկիլ, իրավ, կամ խենդենալու բան է կամ ճաթելու։ Մեկ թյուրատեսությամբ այնչափ հայտնի անիրավություններ գործեցին, վոր զիմանալու բան չե։ Ա՜ս իմ կնիկս է կըսեմ կոր, ու չեն ամչնար կոր ինձի պատասխանելու, թե կնոջդ նմանող կնիկ մ'է տեսածդ։ Իրավունքը մտիկ ընել չուզողին ուզածիդ չափ խոսե, ինչ օգուտ ունի։ Բայց վնաս չունի, այս թյուրատեսությունն հիմա իմ ալ գործիս կուգա, գոնե մինչև վոր գործերս կարգադրեմ՝ իրավունք կ'ունենամ բարեկամացս ըսելու, թե խաբված եմ կին մը կնոջս նմանցնելով, մինչդեռ յեթե թյուրատեսություն չըլլար՝ այս որվնե պարտավոր եյի փախչիլ։

ՏԵՍԻԼ ԺԲ.

ՆՈՒՅՆ և ՈԳՍԵՆ

ՈԳՍԵՆ — Կը հուսամ թե դատդ նպաստավոր կերպով վերջացուցիր և պատժել տվիր այդ լիրբ կինը։

ՊԱՂՏ. — Կը խնդրեմ, մաքուր բռնեցեք ձեր լեզուն, իմ կինս լիրբ չէ։

ՈԳՍԵՆ. — Ի՞նչ է ուրեմն յուր երիկն մատնող կինը։

ՊԱՂՏ. — Կինս բնավ մատնած չէ զիս։

ՈԳՍԵՆ — Խենդեցա՞ք։

ՊԱՂՏ. — Ամենևին։

ՈԳՍԵՆ — Ո՞վ եր ուրեմն Կիպարը սիրողը։

ՊԱՂՏ. — Ուրիշ կին մ'որ իմ կնոջս կը նմանի, այնպես վոր մեծ դժվարությամբ կարելի յե իրարմե վորոշել զանոնք։

ՈԳՍԵՆ — Բնավ յերբեք։

ՊՍՂՏ. — Այո, յես սխալած եմ իմ կինս կարծելով կին մ'որ մոտերս պիտի կարգվի Կիպարի հետ։ Յես տեսա այդ կինը։

ՈԳՍԵՆ — Չեմ հավտար յես, ասոր հավտալու համար կատար-

չալ խենդ ըլլալու չէ վոք, դուք ազատ էք հավատալու, գալով մեր հիսուն վոսկվույն...

ՊԱՂՏ. — Այդ գումարը շնորհ ըրէք ու չվճարենք։

ՈԳՍԵՆ — Ամբողջապես կուզեմ այդ գումարն իբրև վարձք իմ տաժանելի աշխատության։

ՊԲՂՏ. — Ըստ վորում հաշտվեցա կնոջս հետ...։

ՈԳՍԵՆ — Ո՞վ ըսավ քեզ վոր հաշտվիս...։

ՊԱՂՏ. — Անմեղ է։

ՈԳՍԵՆ — Ինչո՞ւ դատ բացիր իրեն դեմ։

ՊԱՂՏ. — Շատ լավ...

ՈԳՍԵՆ — Յեթե կես ժամեն չվճարվի, պատրաստվե դատի։ (Կը մեկնի)։

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՊԱՂՏԱՍԱՐ

Անիծյալ կնիկ... տունս տեղս քանդեցիր, կործանեցիր... այնչափ ծախք, այնչափ մտատանջություն, այնչափ սիրտ մաշուք և փոխարեն անպատվություն...։

ՏԵՍԻԼ ԺԴ.

ՊԱՂՏԱՍԱՐ, ՍՈՒՐ, ԹԱԳՈՒՀԻ, ՄԱՐԹԱ

ՍՈՒՐ — Ինչո՞ւ կը պոռաք, կը պոռչտաք, ձեր խնդիրն պիտի կարգադրեմ։

ԹԱԳՈՒՀԻ — Հիմա պետք է վոր կարգվի աղջկանս հետ...։

ՄԱՐԹԱ — Ամենեն, խոսք տված է զիս առնելու։

ՊԱՂՏ. — Այս խաղերը չպիտի՞ լմնան տակավին։

ԹԱԳՈՒՀԻ — Խաբեբա։

ՄԱՐԹԱ — Անպատիվ մարդ, ի՞նչ յերեսով հաշտվեցար կնոջդ հետ։

ՍՈՒՐ — Մեյ մեկ խնդրագրով ձեր խնդիրը ներկայացուցեք մեզ, վոր մանրամասնորեն քննենք։

ՊԱՂՏ. — Յես ալ ներկա պիտի գտնվի՞մ։

ՍՈՒՐ — Տարակո՞ւյս կա։

ՊԱՂՏ. — (Պոռալով) Գնացե՛ք ըսկե, յեթե վոչ հիմա կ'երթամ հավատքս կը փոխեմ։

ՏԵՍԻԼ ԺԵ.

ՆՈՒՅՆՔ և ԿԻՊԱՐ

ԿԻՊԱՐ — Ի՞նչ աղմուկ է այս։

ՄԱՐԹԱ — Ինչո՞ւ խաբեց զիս, յես անոր խաղալի՞քն եմ։

ԹԱԳՈՒՀԻ — Անոր պատճառավ աղջիկս արյուն կը փսխե կոր։

ՄԱՐԹԱ — Իմին ալ կուրծքս բռնված է։

ԿԻՊԱՐ — Կ'երևի թե կատակ մ'ըրած է ձեզի Պաղտասար աղբարն։

ՊԱՂՏ. — Չեմ ճանչնար զիրենք։

ՄԱՐԹԱ — Չե՞ս ճանչնար։

ԹԱԳՈՒՀԻ — Ստախոս։

ԿԻՊԱՐ — Հեռացե՛ք, յես կը կարգադրեմ ձեր գործը։ (Առ Պաղտասար) Մեյ մեկ գումար տալով վերջացնելու յե։

ՊԱՂՏ. — Ինչո՞ւ տամ։

ԿԻՊԱՐ — (Ցած առ Պաղտասար) Ո՞վ պիտի յերթա դա դատաբաններ անոնց հետ դատվելու համար. ձեր պատվույն չիյնար անոնց հետ յելնել իյնալ։ (Առ Թագուհի և Մարթա) Գնացե՛ք, գնացե՛ք, յես կարգադրեցի ձեր գործը։

ՄԱՐԹԱ — Վստահ ըլլա՞մ թե պիտի կարգվի հետս։

ԹԱԳՈՒՀԻ — Պատվույն վրա խոսք տվա՞վ աղջիկս առնելու։

ԿԻՊԱՐ — Պիտի ջանամ՝ վոր յերկուքդ ալ գոհ ըլլաք։ (Թագուհի յեվ Մարթա կը մեկնին)։

ՍՈՒՐ — Շնորհակալ եմ, Պ. Կիպար, վոր կարգադրեցիր այս խընդիրը։ (Կը մեկնի)։

ԿԻՊԱՐ — Ուրիշ վճարումներ ալ կան ընելու, զանոնք ալ կը կարգադրեմ յես, Պաղտասար աղբար, դուք հոգ մի՛ ընեք։

ՊԱՂՏ. — Շնորհակալ եմ, շնորհակալ եմ ձեր անձնվիրությենեն։ (Կը մեկնի)։

ՏԵՍԻԼ ԺԶ.

ԿԻՊԱՐ յետո ԱՆՈՒՅՇ

ԿԻՊԱՐ — Վերջապես հաղթանակը տարինք... Տիկին Անույշի պատիվը պաշտպանվեցավ և կյանքը փրկվեցավ։ Ա՛լ սիրտս հանդարտ է և կրնամ գիշերները հանգիստ քուն քնանալ։ Խղճիս վրա անոգին բեռ մը պիտի ծանրանար, յեթե խեղճ կինն դատապարտվեր իմ պատճառավ...

ԱՆՈՒՅՇ — Կուզեմ երախտագիտությունս հայտնել ձեզ, սիրելիդ իմ Կիպար, այն քաջության համար, որով պաշտպանեցիր իմ պատիվս, իմ կյանքս, և փրկեցիր զիս սոսկալի ապագայե մը: Թող տուր ուրեմն որ ի նշան երախտագիտությանս գրկեմ զքեզ: (Գրկախառնություն):

ՏԵՍԻԼ ԺԷ.

ՆՈՒՅՆՔ և ՊԱՂՏԱՍԱՐ

ՊԱՂՏ. — (Դռան առջեւ) Դարձյա՛լ...

ԿԻՊԱՐ — Ի՞նչ... կարծեցի թե... իմ նշանածս եր... թյուրատեսություն...:

ՊԱՂՏ. — (Կիպարի վրա հարձակելով) Թյուրատեսությո՛ւն... Տունս կործանեցիր և տակավին կը համարձակի՞ս... (Ծեծել կ՚սպառնա Կիպարին, որ կը փախչի) Այս թյուրատեսության վերջը չի՞ գար, լմըր:

ԱՆՈՒՅՇ — Ըրածդ կը վայլե՞...:

ՊԱՂՏ. — Չե՞ս խպնիր դուն...:

ԱՆՈՒՅՇ — Ցավ ինչո՞ւ պահեմ ալ... կը սիրեմ զինքը, հասկցա՞ր... չեմ ուզեր զքեզ, չեմ սիրեր զքեզ, չեմ սիրած և չպիտի սիրեմ, անպիտան մարդ, անկիրթ: (Բարկությամբ կելնե):

ՎԵՐՋ

ԱՏԱՄՆԱԲՈՒՅԺՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ

Կատակերգություն յերգախառն ի հինգ արարս

Ա Ն Ձ Ի Ն Ք

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, Ատամնաբուժ՝ 45 *տարու*
ՄԱՐԹԱ, Անոր կինը 60 »
ՅԵՐԱՆՅԱԿ, Աղջիկը
ԹՈՎՄԱՍ, Վաճառական 70 »
ՍՈՖԻ, Անոր կինը 40 »
ՄԱՐԳԱՐ, Յերանյակի նշանածն
ԼԵՎՈՆ, » *սիրականը*
ՆԻԿՈ, Թափառնիկոսի ծառա
ԿԻՐԱԿՈՍ, Թովմասի ծառա
ՄԱՐԿՈՍ, Աղքատ գործավոր

Պարահանդեսի մեջ պարողներ

Տեսարանն է ի Կ. Պոլիս
Ա. Բ. Ե. արարվածները Թափառնիկոսի տան մեջ
Գ-ր Թովմասի, Դ-ր պարահանդեսի մը մեջ կը կատարվին։

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

(Թափառնիկոսի տան մեջ սրահ մը, մեջտեղը սեղան՝ որու վրա դրված են գրքեր, մեծ ու փոքր թղթեր, չվաններ, դիտակ մը, ատրճանակ մը յեվ գիր գրելու պիտույք. պատեն հայելի մը կախված. թիկնաթոռ յեվ աթոռներ, աջ կողմը խուց մը. միջին դուռ)։

Տ Ե Ս Ի Լ Ա.

ՄԱՐԹԱ գիշերվան հագուստով, վերջը *ՆԻԿՈ*

ՄԱՐԹԱ — (Բարկությամբ ներս կը մտնե ծառան կանչելով) *Նիկո... Նիկո... Աս վերջապես դիմանալու բան չէ, ալ համբերությունս հատավ, ամեն գիշեր սպասել և դարձյալ միս մինակ պառկիլ... շաբաթը գիշեր մը միայն տուն կը պառկի, մյուս գիշերները... չգիտեմ ուր։ Պիտի հարցնեմ իրեն, նայիմ, գերի՞ առավ զիս այս տանը մեջ... սատկելու գերի ըլլալ չեմ ուզեր։ Վոչ... գիտեմ ես ինչու համար զիս մինակ կը թողու, վասն զի յես ալ ծերացած եմ, թե վոր տասնուվեց տարու աղջիկ մը ըլլայի, աս ճամբան չեր բռներ։ Իսկ յեթե որենքը այսպես կը պատվիրե, վոր կանայք յերիտասարդության ատեն սիրվին, և ծերության ատեն նախատվին, ըսելիք չունիմ. բայց կ'ուզեմ գիտնալ թե վ՞ր օրենքն է այս... միթե Սահմանադրությունը[5]) կըսա այս պատվերը՝ վ՞ր հոդվածին մեջ կը գրե... տեսե՛ք մեյ մը և պոռացեք թե, Ազգը հառաջադիմության ասպարեզին մեջ կը քալե... բոկ վոտքով։ Ո՜վ հառաջադիմություն, Հայությունը պոչդ կախած գետնաքարշ ուր կը տանիս, այդպիսի հապճեպով դեպ ի վեր կը դիմես. մի՛, մի՛ այնքան շուտ վազեր, վասն զի բեռդ ծանր է, կը հոգնիս և ճամբու վրա կը մնաս, և Հայությունը կռնակի վրա կ'իյնա... պոչ ի ձեռին։ Տեսե՛ք, կնիկնին ծերության*

տունն ասանկ յերեխի վրա կը թողուն, և իրենք գեղեցիկ ու յերիտասարդ... ուհիններու քննելու կ'երթան... ու բոլոր անդամներս կը դողան: (Աթոռի մը վրա կը նստի: Այս միջոցին Նիկո միջին դրան առջև կ'երևի, ձեռքը կոշիկ մը՝ զոր վրձինով կը ներկե): Յես ալ յերիտասարդության ատեն՝ յերբ տասնուվեց տարու եյի, անանկ աղվոր աղջիկ մ'եյի վոր, բոլոր աշխարհ ճամբու վրա կ'սպասեր զիս տեսնելու համար. այն ատեն չեյի՞ կրնար, յեթե ուզեյի, մեկու մը հետ սիրահարություն ընել. որ մը աչվըներս վեր առած մեկուն յերեսը նայած չունիմ, վորովհետև մայրս այսպես կը պատվիրեր, վորովհետև պարկեշտությունը ասանկ կը պահանջեր: Բնավ չեմ մոռնար, յեկեղեցիյեն ելած ժամանակս բոլոր յեկեղեցպանները դրան առջին կը շարվեյին և իբր թե իրարու հետ կը խոսակցեյին, քանի քանի անգամներ յես ականջներովս լսած եմ, վոր անոնք անցած ժամանակս իրարու կ'ըսեյին. «Ընկեր, նայե սա կնիկը վորքան աղվոր ե, հազար վոսկի կուտայի ասանկ կին մը ունենալու համար. տես աչքերը վորքան հրապուրիչ են, այտերը վորքան կարմիր են»: Ասոնք իրավ եյին, վասն զի ան ատեն վարդի պես այտեր ունեյի. յետքեն ուրիշ մը կ'ըսեր. «Յեղբայր, տես ինչպես սև են մազերը, ինչպես ճերմակ են ձեռքերը, վորքան փոքր են վոտքերը»: Ասոնց ամենն ալ ճշմարիտ եյին. բայց յես առանց նայելու ճամբաս կը շարունակեյի, և ինքը հիմա զիս մինակ կը թողու ասանկ: Արդարև իրմե տասնըհինգ տարու մեծ եմ. բայց իր օձիքեն բռնելով՝ յեկա՞ր ինձի հետ կարգվե չըսի իրեն. ինքը հոժար կամքով և մանավանդ աղաչելով ամուսնացավ հետս, վասն զի աղվոր եյի... վասն զի հարուստ եյի... վասն զի ուսումնական եյի.., վասն զի ստակ ունեյի... վասն զի... վասն... ինչ գիտնամ, լավ մը աղվոր բաներ ունեյի, և հիմա ամեն գիշեր գլուխն առնե յերթա, ակռա պիտի քաշեմ ըսելով... (Կ'երգե):

Վոչ, վոչ, չեմ ուզեր,
Վոր ամեն գիշեր,
Երիկս դուրս յերթա.
Յեվ քաշե ակռա:

Այո, զալուն պես,
Հայտնեմ ամեն բան
Թող գիտնա թե յես
Մարդ եմ, չեմ անբան:

(Նիկոն տեսնելով) Հի՞մա կուգաս:

ՆԻԿՈ — Տիկին, յես հոս եյի...

ՄԱՐԹԱ — Հոս եյիր, յե՞րբ յեկար:

ՆԻԿՈ — Յերբ տասնուվեց տարու աղվոր աղջիկ մ'եյիր, և բոլոր յեկեղեցպանները ճամբուդ վրա կ'սպասեյին քեզ տեսնելու համար, յես այն ատենեն ի վեր հոս եմ, տիկին, ձեզի կ'սպասեմ:

ՄԱՐԹԱ — Սուրճս բեր:

ՆԻԿՈ — Տիկին... (Կ'երթա):

ՄԱՐԹԱ — Այս ամենը մեկդի թողունք: Ջե՞ր գիտեր, վոր իրմե շուտ պիտի ծերանամ, այս հանցանքը իմս ե չե նե բնության, վորուն ինքը Փալթուրա՞ կըսե, Նաթուրա կըսե, նաթուրայովը մեկտեղ գետինն անցնի: Ամուսին մը, վոր իր կնկանը ստակովը հարստացեր ե, վերջեն այս ընթացքը ձեռք առնու... ինչ անզգայություն... ինչ բարբարոսություն...: Փառք աստուծո, կույր չեմ, սապատող չեմ, մարմինույս կողմե պակասություն մը չունիմ, (Հայելի կը նայի) ինչ ունիմ...: ինչու համար չի հավնիր ինձի, մազերս միայն քիչ մը ճերմկցեր են, ինչ վնաս ունի: Ինչպես վոր տարվույն ամեն մեկ յեղանակը յուր գեղեցկությունը և հարգը ունի, միթե տարիքն ալ չունի՞ նույն գեղեցկությունը. օրինակի համար գարնան ատեն դալարյոք զարդարված լեռ մը վորքան վոր գեղեցիկ տեսարան մը ընծայե մեր աչքին, ձմեռ ատեն ալ յերբ նույն լեռը ձյունով ծածկվի աղվոր չե՞րևվար, բայց երիկմարդիկ միշտ գարունը կ'ուզեն. ի վերա այսր պետք ե գիտնալ, վոր ամեն տարիք իր գեղեցկությունն ու հարգը ունի: Հասակը առած տիկիններեն ծափահարություն առնելու համար չեմ ըսեր, յես շողոքորթ չեմ, ճշմարիտը կը խոսիմ: Ահ... երիկ մարդեր, ամեն տեղ կանայքը վար կը զարնեք, կը բամբասեք. հանդարտ յեղեք, ալ ժամանակը հասավ, վոր անոնք ալ պիտի սկսին ձեր վարքը նկարագրելով գրքեր

հօրինել. ա՜հ, Թափառնիկոս, վրեժ պիտի լուծեմ քենէ, վրէժ։ (Սեղանին վրայէն շիշ մը կ'առնու եւ գետինը զարնելով կը-կոտրէ)։

ՆԻԿՈ — (Սուրը բերելով) Հրամմէ՛, տիկին։

ՄԱՐԹԱ — Թափառնիկոսը չեկա՞վ։

ՆԻԿՈ — Տիկին, յես հազիվ թե անկողին մտած եյի, դրան ձայնը առի՝ բաաաթ. խելուս վտոք չելա, սկսա ճրագը փնտռել. այս միջոցին զարձյալ չըրըրըրաթըրաըրաթըրաթ, իբրեւ վորոտումն յերկնից, խելքս գլխես թռավ, ինչ ընեմ, գիշեր տանը ճրագ չկա, սենեկին դուռն ալ կորուսի, ծունկի վրա գալով, «Ով աստված իմ, դուն վողորմե» ըսելու չմնաց, զարձյալ թըրըրաթ, կարծեցի վոր տունը կը փլի... կամաց կամաց սենեկին դուռը գտա, վարտիքս գլուխս անցուցի, փողոցին դուռը բանալուս պես, աս ինչ կերպարանք է (Բարձրաձայն), եշ (Ցած) ըսավ...

ՄԱՐԹԱ — (Վախնալով) Կորի՛ զարշելի։

ՆԻԿՈ — (Յերթալով) Վերջը ապտակ մը զարկավ, յես ալ գացի պառկեցա։

ՏԵՍԻԼ Բ.

ՄԱՐԹԱ, ՅԵՐԱՆՅԱԿ

ՅԵՐԱՆՅԱԿ — Բարև, մայրիկ, ինչ ունիս աս առտու. բարկացած կ'երևիս։

ՄԱՐԹԱ — Մ'ըսեր բարկացած, այլ խելքը փախուցած։ Յերանյակ, հայրդ յուր ընտանիքին թշվառությունը կը պատրաստե իր անվայել վարքով, աս առտու, յերբ արթնցա ու զինքը սենեկին մեջ չտեսա, կարծեցի վոր տունը գլուխս փլավ։ Ո՞ւր գացեր է զարձյալ յերեկ գիշեր։

ՅԵՐԱՆ. — Անշուշտ հիվանդ նայելու գացած պիտի ըլլա։

ՄԱՐԹԱ — Ի՞նչ տեսակ հիվանդներ ունի, վոր միշտ գիշեր տանեն կ'երթա նայելու։

ՅԵՐԱՆ. — Ինք կ'ըսե վոր ակռայի ցավն շատ անգամ գիշերը կը հանդիպի, և թե ցաված ժամանակը պետք է վոր դարման մը ըլլի շուտով։

ՄԱՐԹԱ — Ասոնց ամենն ալ անտեղի բացատրություններ են, յես

չեմ հավատար։ Այսօր պիտի խոսիմ հետը, կամ իր վարքը ուղղե և կամ... յես գիտեմ ինչ ընելիքս, ատանկ ամուսնություն չըլլար։ (Յերանյակ կը հառաչէ) Ի՞նչ ունիս, աղջիկս... ինչո՞ւ կը հառաչես։

ՅԵՐԱՆ. — Ո՛հ, մայրիկ ինչպես չհառաչեմ մինչդեռ ակներև կը տեսնեմ վոր իմ ամուսնությունս ալ ձերինին պես պիտի... պիտի...

ՄԱՐԹԱ — Ի՞նչ կը խոսիս, Յերանյակ, Մարգարը ազնիվ ընավորության տեր...

ՅԵՐԱՆ. — Ազնիվ ընավորության տեր... ինչ ընեմ վոր դրսեցի յե... յես կ'ուզեյի Պոլսեցիի մը հետ յեթե հնար եր...

ՄԱՐԹԱ — Դուն ալ իմ բարկությունս ավելի ես գրգռելու համար կ'ընես այդ խոսքերը. ամբողջ տարի մ'որ հետը նշանված ես և գոհ եյիր, այսօր միկեն ի մեկ պաղի՞լ, ինչ ունի տղան. քաղցրաբարո պատանի մ'է։

ՅԵՐԱՆ. — Ըհ, քաղցրաբարո, միշտ հին լաթեր կը հագնի, ընավ նոր հագուստ մը տեսած չունիմ վրան. նշանված մեկը ատանկ պատռտած զգեստով պտըտի... վոչ, մայրիկ, վոչ, ավելի կը սիրեմ ամուրի մնալ, քան թե Մարգարի պես հնասեր մարդու մը հետ... հետ... (Մեկուսի) Ա՜հ, Լևո՛ն, Լևոն...։

ՄԱՐԹԱ — Ալ պիտի բարձրացնեմ ձայնս, ապստամբ աղջիկ, դուն ալ գլուխ վերուցիր, չե՞ս հավնիր նշանածիդ, վորուն ազգասիրությունը...

ՅԵՐԱՆ. — Ըհ, ազգասեր, միշտ հին լաթեր կը հագնի։ Մեծ քիթ մը ունի, ճակատը դուրս ցցված, կարճահասակ, մինչդեռ անդին լուսնի պես ազվոր յերիտասարդ մը...

ՄԱՐԹԱ — (Բարկությամբ) Ի՞նչ ըսիր, ինչ. անգամ մ'ալ գուրցե, շուտ յեղիր։

ԴՐՍԵՆ — Թրի թա թա թի թա թա։

ՄԱՐԹԱ — Անկրես աղջիկ, գնա սենյակդ քաշվե՛, վերջը կը խոսիմ քեզի հետ (Յերանյակ կ'երթա)։

ԴՐՍԵՆ — Թի թա թի թա թի թա թի...

ՄԱՐԹԱ — Շատ յեկուր վոր տեսնես թի թա թի։

ԴՐՍԵՆ — Թի րա րա թի րա րու...

ՄԱՐԹԱ — Յեկուր վոր խոսք հասկնանք իրարու։

ԴՐՍԵՆ — Թի թա թա։

ՄԱՐԹԱ — Աստված պահիդ տա։

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՆՈՅՆ և ԹԱՓԱՌՆԻԿՈՍ գիշերազգեստով

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ — Թի՛ րա րա, բարև, անուշիկս։
ՄԱՐԹԱ — (Մեկուսի) Անուշիկը։
ԹԱՓԱՌ. — Ինչո՞ւ համար առանձին նստեր ես, նոնուշիկս։
ՄԱՐԹԱ — (Բարկությամբ) Չեմ գիտեր։
ԹԱՓԱՌ. — Տիկինը այսօր բարկացած է, հա՛ հա՛ հա՛, ծերուկ տիկին։
ՄԱՐԹԱ — (Բարկությամբ) Ծերուկ տիկին, և կը հանդգնի՞ս։
ԹԱՓԱՌ. — Չհանդգնելու ի՞նչ կա։
ՄԱՐԹԱ — Կուզե՞ս վոր բերանս բանամ։
ԹԱՓԱՌ. — Բա՛ց, վոր հով առնես։
ՄԱՐԹԱ — Ցերկուշաբթի գիշեր ու՞ր էիր։
ԹԱՓԱՌ. — Հիվանդ նայելու գացեր էի։
ՄԱՐԹԱ — Ցերեքշաբթի՞։
ԹԱՓԱՌ. — Մեկուն ակռան քաշելու։
ՄԱՐԹԱ — Չորեքշաբթի՞։
ԹԱՓԱՌ. — Ակռա լեցնելու։
ՄԱՐԹԱ — Հինգշաբթի՞։
ԹԱՓԱՌ. — Ակռա պարպելու. հա՛ հա՛ հա՛, մեր տիկինը օրացույց է, շաբթվան բոլոր օրերը անսխալ կը ցուցնե։
ՄԱՐԹԱ — Այո՛, պարոն, օրացույց մ'եմ, և այնպիսի օրացույց մը, վոր մինչև վերջին շունչդ չպիտի փոխես։ Ցերեկ գիշեր ու՞ր էիր, ու՞ր կորսված էիր, վո՞ր ծակը մտած էիր։
ԹԱՓԱՌ. — Ցերեկ գիշեր կորսված չէի, թատրոն մտած էի, ուր ազգային ներկայացում մը տվին։ Հայ լեզուն պետք է ազգային հանդեսներուն ներկա գտնվի։
ՄԱՐԹԱ — Առանց ինձի թատրո՞ն կ'երթաս։
ԹԱՓԱՌ. — Թատրոնը ծերերու համար չէ։
ՄԱՐԹԱ — Հապա ձեզի համար, յերթալ անկե վարպետություններ սորվելու և յետքը ձեր կիները խաբել, վասն զի դուք միայն խաբելու և խնդալու կտորներուն ուշ կը դնեք, վոչ թե ամբողջ խաղին՝ վոր լի յե բարոյականությամբ։
ԹԱՓԱՌ. — Դուն ի՞նչ կը ծախես։
ՄԱՐԹԱ — Ցես ի՞նչ կը ծախեմ, սրիկա, դուն իմ ստակովս մարդ յեղար, համբավ ստացար, հիմա զիս մինակ թողլով, գըլուխդ կ'առնես թատրոն կ'երթաս։
ԹԱՓԱՌ. — Ուրիշ անգամուն գլուխս քեզի կը ձգեմ անանկ կերթամ։
ՄԱՐԹԱ — Կը ծաղրե՞ս զիս, խայտառակ, իմ ստակովս մարդ յեղար։
ԹԱՓԱՌ. — Անցյալ օր աղվոր յերգ մը լսեցի, մուկ ըրե, յերգեմ նայե ինչպես պիտի հավնիս։ (Կ'երգե)։

Ստակով կնիկ մ'առներ —
— Իշխել կուզե վրադ
Առտու, ցերեկ, գիշեր —
— Ապտակ կուտա բաղ, բաղ։
Ո՛հ գեշ տանե —
— Անշահ բան
Իրավ շատ –
Անպիտան։

ՄԱՐԹԱ — Մուկ ըրե, յերկրորդ տունն ալ յես յերգեմ, նայե ինչ աղվոր է։ (Կ'երգե)։

Առանց ստակի կնիկ –
— Թե վոր առնել ուզես՝
Ծախես բաճկոն շալիկ —
— Վոր զինք սնուցանես։
Գեշ տանե, և այլն։

Առանց ինձի թատրոն կ'երթաս, այնպես չէ՞։
ԹԱՓԱՌ. — Այնպես է։
ՄԱՐԹԱ — Պարոն, քեզի բան մը հարցնեմ, գիտե՞ս թե ինչ է կին մը։
ԹԱՓԱՌ. — Այո, գիտեմ. կին մը իր ամուսնույն գլխուն փորձանք է։
ՄԱՐԹԱ — Լեզուդ չորնա, ի՞նչպես ալ առանց կարմրելու կը համարձակիս ըսելու թե փորձանք է, մինչդեռ բոլոր աշխարհ կը վկայե վոր դուն իմ ստակովս մարդ յեղար։ Պատասխան տու՛ր, նայիմ։
ԹԱՓԱՌ — Տամ։

ՄԱՐԹԱ. — Պապանձէ՛։
ԹԱՓԱՌ. — Պապանձիմ։
ՄԱՐԹԱ. — Բերանդ գոցէ՛, զրուցն, գերի առիր զիս այս տանը մեջ։
ԹԱՓԱՌ. — Ինչո՞ւ գերի պիտի ըլլաս. կին մը տան մեջ կահ կարասիք կը սեպվի։
ՄԱՐԹԱ. — Կահ կարասիք. տեսեք ինչ պաղարյամբ պատասխան կ'ուտա։
ԹԱՓԱՌ. — Երիկ մարդիկ պաղարյուն են, կնիկները տաքարյուն կ'ըլլան։ (Մեկուսի) Ամառը։
ՄԱՐԹԱ. — Անօրեն մարդ, ըրածիդ կըհավնի՞ս, ամուսնության մեջ միշտ վեճ, կռիվ կըվայլէ՞։
ԹԱՓԱՌ. — Առանց կռվո ամուսնությունը անլի կերակուրի կը նմանցնեն խոհարարները։
ՄԱՐԹԱ. — Աղջիկ զավակ ունիս, պետք չէ՞ վոր խնամք ունենաս վրան, հոգաս և կառավարես զինքը։
ԹԱՓԱՌ. — Աստված մարդս ազատ ինքնիշխան ստեղծեց. աղջիկս անձին տերն է, կրնա զինքը կառավարել. ես ատոր դեմ չեմ մեղանչեր։
ՄԱՐԹԱ. — Գիտցիր վոր այդ խոսքերը մահվանս պատճառ պիտի ըլլան, ասանկ կյանք անցունել չըլլար. ես ապրիլ կ'ուզեմ, մանավանդ շատ ապրիլ։
ԹԱՓԱՌ. — Ինձի ինչ կ'ըսես, Արվեստ յերկայնակեցության[6]) կարդա։
ՄԱՐԹԱ. — Լավ, անգութ, ափսոս վոր ինձի պես պարկեշտ կին մ'ունիս։
ԹԱՓԱՌ. — Քու տարիքիդ մեջ կանայք պարկեշտ ըլլալու չեն։
ՄԱՐԹԱ. — Ալ բավ է, պիտի լռե՞ս։
ԹԱՓԱՌ. — Դուն ալ լռե։
ՄԱՐԹԱ. — Ամուսնության կապը կամաց կամաց թուլնալ սկսավ։
ԹԱՓԱՌ — Տաքեն անանկ կ'ըլլա։
ՄԱՐԹԱ. — Բոլորովին պիտի քակվի, գիտե՞ս։
ԹԱՓԱՌ. — Զանիկա կապողը պինդ կապեր է. չ'քակվիր, քահանաներուն կապածը աշխարհականները չեն կրնար քակել։
ՄԱՐԹԱ. — Ես կը քակեմ։

ԹԱՓԱՌ. — Գեշ չըլլար։
ՄԱՐԹԱ. — Բոլոր լրագիրներու մեջ հրատարակել պիտի տամ թե (Բարձրաձայն) Թափառնիկոս իր կինը թողուց։
ԹԱՓԱՌ. — Շատ աղեկ խորհեր ես, ասով բարություն մը ըրած կ'ըլլանք, թե վոր մեզի պես ուրիշ կռվող ամուսիններ ալ գտնվին, անոնց օրինակ կ'ըլլանք, թող անոնք ալ բաժնըվին։ Ասով լրագրապետներն ալ կը վաստկին, թող վաստկին, ինչու վոր անոնք ազգին և ընդհանուր մարդկության հառաջադիմության համար կ'աշխատին. գրել տալը, ծանուցման մեկ տողը յերեք դահեկան է։
ՄԱՐԹԱ. — Ինչպես վոր կ'երևի դուն չես ամչնար։
ԹԱՓԱՌ. — Փառք աստուծո, ամչնալու ինչ կա վոր…
ՄԱՐԹԱ. — Յերբ ըսեն թե Թափառնիկոս իր կինը թողեր է։
ԹԱՓԱՌ. — Պիտի ըսեն թե պատերազմեն վողջ դարձեր է։
ՄԱՐԹԱ. — Շատ աղեկ, մնաք բարով։
ԹԱՓԱՌ. — Յերթաք բարով։
ՄԱՐԹԱ. — Ապրիս…
ԹԱՓԱՌ. — Դուն ալ ապրե։
ՄԱՐԹԱ. — Ուրեմն մնաք բարով։
ԹԱՓԱՌ. — Յերթաք բարով։
ՄԱՐԹԱ. — Վերջինն է վոր կ'ըսեմ, աղեկ խորհե և անանկ պատասխանե. մը .. նաք .. բա .. րը… ր… ո…վ։
ԹԱՓԱՌ. — Յերթաք բարրր… ով…
ՄԱՐԹԱ. — Քեզի դեմ դատ պիտի բանամ։
ԹԱՓԱՌ. — Բա՛ց։
ՄԱՐԹԱ. — Տանդ դռները պիտի գոցեմ։
ԹԱՓԱՌ. — Գո՛ցե։
ՄԱՐԹԱ. — Ընդհանուր ժողովքը պիտի յելնեմ։
ԹԱՓԱՌ. — Յելի՛ր։
ԱՄՐԹԱ. — Վերջեն Թաղական[7]) պիտի իջնամ։
ԹԱՓԱՌ. — Իջի՛ր։
ՄԱՐԹԱ. — Վերջը կը տեսնվինք։ (Կ'երթա)։

ՏԵՍԻԼ Դ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ. առանձին, վերջը ՄԱՐԿՈՍ

ԹԱՓԱՌ. — Կորսվեցավ, գնաց թշվառականը. առավոտուն յելեր՝ կռիվ ընելու պատճառ կը փնտռե. կը տեսնես անգամ մը բրած հարցումները, յերկուշաբթի ուր եյիր, յերեքշաբթի ուր եյիր, չորեքշաբթի ուր, ուր եյիր, ուր եյիր, ուր եյիր... վո՞ր ծակը մտած եյիր, ո՞ւր կորսված եյիր. կարծես թե դպրոցի մեջ ենք և քննություն կուտանք: Ա՜հ... յես մեծ հանցանք մը գործեցի ստակով կնիկ առնելուս... Բայց ինչ ընելու յե... թե վոր հարուստ աղջիկ մը առնուս, ահա ասանկ կ'ըլլաս. իրեն գերի ըլլալու յես... թե վոր աղքատ աղջիկ մը առնուս, ան ատեն ալ իրեն ծառա ըլլալու յես. միշտ անոր համար աշխատելու յես, վոր ուտե, խմե, հագվի, սգվի... ինչ և է գոնե այն ժամանակ հանգիստ ու յերջանիկ կյանք մը կը վարես, ասանկ ամեն օր կռիվ չըլլար, յես այսպես կը հավատամ. յուրաքանչյուր վոք իրեն հասակին, հարստության, բնության, սիրույն համապատասխանող ընկեր մը գտնալու յե, վորպես զի այս վաղանցուկ կյանքին մեջ յերանելի ամուսնությամբ ապրի: Վաթսուն տարվան յեղեր ե և սիրվիլ կ'ուզե... Սե՛ր, սե՛ր, վո՛ր տեղվանք կ'երթաս. դուն հիրավի կույր ես յեղեր: Իսկ յես ալ աղեկ պատասխանեցի իրեն, ինչ վոր ուզե թող ընե: Սա աղեկությունը ունի վոր շուտով կը հաշտվի. քեն չպահեր: (Գետինը կոտրած շիշը տեսնելով) Ա՛յ սատանորդի, շիշը կոտրեր ե: (Կ'առնե գետնեն կը հոտվտա ու շիշը բռնելով ասդին անդին կը վազվռտե) Ո՜հ... քիթս... բերանս... գլուխս... ամենեն պիտանի՝ դեղն թափեր ե, անուշադրի վոգին:

ՄԱՐԿՈՍ — (Ներսեն մտնելով) Ասիկա ըլլալու յե Պ. Թափառնիկոսը:

ԹԱՓԱՌ. — (Չը լսելով, բարկությամբ) Ա՛հ, կանա՛յք, կանայք, տուներու մեջ դուք եք անհանգստության պատճառ:

ՄԱՐԿՈՍ — (Ինքնիրեն) Բարկացած կ'երևի:

ԹԱՓԱՌ. — Թե վոր տան մեջ վոտք կոխե, բզիկ բզիկ պիտի ընեմ գլուխը:

ՄԱՐԿՈՍ — Բարով, Պարոն Թափ...

ԹԱՓԱՌ — Ամեն օր, ամեն ժամ կը պոռա թե իր ստակովը մարդ յեղած եմ...

ՄԱՐԿՈՍ — Բարև, Պարոն Թափառ...

ԹԱՓԱՌ. — Յես չեմ ուրանար, իր ստըկին համար առի զինքը. բայց դաշնագրության ատեն չըսավ վոր ամեն օր այսպես պիտի պոռա: (Կնկան ձայնով) Իմ ստակովս մարդ յեղար:

ՄԱՐԿՈՍ — Բարև, Պար...

ԹԱՓԱՌ. — Յերբ երիկ մը կնկան իշխանության տակ ե՝ ամուսնությունը անկատար ե և վնասակար:

ՄԱՐԿՈՍ — Բարև, պարոն Թափ...

ԹԱՓԱՌ. — Ծունկերս կը դողդղան, չեմ կրնար վոտքի վրա կայնիլ, այսպես բարկացնե զի՜ս... չգիտեմ վո՛ր փիլիսոփան կը գրե թե՝ մեկը բարկացած ժամանակը ա բ գը մինչև վերջը յեթե կարդա, բարկությունը կ'անցնի. փորձենք...

ՄԱՐԿՈՍ — Բարև, Պարոն Թափ...

ԹԱՓԱՌ. — Ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ձ ղ հ... սխալցա. (Ավելի բարկությամբ նորեն կսկսի, դարձյալ կը սխալի) Լոզն ալ պիտի կարծե վոր ա բ գը չեմ գիտեր. ահա հարուստ աղջիկ առնող ամուսիններն ասանկ Թերական կը կարդան: (Ա բ գը մինչեվ վերջը կ'ըսե) Բարկությունս յերթալով կ'երթա և կը սաստկանա, ուրիշ կերպով փորձենք. աա բբ գգ դդ եե զզ էէ ըը թթ ժժ իի լլ խխ ծծ կկ հհ ձձ ղղ ճճ մմ յյ նն շշ ոո չչ պպ ջջ ռռ սս վվ տտ րր ցց ււ փփ քք եև օօ ֆֆ: Աս բարկությունը ինձի սուղի պիտի նստի...

ՄԱՐԿՈՍ — (Ինքնիրեն) Փախո՞ւկ ե, ի՞նչ ե:

ԹԱՓԱՌ. — Ախչ բծպ գկջ...

ՄԱՐԿՈՍ — (Բարձրաձայն) Ի ձ ս ղ ղ վ...

ԹԱՓԱՌ. — (Բարկությամբ վրան յերթալով) Զի՞ս կը ծիծաղիս, խայտառակ մարդ:

ՄԱՐԿՈՍ — Ես, Պարոն, յերկու ժամե ի վեր ձեզի կ'սպասեմ, ակռաս կը ցավի:

ԹԱՓԱՌ. — Նստե քիչ մը:

ՄԱՐԿՈՍ — Շատ աղեկ, Պարոն, նստիմ: (Կը նստի):

ԹԱՓԱՌ. — Արդեն աչքեդ հայտնի յե, վոր ակռադ կը ցավի:

ՄԱՐԿՈՍ — Կ'աղաչեմ, Պարոն ատամնաբույժ, ձեռքեդ յեկածը մի խնայեր զիս բուժելու համար: Ձեր համբավը Պոլսո մեջ

ամբողջ տարածվեր է, յես ալ, ձեր անունը լսելով, փութացի հոս գալ, վորպես զի...

ԹԱՓԱՌ. — Վասն զի՝ արվեստս կանոնավոր կերպով հառաջ կը տանիմ: Յես Յեվրոպայի մեջ ուսյալ բժիշկներեն չեմ. իմ բժշկությունս բնականեն է. ինձի յեկող հիվանդները միշտ գոհ կ՚ըլլան, կը հուսամ վոր դուն ալ անոնց պես շնորհակալությամբ պիտի յերթաս:

ՄԱՐԿՈՍ — Շատ աղեկ...

ԹԱՓԱՌ. — Մե՞կ հատ միայն կը ցավի, չե նե ամենն ալ...

ՄԱՐԿՈՍ — Մեկ հատ, Պարոն, մեկ հատ...

ԹԱՓԱՌ. — Մեկ հատ կամ յերեսուն յերկու հատ ըլլա, չէ ինձ փույթ. ինձի համար միևնույն բանն ըսել է:

ՄԱՐԿՈՍ — (Մեկուսի) Ճարտար մեկու մը կը նմանի:

ԹԱՓԱՌ. — Շատո՞նց ի վեր է վոր ունիս այդ ցավը:

ՄԱՐԿՈՍ — Շուրջ յերկու շաբաթ...

ԹԱՓԱՌ. — Արվեստդ ի՞նչ է:

ՄԱՐԿՈՍ — Վաճառական մը...

ԹԱՓԱՌ. — (Թիկնաթոռեն յելնելով) Ներեցեք, յեթե չը կրցի ճանչնալ զձեզ. հրամմեցեք հոս նստեցեք, վոտքդ պագնեմ, յելեք թիկնաթոռը նստեցեք:

ՄԱՐԿՈՍ — Հոգ չէ, Պարոն. աշխատ մ՚ըլլաք:

ԹԱՓԱՌ. — Կ՚աղաչեմ: (Մարկոս թիկնաթոռին վրա կը նստի) Շարունակեցեք: (Հարցանոք կը փարվի):

ՄԱՐԿՈՍ — (Մեկուսի) Ի՞նչ խոնարհ մարդ:

ԹԱՓԱՌ. — (Մեկուսի) Ի՞նչ ադահ մարդ:

ՄԱՐԿՈՍ — Վաճառական մ՚եյի առենոք, իսկ հիմա ջաղացքի մը մեջ գործավոր եմ: Մարդ չե՞նք, այսոր հարուստ՝ վաղը աղքատ, այսոր առողջ՝ վաղը հիվանդ. այսոր աշխարհ՝ վաղը գերեզման. բայց յես հույսս չեմ կտրեր, քիչ ժամանակեն յերևելի վաճառական մը ըլլալու դիտավորություն ունիմ:

ԹԱՓԱՌ. — Ըղձալի դիտավորություն: (Մեկուսի) Սա անորեն կնկան պատճառավ այսոր գործերս ձախորդ կ՚երթան:

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՒՅՆՔ և ՆԻԿՈ

ՆԻԿՈ — (Սուրճը բերելով) Տեր...

ԹԱՓԱՌ. — (Մարկոսին) Ի՞նչպես անցուցիր այս գիշեր:

ՄԱՐԿՈՍ — Ամենևին աչքս չգոցեցի:

ՆԻԿՈ — Հայտնի յե վոր Պարոնին աչքը կը ցավի:

ԹԱՓԱՌ. — Մինչև վոր սուրճս խմեմ, դուն նախապատրաստությունները լմնցու, Նիկո՛. Պարոնին ակռան պիտի քաշենք:

ՆԻԿՈ — Այո՛, տեր իմ:

ԹԱՓԱՌ. — (Սուրճը խմելով) Ուշադրությամբ ըրե՛ վոր չը փախնա:

ՆԻԿՈ — Այո՛, տեր:

ԹԱՓԱՌ. — Նայե՛ վոր բռնությունը ձեռք չ՚առնենք:

ՆԻԿՈ — Այո՛:

ԹԱՓԱՌ. — Անուշությամբ լմնցուր:

ՆԻԿՈ — Շատ աղեկ: (Կերպաս սեղանին վրայեն չվան մը կ՚առնու) Քովս յեկուր, յեղբայր:

ԹԱՓԱՌ. — Քովը գնա:

ՆԻԿՈ — (Մարկոսին ձեռները կապել կ՚ուզե, վորն վոր չթողուր) Թող տուր վոր կապեմ:

ՄԱՐԿՈՍ — Ինչո՞ւ, յեղբայր, յես խենդ եմ. փառք աստուծո, խելքս գլուխս է. ակռայի ցավ ունիմ:

ԹԱՓԱՌ. — Հնազանդություն, Պարոն. իմ բռնեցուցած կերպերս թեպետ և հիվանդներուն անհաճո կ՚երևին, բայց վերջեն հաճությամբ դուրս կ՚ելնեն. Թող վոր կապե, թո՛ղ, թո՛ղ:

ՄԱՐԿՈՍ — Ի՞նչ կ՚ըսեք, յես գո՞ղ եմ, ավազա՞կ եմ վոր..

ԹԱՓԱՌ. — Յես քու գիտցած բժիշկներեն չեմ. իմ արվեստս ինչ վոր կը պահանջե, կատարելու յեմ. կիմանա՞ս, պարապ տեղը մի՛ բարկացներ զիս. Թող տուր կապե:

ՆԻԿՈ — Վերջեն պիտի զղջաս:

ՄԱՐԿՈՍ — Բայց...

ԹԱՓԱՌ. — (Սեղանին վրայեն ատրճանակն առնելով Մարկոսին կ՚ուղղե) Հնազանդություն:

ՄԱՐԿՈՍ — Թո, թո... թո թող կենա...

ՆԻԿՈ — (Կապելով) Ինչո՞ւ խոսք մտիկ չեք ըներ:

ամբողջ տարածվեր է, յես ալ, ձեր անունը լսելով, փութացի հոս գալ, վորպես զի...

ԹԱՓԱՌ. — Վասն զի՝ արվեստս կանոնավոր կերպով հառաջ կը տանիմ։ Յես Յեվրոպայի մեջ ուսյալ բժիշկներեն չեմ. իմ բժշկությունս բնականեն է. ինձի յեկող հիվանդները միշտ գոհ կ'ըլլան, կը հուսամ վոր դուն ալ անոնց պես շնորհակալությամբ պիտի յերթաս։

ՄԱՐԿՈՍ — Շատ աղեկ...

ԹԱՓԱՌ. — Մե՞կ հատ միայն կը ցավի, չե նե ամենն ալ...

ՄԱՐԿՈՍ — Մեկ հատ, Պարոն, մեկ հատ...

ԹԱՓԱՌ. — Մեկ հատ կամ յերեսուն յերկու հատ ըլլա, չե ինձ փույթ. ինձի համար միևնույն բանն ըսել է։

ՄԱՐԿՈՍ — (Մեկուսի) Ճարտար մեկու մը կը նմանի։

ԹԱՓԱՌ. — Շատո՞նց ի վեր է վոր ունիս այդ ցավը։

ՄԱՐԿՈՍ — Շուրջ յերկու շաբաթ...

ԹԱՓԱՌ. — Արվեստդ ի՞նչ է։

ՄԱՐԿՈՍ — Վաճառական մը...

ԹԱՓԱՌ. — (Թիկնաթոռեն յելնելով) Ներեցեք, յեթե չը կրցի ճանչնալ զձեզ. հրամմեցեք հոս նստեցեք, վոտքդ պագնեմ, յելեք թիկնաթոռը նստեցեք։

ՄԱՐԿՈՍ — Հոգ չե, Պարոն. աշխատ մ'ըլլաք։

ԹԱՓԱՌ. — Կ'աղաչեմ։ (Մարկոս թիկնաթոռին վրա կը նստի) Շարունակեցեք։ (Հարգանոք կը վարվի)։

ՄԱՐԿՈՍ — (Մեկուսի) Ի՞նչ խոնարհ մարդ։

ԹԱՓԱՌ. — (Մեկուսի) Ի՞նչ ագահ մարդ։

ՄԱՐԿՈՍ — Վաճառական մ'եյի ատենոք, իսկ հիմա ջաղացքի մը մեջ գործավոր եմ։ Մարդ չե՛նք, այսոր հարուստ՝ վաղը աղքատ, այսոր առողջ՝ վաղը հիվանդ. այսոր աշխարհ՝ վաղը գերեզման. բայց յես հույսս չեմ կտրեր, քիչ ժամանակեն յերևելի վաճառական մը ըլլալու դիտավորություն ունիմ։

ԹԱՓԱՌ. — Ըղձալի դիտավորություն։ (Մեկուսի) Սա անորեն կնկան պատճառավ այսոր գործերս ձախորդ կ'երթան։

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՒՅՆՔ և ՆԻԿՈ

ՆԻԿՈ — (Սուրճը բերելով) Տեր...

ԹԱՓԱՌ. — (Մարկոսին) Ինչպես անցուցիր այս գիշեր։

ՄԱՐԿՈՍ — Ամենեվին աչքս չգոցեցի։

ՆԻԿՈ — Հայտնի յե վոր Պարոնին աչքը կը ցավի։

ԹԱՓԱՌ. — Մինչև վոր սուրճս խմեմ, դուն նախապատրաստությունները լմնցու, Նիկո՛. Պարոնին ակռան պիտի քաշենք։

ՆԻԿՈ — Այո՛, տեր իմ։

ԹԱՓԱՌ. — (Սուրճը խմելով) Ուշադրությամբ ըրե՛ վոր չը վախնա։

ՆԻԿՈ — Այո՛, տեր։

ԹԱՓԱՌ. — Նայե՛ վոր բռնությունը ձեռք չ'առնենք։

ՆԻԿՈ — Այո՛։

ԹԱՓԱՌ. — Անուշությամբ լմնցուր։

ՆԻԿՈ — Շատ աղեկ։ (Կերթա սեղանին վրայեն չվան մը կ'առնու) Քովս յեկուր, յեղբայր։

ԹԱՓԱՌ. — Քովը գնա։

ՆԻԿՈ — (Մարկոսին ձեռները կապել կ'ուզե, վորն վոր չթողուր) Թող տուր վոր կապեմ։

ՄԱՐԿՈՍ — Ինչո՞ւ, յեղբայր, յես խե՞նդ եմ. փառք աստուծո, խելքս գլուխս է. ակռայի ցավ ունիմ։

ԹԱՓԱՌ. — Հնազանդություն, Պարոն. իմ բանեցուցած կերպերս թեպետ և հիվանդներուն անհաճո կ'երևին, բայց վերջեն հաճությամբ դուրս կ'ելնեն. Թող վոր կապե, թո՛ղ, թո՛ղ։

ՄԱՐԿՈՍ — Ի՞նչ կ'ըսեք, յես գո՞ղ եմ, ավազա՞կ եմ վոր..

ԹԱՓԱՌ. — Յես քու գիտցած բժիշկներեն չեմ. իմ արվեստս ինչ վոր կը պահանջե, կատարելու յեմ. կիմանա՞ս, պարապ տեղը մի բարկացներ զիս. Թող տուր կապե։

ՆԻԿՈ — Վերջեն պիտի զղջաս։

ՄԱՐԿՈՍ — Բայց...

ԹԱՓԱՌ. — (Սեղանին վրայեն ատրճանակն առնելով Մարկոսին կ'ուղղե) Հնազանդություն։

ՄԱՐԿՈՍ — Թո, թո... թո թող կենա...

ՆԻԿՈ — (Կապելով) Ինչո՞ւ խոսք մտիկ չեք ըներ։

ԹԱՓԱՌ — Մի վախնար, իմ սովորութիւնս է, երբ մէկուն ակռան պիտի հանեմ, ձեռները կը կապեմ, անհոգ եղիր դուն. սեպէ թէ ակռադ ելաւ. հիմա իմ հարցումներուս պատասխան տուր. արեւելեա՞ն թէ արեւմտեան կողմը կը ցաւի:

ՄԱՐԿՈՍ — Ջաղացքը կը հարցնէք, Պարոն, հոս մօտ պարտէզին մէջն է:

ԹԱՓԱՌ. — Անիկա իմ հարցմանս պատասխան չէ:

ՄԱՐԿՈՍ — (Նիկոյին) Ի՞նչ ըսել կ՚ուզէ:

ՆԻԿՈ — Միշտ այսանկ կը հարցնէ, պատասխանելու չէ...

ԹԱՓԱՌ. — Վարի՞ հարկն է չէ նէ վերի:

ՄԱՐԿՈՍ — Վերի հարկը, Պարոն, վերի հարկը, հիսուն դահեկան ամսականով վարձեր եմ. պզտիկ սենյակ մ՚է, ձմեռը շատ տաք կ՚ըլլայ, վասն զի թղթապատ է. կին մ՚ալ կայ հոն որ անկողինս կը շինէ և ինձի ծառայութիւններ կ՚ընէ, թէ որ կ՚ուզէք, սենյակ մ՚ալ ձեզի համար վարձեմ, փողոցն ալ դէշ չէ:

ԹԱՓԱՌ. — Չհասկցար իմ հարցումներս, բերնիդ ո՞ր կողմն է ցաւող ակռան:

ՄԱՐԿՈՍ — (Մատով կը ցուցնէ աջ կողմը) Ահա, պարոն, աս կողմը:

ԹԱՓԱՌ. — Ես ալ քեզի աս հարցուցի, և դուն ջաղացքին պարտէզի մէջ ըլլալն ըսիր: Վարի՞ շարքն է ցաւող ակռան:

ՄԱՐԿՈՍ — Այո, այո, ահա (ցցունելով), վարի շարքին:

ԹԱՓԱՌ. — Յել դուն բնակած սենյակիդ վերի հարկը թղթապատ և տաք ըլլալը ըսիր: Ես բերնին մէջ գտնուած տեղերուն և գործիքներուն մէյ մէկ անուն տուած եմ, և միշտ անանկ կը հարցնեմ. կ՚ուզեմ որ ինձի եկող հիւանդներն ալ սորվին:

ՆԻԿՈ — (Ցած, առ Մարկոս) Ջանա որ սորվիս, ուրիշ անգամուն պէտք կ՚ըլլայ:

ՄԱՐԿՈՍ — (Մեկուսի) Անիկա վարպետ մէկուն կը նմանի. ինչե՜ր կը հարցնէ:

ԹԱՓԱՌ. — Եհ, գործը լմնցաւ, ցաւող ակռային ուր ըլլալն ալ իմացանք, հիմա զայն հանելու աշխատելու է. Նիկո, աս ատրճանակը առ և պարոնին դէպի բերանը ուղղէ:

ՄԱՐԿՈՍ — (Վախնալով) Ի՞նչ կ՚ըսէք, Պարոն:

ԹԱՓԱՌ. — Ամենափոքր շարժում մը ընելուն պէս պարպէ:

ՄԱՐԿՈՍ — (Թոթովելով) Թող կենա, չեմ ուզեր:

ԹԱՓԱՌ. — Լռէ. պիտի պարպէ:

ՄԱՐԿՈՍ — (Ապշած, շվարած, արձանի պես կը կայնի անշարժ) Ով Աստուած իմ:

ԹԱՓԱՌ. — Ինչչափ վախկոտ ես, ծօ տղա՛:

ՄԱՐԿՈՍ — Չէ... չէ... վախ... կոտ... չեմ...

ԹԱՓԱՌ. — Բերանդ բա՛ց... քիչ մ՚ալ բա՛ց, որ լոյսը ներս մըտնէ, կըրցածիդ չափ բա՛ց... աս պզտի փայտը մէջտեղը դնեմ, որ չգոցվի. (կը դնէ) հա՛. այսպես կեցիր, ես ալ պատրաստվիմ որպեսզի դյուրութեամբ կարենամ գործել: (Գիշերազգեստը, գլխարկը կը հանէ, շապիկին թեվերն վեր կ՚առնէ) Ալ վախ պէտք չէ. սեպէ թէ ակռադ ելաւ:

ՄԱՐԿՈՍ — Ըհ, ուհ... ըհ...

ԹԱՓԱՌ. — (Դիտակով Մարկոսին բերնին մէջը կը նայի) Չկրցի տեսնել Նիկո, աս ճրագը՞ վառէ. ինչ անտեսանելի ակռա, նայինք ճրագով պիտի կարենա՞նք գտնել: (Ճրագը Մարկոսին բերնին կը մօտեցնէ)

ՄԱՐԿՈՍ — (Ցես յես կ՚երպա): Ա՜հ,

ԹԱՓԱՌ. — Նիկո, կապէ ոտքերը:

ՆԻԿՈ — Կը հնազանդիմ, տէր: (Կը կապե):

ԹԱՓԱՌ. — (Աթոռի վրա կ՚ելնէ) Ծունկ չոքէ, շուտ եղիր, ժամանակ չկորսնցնենք: (Աքցանը բերնին մէջ կը խոթէ յեվ կ՚սկսի քաշել) Ա՜հ, փայտը ինկաւ:

ՄԱՐԿՈՍ — Ի՞նչ կ՚ընէք, Պարոն, լեզուս պիտի փրցնէք:

ԹԱՓԱՌ. — Մարդս կը սխալի երբեմն:

ՄԱՐԿՈՍ — Կ՚աղաչեմ, թո՛ղ աքցանը և ուրիշ կերպով յեթէ հնար է հանել, կատարէ. ապա թէ ո՛չ՝ ես պիտի երթամ:

ԹԱՓԱՌ. — Տեսակ տեսակ գործիքներով հառաջ կը վարեմ արվեստս, հանդարտ եղիր, սեպէ թէ ակռադ քաշվեցաւ:

Իմ վարպետութիւններս Եվրոպայի բժիշկները կը զարմացնեն և ի ծիծաղ կը շարժէ զանոնք: Ինծի նայէ, բարեկամ, մէկը կատարյալ բժիշկ ըլլալու համար բավական խելք ունենալու է. միայն բժշկութեան վկայականով չի լմննար, ինչպես որ վարդապետ մը սև վեղարով չկրնար կատարյալ վարդապետ ըլլիլ՝ թէ որ ուսմունք չունենա. ասոնցմէ զատ ատամնաբույժ մը շատ վարժած ըլլալու է որ...

ՆԻԿՈ — Ինքը շատ վարժած է:

ԹԱՓԱՌ. — Անհոգ չըլլիր դուն, թեպետ և քիչ մը խստութեամբ խօսեցայ հետդ, բայց իմ արհեստս այնպէս կը պահանջէ. անուշութեամբ չըլլար։ Խստութեամբ սկսած գործին անուշութիւն կը հաջորդէ, ինչպէս որ անուշութեամբ սկսած գործին խստութիւն... ինչպէս որ փոթորիկէն վերջը խաղաղ հովմ... ինչպէս որ տրտմութենէն վերջը ուրախութիւն, ինչպէս որ... ինչպէս որ աղքատութենէն վերջը...

ՄԱՐԿՈՍ — Մուրողութիւն...

ԹԱՓԱՌ. — Ոչ, հարստութիւնը կը հաջորդէ։ Կանուխէդ վրա պառկէ, զաւակս, չես մինչև հիմա կրնայի քու բոլոր ակռաներդ քաշել, այլ ինչ ընեմ որ քիչ մը բարկացած եմ այսօր. պառկէ, տղաս, պառկէ. սեպէ թէ ակռադ չըլլայ։ (Մարկոս կը պառկի, Թափառնիկոս սեղանին վրայէն դերձան մ'առնելով) Սա դերձանը ակռայիդ պիտի կապեմ, կապելուս պես լմնցաւ գործը. բաց բերանդ... տեսա... ահա կապեցի... անհոգ յեղիր... տեղէդ չերերաս... Նիկո, աքցանակը շտկէ։ (Մարկոսին առջեվը կը նստի յեվ վոտները Մարկոսին վոտներուն կրքնած կ'սկսի քաշել) Կը ցաւի՞... համբերէ... ինչ ընենք, հիմա պիտի չըլլա... Թշվառ տղա, ընկո՞ւզ կոտրեցիր, ինչ ըրիր, որ սանկ... տեր վողորմյա... սանկ ակռա մը, որ տեղէն չշարժիր։

ՄԱՐԿՈՍ — (Գոռալով) Ահ, ուհ, բուֆ...

ԹԱՓԱՌ. — Նիկո, աքցանակը մի թողուր... համբերութիւն, տղաս... սեպէ թէ ակռադ չըլլայ։ (Քիչ մ'ալ ուժով կը քաշէ դերձանը կը փրթի. ինքն ալ կռնկի վրա կ'իյնա)։

ՆԻԿՈ — (Տիրոջը վրան մաքրելով) փոշի չեղաւ վրադ։

ՄԱՐԿՈՍ — (Պառկած) Ա՜հ... ո՜ւհ...

ԹԱՓԱՌ. — Գիտեմ չես... բոլոր հանցանքը կնկանս է, որ զիս բարկացուց։ (Վոտները գետին զարնելով)։

ՄԱՐԿՈՍ — Ո՜ւհ... բո՜ւֆ... (Վոտք յելնել կը ջանա)։

ԹԱՓԱՌ. — Ինչո՞ւ կ'ելնես, պառկէ, տեղէդ մի շարժիր, մ'աճապարեր, ծունկ չոքէ և սեպէ թէ ակռադ չըլլայ։ (Ուրիշ դերձան մը կը հանէ, կը կապէ ցավող ակռան) Ահա ձայն մ'ալ, պիտի չըլլա...

ՄԱՐԿՈՍ — Ա՜հ, Պարոն, թող տուր չելնեմ։

ԹԱՓԱՌ. — Պապանձէ, ահա չըլլաւ... ահա... քիչ մ'ալ համբերէ... (Ուժով կը քաշէ) Ա՜հ, վերջապես հաջողեցա... (ակռան Մարկոսին տալով) առ ակռադ... ինձի Թափառնիկոս կ'ըսեն... ինքզինքս գովելու համար չեմ ըսեր, բայց կը պարծենամ որ այս արհեստին մէջ ինծի հաջողակը չկա։ Թող Յեվրոպայի մէջ ուսյալ բժիշկները պնդեն թէ իրենք շատ վարպետ են...

ՄԱՐԿՈՍ — Գիտե՞ք, պարոն, որքան դժվար է այս ակռայի ցավը քաշելը։

ԹԱՓԱՌ. — Գիտե՞ք, պարոն, որքան դժվար է ակռա քաշելը։

ՄԱՐԿՈՍ — Վողջ ըլլաք... բայց ցավը փոխանակ մեղմանալու սաստկացավ։

ԹԱՓԱՌ. — Առջի բերան անանկ կ'ըլլա։

ՆԻԿՈ — Անանկ կ'ըլլա ամենուն ալ։

ՄԱՐԿՈՍ — (Մատներովը ակռաները զննելով) Ցավող ակռան հոս է, ահա տե՛ս, դուք սխալմամբ քովի ակռան քաշեր եք։

ԹԱՓԱՌ. — Կույր ըլլալու չեմ, որ ատանկ բան մը ընեմ։

ՄԱՐԿՈՍ — Սխալած եք. Ե՛հ, պարոն ատամնաբույժ, այս խաղը դեռ շատ չերկար պիտի տեվե՞...

ԹԱՓԱՌ. — Կեցիր։ (Մատներովը կը քննէ ակռաները) Իրավունք ունիք... բայց չես գիտմամբ քովի ակռան քաշեցի։

ՄԱՐԿՈՍ — (Բարկությամբ) Դիտմա՞մբ... դիտմամբ, մեղք չէ՞ իմ վողջ ակռայիս որ...

ԹԱՓԱՌ. — Ի՞նչ ըսեմ, տղա, դուն անմիտ ես... թէ որ այս ակռան չըհանեյի, մյուսը շատ դժվարութեամբ պիտի կրնայինք քաշել, չեմ հուսար որ այս խոսքիս չհամոզվելու չափ տըխմար ըլլաս. կը հարցնեմ քեզի, միթե կրնա՞ն ծառ մը խլել, թէ որ արմատը ազեկ չբանան, պատասխան տուր։

ՆԻԿՈ — Ըսածները ճշմարիտ են։

ՄԱՐԿՈՍ — Ե՞հ, իմ բերանս պարտե՞զ է։

ԹԱՓԱՌ. — Իմ ըսածս նմանութիւն մ'է։ Յես քեզի չափ չե՞մ խորշիր, որ ցավող ակռան մեկեն ի մեկ հանեմ, հա, հա, հա։

ՆԻԿՈ — Ինքը ազեկ կը խորհի։

ԹԱՓԱՌ. — Յես կ'ուզեմ, որ ընելիք գործս առաջուց մտածեմ, վերջը կատարեմ, կը հասկնա՞ս, ալ վախ չկա, սոր արմատը ազեկ բացվեցաւ։

ՆԻԿՈ — Ամենուն ալ անանկ կ'ընենք։

ՄԱՐԿՈՍ — Տակավին պիտի խոսի՞ք, ինչ որ պիտի ըսես՝ լմընցուր, շուտ յեղիր, շուտ...
ԹԱՓԱՌ. — Կամաց քալողը չհոգնիր, կ'ըսե առածը։
ՆԻԿՈ — Իրավ է, ինքը բնավ չ'հոգնիր։
ՄԱՐԿՈՍ — (Մեկուսի) Անգամ մը վոտքս դռնեն դուրս կոխեմ... (Բարկությամբ բարձրաձայն) Շուտ յեղիր, յես ձեր խաղալի՞քն եմ։
ԹԱՓԱՌ — (Վար սեղանին վրայեն շիշերը կը խառնե իբր թե բան մը կը փնտռե) Փառը... փառը դիր բերանը, ապերախտ, հոգվով մարմնով կ'աշխատիմ քեզի ծառայությունն մը ընելու և դուն կը հանդգնիս առանց ամչնալու ինծի դեմ խոսելու, կարծեցիր թե քենե սամիկ պիտի առնեմ. ինչ յեղար, համբերե քիչ մ'ալ, ու ակռադ գնա։

ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՒՅՆՔ և ՄԱՐԳԱՐ

ՄԱՐԳԱՐ — Բարև։
ԹԱՓԱՌ. — (Սեղանին առջև զբաղած) Աստուծո բարին։
ՄԱՐԳԱՐ — Յերեկ գիշեր ուշ հասա։
ԹԱՓԱՌ. — Հասար։
ՄԱՐԳԱՐ — Զկրցի հոս գալ։
ԹԱՓԱՌ. — Զկրցիք։
ՄԱՐԳԱՐ — Ձեզի ըսելիք ունիմ։
ԹԱՓԱՌ. — (Միշտ զբաղած) Կրնաք ըսել։
ՄԱՐԳԱՐ — Տիկինը տեսա վոր բարկացած կ'երթար։
ԹԱՓԱՌ. — Կրնա յերթալ։
ՄԱՐԳԱՐ — Կովե՞ր եք հետը։
ԹԱՓԱՌ. — Կովեր ենք։
ՄԱՐԳԱՐ — Բայց չվայլեր։
ԹԱՓԱՌ. — Զը վայլեր։
ՄԱՐԳԱՐ — Պետք է վոր ամուսին մը իր կինը սիրե։
ԹԱՓԱՌ — Պետք է վոր սիրե։
ՄԱՐԳԱՐ — Ըսել է վոր դուք չեք սիրեր։
ԹԱՓԱՌ. — Զեմ սիրեր։
ՄԱՐԳԱՐ — Այսպեսով իր մահվանը պատճառ կ'ըլլաք։

ԹԱՓԱՌ. — Կ'ըլլամ։
ՄԱՐԳԱՐ — Պե՞տք է վոր ըլլաք։
ԹԱՓԱՌ. — Պետք է։
ՄԱՐԳԱՐ — Պետք չէ։
ԹԱՓԱՌ. — Պետք չէ։
ՄԱՐԳԱՐ — Կը տեսնեմ վոր գործ ունիք։
ԹԱՓԱՌ — Գործ ունիմ։
ՄԱՐԳԱՐ — Ձեզի հետ խոսիլ կ'ուզեյի։
ԹԱՓԱՌ. — Խոսեցեք։
ՄԱՐԳԱՐ — Կ'երևի վոր զբաղյալ եք։
ԹԱՓԱՌ. — Զբաղյալ եմ։
ՄԱՐԳԱՐ — Ինչպես ըսենք, քանի մը ժամեն գամ։
ԹԱՓԱՌ. — Յեկուր։
ՄԱՐԳԱՐ — Կրնամ հոս գտնալ ձեզ։
ԹԱՓԱՌ. — Կրնաք։
ՄԱՐԳԱՐ — Թե վոր չգտնամ։
ԹԱՓԱՌ. — Զեք գտնար։
ՄԱՐԳԱՐ — (Մեկուսի) Կ'երևի վոր միտքը շատ հուզված է, վորովհետև ըսածը չգիտեր։ (բարձր) Քանի մը ժամեն պիտի գամ։
ԹԱՓԱՌ — Յեկուր։
ՄԱՐԳԱՐ — Մնա բարով։
ԹԱՓԱՌ. — Գնա բարով։ (Մարգար կը մեկնի)։

ՏԵՍԻԼ Է.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, ՄԱՐԿՈՍ, ՆԻԿՈ

ԹԱՓԱՌ. — Մոտ յեկուր, յերկու ժամե ի վեր քեզի համար դեղ կը փնտռեյի, ահա գտա։ (Շիշ մը տալով) Ա՛ռ ասիկա, բամպակի վրա քանի մը շիթ կաթեցուր, որը ութն անգամ ցավող ակռային վրա դիր, քանի մը որ ասիկա ըրե, տեսա՞ր վոր ցավը կ'ավելնա ինծի յեկուր, սեպե թե բժշկվեցար։ (Մարկոս գլուխը կը շարժե, իմացնելով վոր հասկցավ) Կայնե հիմա, բերնեդ հանեմ սա փառը։ Նիկո՛, վոտները, ձեռները քակե. (Նիկո կը բակե) Հասկցա՞ր, տղաս, կարծեմ թե առանց քաշելու այդ ցավող ակռան պիտի բուժիս։
ՄԱՐԿՈՍ — (Սեղանին մոտենալով ատրճանակը կ'առնե) Պատասխան տուր հարցումներուս, արեվելյա՞ն է թե արևմտյան։

ԹԱՓԱՌ. — Ա՞ս ինչ պիտի ըլլա։
ՄԱՐԿՈՍ — Ամենափոքր շարժում մը կրնա մահ պատճառել. Նիկօ, ձեռները կապէ։
ՆԻԿՈ — Պարոն...
ՄԱՐԿՈՍ — Հիմա կը մեռցնեմ, շուտ կապէ (Սա Թափառնիկոս) վերի՞ թէ վարի հարկն է։
ԹԱՓԱՌ. — Կորի՛ սրիկա, գարշելի...
ՄԱՐԿՈՍ — Ապերախտ, ինծի դեմ կը խօսիս, Նիկօ, լաթը դիր բերանը։
ԹԱՓԱՌ. — Վերջապես պիտի...
ՄԱՐԿՈՍ — Համբերություն, սովորությունս այս է, կը կապեմ, վասն զի ատամնաբույժ մը միայն վկայականով չկրնար կատարյալ ատամնաբույժ ըլլալ, պետք է քիչ մ'ալ խելք ունենալ, ինչպես որ վարդապետ մը սև վեղարով չկրնար կատարյալ վարդապետ ըլլալ, թե որ ուսումնք չունենա։ Թեպետ և իմ բռնած ընթացքս հիվանդներուս տհաճ կը թվի, բայց վերջը գոհ կ'ըլլան։ (Ակցանը առնելով) Համբերէ, սպասէ թե ակռադ ելավ։
ՆԻԿՈ — (Մեկուսի) Ես չերթամ, չըլլա որ իմ ալ ակռաս քաշե։ (Կ'երթա)։
ՄԱՐԿՈՍ — (Ակցանը Թափառնիկոսի բերանը խոթելով) Ա՜հ, թշվառ տղա... շատո՞նց ի վեր է որ կը ցավի։
ԹԱՓԱՌ. — Ա՜հ... ո՜հ...
ՄԱՐԿՈՍ — Ինծի տված յուղեդ քանի մը կաթիլ կաթեցուր և ցավող ակռային դիր... մնաք բարով... ահա, պարոն ատամնաբույժ, ասիկա Ատամն ընդ ատամանի եղավ։ (Կ'երթա)։
ԹԱՓԱՌ. — Ա՜հ... Ուրկե ելեր որ դիմացս ելավ սա մարդը... ձեռներս ոտներս կապեց։ (Կանչելով ծառան) Նիկօ, Նիկօ...

ՏԵՍԻԼ Ը.

ՆՈՒՅՆՔ և ՄԱՐԹԱ

ՄԱՐԹԱ. — (Բարկությամբ մտնելով) Ո՛չ քաղաքական կա, ո՛չ Թաղական և ոչ Կրոնական ժողով[9]... միշտ խառն ժողով[10] կ'ըլլա. կանոնավորը տեսած չունինք։ Ո՞ւր երթամ հայտնեմ

ցավերս... ո՜հ, կանայք թշվառ են... (Երիկը տեսնելով) Աս ի՞նչ է... ո՜հ, անօրեն մարդ... պատիժդ գտեր ես... ահա այսպես կապված կեցիր... ո՜հ.. հիմա քիչ մը սկսավ սիրտս ուրախություն զգալ... կը հիշե՞ս ինծի ըրածներդ, անզգամ, տես գլուխս, դուն ճերմկցուցիր աս մազերը...
ԹԱՓԱՌ. — Ճերմակը սեվին վրա աղեկ կը վայլե։
ՄԱՐԹԱ — Այս վիճակիդ մեջ անգամ գլխ կ'առնես. դուն իմ ատակոխ մարդ չեղար...
ԹԱՓԱՌ. — Ես քեզ չեմ ճանչնար։
ՄԱՐԹԱ — Չե՞ս ճանչնար, հիմա կը ճանչցնեմ ինքզինքս .. երթամ ժամկոչները կանչելու՝ որ գան առնեն Փրկիչ տանին քեզ։ (Վազելով կ'երթա)։

ՏԵՍԻԼ Թ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ առանձին, վերջը ԼԵՎՈՆ

ԹԱՓԱՌ. — Թե որ մինչև հիմա սրտիս մեջ իրեն համար սեր կը կրեյի, ան ալ դուրս ըրի. ասկե վերջը անհնարին է, որ կարենամ հետը ապրիլ .. այսպիսի նախանձորդ կնոջ հետ ապրիլը... կատուներու հետ խաղալու պես է, պահիր տված ժամանակդ կը ճանկռեն... և ո՞վ եղավ բոլոր այսօրվան ձախորդությանց պատճառ, եթե ոչ ինքը. կ'ուզե որ սիրվի վաթսուն տարվան հասակիս մեջ. թե որ մեկ ուրիշ կնկան երեսը նայիմ, կռիվ ընելու կուգա վրաս... այս նախանձը չե՞ որ կանանց գեղեցկությունը կ'ոչնչացնե ..
ԼԵՎՈՆ — Մարդ չկա հոս...
ԹԱՓԱՌ. — Պարոն. .
ԼԵՎՈՆ — (Մեկեն ի մեկ երեսը բռնելով իբր թե ակռան կը ցավի) Ի՞նչ կա։
ԹԱՓԱՌ. — Ի՞նչ կուզեք։
ԼԵՎՈՆ — Ատամնաբույժը կը փնտռեմ, կուզեմ ակռաս ցուցնել, ո՞ւր գացեր է արդյոք։
ԹԱՓԱՌ. — Հոս է, հիմա կուգա։
ԼԵՎՈՆ — (Մեկուսի) Ո՞ւր էր թե սա մարդը երթար ու Երանյակը գար հետը խոսեինք։
ԹԱՓԱՌ. — (Մեկուսի) Իրեն գուրցեմ անգամ մը նայիմ կը քակե՞ ձեռներս. ինչ գիտնա, գլխ գող կամ ավազակ պիտի կարծե։

ԼԵՎՈՆ — Դուք ինչո՞ւ հոս կեցեր էք։
ԹԱՓԱՌ. — Պիտի յերթամ... սա վոտներս քակեցէք։
ԼԵՎՈՆ — Շատ աղէկ, պարոն, (Կը քակէ)։
ԹԱՓԱՌ. — Հրամանքնիդ քիչ մը սպասեցէք, տանտիրուհին հիմա կուգայ։ (Մեկնելով) Յերթամ սա թշվառական Նիկոն գտնալու...

ՏԵՍԻԼ Ժ.

ԼԵՎՈՆ, վերջը ՅԵՐԱՆՅԱԿ

ԼԵՎՈՆ — Քիչ մնաց որ ձեռք պիտի անցնէի, այս գեղքը Յերանյակին նամակին չհարմարեցաւ։ (Նամակ մը կը հանէ կը կարդա) «Վաղը ժամը յերեքին տան մեջ մինակ պիտի ըլլամ, յեկուր զիս գրկելու»։ Ո՞ւր է, չգար, որ գրկեմ, կարծեմ, հայրը, մայրը հոս են. ծառան ծուռ ծուռ յերեսս նայեցաւ, չըլլա՞ թե Յերանյակը զիս մտնելու համար հոս հրավիրած ըլլա, կը հուսացվի, վասնզի Հայ ենք. Հայ ըսելը մտնութիւն ըսել է։ Այո՛, մեր առացվածքն է մտնութիւնը ի վաղուց անտի, հարուստներեն մինչև աղքատները, լուսավորչականներեն մինչև խավարչականները, ամենքն ալ ունին ասիկա, մեր առաջին ընկերն է. Բռնելու անեղնավոր հրացաններեն ավելի զորավոր է. ամեն պարագաներու մեջ անոր կը վստահինք, անով հառաջ կը քալենք, այլ ինչ օգուտ որ վերջեն անով գետինը կը տապալինք, ու ծաղր ու ծանակ կ'ըլլանք... Արդյոք Յերանյակը... (Յերանյակ կը մտնե տխուր) Ա՜հ, իմ յերանելի Յերանյակս, ճիշտ այն միջոցին յեկար ուր՝ քեզի համար կը կասկածեի։ Բայց ինչո՞ւ սանկ տրտում տխուր ..
ՅԵՐԱՆ. — Տրտում տխուր։
ԼԵՎՈՆ — Լուիկ մնջիկ։
ՅԵՐԱՆ. — Լուիկ մնջիկ։
ԼԵՎՈՆ — Մինթե իմ ներկայութիւնս վանեց այտերեդ այդ վարդագեղ կարմրութիւնը, պատասխանե՛, կ'ուզեմ նայելի, մինթե իմ տեսքս կապեց լեզուդ, պատասխան տո՛ւր, ինչո՞ւ այդ ժպտող տափալ շուրթերդ թալկացեր են ու չեն շարժիր։ Ա՜հ, Յերանյակ, խոսե՛, քու այդ լռութիւնդ դառնագին խորհուրդներ կ'առեղծե մտքիս մեջ։

ՅԵՐԱՆ. — Լեւոն, քեզի նվիրած եմ սիրտս, կյանքս ու պատիվս, այլ ինչ օգուտ որ ընտանիքիս տգիտութիւնը քենե հափշտակել կ'ուզե զանոնք։
ԼԵՎՈՆ — Ինչո՞ւ ընտանիքդ հավանութիւն չեն տար, որ սիրես զիս։
ՅԵՐԱՆ. — Այս առտու մորս ըսի՝ թե Մարգարի հետ չեմ կարգվիր, այս լսելուն պես բարկացավ, բորբոքեցավ, կատղեցավ...
ԼԵՎՈՆ — Յերանյակ, բոլոր գիշերը չքնացա, անհամբեր այս ժամուն կ'սպասեի, այս խոսքերը լսելո՞ւ համար. յերբեմն աչերս կը գոցեի քու գեղածիծաղ պատկերդ կը տեսնեի, և այն խոսքը զոր առջի որը քու սիրաբուխ շուրթերեդ սահեցավ, գիշերվան խոր լռութեան առեն միշտ ականջներուս կը հնչեր. այո՛, այն ձայնը, վորով արտաբերեցիր «Կը սիրեմ զքեզ» խոսքը սիրտս վիրավորեց, անբուժելի վերք մը բանալով հոն և դեռ առավոտուն անկողինեն ելնելուս պես (Կ'երգե)։

Յերթամ ըսի Յերանյակին,
Հայտնել իրեն գաղտնիք սրտիս,
Զուրցել թե յուր դեմք գեղանի
Յերջանկութեանս է հայելի։

Համբույրիկ մը, ով Յերանյակ,
Տուր որ առնեմ քու այտերեն
Կույսդ նազելի, սիրուն հրեշտակ,
Թո՛ղ շուրթերս սեր ճաշակեն։

Ինծի ըսե, Յերանյակ, ինչ փույթ քեզի, որ ընտանիքդ հավանութիւն չտար, քանի որ դուն զիս սիրել կը հաճիս, ամեն ջանք ընտանիքիդ անօգուտ է, մինթե կրնա՞ն սրտիդ մեջ հորդաբուղխ սիրո վառելն չորցնել... ո՛ն, քաջալերվե՛, մի՛ վհատիր։
ՅԵՐԱՆ. — Բա՛վ է, ալ բավ է, յես քեզի համար կյանքս կը զոհեմ, պիտի բաժնվիմ ընտանիքես, քեզի պիտի ընկերանամ ուր վոր յերթաս, ինչ վիճակի մեջ ալ գտնվիս, թե վոր անոթութենե մեռնիլ հարկ ըլլա, պիտի մեռնիմ, Լեւոն, բուսն

կիրքով կը սիրեմ զքեզ, բուռն ուժով կը մերժեմ Մարգարը, որ բռնութեամբ ինծի նշանեցին, կ՚ատեմ յուր սերը, կ՚անիծեմ նաև ընտանիքս՝ որ թող չեն տար սիրույս համապատասխանող անձի մը հետ միանամ... քուկդ եմ չես. Լեւոն, քուկդ։ (Լեւոնի բազկացը վրա կ՚իյնա)։

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆՈՒՅՆՔ, ԹԱՓԱՌՆԻԿՈՍ և ՆԻԿՈ

ԹԱՓԱՌ. — (Փաs ի ձեռին Նիկոն հալածելով) Ո՞ւր կը փախչիս, անիծից արմատ... իմ վոտքս ձեռքս կը կապես, ծիլ հրամայեց քեզի։

ՆԻԿՈ — Ա տ տ ը ր ր ճ ա ճ ա ն ա կ ը...
(Յերանյակ յել Լեվոն շվարած կը նային)։

ԹԱՓԱՌ. — Անպիտա՛ն, թե որ անգամ մ՚ալ ասանկ բան մը ընես, գլուխդ կը ջախջախեմ.

ՆԻԿՈ — (Առանց հասկնալու) Ինծի ի՞նչ, ջախջախե։

ԹԱՓԱՌ — Կորի աչքէս (Նիկո կ՚երթա)։ Յերանյակ, դուն ինչ գործ ունիս հոս.

ՅԵՐԱՆ. — Յե՛ս...

ԹԱՓԱՌ. — Դուն։

ԼԵՎՈՆ — Անիկա...

ԹԱՓԱՌ. — Ինքը։

ՅԵՐԱՆ — Յե՛ս...

ԹԱՓԱՌ. — Սենյակդ քաշվե։

ՅԵՐԱՆ — (Յերթալով) Իմս ես, Լեոն։

ՏԵՍԻԼ ԺԲ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, ԼԵՎՈՆ վերջը ՆԻԿՈ

ԹԱՓԱՌ. — Յեկուր սա ակռան քաշենք։

ԼԵՎՈՆ — Ակռայիս ցավն անցավ։

ԹԱՓԱՌ. — Անիկա ինծի չվերաբերիր, թող չցայիր, հոս տեղ հիվանդանոց չէ, պետք է որ ակռադ քաշել տաս, իմ աշխատությանս վարձը տաս ու յետքը յերթաս, կ՚իմանա՞ս. և քեզի բարեկամաբար սա ալ իմաց կուտամ, որ հոժարակամ անձնատուր չըլլիր, ակռան քաշենք, ապա թե ոչ, վերջը գեշ կ՚ըլլա, Նիկո... Նիկո... Նիկո... Նիկ...

ՆԻԿՈ — Հրամմե, տեր։

ԹԱՓԱՌ. — Նախապատրաստությունները տես...

ՆԻԿՈ — Վերջը մյուսին պես չըլլա։

ԹԱՓԱՌ. — Ե՛շ. քեզի ինչ որ կը հրամայեն, այն կատարե։

ՆԻԿՈ — Պարոնը վո՞ր կողմըն է, աքենցյա՞ն թե արևմտյան։

ԹԱՓԱՌ. — Գործդ տե՛ս։

ՆԻԿՈ — (Զվանը առնելով Լեվոնին կը մոտի) Կայնե։

ԼԵՎՈՆ — (Մեկուսի) Ի՞նչ ընել կ՚ուզե, վոտքս պիտի կապե, փախչելու ճար մը։

ԹԱՓԱՌ. — Շուտ չըլլիր։

ՆԻԿՈ — Շուտ, (Այն միջոցին վոր Լեվոնի վոտքը պիտի կապե, Լեվոն կից մը կուտա կը փախչի. Նիկոն գետնի վրա պառկած բղլով)

ԹԱՓԱՌ. — (Վազելով) Բռնեցեք գողը, ավազակը։

ՆԻԿՈ — (Ցելնելով, իյնալով) Յես ալ սրվոր չտեսեն չերթամ բռնեմ, վասն զի տերս բարկանալուն պես բերնիս մեջ ակռա չթողուր, կը քաշե... շատ վարպետ է (Վազելով կ՚երթա)։

ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

ՄԱՐԹԱ, ՄԱՐԳԱՐ

ՄԱՐԳԱՐ — (Մարթան քաշկռտելով կը բերե) Տիկին, չվայլեր ձեզի, որ փողոցն իյնաք, աս դիս ան դին վազեք, ժամկոչ փընտռելու։ Դուք յերկու աղավնիներու պես սիրով վարվելու յեք, որպեսզի ուրիշներն ալ ձեզմե օրինակ առնեն։ Պարոն Թափառնիկոսը կ'երևի թե քիչ մը բարկացած ըլլալուն, ձեզի հետ խստությամբ վարվեր է, անկարելի յե որ զձեզ չսիրե։

ՄԱՐԹԱ — Չեք գիտեր, Պարոն Մարգար, շաբաթը գիշեր մը միայն տունը կը պառկի, միս մինակ կը թողու զիս, այս տան մեջ զիս պահապան ընելու համար բերավ հոս։

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՒՅՆՔ և ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

ԹԱՓԱՌ. — Փախավ գարշելին, բոլոր այս ձախորդությունները պատճառ ինքն է... (Զանոնք տեսնելով) Դուք հո՞ս, Պարոն Մարգար.

ՄԱՐԳԱՐ — Այո՛, Պարոն Թափառնիկոս, ձեր սիրո կապը ամրապնդելու համար յեկա տիկինին հետ։

ԹԱՓԱՌ. — Ո՛չ, չէ, չեմ ուզեր, արդեն անիկա քիչ մը թուլցած էր, բոլորովին քակվեցավ. ինծի պետք չե ասկեց յետքը, ուր որ ուզե թող յերթա։

ՄԱՐԹԱ — (Առ Մարգար) Կը լսե՞ս։ (Առ Թափառնիկոս) Պարո՛ն, այս խաղը դեռ շատ պիտի տևե՞։

ԹԱՓԱՌ. — Պիտի տևե, հինգ արարված պիտի ըլլա։

ՄԱՐԹԱ — Կարծեմ այս արարվածները թատրոնեն կը սորվիք։

ԹԱՓԱՌ. — Թատրոնեն։

ՄԱՐԹԱ — Յեվ ինչպես որ կ'երևի, կատակերգությունը շատ կը սիրեք։

ԹԱՓԱՌ. — Շատ կը սիրեմ, ավելի կ'ուզեմ խնդալով կրթվիլ քան թե լալով... աչերս ցավցնել։

ՄԱՐԹԱ — Վաստկած ստակներդ թատրոնի կուտաս. թե որ յես ստակ ուզելու ըլլամ, կը բարկանաս, անօրեն մարդ, դուն իմ ստակովս մարդ յեղար և հիմա զիս ասանկ առանց մեկ ստակի կը թողուս, կուզե՞ս որ ձայնս բարձրացնեմ, բարբարոս մարդ, գրպաններս պարապ են, լումա մը չունիմ, յերկու վոտքս մուճակի մը մեջ խոթած կը պտտիմ։

ԹԱՓԱՌ. — Զույգ մը վոտքի աման ապսպրե։

ՄԱՐԹԱ — Կը լսե՞ս, Պարոն Մարգար, ահա ասանկ ալյանդակ մեկն է ասիկա։

ՄԱՐԳԱՐ — Կ'աղաչեմ, մի կռվիք, հաշտվեցեք և ուխտ ըրեք, որ մեյ մ'ալ կռիվ չընեք, յեկուր, տիկին, ամուսնույդ ձեռքը համբուրե։

ԹԱՓԱՌ. — Յես չեմ տար ձեռքս։

ՄԱՐԹԱ — Յես չեմ համբուրեր անոր ձեռքը։

ԹԱՓԱՌ. — Ինծի այնքան հայհոյություններ ըրավ։

ՄԱՐԹԱ Ինծի հետ բարբարոսությամբ վարվեցավ։

ԹԱՓԱՌ. — Առաջուց հոգվույս պես կը սիրեյի։

ՄԱՐԹԱ — Ինչպես կը գուրգուրայի վրան։

ԹԱՓԱՌ. — Միշտ կը պոռա, որ իր ստակովը մարդ յեղեր եմ։

ՄԱՐԹԱ — Ամեն որ կ'ըսե թե յես կահ կարասիք եմ յեղեր։

ԹԱՓԱՌ. — Ո՞ւր է առջի սերը։

ՄԱՐԹԱ — (Լալով) Ինքն է պատճառ վո՛ր... վոր... վոր...

ՄԱՐԳԱՐ — (Մարթային) Գնա ձեռքը համբուրե։

ԹԱՓԱՌ. — Յես անոր ձեռքը համբուրեմ, անիկա իմմե մեծ է, տուր ձեռքդ, տո՛ւր համբուրեմ (կը պագնե), ասկե վերջը կը խոստանամ մորս պես սիրել զքեզ. (Մեկուսի) Դարձյալ հաշտվեցանք։

ՄԱՐԹԱ — (Ճակտեն համբուրելով) Ո՛հ, իմ ամուսինս, կորսնցուցած եյի քեզի, հիմա գտա, կը հիշե՞ս մեր հարսնիքը, և այն

գիշերը… (Կալով) ինչպես պարեցինք, ուր եր թե այն վայրկյանները չեմ դառնային…

ԹԱՓԱՌ — Դառնային։

ՄԱՐԹԱ — Ը՜հ, բերանդ խածնեմ։ (Միւս կը պագնէ) Ա՜հ, չեմ կշտանար, (Կերգէ).

Խնդացեք դուք, օրիորդներ,
Ծիծաղեցեք, ով պարոններ,
Ամենեւին չեմ բարկանար,
Բանդի գլխեմ չես բառ առ բառ
Սերը որքան հառաչ յերթա
Այնքան հաստատ ւ'անուշ կ'ըլլա,
Ցես համբուրեմ, դո՛ւք ծաղրեցեք,
Զիրար սիրել ալ սորվեցեք,
Ցերբ ծերության դուռը զարնեք,
Մի մոռնաք այս խոսք հիշեցեք՝
Սերը որքան հառաչ յերթա,
Այնքան հաստատ ւ'անուշ կ'ըլլա։

(Կը պագնէ) Ա՜հ, պարոն Մարգար, գուցե մտքեդ անցնի թե ինչո՞ւ այսչափ իրարանցում… ինչո՞ւ այսքան համբույրներ… ինչ ընեմ, տակավին սեր կրող սիրտ մը կը տանիմ այս հողաշեն մարմնույս մեջ, այնպիսի սեր մը, որ միշտ յերթալով կ'աճի՝ ու չկրնալուն ամանին մեջ պարունակվիլ, դուրս կը պոռթկա և վազելու համար ճամբա չգտնալով ուղղակի ամուսնույս յերեսը կը հոսի, (պագնելով) ու կ'ուզե զանիկա։

ՄԱՐԳԱՐ — Կ'աղաչեմ, մի քաշվիք, տիկին, գործերնիդ նայեցեք-չըլլա որ հոս արգելք ըլլամ, յեթե կ'ուզեք, դուրս յերթամ։

ՄԱՐԹԱ — Չե, ահա յես կ'երթամ, քիչ մը մյուս սենյակը հանգստանալու։

ՄԱՐԳԱՐ — (Թեվը մտնելով) Հրամմեցեք, տիկին, յես կը տանիմ և շատ ուրախ եմ, որ կարող յեղա զձեզ հաշտեցնել։

ՄԱՐԹԱ — Շնորհակալ եմ։

ՄԱՐԳԱՐ — Ցերթանք տիկին։ (Կ'երթան)։

ՏԵՍԻԼ Դ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, վերջը ՆԻԿՈ

ԹԱՓԱՌ. — Այս հասակին մեջ այսքան սեր, ալ հիմա կը համոզվիմ, որ մեկը կարգվելու չի կանանց ինչ աստիճան սիրավառ և նախանձոտ սիրտ մը ունենալնին հասկնալու համար։ Ցերբ յուր ձեռքը պագի, այնպես ուրախացավ՝ իբր թե աշխարհի թագուհի անվանված ըլլար և…

ՆԻԿՈ — (Վազելով), Տեր, Նամակ մը…

ԹԱՓԱՌ. Ո՞վ տվավ։

ՆԻԿՈ — Մարդ չտվավ, յես գտա։ Խոհանոցին մեջ աղտոտ ամանները մաքրելու զբաղած եյի, մեկ մ'ալ ինչ տեսնեմ, չոր, սև, դողդոջուն թառամած ձեռք մը պատուհանեն վար կ'երկննար, յերկու մատներուն մեջ թուղթ մը բռնած, իսկույն պահվըտեցա, վորպեսզի չտեսնվիմ, վարագույրին ծակեն կը նայեյի… ո՜հ, ինչպես սիրտս կը զարնե… և ահա նամակը ինկավ, բայց անանկ գաղտնի տեղ մը՝ վոր յեթե հոն չըլլայի, անհնարին եր մեկու մը զայն տեսնել. ձեռքն սկսավ կամաց կամաց վեր համբառնալ, վերջեն անհայտ յեղավ։ Գացի թուղթը առի, խորհեցա վոր նամակ մը ըլլալու չէ, թերևս մեջը գաղտնի գործ մը գրված ըլլա. և ինչպես վոր կարդալ չեմ գիտեր, մակաբերեցի թե ասիկա քեզի համար կրնա ըլլալ, առի բերի։

ԹԱՓԱՌ. — Շատ աղեկ։ (Նիկո կ'երթա) Ուսկի՞ց կրնա ըլլալ այս նամակը։ (Հասցեն կարդալով) Առ ոռխոդ Ցերանյակ Թափառնիկոսյանց. աս ինչ պիտի ըլլա. (կը բանա նամակը. կ'սկսի կարդալ).

«Այս առվան դեպքը զիս բոլորովին վհատեցուց։ Այնպես վոր ասկե վերջը ձեր տանը մեջ վոտք չեմ կրնար կոխել… պատմությունը յերկար է, առանձին գտնված ժամանակնիս կը պատմեմ քեզի… Քուդ ատամնաբուժությունը».

Իմ ատամնաբուժությունս (Կը շարունակե)։

«Ուրիշ տեղ մը փոխեցինք տեսնվելու համար, քեզի համար հալ ու մաշ կ'ըլլամ, շատ կ'սիրեմ զքեզ, լեզվովս չեմ կրնար բացատրել»…

Շատ կը սիրե յեղեր, շարունակենք։

«Ուր մնաց թե գրչով. Նամակիս պատասխանը գրելու վոր

ըլլա՝ տեղ մը իմացուր ինծի, որ հոն յերթամ. հասցեն այսպես ըլլա.

Առ Յ. Գ. Կ. Լ Ե Վ Ո Ն.

Սիրահարյալներու փողոց, թիվ 20

Ալ հիմա բոլոր կասկածները փարատեցան. հապա ստորագրությունը... (Կարդալ ջանալով) *Տ... ա... ր... փ... ած... տարփած... տարփածող... տարփածուդ... Լե... լե... վոն...*

Քիչ մը առաջ յեկող ու ակռայի ցավ ունիմ ըսող ըլլալուն աս... ուրիշ ցավ ունի յեղեր... Աղջկանս առանց բան մը իմացնելու սա նամակին պատասխանը գրեմ.. ու զինքը հոս հրավիրեմ, աղվորիկ մը ծեծեմ։ Չիս խմբել... Բայց Յերանյակին գիրին նմանցնելու յե... ժամանակ կորսնցունելու չգար... (Կը գրե)։

Տարփածուդ իմ Լեվոն Յ. Գ. Կ.

Նամակդ առի, շատ ուրախացա: Ուստի ներկայիվս կ'իմացնեմ, որ վաղը առավոտ կանուխ յեկուր, դուռը կը բանամ, կը նստինք կը խոսակցինք, յերկար գրելու ժամանակ չունիմ:

ՅԵՐԱՆՅԱԿ

Առ. Յ. Գ. Կ. ԼԵՎՈՆ.

Սիրահարյալներու փողոց, թիվ 20

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՆՈՒՅՆ ՅԵՎ ՄԱՐԳԱՐ (դռնեն կը մտնե)

ԹԱՓԱՌ. — Նիկոյին տամ որ տանի... Նիկո.. Նիկո... Նիկո... Նիկո...

ՄԱՐԳԱՐ — (Հառաջ գալով) *Ի՞նչ...*

ԹԱՓԱՌ. — (Յետեվը չնայելուն Նիկոն կարծելով) *Առ սա նամակը... Ա՜հ, դո՞ւք եք, Պարոն Մարգար...*

ՆԻԿՈ — (Մտնելով) *Զի՞ս կանչեցիք, տեր...*

ԹԱՓԱՌ. — Առ սա նամակը ու Սիրահարյալներու փողոցը տար։

ՆԻԿՈ — Սիրահարյալներու փողո՞... ո՞ւր ե այդ փողոցը..

ԹԱՓԱՌ. — Տիկին Մարգրիտի տունը գիտե՞ս

ՆԻԿՈ — Անիկա, որ առջի օրը հոս յեկած եր։

ԹԱՓԱՌ. — Այո։

ՆԻԿՈ — Ակռան կը ցավեր։

ԹԱՓԱՌ. — Ինքը։

ՆԻԿՈ — Վերջեն ինծի ալ ստակ տվավ։

ԹԱՓԱՌ. — Ճիշտ։

ՆԻԿՈ — Վորուն դուռն այտերը շոյեցիր։

ԹԱՓԱՌ. — Ի՞նչ կ'ըսես, թշվառական։

ՆԻԿՈ — Սխալ տուն մը չերթանք, տեր։

ԹԱՓԱՌ. — Անոր գնա. քեզի տեղ մը ցույց պիտի տա, հոն ձգե նամակը և շուտով յեկուր։

ՆԻԿՈ — Աղեկ, տեր։ (Կ'երթա)։

ԹԱՓԱՌ. — Ե՜հ, Պարոն Մարգար, խոսե՛ նայինք, ի՞նչ լուր ունիս... ազգային գործերը ի՞նչպես կ'երթան։

ՄԱՐԳԱՐ — (Մեկուսի) *Յես որ իրեն հարսնիքի որ մը վորոշելու համար յեկա, ինծի ազգային գործեր կը հարցնե։* (Բարձր) *Շատ ցավալի, Պարոն... բայց յես կ'ուզեյի...*

ԹԱՓԱՌ. — Կ'ըսեն թե ժողովները օրինավոր կերպով կը շարունակվին...

ՄԱՐԳԱՐ — Այնպես ե... մենք մեր գործին...

ԹԱՓԱՌ. — Լսեցի թե նիստերը կանոնավոր կերպով կ'ըլլան... յուրաքանչյուր անգամ իր ատենին համար տեղը կը նստի յեղեր...

ՄԱՐԳԱՐ — Յես ալ անանկ լսեցի... ի՞նչ փույթ մեզի, ինչպես վոր ուզեն թող նստին... յես յեկա վոր...

ԹԱՓԱՌ. — Մենք Հայ չե՞նք, մենք ալ գիտնալու յենք թե ի՞նչ և ըրածնին։

ՄԱՐԳԱՐ — Ըրածնին ի՞նչ պիտի ըլլա, վոչինչ։ Ամեն որ նորընտիր անդամներ, նորածին խնդիրներ, նորատիպ հրավերներ, անհատնում հրաժարականներ, անթիվ մերժումներ, անըմպատ քվեներ, միլիոնավոր զերոներ, ահա ասոնք են... մեզի ի՞նչ. .

ԹԱՓԱՌ. — Ե՜հ, ասկեց ավելի ի՞նչ կ'ուզեյիր վոր ընեն, ըսել ե վոր կ'աշխատին։

ՄԱՐԳԱՐ — Քանի վոր շաբաթը գոնե անգամ մը կանոնավոր ժողովք չունինք ..

ԹԱՓԱՌ. — Ինչո՞ւ ուրեմն այս յերեսփոխանները չեն գար, մինչև ազգը չե՞ն սիրեր։

ՄԱՐԳԱՐ — Չկրնար ըլլալ վոր ազգը չսիրեն, հարկավ իրենք ալ պատճառ մ'ունին։

ԹԱՓԱՌ. — Կամ թե ժողովուրդը չկրնա՞ր ավելի ընտրություն ընել, լրագիրները ինչ կ'ըսեն։

ՄԱՐԳԱՐ — Ամեն բան կ'ըսեն. Ծար Աստվածանց անուն լրագիրը միշտ Պատրիարքարանի վրա կը դարձնե իր մտածությունը. և կը պոռա թե մինչև վոր ամսականով հմուտ անձինք չորրորդին հոն՝ Սահմանադրությունը անգործադրելի պիտի մնա։ Ի պատասխանի այս մտածության կ'ըսեն՝ «Ասանկ չկա, ասանկ չկա». մինչդեռ ժողովուրդը ազգին բարելավության համար կը խոստանա նպաստել։ Մասիսն, իր բարձրակատար գագաթեն սեր և միություն կը պոռա, ափսոս, վոր այս բառերը դեռ շատերուն ականջը մտած չեն։ Յերբեմն ալ ստորոտեն ձայն կ'արձակե, կարծելով թե անկե զգուշությամբ կը լսվի. դարձյալ չ'օգտեր մեծ մասը ունկնախից կ'անցնին անոր առջևեն։ Ծաղիկն քաղցրաբույր, վոր ամառ ձմեռ կը բացվի, և վորուն ամեն մեկ կոկոնը ազգին լուսավորության հյութ կը պարունակե, փթթելուն պես կ'սկսի անուշ անուշ բուրել, թեպետ և քաղցր և ազդու յե իր հոտը, բայց մեր ազգին մեջ մտքի հարբուխ շատ ըլլալուն պատճառավ շատերը զուրկ են թե իմեն և թե հոտեն։ Ժամանակն[12] ալ կ'ըսե, թե ազգին հառաջդիմությունը ժամանակե կախում ունի, ինչ օգուտ վոր ըսելը գործադրել չե։ Բայց կ'ամչնամ, յես ազգային գործերու վրայոք խոսելու չ'եկա, մասնավորապես...

ԹԱՓԱՌ. — Կ'ըսե՞ս վոր Հայությունը թշվառ կացության մեջ կ'գտնվի այսօր...

ՄԱՐԳԱՐ — Այնպես է։ Մինչդեռ լուսավորյալ ազգերը ազգի-ազգի հնարքներով զանազան մեքենաներ կը շինեն և անոնցմով կը կատարեն անասուններուն տեսնելու գործը, մենք, Հայքս, անասուններու վերաբերյալ գործերն անգամ (կ'ամչնամ ըսելու) մեր վրա կ'առնենք։ Մեր պանդուխտ յեղբայրները ըսել կ'ուզեմ, վոր, բռնակալության անտանելի լուծին յերկընցնելով իրենց վիզը, հազիվ կրնան իրենց օրական ապրուստը ճարել, փողոցի մեջ, քարերու վրա, գիշերն ալ պանդոկներու մեջ, հեռու հայրենիքեն... զուրկ ընտանիքեն, և թերևս վոմանք ալ բոլորովին հուսաբեկ հայրենիք դառնալեն, ահ ու դողով կ'անցընեն իրենց ժամերը. այսպիսի գթաշարժ տեսարանի մ'առջև վո՞ր Հայն կրնա անտարբեր մնալ։ Վորովհետև ազգին վիճակը իմանալ կ'ուզես, բա՛ց ականջներդ, լսե՛, խորհե՛ և թող աչքերեդ արտասվաց հորդառատ վտակներ վար իջնան ծնոտդ ի վայր. անոնց համար կը խոսիմ, վասն զի Հայաստանի զավակունք են և հայրենիքը իր ազատության հույսը անոնց բազուկներուն վրա դրած է, այն բազուկներուն՝ վորք այսօր տկարանալու վրա յեն և թերևս որ մը բոլորովին վոչնչանան Հայրենյաց հուսո հետ։

ԹԱՓԱՌ. — Արդարև, իրավացի յեն քու խոսքերդ, Պարոն Մարգար, և ինքզինքս յերջանիկ կը համարիմ քեզի պես ազգասեր փեսացու ունենալուս համար։ Հապա չըսե՞ս ինձի թե ինչ բանի կը ծառայե Սահմանադրությունը։

ՄԱՐԳԱՐ — Սահմանադրությունը ծույլ մարդու մը կը նմանի, վոր յեթե ձեռքեն չբռնես, չքալեր, նստած տեղը կը մնա, որ քան զոր կը տկարանա և կը մեռնի։ Սահմանադրությունը ինչ կըրնա ընել ինք իր գլխուն, վոտք չունի վոր քալե, յերեսփոխանները պետք է զանիկա քալեցնեն, անոնց ալ մեծ մասը տարին անգամ մը միայն ժողովքին ներկա կը գտնվին, ահա այսպես է, Պարոն Թափառնիկոս... բայց կ'ամչնամ, ուրիշ անգամուն թողունք այս խոսակցությունը։ Քիչ մ'առաջ յեկած եյի մեր հարսնիքի որ մը վորոշելու համար ձեզի հետ խոսելու, շատ զբաղած եյիք, հարկադրվեցա յերթալ, ուստի հիմա վոր...

ԹԱՓԱՌ. — Լավ, վորոշենք, բայց չգիտեմ թե տիկինը պատրաստ է։

ՄԱՐԳԱՐ — (Մեկուսի) Տիկինի՞ն հետ պիտի կարգվիմ։ (Բարձր) Տիկինին համար պատրաստվելու հարկ չկա, բավական է վոր դուք հավանություն տաք։

ԹԱՓԱՌ. — Իրավունք ունիք. տիկինին հետ ալ անգամ մը խորհրդակցելու յեք, վասն զի իրեն աղջիկն է. թեպետ և կեսը իմս է, բայց մայրերը կ'ուզեն միշտ աղջիկներուն գործակատարը կանգնիլ։

ՄԱՐԳԱՐ — Զարմանալի բան, ուրեմն չերթամ աղջիկին հետ խօսելու։
ԹԱՓԱՌ. — Վերջը կը տեսնուինք։
ՄԱՐԳԱՐ — Աղէկ (կ'երթայ)։

Տ Ե Ս Ի Լ   Ե.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, ՆԻԿՈ, ՅԵՐԱՆՅԱԿ

ՆԻԿՈ — (Վազելով) Տէրս, տէր իմ, ըսին, որ ինքը հոն չէ և թէ գալուն պէս պիտի հանձնեն։

ԹԱՓԱՌ. — Աղէկ։

ՆԻԿՈ — Յետ դարձած ժամանակս, նոյն փողոցին մէջ աղվորիկ կին մը պատուհանը նստեր էր, ձեռքովը կանչեց զիս, ես ալ գացի։

ԹԱՓԱՌ. — (Մեկուսի) Սոֆին ըլլալու է։

ՆԻԿՈ — Կոտրուելով բարակ ձայնով մը, Թափառնիկոսի ծառան ես, ըսաւ։ Ծառան եմ, ըսի։ Քեզի հանձնարարութիւն մը պիտի ընեմ, կ'ընդունի՞ս, ըսաւ։ Կ'ընդունիմ, ըսի. ինչպէս ալ գիտես կը խօսի սատանան. ուրիշ անգամուն կանանց քով բառարանով յերթալու չէ, շատ անգամ անհասկնալի խօսքեր թող կուտան բերաններէն։ Բիչիկ մը սպասէ, ըսաւ։ Սպասեմ, ըսի, պատուհանէն աներեւութացաւ, ես ալ արձանի պէս փողոցին մէջ դրան առջին կ'սպասէի։ Քանի մը վայրկեանէն պատուհանէն յերեւցաւ մեր բարակաձայն տիկինը, ձեռքը նամակ մը բռնած՝ առ, ըսաւ ցած ձայնով։ Առնեմ, ըսի բարձր ձայնով։ Մի՛ պոռար, ըսաւ, տղաս կը քնանայ, կ'արթննայ. Թափառնիկոսին տար, ըսաւ։ Տանիմ, ըսի։ Ըսե որ, ըսաւ. ինձի թող գայ, իրեն խիստ կարեւոր խօսք մը ունիմ ըսելու, ըսաւ. ահա ես ալ ձեզի՝ թո՛ղ գայ կարեւոր խօսք մը պիտի ըսե, կ'ըսեմ ըսելով չեկայ։

ԹԱՓԱՌ. — Թշուառական, խօսք մը հասկցնելու համար «Ըսեմ» բայը ամբողջ խոնարհեցիր։

ՆԻԿՈ — Ահա նամակը (Կուտայ, կը մեկնի)։

ԹԱՓԱՌ. — Նախ հասցեն կարդանք։

«ԱՌ ՍԻՐԵՑՅԱԼԴ ԻՄ ՊԱՐՈՆ ԹԱՓԱՌՆԻԿՈՍ,
ԱՏԱՄՆԱԲՈՒՅԺՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ.

(Նամակը կը բանա կ'սկսի կարդալ)

Պատիվ ունիմ ներկայիվս քեզի իմացնելու, որ
(Այս միջոցին Յերանյակը կը մտնէ, Թափառնիկոս, չտեսնելով զանիկա, կարդալը կը շարունակէ)։

«Այս գիշեր մեր տունը գաս, Պարոն Թոմասը խաբենք ու պառահանդես յերթանք, շատ բազմություն պիտի ըլլա հոն, կ'աղաչեմ, մ'ուշանար, շատ կը սիրեմ զքեզ, գալուդ պես գնդասեղով մարմինեդ արյուն պիտի հանեմ:

Ս Ո Ֆ Ի»

ՅԵՐԱՆՅԱԿ — (Յուրովի) Ո՞վ է այս Սոֆին...

ԹԱՓԱՌ. — Մարմինես արյուն պիտի հանե, հա՛, հա՛, հա՛, շատ սիրուն էյակ մ'է սա Սոֆին, ինչ պզտիկ ոտք ունի, ոտքան ալ գեղանի չէ, սոխակի պէս կը խօսի թշուառականը, տատրակի պէս կը նայի գարշելին, սիրամարգի նման ալ ապճնասեր է սատանան, ազնիվ բնաւորութիւն մը ունի, անոր համար կը սիրեմ զինքը, և պիտի սիրեմ հավիտյան, ըստ իս, բնության գեղեցկությունը դիմաց գեղեցկութենն ավելի պաշտելի չէ. կեցցես Սոֆի .. կը սիրեմ զքեզ (Յերանյակը տեսնելով՝ աճապարանօք կը պահէ գրպանին մէջ):

ՅԵՐԱՆՅԱԿ — Զո՞վ կը սիրեք, հայր իմ։

ԹԱՓԱՌ. — Առանց ինձի հարցնելու ինչո՞ւ համար ներս կը մտնես։

ՅԵՐԱՆՅԱԿ — Յես հիմա յեկա։

ԹԱՓԱՌ. — Նամակին պարունակությունը լսեցի՞ր։

ՅԵՐԱՆՅԱԿ — Չէ, հայրիկ։ (Մեկուսի) Կեղծենք։

ԹԱՓԱՌ. — Առևտրական գործերու վրայօք տեղեկություն կուտա։

ՅԵՐԱՆՅԱԿ — (Մեկուսի) Սիրտ առուտուր։ (բարձր) Մտած ատենս մինակ սա չափը լսեցի «Կը սիրեմ զքեզ»։

ԹԱՓԱՌ. — Խելացի տղա չէ, կը սիրեմ զինքը... մյուս խօսքերս չլսեցի՞ր։

ՅԵՐԱՆՅԱԿ — Չէ, հայրիկ,

ԹԱՓԱՌ. — Ապրիս, աղջիկս, վասն զի աղջիկ մը պետք չէ որ ամեն տեսակ խօսքերու ունկնդիր ըլլա։

ՅԵՐԱՆՅԱԿ — Գիտե՞ք, հայրիկ, առանձին կ'ուզեի գտնալ ձեզ, որպէս զի ձեզի իմ սիրտս բանամ։

ԹԱՓԱՌ. — Բա՜ց նայիմ։ (Մեկուսի) Կեղծենք։

ՅԵՐԱՆՅԱԿ — Առավոտուն պատանի մը յեկած եր հոս, վոր ակռայի ցավ ուներ։

ԹԱՓԱՌ. — Այո, յեկած եր։

ՅԵՐԱՆՅԱԿ — Ինչպե՞ս գտաք այն Պարոնը։

ԹԱՓԱՌ. — Անիկա ինքնիրեն յեկավ։

ՅԵՐԱՆՅԱԿ — Այսինքն իր վարքը, դեմքը, գեղեցկությունը, խոսքը, վոտքը...

ԹԱՓԱՌ. — Պարկեշտ տղու մը կը նմանի։

ՅԵՐԱՆՅԱԿ — Իմ նշանածես ավելի խոհեմ, սիրուն, ազվոր, հագուստները նոր, սիրտը զգայուն, վոտքը պզտիկ, ձեռքը փափուկ...

ԹԱՓԱՌ. — Չեմ հասկնար, ի՞նչ ըսել կ'ուզես։

ՅԵՐԱՆՅԱԿ — Ըսել կ'ուզեմ, թե այսպիսի պատանի մը գտնված ատեն ինչու իմ սիրտս Մարգարի տամ։

ԹԱՓԱՌ. — Մարգարի հատկությունները այն պատանիին հագուստը, վոտքը կը գերազանցեն, Մարգարը ազգասեր ե։

ՅԵՐԱՆՅԱԿ — Ը՜հ, ազգասեր, միշտ պատռտած հագուստներ կը հագնի։

ԹԱՓԱՌ. — Խոնարհ յերիտասարդ մ'ե։

ՅԵՐԱՆՅԱԿ — Ը՜հ, խոնարհ, միշտ հին լաթերով կը պտտի։

ԹԱՓԱՌ. — Խելացի տղա մ'ե։

ՅԵՐԱՆՅԱԿ — Ը՜հ, խելացի, նոր հագուստ մը տեսած չունիմ վրան։

ԹԱՓԱՌ. — Ի բարկութեան մի հրապուրեր զիս։

ՅԵՐԱՆՅԱԿ — Ինչու բարկության հրապուրեմ, չե՞ք տեսներ, միշտ հին լաթերով կը պտտի։

ԹԱՓԱՌ. — (Բարկությամբ) Դուք կանայք նոր լաթերը ամուսիններեդ ավելի կը սիրեք, և անոնց քսակը կը պարպեք, խելքս չհասավ և չպիտի հասնի... աս ինչ շռայլություն ե...։ Դարուս որիորդները ավելի նրբություններու կը սիրահարին քան թե յերիտասարդներու, և յերիտասարդությունը՝ այն ըղձալի հասակը, այս անիծյալ հագուստին կը զոհվի՝ խեղճ յերիտասարդություն, ինչ ժամանակի հասար։ Մենք Զատկին նոր հագուստ մը շինել կուտանք, յերկու յերեք տարի անով կը բավականանանք, տես աս գիշերվան հագուստս,

Սահմանադրության առաջին տարեդարձին առած եյի և դեռ կը հագնիմ, բայց դուք նորաձևություն կ'ընեք հագուստ կ'առնեք. հնաձևություն կ'ընեք լաթ կ'ուզեք, ամուսիններնիդ չկենան առնեն. անկե վերջ դաշտերու վրա դրված զորականներու վրաններու պես ահավոր Մալախոֆներու 13) մեջ կը մտնեք, փողոցի վրա անցորդները կ'արգելուք, թե վոր մեկը հագուստնիդ վոտքովը պատռե, ծուռ ծուռ կը նայիք, և իրիկունը ամուսիններնուդ կ'ըսեք, Մեկը ավանակի պես անցավ, հագուստս պատռեց, սատկ տուր, վաղը ուրիշ մը առնեմ։ (Կ'երգե)։

Կանայք սատանկ են,
Միշտ նոր լաթ կ'ուզեն,
Յեվ թե վոր չառնես՝
Պզտիկ տղու պես,
Վոր դեռ ծծե կաթ,
Յես լաթ կ'ուզեմ, լաթ
Կ'ըսեն կը պոռան,
Կուլան ու կուլան։

Առավոտուց կանուխ կ'ըսե լաթ լաթ լաթ,
Պառկելու ատեն պոռա լաթ լաթ լաթ։
Ամառը կուգա դարձյալ լաթ լաթ լաթ.
Ձմեռ կը հասնի, բայց միշտ լաթ լաթ լաթ։

Դուն ալ հիմա յելեր, նշանածիդ հագուստներուն չես հավնիր։ Յես գիտեմ, հանցանքը իմս ե, քեզի հետ միշտ անուշությամբ վարվեցա, և իբրև բարբարոս հայր մը ամեն մեկ խոսքդ ապտակով չվարձատրեցի, ուստի ալ ժամանակն հասավ, պետք ե վոր քաղցրությունը դառնության փոխվի. ահա վերջին խոսքս, Մարգարը պիտի սիրես.

ՅԵՐԱՆՅԱԿ — Անհնարին ե ինձ զայն սիրել, քանի վոր անդին լուսնո պես յերիտասարդ մը հափշտակեր ե իմ սերս։

ԹԱՓԱՌ. — Ինչու հափշտակել տվիր։

ՅԵՐԱՆՅԱԿ — Սրտիս հարցուցեք, ինձի ինչ կը հարցնեք։

ԹԱՓԱՌ. — Շուտ կորի առջևես, գնա, սենյակդ քաշվե, անզգամ աղջիկ։

ՅԵՐԱՆՅԱԿ — (Մեկուսի) Ինք վոր այս հասակին մեջ ուրիշ կանանց կը քծնի։ (Բարձր) Մարգարի հետ չպիտի կարգվիմ (Կ'երթա)։

ՏԵՍԻԼ Զ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, վերջը ՆԻԿՈ

ԹԱՓԱՌ. — Շուտով հագվիմ, իմ Սոֆիիս յերթամ, գիշերը կը մոտենա, սա նամակներն ալ գրպանս դնեմ յերկուքն ալ, վորուն մեկը Լևոնին է, վոր վաղը առտու պիտի գա սիրահարություն ընելու ինձի հետ... փառով, մյուսը Սոֆիին, վորուն հետ այս գիշեր պիտի սիրահարություն ընենք... լեզվով։ (Զանգակը կը զարնե, Նիկո կը մտնե)։ Շուտ հագուստներս բեր, կարմիր ու ճերմակ ներկերն ալ միասին։ (Նիկո կ'երթա) Սովորություն չեղած է, ինչ ընեմ, հնազանդելու չէ, խնդալու բան, հա, հա, հա, ինձի պես մարդու մը յերեսը ներկելը. ճիշտ հին տուներու ճակատը ներկելու կը նմանի, վորոնք դրսեն անցորդներուն ուշը կը գրավեն, ներս մտնողներուն ալ ծիծաղը կը շարժեն։

ՆԻԿՈ — Հագուստներդ բերի, տեր։

ԹԱՓԱՌ. — Բռնե հագնիմ։

ՆԻԿՈ — (Հակառակ կողմեն բռնելով, Թափառնիկոս չկրնար թևերը գտնել) Հրամեցեք, տեր։

ԹԱՓԱՌ. — (Բարկությամբ) Ո՞ւր են թևերը.

ՆԻԿՈ — Ո՞ւր պիտի ըլլան, վրան են. կարծեցիր թե գողցա։

ԹԱՓԱՌ. — (Յետևը նայելով) Դեռ հագուստ մը բռնել չսորվեցար։ Ասանկ բռնե, ասանկ կեցիր (կը հագնի)։ Հոս մտնելդ տիկինը տեսա՞վ։

ՆԻԿՈ — Չէ, տեր իմ։

ԹԱՓԱՌ. — Դուռը գոցե։ (Մեկուսի) Զըլլա վոր մեկեն ի մեկ գա։ (Նիկո կը գոցե) Հիմա ալ յերեսնիս նայինք։ (Հայելիին առջև կ'երթա)։ Առաջ ճերմակը, վերջը կարմիրը (Կը խալի)։ Տեսնողը տասնվեց տարու մեկը պիտի կարծե։ (Նիկոյին դառնալով) Ինչպես... աղվորցա՞։

ՆԻԿՈ — Ըհ... կապիկի դարձար։

ԹԱՓԱՌ. — Գապանձե՛, վոտքի ամաններս ո՞ւր են, բեր. (Նիկո կը բերե)։ Շուտով հագվիմ յերթամ. թե վոր զիս փնտռող մը ըլլա, պատասխանե թե ծանր հիվանդի մը գնաց, և թե այս գիշեր չպիտի գա։ Տիկինին բան մի զուրցեր, կ'իմանա՞ս.

յերբոր հարցնե քեզի, պատասխան տուր թե հիմա պիտի գա. կամացուկ մը սա դուռը բաց, նայե մարդ կա՞, (Նիկո կը նայի) առանց տիկինին իմացնելու կծիկը դնեմ, թե վոր իմանալու ըլլա, դարձյալ պիտի կռվինք։

ՆԻԿՈ — Մարդ չկա, տեր։

ԹԱՓԱՌ. — Ահա յես պիտի յերթամ, կարելի չէ վոր այս գիշեր չգամ, վաղ առտու կանուխ հոս պիտի գտնվիմ (Յերթալու վրա)։

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՄԱՐԹԱ

ՄԱՐԹԱ — (Դռնեն յերևնալով) Սիրելի ամուսինս... մյուս խուցին մեջ մի մինակ նստելեն սիրտս նեղացավ, յեկեմ, ըսի, ամուսնույս քովը յերթամ... հագվե՞ր ես... իրիկուն չեղավ... ինչո՞ւ համար։

ԹԱՓԱՌ. — Թո՛ղ, աստված սիրես, մեզի համար հանգստություն չկա. բժիշկ չե՞ս, ամենուն ծառան ես։ Այս գիշեր վոր քիչ մը հանգչել կ'ուզեյի, փափաքս ի դերև ելավ, հիմա նամակ մը ստացա, վորուն մեջ կը գրեն թե անպատճառ յերթամ, մեկը ակռային ցավեն բռնված ըլլալուն, շաբաթ մ'է վոր գիշերները չքնանար... թե վոր չերթամ մեղք է։

ՄԱՐԹԱ — (Մեկուսի) Սուտ կը խոսի։ (Բարձր) Հապա աղվորցեր ես։

ԹԱՓԱՌ. — Տեր վողորմյա՛. առաջ տգե՞ղ էի։

ՄԱՐԹԱ — Կ'աղաչեմ քեզի, այս գիշեր մ'երթար։

ԹԱՓԱՌ. — Կուգան բռնի կ'առնեն կը տանին։

ՄԱՐԹԱ — Վոչ, այս անգամ ալ իմ խոսքս թող ըլլա։

ԹԱՓԱՌ. — Տղու մը պես կը խոսիս, տիկին. գործս մ'արգելուր (Յերթալու վրա)։

ՄԱՐԹԱ — (Հագուստեն բռնելով) վո՛չ, չպիտի յերթաս։

ԹԱՓԱՌ. — Ալ չափն անցուցիր, քաղցրությամբ կը խոսիմ չես հասկնար, թե վոր անգամ մ'ալ բարկության դեմքս առնեմ։

ՄԱՐԹԱ — Միտքդ ի՞նչ է, հայտնե ինձի։

ԹԱՓԱՌ. — Թո՛ղ զիս, հիվանդի պիտի յերթամ։

ՄԱՐԹԱ — (Միսս Թափառնիկոսը արգիլելով) Չպիտի չերթաս. ես ալ հիւանդ եմ։

ԹԱՓԱՌ. — Կորի սըկեց, ցնդած պառաւ։

ՄԱՐԹԱ — Ցնդած պառա՞ւ... ցնդած պառաւ. մոռցա՞ր որ իմ ստակովս մարդ չեղար։

ԹԱՓԱՌ. — Գետինը անցնիս. չես զզջացա քեզի հետ կարգուելուս

ՄԱՐԹԱ — Զզջացար, ստակներս ինչո՞ւ կերար. տուր ստակներս, բաժնուինք։

ԹԱՓԱՌ. — Բարկութեանս ամանը լեցաւ։

ՄԱՐԹԱ — Կարծես թե խմելու պարտք է, տուր ստակները, վերջացնենք խաղը։

ԹԱՓԱՌ. — Վոչ ստակներդ կուտամ, վոչ ալ քու խօսքդ մտիկ կ'ընեմ։

ՄԱՐԹԱ — Այս խաղն ալ չմնինար։

ԹԱՓԱՌ. — Թող չմնինա, հինգ արարված ըլլա, չերկրորդին մեջն ենք։

ՄԱՐԹԱ — Այն արարվածները քթեդ բերնեդ պիտի հանեմ։

ԹԱՓԱՌ. — Վերջապես պիտի լռե՞ս։

ՄԱՐԹԱ — Չպիտի լռեմ, դուն իմ ստակովս համբաւ ստացար. տուր ստակներս, ուր որ ուզես, հոն գնա։

ԹԱՓԱՌ. — Սա չվանը տուր, Նիկօ... տեսնես հիմա ստակները... վոտքերդ կապեմ, որ հասկնաս... (Նիկօ չվանը կուտա. Թափառնիկոս կապել կ'ուզե, Մարթա չթողուր)։ Պիտի կապեմ և անանկ պիտի չերթամ, անիծյալ ըլլաս, անօրեն կին։ (Մեկուսի) Տեր աստված, մեղա, տեր աստված։

ՄԱՐԹԱ — Աստված պատիժդ տա։ (Մեկուսի) սուրբ աստվածածին, դուն մեղք մի գրեր։

ԹԱՓԱՌ. — Դեռ պիտի պոռա՞ս։

ՄԱՐԹԱ — Ստակովս մարդ չեղար։

ԹԱՓԱՌ. — Ստակիս։ (Մեկուսի) Տեր վողորմյա, տեր վողորմյա։

ՄԱՐԹԱ — Դուն ստակե։ (Մեկուսի) սուրբ աստվածածին. մեղք մի գրեր։

ԹԱՓԱՌ. — Աշխարհի առջև ծաղր ու ծանակ պիտի ըլլանք. քրեական հանցաք մը գործեցի քեզի հետ ամուսնանալուս։

ՄԱՐԹԱ — Ստակներս տուր։

ԹԱՓԱՌ. — Շունչդ կտրի։ (Մեկուսի) Մեղա, մեղա.

ՄԱՐԹԱ — Ստակովս մարդ չեղար։

ԹԱՓԱՌ. — Ստակդ գետնին տակը անցնի։

ՄԱՐԹԱ — Քեզի հետ մեկտեղ։

ԹԱՓԱՌ. — (Վրան յերպալով) Կեցիր, խայտառակ, հասկցնեմ քեզի, թե ինչ է երիկ մը. (Կը պառկեցնե, վոտքերը կը կապե) Ահ. հիմա պառկե, վոր չես ալ չերթամ (կ'երթա)։

ՆԻԿՕ — (Բարձրաձայն կը խնդա) Ասոնք ալ ամեն որ կռիվ պիտի ընեն։

ՄԱՐԹԱ — Օգնություն հասեք։

ՆԻԿՕ — Ձը, ձը, ձը, ինչ բան։

ՄԱՐԹԱ — Յեկո՜ւր քակե սա կապը, վո՜հ, չեմ կրնար դիմանալ ջիղերս կը քաշվին, ինչ մեղք գործեցի աստուծո դեմ, վոր այսանկ կը տանջվիմ... ո՜հ, կանայք թշվառ են, իմ ծեր հասակիս մեջ հետս այսպես գազանաբար վարվի՜... (Լալով) Յերանյակ... Յերանյակ ..

ՆԻԿՕ — (Դուռը բանալ ուզելով) Դրսեն կղպեր է... օգնությո՜ւն...

ՄԱՐԹԱ — Մարդար, Յերանյակ...

ՆԻԿՕ — Օգնությո՜ւն... օգնությո՜ւն։

ՄԱՐԹԱ — Չեն լսեր, ուժ չմնաց վրաս... աչքերս կը մթագնին. թմրություն կուգա վրաս... ահա կը մարիմ (կ'իյնա) կը մեռնիմ... ձեռներս ..

ՆԻԿՕ — Տիկին, ի՞նչ կ'ըլլաս. . օգնությո՜ւն. . ինչո՞ւ պառկեցար, մի վախտիկին... օգնությո՜ւն (աղխն անցնել փակելով)։ Մի վախնար, տիկին, հոս եմ... օգնությո՜ւն... հիմա կ'անցնի, բան մը չե... ձայն չհաներ. (Պոռալով) օգնությո՜ւն... ուժդ ժողվե, տիկին...(Դրան ծակեն դուրս կը պոռա)։ Օգնությո՜ւն, տիկինը պիտի մեռնի, մեռաւ... կը մեռնի...

ՏԵՍԻԼ Ը.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՅԵՐԱՆՅԱԿ

ՅԵՐԱՆՅԱԿ — (Շփոթած դուռը կը բանա) Ի՞նչ պատահեցավ։

ՆԻԿՕ — Չե՞ս տեսներ... տիկինը կը մեռնիմ, ըսավ, ի՞նչ գիտնամ, սուտ է, ճշմարիտ է։

ՅԵՐԱՆՅԱԿ — (Լալով մորը քով կ'երթա) Ի՞նչ ունիս, մայրիկ... սուրբ աստվածածին, մարմինը պաղ է... քիչ մը ջուր, ջուր

Ջուր, ջուր, ավանակի պես ինչո՞ւ կեցեր ես, ջուր, ջուր, ջուր։

ՆԻԿՈ — (Վազելով) Ջուր, ջուր, ջուր, կարծես թե տունը կը բռնկի, մեռած մարդուն ջուրը ի՞նչ կ'ոգնե։

ՅԵՐԱՆՅԱԿ — Բա՛ց աչքերդ, մայրիկ, բա՛ց, յես եմ քովդ նստողը, քու աղջիկդ Յերանյակն ե, ա՜հ, մայրիկ, մայրիկ, (լալով) ինչո՞ւ չես պատասխաներ, մարմինը վորքան պաղ ե։

ՆԻԿՈ — (Վազելով կուգա) Ջուր չկա. (կը բռնէ Մարթային յերեսը) պարապ տեղը մի լար, որիորդ, թե վոր մեռած չըլլար պատասխան կուտար։

ՅԵՐԱՆՅԱԿ — Սեղանին վրա անուշադրի վոգի կա, բեր։

ՆԻԿՈ — Լուսահոգին կոտրեր ե աս տատու։

ՅԵՐԱՆՅԱԿ — (Վազելով սեղանին վրայեն շիշ մը կ'առնէ մօրը քիթը կը բռնէ) Ասով, հիմա...

ՄԱՐԹԱ — (Սթափելով) Ի՞նչ ե... ինչո՞ւ քովս...

ՅԵՐԱՆՅԱԿ — Բան մը չկա, մայրիկ.

ՄԱՐԹԱ — Ո՞ւր գնաց հայրդ։

ՅԵՐԱՆՅԱԿ — Չգիտեմ։

ՆԻԿՈ — Հիմա պիտի գա։

ՄԱՐԹԱ — Ա՜հ, բարբարոս մարդ, տես ինչ վիճակի մեջ թողուց զիս։

ՅԵՐԱՆՅԱԿ — Աթոռի վրա նստե, մայրիկ... ահ, աս ինչ ե... վոտքերը կապված...

ՄԱՐԹԱ — Ինքը կապեց ու գնաց։

ՆԻԿՈ — Հիմա պիտի գա։

ՅԵՐԱՆՅԱԿ — Յես գիտեմ ուր գնաց։ (Մօրը վոտքը քակելով)։

ՄԱՐԹԱ — Գիտե՞ս ուր գնաց։

ՆԻԿՈ — Հիմա պիտի գա։ (կ'երթա)։

ՄԱՐԹԱ — (Աթոռի վրա նստած) Զրուցե, Յերանյակ, վրեժ պիտի լուծեմ իրմե, վրեժ։

ՅԵՐԱՆՅԱԿ — Քիչ մը առաջ հոս մտած ժամանակս նամակ մը կը կարդար, Սոֆի անուն տիկինե մը ուղղյալ ու սեր բառերով տողյալ։

ՄԱՐԹԱ — Գիտեյի վոր կին մը կը սիրե, բայց ո՞վ ըլլալը չիմացա մինչև հիմա։

ՅԵՐԱՆՅԱԿ — Անիկա վոր մտնելս չտեսավ, կ'ըսեր «Սոխակի պես կը խոսի, տատրակի պես կը նայի, սիրամարգի պես պճնասեր ե»։

ՄԱՐԹԱ — Շարունակե՛։

ՅԵՐԱՆՅԱԿ — Յեվ թե այն կինը հորս մարմինեն արյուն պիտի հանե յեղեր։

ՄԱՐԹԱ — Թող հանե. թող հանե, վոր հասկնա։

ՅԵՐԱՆՅԱԿ — Գնդասեղով։

ՄԱՐԹԱ — Գնդասեղո՞վ։

ՅԵՐԱՆՅԱԿ — Յեվ այս գիշեր ալ պարահանդես պիտի յերթան զվարճանալու համար։

ՄԱՐԹԱ — Ի՞նչպես կրնանք սորվիլ այս Սոֆիին տունը։

ՅԵՐԱՆՅԱԿ — Նիկոյեն, նամակը անիկա բերավ. կանչենք զինքը հարցնենք. Նիկո, Նիկո։

ՆԻԿՈ — Յեկա։

ՄԱՐԹԱ — Պարոն Թափառնիկոսը ո՞ւր գնաց։

ՆԻԿՈ — Հիմա պիտի գա։

ՄԱՐԹԱ — Ո՞ւր գնաց։

ՆԻԿՈ — Չեմ գիտեր ուր յերթալը, բայց... հիմա պիտի գա...

ՄԱՐԹԱ — Նամակը ո՞ւրկե բերիր։

ՆԻԿՈ — Ինչ ըսեմ, տիկին... հիմա պիտի գա։

ՅԵՐԱՆՅԱԿ — Աս ապուշն ալ խոսք չհասկնար։

ՆԻԿՈ — Հիմա պիտի գա, որիորդ։

ՅԵՐԱՆՅԱԿ — Նամակը ո՞ւրկե առիր։

ՆԻԿՈ — Սիրահարյալ... նե... րու... փողոցեն։

ՅԵՐԱՆՅԱԿ — Ինչո՞ւ համար հոն գացիր։

ՆԻԿՈ — Նամակ մը տարի։

ՅԵՐԱՆՅԱԿ — Վորի՞ն։

ՆԻԿՈ — Թիվ 20... Թափառնիկոսը հիմա պիտի գա։

ՅԵՐԱՆՅԱԿ — (Մեկուսի) Թիվ 20։ Լեվոնին տունը... (Բարձր) Նամակը ո՞վ տվավ։

ՆԻԿՈ — Չեմ ճանչնար, կնիկ մը տվավ, առ ասիկա Թափառնիկոսին տար, ըսավ, յես ալ բերի։

ՄԱՐԹԱ — Այն կնկան տունը գիտե՞ս։

ՆԻԿՈ — Գիտեմ, տիկին, գիտեմ։

ՅԵՐԱՆՅԱԿ — Հապա թիվ 20 տունը ո՞վ կար։

ՆԻԿՈ — Ան տունը... ան տունը... չեմ հիշեր ո՞վ կար... շատ բաներ կային, բայց միտքս չե։

ՅԵՐԱՆՅԱԿ — (Մեկուսի) Ի՞նչ պիտի ըլլա արդյոք... Լեվոնը սա-

տանջութիւն մը բրած է, ակռայի ցաւ ունիմ ըսելով... ասիկա ալ դեղ առած ըլլալու է։

ՄԱՐԹԱ — Պետք է որ յերթամ գտնեմ զիրենք, բայց այս հագուստներովս պարահանդեսի մէջ կը ճանչցուիմ։ Երիկ մարդու կերպարանք առնեմ... այո, ժամանակ չկորսնցնենք, գիշերը կը մօտենայ։ (Կ'երթայ, Նիկօ ալ յետեւէն)։

Տ Ե Ս Ի Լ Ժ.

ՅԵՐԱՆՅԱԿ, վերջը ՄԱՐԳԱՐ

ՅԵՐԱՆՅԱԿ — Այս գիշեր միս մինակ պիտի մնամ տան մէջ. այս առանձնութենէն օգուտ քաղելու է։ Մէկը գտնեմ Լեւոնիկիս խրկեմ, իմացնելով որ ամենայն զգուշութեամբ կրնայ հոս գալ ու հետս խօսակցիլ։ Յուրաքանչիւր ոք իր գործին լինելուն կը նայի. յես ալ ինչ ընեմ, այս աշխարհի վրայ ամէնը ամէնը մէկ սիրական մը ունիմ։ Դեռ ամիս մը չեղաւ Փարիզեն դառնալը, այնքան ալ շատ սիրտս գրաւեց... այնպէս որ Մարգարեն բոլորովին պաղեցայ. ի վերայ այսր Փարիզի մէջ կրթուող յերիտասարդները սիրելու կերպն աղէկ կը սորվին։ Պոլսեցիներեն շատ վարպետ են այս մասին. հարկաւ աղէկ պիտի սորվին, քանի որ հոն սիրելու արուեստ անունով գիրքեր կը տպուին։

ՄԱՐԳԱՐ — Դուն հոս մինա՛կ, Յերանյակ։

ՅԵՐԱՆՅԱԿ — (Մեկուսի) Յեկաւ։ (Բարձր) Մինակ։

ՄԱՐԳԱՐ — Ի՞նչ ըրիր։

ՅԵՐԱՆՅԱԿ — Ոչինչ։

ՄԱՐԳԱՐ — Ձեռքդ յերկնցուր տեսնեմ, դուն այնքան աղմկոտ չէիր, ինչ յեղեր յես... ձեռքդ տաք նայիմ։

ՅԵՐԱՆՅԱԿ — Ձեռքս աղտոտ է։

ՄԱՐԳԱՐ — Մօտ յեկուր, համբոյր մը տպեմ յերեսդ։

ՅԵՐԱՆՅԱԿ — Իմ յերեսս տպարան չէ։

ՄԱՐԳԱՐ — Թերեւս աղջիկները աս տեսակ ծանր վարքով կ'ուզեն զիրենք սուղ ծախել... վնաս չունի... վա՜հ, Յերանյակ, կը խնդացնես զիս, դուն ծախուած ես, յեկուր քով քով նստինք..

այս գիշեր հոս պիտի մնամ, հարսնիքի օր մը պիտի որոշենք հօրդ հետ... բայց հայրդ ո՞ւր է...

ՅԵՐԱՆՅԱԿ — Չգիտեմ։

Տ Ե Ս Ի Լ ԺԱ.

ՆՈՅՆՔ, ՄԱՐԹԱ (Երիկ մարդու հագուստով)

ՄԱՐԹԱ — (Արտօրէն գալով) Ահա պատրաստուեցայ։

ՄԱՐԳԱՐ — Աս ինչ կերպարանք է, տիկին։

ՄԱՐԹԱ — Որովհետեւ մեր փեսացուն ես...

ՅԵՐԱՆՅԱԿ — (Մեկուսի) Աստուած չընէ...

ՄԱՐԹԱ — Քեզի ամէն բան կը յայտնեմ։

ՄԱՐԳԱՐ — Զրուցէ, վասնզի կը դողդամ...

ՅԵՐԱՆՅԱԿ — (Մեկուսի) Ցրտէն։

ՄԱՐԳԱՐ Արդյոք դժբախտութի՞ւն մը պիտի լսեմ. արդեն Յերանյակի տխրադեմ կենալը ինձի գուշակել կը տար... բայց... ի՞նչ պատահեցաւ։

ՄԱՐԹԱ — Ահա բարձրաձայն կ'ըսեմ, Թափանիկոսը Սոֆի անունով կին մը կը սիրէ։

ՄԱՐԳԱՐ — Կարելի՞ է որ...

ՄԱՐԹԱ — Կարելի է. և այս ժամուն անոր տունը կը գտնուի, մէկ յերկու ժամէն պարահանդես պիտի յերթան, գիտմամբ այս կերպարանքն առի, որպէսզի չճանչցուիմ, ձեզ ալ կ'աղաչեմ որ ընկերանաք ինձի։

ՄԱՐԳԱՐ — Անհաւատալի կը թուի որ...

ՄԱՐԹԱ — Հաւատացէք, շատոնց գիտէյի սիրուհի մը ունենալը։ բայց ո՞ւր և ո՞վ ըլլալը մինչև այսօր չէյի իմացեր, ահա հիմա ամէն բան յերեւան յեկաւ, ժամանակ կորսնցնելու չկար։ (Նիկօ կը մտնէ լապտեր մը բռնած) Յեկ դուն, Յերանյակ, դուռը լաւ մը կղպէ, սենյակդ մտիր, թէ որ կը վախնաս՝ դրացիին գնա. հոն նստէ մինչև որ դառնանք։

ՅԵՐԱՆՅԱԿ — Չէ, մայրիկ, չեմ վախնար, հոս կը նստիմ, յես հիմակուան նորելուկ աղջիկներէն չեմ, որ մուկէն անգամ կը վախնան։

ՄԱՐԳԱՐ — Շատ ուրախ եմ, որ այսպիսի քաջասիրտ օրիորդի մը գլխուն պիտի դպցնեմ գլուխս։

ՅԵՐՄԱՆՅԱԿ — (Մեկուսի) Գլուխդ չորնա։ (Կ'երթա)։
ՄԱՐԹԱ — Ապրի՛ս, աղջիկս...
ՄԱՐԳԱՐ — Շատ հեզ բնավորություն ունի։
ՄԱՐԹԱ — Ցավ ո՜վ կրթեց զինքը, յեթե ոչ իր մայրը, որ իր խիստ բնավորությամբը աղջիկը դաստիարակեց. կարգը հիմա հոն չեկավ, անիկա ալ աղեկ մը կրթեմ, կանանց օրինակ ըլլամ, տեսնեն թե կի՛ն մը ավելի զորավոր է թե երիկ մը։ Ձեզ կրնար յերեւակայել, կատակերգություն պիտի խաղանք, կ'ըսե, յերկրորդին մեջն ենք կ'ըսե, հիմա ալ յես պիտի սկսիմ յերրորդ արարվածին. չերթանք։ (Կ'երթան)։

ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐՐՈՐԴ

Թովմասի տան մեջ պառկելու սենյակ մը, աջ կողմը անկողին մը կը տեսնվի, մեջտեղը սեղան։ Գիշեր։

ՏԵՍԻԼ Ա.

(Թովմաս բիկնաթոռի վրա նստած, Սոֆի անկե քիչ մը անդին աթոռի վրա նստած, բաշկինակովը յերեսը գոցած. Կիրակոս դրան առջին նստած կը մրափե)։

ԹՈՎՄԱՍ — Ցավը չմեղմացա՞վ, տիկին։
ՍՈՖԻ — Չե, սիրելի ամուսինս, մանավանդ թե յերթալով կը սաստկանա, թե որ այսպես շարունակե, վախնամ որ աչքս բաց պիտի անցնեմ գիշերը...։ Ինծի մի՛ սպասեր, դուն գնա անկողինդ մտիր, պառկե։ (Մեկուսի) Կարծես թե այս գիշեր դիտմամբ չպառկիր։
ԹՈՎՄԱՍ — Համբերելու յե, ինչ ընենք, յես իմ բաղդիս վրա կուլամ։ Յերիտասարդությանս ատեն իմ միակ փափաքս էր ուժով, առույգ ու գեղանի կին մը առնալ, չեղավ... չեղավ... չեղավ... փափաքս ի դերեւ յելավ։ Քեզ սիրեցի, ամուսնացա հետդ, այսօր ակռադ կը ցավի... վաղը գլուխդ... մյուս օրը աչքդ... մեկ շաբաթեն մազերդ...։ Ինչ գիտնամ, ամեն ատեն ցավ մը կ'զգաս վրադ...։ Ափսո՜ս, որ ծերությանս ատեն խաղաղ կյանք չեմ կրնար վարել... ամեն օր ցավ... ցավ.. ցավ...։ Պարոն ատամնաբույժն ալ չերեւցավ, արդյոք տունը չէ՞ր։

ՍՈՖԻ — Ո՞վ գիտե։ Բժիշկները զիրենք ծանր ծախսելու կը ջանան, հիվանդը կը տանջվի կամ կը մեռնի, չէ իրենց փույթ, բավական է, որ իրենց աշխատության վարձը առնուն... ահ... որքան ալ սաստկությամբ կը ցավի։ (Մեկուսի) Որքան ալ սատանայությամբ կը կեղծեմ։
ԹՈՎՄԱՍ — Ցավը ո՞ր կողմն է, տիկին։
ՍՈՖԻ — Ձախ կողմն է, սիրելի ամուսինս... ինչո՞ւ պարապ տեղը նստած կը խորհիս, անկողինդ պատրաստ է, պառկե։
ԹՈՎՄԱՍ — Պառկե... պառկե... ինչ աղվոր կը տրամաբանես... առանց քեզի անկողին մտնելը ինծի համար գերեզման իջնալ է. պիտի կրնա՞մ անհոգ քնանալ, յերբ այսպես կը տանջվիս... քիչ մ'ալ համբերե տեսնենք, թե որ Թափառնիկոսը չգա, ուրիշ մը կանչել կուտանք։
ՍՈՖԻ — Պարոն Թափառնիկոսը որ ակռաներուս բնությունը գիտե...
ԹՈՎՄԱՍ — Յեթե այդպես է, անգամ մ'ալ խրկենք Կիրակոսը նայելու, թե որ տունն է՝ առնե գա...։ Հա... դուռն է։ (Դռնեն կը զարնեն) Դուռը կը զարնեն, Կիրակոս... Կիրակոս... Կիրակ...
ԿԻՐԱԿՈՍ — (Արթննալով) Ի՞նչ կա... ի՞նչ...
ԹՈՎՄԱՍ — Ի՞նչ պիտի ըլլա, դուռն է, գնա բաց։ (Կիրակոս կ'երթա) Վերջապես յեկավ։ Աստված տա, որ շուտով անցնի սա ցավը, մենք ալ ազատվինք։ Գալուն պես մեկեն ի մեկ քովդ մի՛ կանչեր, վասնզի բժիշկներուն սովորությունն է յեկած ժամանակնին սուրճ մը խմել է...
ՍՈՖԻ — Գիտեմ այդ սովորությունը...
ԹՈՎՄԱՍ — Աղեկ մարդ է սա Թափառնիկոսը. Յեվրոպայի մեջ ուսյալ բժիշկներու պես շատ սակ ալ չուզեր. ինչ որ տաս՝ կ'ընդունի ու հազար շնորհակալությամբ կը մեկնի... ահա կուգա։

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՒՅՆՔ, ԹԱՓԱՌՆԻԿՈՍ ՅԵՎ ԿԻՐԱԿՈՍ

ԹԱՓԱՌ. — Բարեւ... բարեւ...
ԹՈՎՄԱՍ — (Աթոռեն յելնելով) Բարի յեկար, Պ. ատամնաբույժ, հրամմեցեք, նստեցե՛ք։ Ինչպե՞ս եք, աղե՞կ եք։

ՅԵՐԱՆՅԱԿ — (Մեկուսի) Գլուխդ չորնա։ (Կ'երթա)։
ՄԱՐԹԱ — Ապրի՛ս, աղջիկս...
ՄԱՐԳԱՐ — Շատ հեզ բնավորություն ունի։
ՄԱՐԹԱ — Յեվ ո՛վ կրթեց զինքը, յեթե ո՛չ իր մայրը, որ իր խիստ բնավորությամբը աղջիկը դաստիարակեց. կարգը հիմա հորն չեկավ, անիկա ալ աղեկ մը կրթեմ, կանանց որինակ ըլլամ, տեսնեն թե կի՛ն մը ավելի զորավոր է թե երիկ մը։ Չեք կրնար չերևակայել, կատակերգություն պիտի խաղանք, կ'ըսե, յերկրորդին մեջն ենք կ'ըսե, հիմա ալ յես պիտի սկսիմ յերրորդ արարվածին. չերթանք։ (Կ'երթան)։

ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐՐՈՐԴ

Թովմասի տան մեջ պառկելու սենյակ մը, աջ կողմը անկողին մը կը տեսնվի, մեջտեղը սեղան։ Գիշեր։

ՏԵՍԻԼ Ա.

(Թովմաս թիկնաթոռի վրա նստած, Սոֆի անկե քիչ մը անդին աթոռի վրա նստած, բաշկինակովը յերեսը գոցած. Կիրակոս դրան առջին նստած կը մրափե)։

ԹՈՎՄԱՍ — Ցավը չմեղմացա՞վ, տիկին։
ՍՈՖԻ — Ոչ, սիրելի ամուսինս, մանավանդ թե չերթալով կը սաստկանա, թե որ այսպես շարունակե, վախնամ որ աչքս բաց պիտի անցնեմ գիշերը...։ Ինծի մի՛ սպասեր, դուն գնա անկողինդ մտիր, պառկե։ (Մեկուսի) Կարծես թե այս գիշեր դիտմամբ չպառկիր։
ԹՈՎՄԱՍ — Համբերելու յե, ինչ ընենք, յես իմ բաղդիս վրա կուլամ։ Յերիտասարդությանս ատեն իմ միակ փափաքս եր ուժով, առույգ ու գեղանի կին մը առնել, չեղավ... չեղավ... չեղավ... փափաքս ի դերև յելավ։ Քեզ սիրեցի, ամուսնացա հետդ, այսոր ակռադ կը ցավի... վաղը գլուխդ... մյուս օրը աչքդ... մեկ շաբաթեն մազերդ...։ Ինչ գիտնամ, ամեն ատեն ցավ մը կ'զգաս վրադ...։ Ափսո՛ս, որ ծերությանս ատեն խաղաղ կյանք չեմ կրնար վարել... ամեն օր ցավ... ցավ.. ցավ...։ Պարոն ատամնաբույժն ալ չերևցավ, արդյոք տունը չե՞ր։

ՍՈՖԻ — Ո՞վ գիտե։ Բժիշկները գիրենք ծանր ծախելու կը ջանան, հիվանդը կը տանջվի կամ կը մեռնի, չե իրենց փույթ, բավական է, որ իրենց աշխատության վարձը առնուն... ահ... վորքան ալ սաստկությամբ կը ցավի։ (Մեկուսի) Վորքան ալ սատանայությամբ կը կեղծեմ։
ԹՈՎՄԱՍ — Ցավը վո՞ր կողմն է, տիկին։
ՍՈՖԻ — Ձախ կողմն է, սիրելի ամուսինս... ինչո՞ւ պարապ տեղը նստած կը խորհիս, անկողինդ պատրաստ է, պառկե։
ԹՈՎՄԱՍ — Պառկե... պառկե... ինչ աղվոր կը տրամաբանես... առանց քեզի անկողին մտնելը ինծի համար գերեզման իջնալ է. պիտի կրնա՞մ անհոգ քնանալ, յերբ այսպես կը տանջվիս... քիչ մ'ալ համբերե տեսնենք, թե որ Թափառնիկոսը չգա, ուրիշ մը կանչել կուտանք։
ՍՈՖԻ — Պարոն Թափառնիկոսը վոր ակռաներուս բնությունը գիտե...
ԹՈՎՄԱՍ — Յեթե այդպես է, անգամ մ'ալ խրկենք Կիրակոսը նայելու, թե որ տունն է՝ առնե գա...։ Հա... դուռն է։ (Դուռը կը զարնեն) Դուռը կը զարնեն, Կիրակոս... Կիրակոս... Կիրակ...
ԿԻՐԱԿՈՍ — (Արթննալով) Ի՞նչ կա... ինչ...
ԹՈՎՄԱՍ — Ի՞նչ պիտի ըլլա, դուռն է, գնա բաց։ (Կիրակոս կ'երթա) Վերջապես յեկավ։ Աստված տար, որ շուտով անցներ աս ցավը, մենք ալ ազատեյինք։ Գալուն պես մեկեն ի մեկ քովդ մի՛ կանչեր, վասնզի բժիշկներուն սովորությունն է յեկած ժամանակնին սուրճ մը խմել է...
ՍՈՖԻ — Գիտեմ այդ սովորությունը...
ԹՈՎՄԱՍ — Աղեկ մարդ է աս Թափառնիկոսը. Յեվրոպայի մեջ ուսյալ բժիշկներու պես շատ սակ ալ չուզեր. ինչ վոր տաս՝ կ'ընդունի ու հազար շնորհակալությամբ կը մեկնի... ահա կուգա։

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՒՅՆՔ, ԹԱՓԱՌՆԻԿՈՍ ՅԵՎ ԿԻՐԱԿՈՍ

ԹԱՓԱՌ. — Բարև... բարև...
ԹՈՎՄԱՍ — (Աթոռեն յելնելով) Բարի յեկար, Պ. ատամնաբույժ, հրամմեցեք, նստեցե՛ք։ Ի՞նչպես եք, աղե՞կ եք։

ԹԱՓԱՌ. — Փառք աստուծո, գեշ չեմ... (Մեկուսի) Անորեն կ'ինէ (Բարձր) Հրամանքնի՞դ։

ԹՈՎՄԱՍ — Ի՞նչ ըսեմ... մենք ալ... մենք ալ աղեկ. բան չկա, փառք աստուծո, միայն թե մեր տիկինին ակռաները չգիտեմ ինչու այսքան շատ կը ցավին... Կիրակոս, սուրճ բեր...

ԹԱՓԱՌ. — Շնորհակալ եմ... չեմ ուզեր...

ԹՈՎՄԱՍ — Տարիյե մը ի վեր ե միշտ կը ցավի։

ՍՈՖԻ — Առաջուց ալ կը ցավեր։

ԹԱՓԱՌ. — Ակռայի ցավը սաստիկ ե։

ԹՈՎՄԱՍ — Ցերեկն այնքան շատ չցավիր վորքան վոր գիշերը,

ԹԱՓԱՌ. — Այդպես ե, գիշերը կը սաստկանա։

ԹՈՎՄԱՍ — Հրամանքնիդ ուշ մնացիք, ուր եյիք, բավական սպասեցինք ձեր այցելությանը։

ԹԱՓԱՌ. — Իմ այցելությունս ակռա քաշելու գացած եր, անոր համար ուշացավ. թե վոր գիտնայիր այցելությանս գլխուն յեկած փորձանքները... ինչ և ե...

ԹՈՎՄԱՍ — Այսոր կ'երեվի վոր շատ հոգնած եք. քանի՞ ակռա հանեցիք։

ԹԱՓԱՌ. — Հարյուր կնկան ակռա քաշեցի, տասը երիկ մարդու։

ԹՈՎՄԱՍ — Աստված բազկիդ զորություն տա։

ԹԱՓԱՌ. — Ամեն։

ՍՈՖԻ — (Մեկուսի) Ի՜նչպես սատանությամբ կը խոսի մեր ատամնաբույժը։

ԹԱՓԱՌ. — (Մեկուսի) Ի՜նչպես վարպետությամբ հիվանդ կը ձեվանա տիկինը։

ԹՈՎՄԱՍ — Կրնա՞ք ինձի գրուցել թե. ի՞նչ բանե հառաջ կուգա այս ցավը։

ԹԱՓԱՌ. — Շատ պատճառներե, վո՞ր մեկն ըսեմ, թե վոր մեկը քրտնած ժամանակը վոտները հողմին դեմ վերցնե, ակռայի ցավ կ'ունենա։

ԹՈՎՄԱՍ — Մեր տիկինը վոտները հողմին դեմ չվերուց, հե՞... տի՞կին...

ՍՈՖԻ — Վոտներս հողմին դեմ ի՞նչ գործ ունին։ Տեր վողորմյա... խե՞նդ ես... ինչ ես։

ԹԱՓԱՌ. — Կրնա ըլլալ վոր... շատ ջուր խմելեն ալ ըլլա... ծառերն անգամ, վոր ջրո կարոտություն ունին, թե վոր արմատեն ջուրը պակաս չըներ, ան ալ կը փտի... ուր մնաց վոր ակռա մը... ասկե առնելով կրնամ ըսել, վոր շատ ջուր խմելն ակռայի կը վնասե։ Բայց ասիկա Յեվրոպայի բժիշկներուն կարծիքին դեմ ըլլալով, կը ջրեն։

ԹՈՎՄԱՍ — Կը ջրեն .. կը ջրեն... իրավունք ունիս... հայրս ալ կ'ըսեր վոր Յեվրոպացիները ծառերը շատ կը ջրեն... անկե միտքս մնացեր ե։ Յեկուր տես վոր մեր տիկինը շատ ջուր ալ չխմեր։

ԹԱՓԱՌ. — Կրնա ըլլալ վոր... (Մեկուսի) Սուտերը կը հատնին։ (Բարձր) Աստամնաբուժության քիչ մը տեղյակ ըլլալու եյիք, վոր կարենայիք հասկնալ... թե վոր մեկուն սիրտը նեղի ու չկարենա ուզածն ընել, ակռայի ցավ կ'ունենա։

ՍՈՖԻ — Ը՛հ, ո՜հ, վո՜րքան կը ցավի։ (Մեկուսի) Մարդ համոզելը երիկ մարդերու տրված ե։

ԹԱՓԱՌ. — (Մեկուսի) Խարդախությունը կանանց առաջին. ձիրքն ե։ (Բարձր) Կրնա ըլլալ վոր... թե վոր մեկը քաակին մեջ ստակ չունենա, ակռայի ցավ կ'ունենա. ինչպես վոր հիմակվան յերիտասարդներուն շատը այս ցավեն չեն ազատիր. մի՞ նայիր վոր իրենց հագուստը կապուստը տեղն ե. միշտ այս ցավն ունին, յերբեմն կը սաստկանա, յերբեմն կը մեղմանա։ Այս օրերս շատցեր ե այս ցավը. մեր դրացի կոշկակար Պ. Նիկողիմեոս Նաբուգոդոնոսորյանցին կինը տիկին .. տիկին... անունը չեմ կրնար մտաբերել... տիկին... տիկին... տիկին... տիկին.. տիկին... լեզվիս ծայրն ե.. տիկին... տիկին... տիկին.. տիկին... Նորեկուկ անուն մ'ե ... ինքը քսաասուն տարեկան ե... տիկին... տիկին...

ԹՈՎՄԱՍ — Թող մնա անունը...

ԹԱՓԱՌ. — Վերջապես անոր ալ ակռաները կը ցավին, և ինչպես վոր հայտնի յե, ավելի յերիտասարդներուն ակռան կը ցավի՝ քան թե ծերերուն... ծերության ատեն խիստ քիչ անգամ կը պատահի... վասն զի...

ԹՈՎՄԱՍ — Ծերերը ակռա չունին, ըսե՜լ կ'ուզեք։

ԹԱՓԱՌ. — (Մեկուսի) Ինչպես համոզելու յե։ (Բարձր) Վասն զի մարդս քանի վոր ծերանա, ակռաներուն զորությունը կը պակսի, և այն ատեն, փոխանակ ցավելու, հասուն տանձե-

րու պես կը թափթփին։ (Մեկուսի) Ժամանակն ալ կ'անցնի։

ՍՈՖԻ — (Մեկուսի) Պարահանդեսի ուշ պիտի մնանք։ (Բարձր) Ե՞հ, Պ. ատամնաբույժ, կ'աղաչեմ, որ ժամ առաջ աս ցավն անցընենք, վասն զի ժամը կ'անցնի։

ԹԱՓԱՌ. — Ահա եկա. քիչ մը հառաջ եկեք, որպես զի ուշադրությամբ նայիմ։ (Տեսարանին առաջը կուգան) Բաց բերանդ (Ցած առ Սոֆի) Ի՞նչ ճամբա բռնելու է գինքը քնացնելու համար։ (Մատներովը Սոֆիին բերանը խորած ակռաները քննելով) Պատասխան չես տար... ինչո՞ւ չես պատասխաներ... Ի՞նչ ճամբա բռնեմք... ինչո՞ւ չես խոսիր... (Սոֆի ձեռքովը Թափառնիկոսին ձեռքը վար կը քաշե) Պատասխան տո՛ւր։

ՍՈՖԻ — (Ցած առ Թափառնիկոս) Պատրվակավ մը գինքը դուրս ղրկե, որ ընելիքնուս վրա մտածենք.

ԹՈՎՄԱՍ — (Մոտենալով) Ի՞նչ կը մրմռաք... ինչպե՞ս է։

ԹԱՓԱՌ. — Տակավին հայտնի չէ։ (Սոֆիին աջ կողմի այտին մատներովը զարնելով) Կարծեմ թե ցավը...

ԹՈՎՄԱՍ — Կ'ըսեր որ ձախ կողմը...

ԹԱՓԱՌ. — Ես ալ անանկ պիտի ըսեյի։ (Ձախ կողմի այտին մոտեցնելով ականջը) Հա՛... հոս...

ԹՈՎՄԱՍ — (Մեկուսի) Ճարտար մարդու կը նմանի... (Բարձր) Ի՞նչ կը նշանակեն ասոնք։

ԹԱՓԱՌ. — Ասոնք շատ նշանակություններ ունին, բավական է որ հաջողինք։

ՍՈՖԻ — Ա՛լ չեմ կարող դիմանալ, ա՛հ... ո՛ւհ...

ԹԱՓԱՌ. — (Ցած առ Թովմաս) Թե որ կ'ուզեք, հրամանքնիդ քիչ մը դուրս ելեք, ակռան պիտի քաշեմ... կրնա ըլլալ որ վախնաք... վասն զի ծերացած եք։

ԹՈՎՄԱՍ — (Ցած առ Թափառնիկոս) Ինձի համար հոգ չէ, դուն գործդ տես, ես փտտած ծերերեն չեմ.

ՍՈՖԻ — Ի՞նչ կը խոսիք, ինձի ալ ըսեք, միթե վտանգավո՞ր է հիվանդությունս, հայտնապես զրուցեցեք։

ԹՈՎՄԱՍ — Տեր ողորմյա՛... կանանց առջև գաղտնի խոսակցություն չըլլալու է. շուտով կասկածի կ'երթան։

ՍՈՖԻ — Քիչ մը շուտ ըրեք ուրեմն։

ԹԱՓԱՌ. — Գինի ունի՞ք, պարոն Թովմաս։

ԹՈՎՄԱՍ — Ունինք. ունինք, երթամ բերեմ, կը խմե՞ք։

ԹԱՓԱՌ. — Խմելու համար չէ... պետք է արդեն,

ԹՈՎՄԱՍ — Շատ աղեկ, երթամ բերեմ, Կիրակոս... Կիրակոս... (Բարձրաձայն) Կիրակոս... աս տղան ալ միշտ կը քնանա։ Կիրակ...

ԿԻՐԱԿՈՍ — Ի՞նչ կա... ի՞նչ կա...

ԹՈՎՄԱՍ — Ետևես եկուր, մառանը իջնանք գինի բերենք։

ԿԻՐԱԿՈՍ — (Մեկուսի) Գիշեր ատեն գինի. աս գինեմոլն ալ ուրկե ելավ։

ԹԱՓԱՌ. — Գավաթ առնելու չմոռնաք, կուժ մ'ալ։

ԹՈՎՄԱՍ — Աղեկ, աղեկ։ (Կերթան)։

ՏԵՍԻԼ Գ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, ՍՈՖԻ

ՍՈՖԻ — (Խնդալով) Խելքդ սիրեմ։

ԹԱՓԱՌ. — Ակռադ սիրեմ։

ՍՈՖԻ — Ի՞նչ վարպետություն բանեցնելու է, որ կարենանք այս գիշեր պարահանդես երթալ. գինքը պառկեցնել անհնարին է, քովես բաժնվիլ չուզեր։

ԹԱՓԱՌ. — Գինի կը խմե՞։

ՍՈՖԻ — Կերակուրի ատեն միայն գավաթ մը...

ԹԱՓԱՌ. — Եթե սովրելու ըլլամ...

ՍՈՖԻ — Փորձե... Կ'ըսեն թե այս գիշերը շատ բազմություն պիտի ըլլա պարահանդեսի մեջ. ուր եր թե մենք ալ կարող ըլլայինք այն բազմության մասնակցիլ, հագուստներս պատրաստած եմ։

ԹԱՓԱՌ. — Հապա ինձի՞ համար, ատամնաբույժի մը շատ պատիվ չըներ որ պարահանդեսի մեջ պարե, ցատկռտե, պետք է որ ես ալ ծպտյալ երթամ, որպեսզի ուզածիս պես կարենամ զվարճանալ։

ՍՈՖԻ — Իմ մեկ շրջազգեստս կուտամ, կը հագնի՞ս։

ԹԱՓԱՌ. — Ինչո՞ւ չէ։

ՍՈՖԻ — Հիմա առաջին գործերնիս պիտի ըլլա Պարոն Թովմասը վարպետությամբ մը գինովցնել։

ԹԱՓԱՌ. — Այդ գործը ինձի թող։

ՍՈՖԻ — Ինչո՞ւ այսչափ ուշացար։

ԹԱՓԱՌ. — Տունը կնոջս հետ ծեծկվեցա. չէր ուզեր զիս թողուլ. յետ ալ պառկեցուցի զինքը, վոտները կապեցի, տնեն դուրս ելլա, կրնաք գուշակել որ ձեր սիրույն համար ըրի ասոնք ... Ահ, Սոֆի, շատ կը սիրեմ զքեզ, գիշերվան հագուստես ավելի կը սիրեմ, ինչ ոգուտ որ դուն չես ճանչեր իմ արժեքս։

ՍՈՖԻ — Ցե՞ս չեմ ճանչեր, կը սխալիք, Պարոն Թափառնիկոս, հոգվույս պես կը սիրեմ զքեզ, (Ցատկռտելով) պարահանդեսի մեջ...

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՒՅՆՔ և ԹՈՎՄԱՍ շիշ մը, կոնք մը յեվ գավաթներ բերելով

ԹՈՎՄԱՍ — Ա՞ս ինչ պիտի ըլլա, տիկինը կը պարե։

ԹԱՓԱՌ. — Ցես հրամայեցի որ քիչ մը ցատկտե, վորպեսզի... այսինքն... ըստ վորում... վորովհետև... իրր թե... արյունը տաքնա և ցավը... պաղի։

ԹՈՎՄԱՍ — Կարծեցի որ ցավեն խելքը փախուց... ցատկտե, տիկին, ցատկտե, վորովհետև բժիշկը այնպես կը պատվիրե։

ՍՈՖԻ — Հոգնեցա։

ԹԱՓԱՌ. — Բավ է, ալ մի ցատկեր, որ վերջն ալ պիտի ցատկտես (Մեկուսի) Պարահանդեսի մեջ։

ԹՈՎՄԱՍ — Ահա գինին, բաժակը և կոնքը բերի։

ԹԱՓԱՌ. — Տվեք... տիկինին պիտի տամ որ բերանը լվա. (Լեցնելով) Բերաննիդ լվացեք, տիկին... այսինքն ակռաներդ։

ԹՈՎՄԱՍ — Գինի կը հրամմե՞ք։

ԹԱՓԱՌ. — Թե որ հրամանքնիդ ալ խմեք, չեմ մերժեր։ Բժիշկները ընդհանրապես գինին կը սիրեն, ինչպես որ գեղջուկները սխտորը. չեմ խմեր ըսելու ալ ըլլամ, անհավատալի պիտի թվի ձեզի, բայց ավելի ախորժակով կը տնկեմ, յերբ ընկեր մը ունենամ գլխացս, մանավանդ թե ձեզի պես մտերիմ բարեկամ մը։

ԹՈՎՄԱՍ — (Լեցնելով) Տնկեցեք ուրեմն։

ԹԱՓԱՌ. — Շնորհակալ եմ... կենդանություն։

ԹՈՎՄԱՍ — Անուշ անմահություն։

ԹԱՓԱՌ. — (Լեցնելով) Հրամմեցեք, բարեկամ։

ԹՈՎՄԱՍ — (Առնելով) Կենդանություն։

ԹԱՓԱՌ. — Անուշ ըլլա։ (Առ Սոֆի) Ցավդ ինչպես է, տիկին։

ՍՈՖԻ — Հարյուրին տասը պակաս։

ԹԱՓԱՌ. — Ըսել է որ գինին ոգտեց. տո քիչ մ'ալ լվա ակռաներդ, (Լեցնելով) վորպեսզի աս անտանելի ցավեն խալսիք։ (Սոֆի կ'առնե կը լվա) Ուրկե՞ բերել կուտաք այս գինին, Պարոն Թովմաս։

ԹՈՎՄԱՍ — Ագրիանուպոլսեն, թեպետ և գինեմոլ մեկը չեմ, բայց կ'ուզեմ որ խմելիքս ըլլա ընտիր գինի։

ԹԱՓԱՌ. — Պատվական գինի... ազնիվ գինի... աղվոր գինի... ափսոս որ յես տասնկ գինի չկրցի ձեռք բերել... կ'ափսոսամ ..

ԹՈՎՄԱՍ — Խմեցեք, Պարոն, կ'աղաչեմ, մի քաշվիք։

ԹԱՓԱՌ. — Ցեթե ընդունիք ինձի հետ նստելու, այն ատեն կը խմեմ։ (Լեցնելով) Հրամմեցե՛ք։

ԹՈՎՄԱՍ — Ի կենդանություն մեր տիկնոջ։

ԹԱՓԱՌ. — Անուշ հրամմեցի՛ք։ (Լեցնելով) Ի կենդանություն ամենուն (Կը խմե)։ Տիկին, ինչպե՞ս եք։

ՍՈՖԻ — Հարյուրին քսան։

ԹՈՎՄԱՍ — Ըսել է որ ցավը սկսավ պակսիլ, որհնյալ ըլլաս, Պարոն Թափառնիկոս, որ այս գիշեր մեզի հանգստություն պարգևեցիր, անդադար քալեն այն վոտքը որ զքեզ մեր տունը բերին. վերջապես ինչ որ ընեմ քեզի համար քիչ է, թե որ աս գիշեր գալու չըլլայիր, մինչև առտու բուի պես պիտի սպասեյինք, մեծապես շնորհակալ ենք քենե, Պարոն Թափառնիկոս, հրամմեցեք։

ԹԱՓԱՌ. — (Կը խմե) Վորովհետև գինին մարդու ույժ ու զորություն կ'տա, ծերերու համար ալ առողջարար ըմպելիք մը կրնա սեպվիլ. յես ձեր տեղն ըլլայի յերկու յերեք տակառ ավելի բերել կ'տայի այս գինիեն։

ՍՈՖԻ — Արդեն բավական ունիմք։

ԹԱՓԱՌ. — Ուրախ լեր, Պարոն Թովմաս, տիկինն ալ մեր խոսակ-

ցության մասնակից չեղավ. ո՛ն, ուրեմն խմենք, կը հուսամ որ այս յեղանակով ցավը բոլորովին պիտի անցնի։

ԹՈՎՄԱՍ — Ինձի համար բավ է բա՜վ... ձեր խոսքն ալ չեմ կրնար կոտրել. կ'ընդունիմ, կենդանություն։

ԹԱՓԱՌ. — Անուշ.

ԹՈՎՄԱՍ — (Քիչ մը գինովցած) Ընտիր գինի... առ, տիկին, բերանդ լվա՛... ի՞նչպես ես։

ՍՈՖԻ — Փառք աստուծո, հանգիստ եմ, հարցուրին յերեսուն։ (Մեկուսի) Գինովության սանդուխին առաջին աստիճանին վոտքը կոխեց։

ԹՈՎՄԱՍ — Դուք չեք խմեր... զիս մինակ թողուլ, ամոթ... ամոթ...

ԹԱՓԱՌ. — Շնորհակալ եմ։ (Կը խմե)։

ԹՈՎՄԱՍ — (Ավելի գինովցած) Ընտիր գինի... և ինչպե՜ս ալ շուտով ցավը անցուց... (Կը խմե) Առողջություն, տիկին... ցավդ ինչպե՞ս է։

ՍՈՖԻ — Հարյուրին քառասուն։

ԹՈՎՄԱՍ — Աղեկ գինի... յերկու գործ կը տեսնե, առաջին վոր տիկնոջս ցավը անցուց, յերկրորդը՝ իմ սիրտս կը նորոգե... (Երգելով) Գինի (կ'երգե)։

Ով դու գինի կենսատու,
Վոր ույժ կուտաս ծերերու,
Կրնա՞մ մերժել յես զքեզ
Մինչդեռ կինս դու բուժես.
Բոլոր աշխարհ քեզ կը պաշտե, գինի,
Քանզի ծերերը կ'ընես պատանի։

Ո՛ն, ուրեմն խմենք զվարճանանք... Տիկին, դուն ալ լվա... բերանդ։ (Կը խմե) Ցավը ինչպե՞ս է։

ՍՈՖԻ — Հարյուրին հիսուն (Մեկուսի)։ Ուշ պիտի մնանք...

ԹՈՎՄԱՍ — Ամեն բաժկին տասը կը պակսի ցավը...

ԹԱՓԱՌ. — Այո, յես ալ ան կը զգամ։

ԹՈՎՄԱՍ — Ինձի այնպես կուգա, վոր ցավելուն ալ աղեկ յեկավ, հրաման ավեք քիչ մ'ալ ցավիլ։

ԹԱՓԱՌ. — Թող ցավե։

ԹՈՎՄԱՍ — Յես ալ փափաք ունիմ, չե՞, տիկին, պարենք։ (Կ'ելնե, կ'իյնա)։ Ո՜հ, գլուխս դարձավ։

ԹԱՓԱՌ. — Անկողինդ պառկե, Պարոն Թովմաս։

ԹՈՎՄԱՍ — Լեցո՛ւր, լեցո՛ւր, (Կը խմե) ի՛նչ անուշ... (Կ'երգե)։

Վորքան ազդու յե այս գինի,
Ինչպես ալ շուտ կը բուժե,
Ամեն բաժկին ցավը կը պակսի,
Մեր տիկինն ալ շատ հանգիստ է։

Բոլոր աշխարհ քեզ կը պաշտե, գինի՜,
Քանզի ծերերը կ'ընես պատանի։

Տիկինը հարյուրին հիսուն աղեկ է... անդին կը մնա հիսուն... բան մը չէ... լեցուր խմենք հիմա ի հիշատակ Նոյ նահապետի, վոր այգի տնկելով գինովներու պարագլուխ հանդիսացավ. լեցո՛ւր խմենք. իր անունը անմահացնելու համար անդադար տնկենք։

ԹԱՓԱՌ. — (Գինովցած) Ժամանակ չկորսնցնենք (Կը խմե)։

ԹՈՎՄԱՍ — (Խմելով) Զարմանալի չեն քու հրամաններդ, ո՜վ գինի։ (Կ'երգե)։

Գինի, գինի, դու վարդերես,
Բանաստեղծից կը հրամայես.
Ծերերուն սիրտ կը նորոգես,
Դերասանաց վարպետն դուն չե՞ս։

Յեվ ո՞վ կրնա քեզ մերժել, ո՜վ գինի,
Մինչդեռ ծերերը կ'ընես պատանի (Կը խմե)։

ՍՈՖԻ — Յես ալ ձեռքովս մեյմեկ հատ հրամցնեմ, վոր ամուսինս սանդուղխին վերի աստիճանը յելնե. առեք, սիրելի ամուսինս։

ԹՈՎՄԱՍ — Ձեռքդ սիրեմ, տո՛ւր (Կը խմե, կ'սկսի աթոռին վրա ճոճալ)։

ՍՈՖԻ — Հրամմեցեք, Պ. Թափառնիկոս։

ԹԱՓԱՌ. — Շնորհակալ եմ (Կը խմե)։ Ե՛հ, ընկեր, մի՛ քնանար։

ԹՈՎՄԱՍ — Յե՞ս... յե՞ս... չեմ քնանար։

ԹԱՓԱՌ. — (Գինով) Մի՛ քնանար (բաժակ ի ձեռին կ'երգե)

Ուրախութիւն պարգեւող,
Տխրութիւնը փարատող,
Բժիշկ բոլոր ցաւերու
Դուն չե՞ս, գինի կենսատու։ (Կը խմէ)։

ՍՈՖԻ — Գինիքը անկողնույն մեջ պառկեցուր, յես ալ յերթամ հագուստները բերելու, վոր յերթանք։ (Կ'երթա)։
ԹԱՓԱՌ — Պարոն Թովմաս... ըշշշ... Թովմաս, ե, հը, յեղբայր, ընկեր, յել, պառկե։
ԹՈՎՄԱՍ — (Քնո մեջեն) Ի՞նչ կա։
ԹԱՓԱՌ. — Անկողինդ մտի՛ր։
ԹՈՎՄԱՍ — (Արթննալով) Ձեռքս բռնե... չեմ կրնար յելնել... վոտներս կը ցավին։
ԹԱՓԱՌ. — Մի՛ վախնար, յես հոս եմ, ձեռքեդ կը բռնեմ, քաշե։ (Յերկուքն ալ գլտորելով արտի քով կ'իյնան)։
ԹՈՎՄԱՍ — Աթոռը... աթոռը...
ԹԱՓԱՌ. — (Պառկած տեղեն) Աթոռը վերուցի՛ր։
ԹՈՎՄԱՍ — Յես... վոր... ինքզինքս... չեմ... կրնար... վերցնել աթոռը... պիտի վերցնեմ. եռ... եռ... (Փախել ջանալով)։
ԹԱՓԱՌ. — (Պառկած) Մեզի սաստիկ գետնի վրա պառկեցնող դուն չե՞ս, գինի կենսատու։ Պ. Թովմաս։
ԹՈՎՄԱՍ — (Պառկած) Ի՞նչ ե...
ԹԱՓԱՌ. — Ի՞նչպես եք... հանգի՞ստ եք։
ԹՈՎՄԱՍ — (Ելնել ջանալով) Չես ոգներ ինծի, բարեկամ։
ԹԱՓԱՌ. — (Կամաց կամաց յելնելով) Յես հոս եմ, անհոգ յեղիր, յեկուր անկողինդ պառկեցնեմ քեզի։ (Թովմասին ձեռքեն կը բռնե վեր քաշեն, յերկուքը մեկեն կ'իյնան) Ե՜հ, ինչու կը պառկիս, բարեկամ։
ԹՈՎՄԱՍ — Ոսկորներս կը ցավին... ո՛վ դու գինի կենսատու, ծերերը կ'ընես պատանի։
ԹԱՓԱՌ. — Ծերերը կ'ընես անդամալույծ... Թրա թա թա թրա թա թա թի թա թա թա։ (Կամաց կամաց կ'ելնե) Յե՜լ։ (Կը բռնե Թովմասին ձեռքեն) Կամաց կամաց քալենք։ (Գլտորելով) Աս կողմեն (գլտորելով) ան կողմեն, (իյնալով) մեջտեղեն... (Թափառնիկոս անանկ ուժով մը կը նետե Թովմասը վոր զանիկա անկողնո մեջ կը ձգե ինքն ալ կռնակի վրա կ'իյնա)։ Ո՛հ...

ԹՈՎՄԱՍ — Յես չեկա։
ԹԱՓԱՌ. — (Յելնելով) Պառկե վրադ ծածկեմ... աղբիս... հա... սաստիկ քնացիր... յես ալ գինի մը խմեմ, թրա թի թա թա։

ՏԵՍԻԼ Ե.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, ՍՈՖԻ, ԹՈՎՄԱՍ ի քուն

ՍՈՖԻ — (Շրջազգեստ մը ու գլխարկ մը բերելով) Հագուստներդ բերի... պատրաստվե. աս ի՞նչ ե. դո՞ւն ալ գինովցար։
ԹԱՓԱՌ. — Յե՞ս... յե՞ս.. դուն..., դուն գինով, պարահանդես, հա, հա, հա, կնկան հագուստով, ծաղրելի բան, հա, հա հա։
ՍՈՖԻ — Խելքդ գլուխդ ժողվե, տես թե վորո՞ւ տունն ես... շիտակ քալե։
ԹԱՓԱՌ. - Յես ծո՞ւռ կը քալեմ։ (Քայլ առ քայլ) Տես, մեկ... յերկու... յերեք... (Կ'իյնա կ'ելնե) յերեք... չորս... (Կ'իյնա կ'ելնե) չորս... հինգ, վեց... (Կ'իյնա կ'ելնե) վեց... յոթն... տեսա՞ր... համրեցի՞ր, բեր հագնիմ։ (Վրայի հագուստը կը հանե, մեյ ասդին անդին գլտորելով) Անցո՛ւր գլխես... անցո՛ւր, (Սոֆի կ'անցնե գլխեն շրջազգեստը), կոճկե, կոճկե, յես գինո՞վ, հա, հա, հա, գլխարկը բեր... որիորդ Թափառնիկոս, յես... գինի մը տուր, թի րա րա թի թա թա։
ՍՈՖԻ — Աս ի՞նչ փորձանքի հանդիպեցա։
ԹԱՓԱՌ. — (Բարձրաձայն) Փորձա՞նք։
ՍՈՖԻ — Մի՛ պոռար, ծառան կ'արթննա։
ԹԱՓԱՌ. — (Հազալով) Յես...
ՍՈՖԻ — Մի՛ հազար, ծառան պիտի արթննա։
ԹԱՓԱՌ. — Յես չհազա՞մ, ինչո՞ւ (Գրպանեն թաշկինակը հանած ժամանակը յերկու նամակ կ'իյնան գրպանեն) Թաշկինակս (Կը հազա)։
ՍՈՖԻ — Մի՛ հազար, կ'ըսեմ։
ԹԱՓԱՌ. — (Թաշկինակովը բերանը կը սրբե) Յերթանք, տիկին...
ՍՈՖԻ — Աս վիճակին մեջ ինչպե՞ս պիտի յերթաս պարահանդես.. տունդ գնա պառկե...
ԹԱՓԱՌ. — Տուն յերթա՞մ... տուն յերթամ. արթնցնե՞մ ամուսինդ... (Դեպի անկողին յերթալ կ'ուզե)։
ՍՈՖԻ — (Արգիլելով) Կը պաղատիմ։

ԹԱՓԱՌ. — Համբերէ, գաւաթ մ'ալ խմեմ, կ'երթանք: (Լեցնելով) Դուն ալ կուզե՞ս գինի, սատանա քեզի... խաբեբա... երէկ կը խաբես, հէ, պոռամ: (Բարձրաձայն) Թովմա՛ս եղբայր, եղբա՛յր Թովմաս:
ԹՈՎՄԱՍ — (Քնու մեջէն) Ի՞նչ կա...
ԹԱՓԱՌ. — Բան չկա. ձեռքդ տուր, տիկին Սոֆի... ձեռքդ համբուրեմ, յիկուր, իմ տատոշիկս.. (Կոտրտվելով կնկան ձայնով) Ինտո՞ր եք, տիկին Սոֆի... շաբաթը քանի՞ անգամ լաթ կը վլաք... Մըմծար տուտու, ընտո՞ր ես, քա չըսե՞ս .. քա վուչ... անցած որը փողոցը տեսա, քա մեյա, վոյքան ավրվեր է խեղճը, քա չըսես վոր երիկը պեշ մարդ է յեղեր... շատ պան շիտակը տիժարս կընայց... անանկ լուսնի պես ապլորիկ կնիկը... կապիկի պարձեր է, քա վուչ... քա վուչ... քա վույ...
ՍՈՖԻ — Տեր վողորմյա, տեր վողորմյա:
ԹԱՓԱՌ. — Բեզի հետ մեյմեկ գինի խմենք.
ՍՈՖԻ — Կ'ըսես, ալ մի՛ խմեր, ավելի կը գինովնաս... յես գիտեյի վոր...
ԹԱՓԱՌ. — (Խմելով) Ուղիղ ճամբան պատեր է, շիտակ վար կ'երթա:
ՍՈՖԻ — Հազար անգամ զզջացի քեզ կանչել տալուս:
ԹԱՓԱՌ. — Ցեթե այդպես է...
ՍՈՖԻ (Ի ծունկ իջնելով) Պիտի իմացվի. վերջը յերկուքնիս ալ խայտառակ պիտի ըլլանք, կայնե դիմակդ դնեմ (կը դնէ). յես ալ ծածկեմ յերեսս (դիմակը կ'անցնէ) Քալե.
ԹԱՓԱՌ. — Թեվս մտիր: (Կ'ելնեն) Ժամը քանի՞ յէ:
ՍՈՖԻ — Կես գիշեր է, յե՛լ. (Դրսեն հազալու ձայն մը կը լսվի) Կիրակոսը արթնցեր է, մոմը մարե, մոմը.
ԹԱՓԱՌ: — Բուֆֆ...
ՍՈՖԻ — Շունչդ կտրէ:
ԹԱՓԱՌ. — Ո՞ւր ես, Սոֆի:
ՍՈՖԻ — Պապանձէ, քովդ եմ:
ԹԱՓԱՌ. — Ձեռքդ յերկնցուր:
ՍՈՖԻ — Բռնե:
ԹԱՓԱՌ. — (Բռնելով) Աս քու ձեռքդ է... հիմա բանս բուսավ, ահ, վորքան փափուկ... ինչքան փոքր... (Կը խածնէ):

ՍՈՖԻ — Ուֆֆ, ինչո՞ւ կը խածնես:
ԹԱՓԱՌ. — Փափուկ է, փափուկ:

ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՒՅՆՔ և ԿԻՐԱԿՈՍ

ԿԻՐԱԿՈՍ — Մոմը մարեր են:
ՍՈՖԻ — (Ցած առ Թափառնիկոս) Ձայն մի հաներ, Կիրակոսն է, յետեւես յեկուր:
ԹԱՓԱՌ. — (Ցած) Գամ: (Միջին դռնեն կ'ելնեն):
ԿԻՐԱԿՈՍ — Աս ի՞նչ աղմուկ եր. արդյոք տիկինին փորձանք մը պատահեցավ. խեղճը այսօր այնչափ չարչարվեցավ, բայց լսեցի ձայն մը վոր կ'ըսեր, «Ո՞ւր ես, Սոֆի». մեռած ըլլալու յէ, ով աստված, ինչպես կը դողամ, ճրագն ալ մարեր են, սեղանը վո՞ր կողմն է արդյոք... հա՛, պզտիկ դուռը գոցվեցավ... տնեն դուրս կ'ելնեն... տան մեջ գո՞ղ կար... ահա մեծ դուռը կը զարնեն... ճրագը ո՞ւր է... յես ալ իշու պես քնացեր եմ, թող սպասեն քիչ մը.. այս գիշեր բան մը կը դառնա, բայց չկրցի իմանալ (Դուռը կը զարնեն) Մինչև վոր ճրագը չվառեմ, չպիտի բանամ: (Սեղանը փնտռելով) Ահա վեր կ'ելնեն... ազնուություն, ազնուություն.. (Ճրագը կը վառե):

ՏԵՍԻԼ Ե.

ԹՈՎՄԱՍ ի քուն, ԿԻՐԱԿՈՍ, ՄԱՐԹԱ, ՄԱՐԳԱՐ, ՆԻԿՈ

ՄԱՐԹԱ — (Ծեծելով Նիկոն) Թշվառական, առաջի գիշերվընե ի վեր մեզի փողոցե փողոց պտտցուցիր, տունը գտնեմ ըսելով:
ՆԻԿՈ — Տիկին. գիշեր ատեն:
ՄԱՐԹԱ — Լավ անպիտան: (Կը հրէ Նիկոն, վորն վոր կ'իյնա, լապտերը կը կոտրի :
ԿԻՐԱԿՈՍ — Ո՞վ եք դուք, և ի՞նչ կ'ուզեք:
ՄԱՐԹԱ — Տիկին Սոֆին կ'ուզեմ տեսնել, խոսելիք ունիմ հետը:
ԿԻՐԱԿՈՍ — Անիկա վոր անհանգիստ է, գիշերը չկրնար ձեզի հետ խոսիլ, խեղճը այսօր ակռայի ցավեն քիչ մնաց վոր պիտի մեռներ:

ՄԱՐԹԱ — Սախըողական գործ մ'է, որ զիս գիշեր ատեն փողոցներու վրա նետեց, ինչ որ ալ ըլլա կը պարտավորիք իրեն իմաց տալ որ գա... անկողնո մեջ քնացողն ով է։
ԿԻՐԱԿՈՍ — Տիկինին ամուսինն է։
ՄԱՐԹԱ — Ավելի աղեկ. ամենքնիդ ալ դուրս ելեք, իրեն հետ առանձին մնալ կ'ուզեմ։
ԿԻՐԱԿՈՍ — Բայց Պարոն...
ՄԱՐԹԱ — Պարոնը ինչ է. մի վախնար, տերդ չեմ ուտեր. դուրս ելեք կ'ըսեմ։
ԿԻՐԱԿՈՍ — Բայց...
ՄԱՐԳԱՐ — Առանձին թողունք զիրենք. . (Կ'երթան)։

ՏԵՍԻԼ Ը.

ՄԱՐԹԱ, ԹՈՎՄԱՍ ի քուն

ՄԱՐԹԱ — (Անկողնին մոտենալով) Պարոն... ըշշշ... Պարոն... մեռելի պես կը քնանա... արթնցի՛ր։
ԹՈՎՄԱՍ — Եո... եո...
ՄԱՐԹԱ — Սուրբ աստվածածին... բերանը գինիի տակառ կը հոտի։ (Հրելով) Ե՛հ... արթնցիր...։
ԹՈՎՄԱՍ — Եո... եո...
ՄԱՐԹԱ — Աչքերդ բաց։
ԹՈՎՄԱՍ — (Քնո մեջեն) Դո՞ւն ես, Սոֆի։
ՄԱՐԹԱ — Յես եմ, Սոֆի, արթնցիր։
ԹՈՎՄԱՍ — Կը ցատկատե՞ս։
ՄԱՐԹԱ — Ցատկատելն ի՞նչ պիտի ըլլա... այո, կը ցատկատեմ։
ԹՈՎՄԱՍ — Ցավդ ի՞նչպես եղավ։
ՄԱՐԹԱ — Ցավ... ցավ.. աղեկ է։
ԹՈՎՄԱՍ — Հարյուրին քանի՞։
ՄԱՐԹԱ — Աս ի՞նչ հարցումներ են... յերկու հարյուր, Պարոն, յերկու հարյուր։
ԹՈՎՄԱՍ — Գինի, գինի, ուժ կուտաս ծերերու... կրնամ ատել յես զքեզ...
ՄԱՐԹԱ — Արթնցիր, Պարոն, արթնցիր։
ԹՈՎՄԱՍ — Թափառնիկոսը գնաց։

ՄԱՐԹԱ — Հիմա գործը ստուգվեցավ։ (Բարձրաձայն) Պարոն, պիտի արթննաս։
ԹՈՎՄԱՍ — (Անկողնո մեջ նստելով) Ի՞նչ է, ի՞նչ կ'ուզես, Սոֆի։
ՄԱՐԹԱ — Սրբե աչքդ, տես թե ով է դիմացինդ։
ԹՈՎՄԱՍ — Դուն ով ես։
ՄԱՐԹԱ — Ով ըլլալս հիմա կ'իմանաք. դուն իրրև մարդ կը պտըտիս աշխարհի վրա։
ԹՈՎՄԱՍ — Ի՞նչ ըսել կ'ուզես։
ՄԱՐԹԱ — Ըսել կ'ուզեմ թե, պատիվդ չե՞ս պահեր, սանկ...
ԹՈՎՄԱՍ — Ի՞նչ կ'ըլլա յեղեր, ամեն մարդ գինով կ'ըլլա. տասը տարին անգամ մը գինով ըլլալուս անպատիվներու կա՞րգը կը դասես զիս։
ՄԱՐԹԱ — Թե որ յես դուն ըլլայի, ավելի մեռնիլ պիտի փափաքեյի քան թե ապրիլ։
ԹՈՎՄԱՍ — Սատանաբուժը հոս եր... ինծի ալ սորվեց որ խմեմ, թե որ դուն յես ըլլայիր չպիտի՞ խմեյիր։
ՄԱՐԹԱ — Առանց կարմրելու դեռ կը շարունակե՞ս այդ խոսքերը. ափսոս, Պարոն. հիրավի, քեզ ճանչնալու պատիվն չունիմ, բայց կ'ափսոսամ, կը խղճամ վրադ։
ԹՈՎՄԱՍ — Ուրիշ անգամուն չպիտի խմեմ։
ՄԱՐԹԱ — Քու կինդ կը մատնե քեզ և դուն չես իմանար. քու կինդ ուրիշ մեկը կը սիրե, քու կինդ զքեզ իշու տեղ դրած է. հասկցա՞ր, քու կինդ ան տեսակ կնիկներեն է, որոնց պատմությունները շատ են. ականջներդ բաց, թե որ ուզես մեկ հատը պատմեմ։
ԹՈՎՄԱՍ — Ինչե՞ր կը լսեմ... սուտ են ըսածներդ. պատմե տեսնեմ։
ՄԱՐԹԱ — Կնկան մեկը առավոտուն կանուխ ելած շուկան գացած ժամանակը՝ բարեկամուհիներեն մեկուն կը հանդիպի, որն որ կը հարցնե թե ու՞ր կ'երթա, կնիկը պատասխան կուտա թե էշ մը ծախու առնելու կ'երթա, որպեսզի տունը փատ ածուխ կրե. խելքդ սիրեմ, կ'ըսե բարեկամուհին աճապարանոք, փոխանակ էշ ծախու առնելու, երիկ մը առ՝ փատ ալ կը բերե ածուխ ալ, յես անանկ ըրի, հիմա շատ հանգիստ եմ ըսելով, բարեկամուհին կը հեռանա, և կնիկը տունը կը դառնա, և յերեք ամսեն կը կարգվի, իր բարեկամուհվույն խրա-

տին անսալով։ Ահա, Պարոն, քու կինդ ալ աս տեսակն է։ Քեզի խարդախութեամբ գինովցուցեր է, և ինքը հիմա կ'զբոսնու։

ԹՈՎՄԱՍ — Ակռան կը ցավեր. և քու ըսածներդ հիմնովին զըր-պարտութիւն են, ատամնաբույժը հոս եր։

ՏԵՍԻԼ Թ.

ՆՈՒՅՆՔ, ՄԱՐԳԱՐ, ԿԻՐԱԿՈՍ, ՆԻԿՈ

ՄԱՐԹԱ — Ահա նույն իսկ ատամնաբույժը կը սիրե։

ԹՈՎՄԱՍ — (Բարկությամբ) Ատամնաբույժը կը սիրէ, կ'ըսեք, բո-լորովին անհիմն խոսք. թե վոր մեկն ըսելու ըլլար վոր չես ատամնաբույժի կինը կը սիրեմ, քու ըսածեդ ավելի հավա-նական եր։

ՄԱՐԹԱ — Պարոն, գիտե՞ք թե առանց սուրգելու կնկան մը պա-տիվն արատելը ինչ է։

ԹՈՎՄԱՍ — Յես ինքըն ես, չեկեղեցական չեղած ժամանակս հետը սիրահարութիւն կ'ընեյի. անունն ալ Մարթա չեր, նախան-ձոտ բնավորութիւն մը ուներ...

ՄԱՐԹԱ — (Մեկուսի) Ո՞վ ասված իմ, ինչ կը լսեմ։

ՄԱՐԳԱՐ — (Ցած առ Մարթա) Տիկին, պատիվդ պահելու չաշխա-տի՞ս։

ԹՈՎՄԱՍ — Ինչո՞ւ լռեցիր, Պարոն։

ՄԱՐԹԱ — Վասն զի հանիրավի կը զրպարտեք։

ԹՈՎՄԱՍ — Յես, հանիրավի՞, ավելի կը ճանչեմ այն Մարթան, իր չերեսը համբույրներու արտ մ'եր, վորուն վրա չեթե համբելու ըլլամ, հազարի չափ սերմանած եմ։ Դուք չեք ճան-չեր զանիկա. դեմքեն պարկեշտ կնիկ մը կ'երեվի։ Իրեն հետ շատ մը սիրահարական նամակներ առած տված եմ։

ՄԱՐԹԱ — (Մեկուսի) Ո՞վ կրնա ըլլալ։

ՄԱՐԳԱՐ — (Ցած առ Մարթա) Տիկին, վորու չե ըսածը.

ՄԱՐԹԱ — (ցած առ Մարգար) Սուտ է, սուտ։

ԹՈՎՄԱՍ — Կիրակոս, գնա նայե տիկինը մյուս սենյակն է։ (Կի-րակոս կ'երթա) Չեք խոսիր, կարծեմ ըրած ամբաստանու-թյուններուդ համար զղջացիր, իմ կինս պարկեշտ է, ո՞վ գի-տե, խեղճը մյուս սենյակին մեջ կը քնանա թե արթուն է։

ՄԱՐԳԱՐ — (Գետնեն նամակները առնելով վրան կը կարդա) Այս նամակը հոս ինչ գործ ունի։

ԹՈՎՄԱՍ — Գրպանես ինկած ըլլալու են... հասցեն կարդա տես-նենք։

ՄԱՐԳԱՐ — Չէ, Պարոն, Թափառնիկոսի գրպանեն ինկած ըլլալու է, հասցեն անոր համար է։

ՄԱՐԹԱ — Կարդա տեսնենք պարունակությունը։

ՄԱՐԳԱՐ — Թերևս գաղտնիք մը ըլլա։

ՄԱՐԹԱ — Կարդա։

ՄԱՐԳԱՐ — (Կը կարդա).

«Պատիվ ունիմ ներկայիս քեզի իմացնելու, վոր այս գիշեր մեր տունը գաս, Պարոն Թովմասը խաբենք...

ԹՈՎՄԱՍ — Պարոն Թովմասը խաբե՞նք, շարունակե...

ՄԱՐԳԱՐ — (Կարդալով)

«Ու պարահանդես յերթանք, շատ բազմություն պիտի ըլլա հոն, կ'աղաչեմ, մ'ուշանար, շատ կը սիրեմ քեզ, գալուդ պես գըն-դակով մարմինեդ արյուն պիտի հանեմ»։

ՍՈՖԻ

ԿԻՐԱԿՈՍ — (Մտնելով) Տիկինը չկրցի գտնալ.

ՄԱՐԹԱ — Ճշմարի՞տ են ըսածներս թե զրպարտություն։

ԹՈՎՄԱՍ — Ի՞նչ կը լսեմ։

ՄԱՐԳԱՐ — (մյուս նամակին հասցեն կարդալով)։

Ու ուխտդ Յերանյակ Թափառնիկոսյանց

Ասիկա կարդալու պատվություն ունիմ (Նամակը կը բանա կը կարդա)։

«Այս առվան դեպքը զիս բոլորովին վհատեցուց, այնպես վոր ասկե վերջը ձեր տանը մեջ վոտք չեմ կրնար կոխել, պատմու-թյունը յերկար է, առանձին գտնված ժամանակնիս կը պատ-մեմ քեզի... նորդ ատամնաբուժությունը։ Ուրիշ տեղ մը վորո-շենք տեսնվելու համար, քեզի համար հոլ ու մահ կ'ըլլամ, շատ կը սիրեմ զքեզ, լեզվովս չեմ կրնար բացատրել, ուր մնաց թե գրչով, նամակիս պատասխանը գրելու վոր ըլլաս, տեղ մը իմա-ցուր վոր հոն յերթամ։

Հասցեն այսպես ըլլա.

Առ Յ. Գ. Կ. ԼԵՎՈՆ, Սիրահարյալներու փողոց, թիվ 20.

Տարփածուդ
ԼԵՎՈՆ

Աս ի՞նչ պիտի ըլլա։

ՄԱՐԹԱ — Աղջիկն ալ գլուխ վերուցեր է։

ՄԱՐԳԱՐ — Լևոնը կը սիրե։

ԹՈՎՄԱՍ — Թափառնիկոսը կը սիրե… և հիմա պարահանդես են… յես անձամբ պիտի յերթամ վիրենք գտնելու ու բանտարկելու։ Ներեցեք, Պարոն, անգիտաբար կարելի չե վոր ձեզ վշտացուցի. ամեն բանի տեղեկացա… հիմա բոլոր պարահանդեսները պիտի մտնեմ, ուր վոր գտնեմ, խայտառակեմ պիտի ընենք, բայց այս հագուստով պիտի ճանչնան զիս, կերպարանքս փոխեմ… Կիրակոս, վարի հարկը խուցին մեջ հին պատռտած վարտիք մը կա. առ բեր, տասը տարի չե ի վեր է վոր հոն կախված մնացեր է։ (Կիրակոս կ'երթա) Վրաս ալ հին հագուստ մը առնեմ. Թշվառականը այս հասակիս մեջ ինձի թշնամություն ընե։

ՄԱՐԹԱ — Յես ալ պիտի ընկերանամ ձեզի։

ԹՈՎՄԱՍ — Շատ աղեկ, Պարոն, դիմակ ալ պետք է. յերթամ յերկու յերեք հատ դիմակ բերեմ, և յերթանք (Կ'երթա)։

ՏԵՍԻԼ Ժ.

ՄԱՐԹԱ, ՄԱՐԳԱՐ, ՆԻԿՈ

ՄԱՐԳԱՐ — Տիկին, ձեր աղջիկը, բացակայության միջոցին, իրեն սիրական մը գտած է. շատ ուրախ եմ վոր չկարգված իմացա, ուստի այս վայրկենե տված նշանս յետ կ'առնեմ։

ՄԱՐԹԱ — Իրավացի չեն քու՞ խոսքերդ, Պ. Մարգար, բայց դուն ուշիմ ու հանճարեղ պատանի մ'ես, կրնաս դյուրությամբ գուշակել, վոր աղջիկ մը շատ անգամ նոր հագուստներու կը խաբվի։ Այս Լևոնը, վոր Փարիզեն նոր դարձած է, ամեն որ նոր նոր հագուստներ կը հագնի, աղջիկս ալ… ի՞նչ ընե խեղճը…

ՄԱՐԳԱՐ — Վորովհետև ձեր դուստրը Լևոնի կամ իր հագուստ-

ներուն սիրահարյալ է, պետք է վոր հետը կարգվի, յես նորասեր չեմ, մանավանդ թե հնասեր եմ, հին լաթերով կը պտտիմ։

ՄԱՐԹԱ — Ինչպե՞ս կրնա ըլլալ, վոր Լևոնի հետ ամուսնանա, քանի վոր ձեզի հետ նշանված է։

ՄԱՐԳԱՐ — Ե՛հ, ինչ կ'ըլլա նշանած ըլլալովը, կարծես թե նշանը կարո՞ղ է յերկու իրարմե պաղ սրտեր տաքցնել. և միթե պսակը կրնա՞ յերկու գլուխ մեկմեկու դպցնել, յերբ անոնք իրարու դպած ատեննին բուռն զորությամբ կը մղվին։ Տիկին, աղջիկները մեյմեկ մագնիս են, վոր մեկ ծայրեն կը քաշեն, մյուսեն կը վանեն, յերիտասարդներն ալ՝ ասեղ. ասեղին մեկ ծայրը կը մոտեցնեն մագնիսին. տեսար վոր քաշեց, կը քաշե հավիտյան. իսկ թե վոր վանե՝ միշտ կը վանե. մենք ալ, ինչպես վոր կ'երևի, վանիչ կողմին հանդիպած ենք։ Ինչո՞ւ իզուր աշխատիլ, վոր սիրվիմ։

ՄԱՐԹԱ — Առաջին անգամին համար, ամեն հանցանք ներելի յեն։

ՄԱՐԳԱՐ — Տիկին, ձեր աղջիկը ամեն որ կը գործե յեղեր այս հանցանքը. այսոր իր քովը գտնվեցա, խոսիլ ուզեցի հետը. անիկա չե թե միայն խոսքերուս ականջ չեր կախեր, այլ նաև կարծես թե յերեսս տեսնել չեր ուզեր։

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆՈՒՅՆՔ, ԹՈՎՄԱՍ պատռտած զգեստով

ԹՈՎՄԱՍ — Առեք դիմակնիդ, և աս նամակը ավեք, վոր գըրպանս դնեմ։ (Կիրակոս կուտա), դեմքս ալ գոցեմ։

ՄԱՐԹԱ — (Մեկուսի) Պետք եր վոր հայտնեյի զինքս աս մարդուն (դիմակով կը ծածկե յերեսը)։

ԹՈՎՄԱՍ — (Առ Նիկո) Առ քեզի արջու դեմք մը։

ՆԻԿՈ — Տվեք, ավեք։ (Դիմակը կը դնե)։

ԹՈՎՄԱՍ — Աս նամակը պահեմ։ (Աջ կողմի գրպանը կը դնե, մյուս ձեռքովն ալ ձախ կողմի գրպանը խառնելով նամակ մը կը հանե)։ Ա՞ս ինչ է, քսան տարվան նամակ մը ըլլալու է. գրերը չեն կարդացվիր. ան ալ թող հոս մտնե (ձախ գրպանը կը դնե)։

ՄԱՐԳԱՐ — Մնաք բարյավ (կ'երթա)։
ԹՈՎՄԱՍ — Ո՞ւր կ'երթաք։
ՆԻԿՈ — Պարահանդեսի մեջ ամենն ալ պիտի վախցնեմ, յես ալ տանկ առիթի մը կ'սպասեյի. վոչ վոք կը վախնա ինձմե, վասն զի աղքատ եմ. հարուստները հարստության դիմակով կը վախցնեն, աղքատներն ալ արջու դիմակով թող վախցնեն հարուստները. յերթանք։
ԹՈՎՄԱՍ — Ո՛ն, ուրեմն։
ՆԻԿՈ — Վոր ծակն ալ մտած ըլլան պիտի հանեմ սա գարշելիները։

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

(Պարահանդես, մեկ կողմ նստած յերեք հոգի բուզր կը խաղան, անոնց քով չորս հինգ հոգի գինի կը խմեն, դիմակավորներ աթոռներու վրա նստած։ Վարագույրը բացվելուն պես յերաժշտություն։

Գինի խմողները կ'երգեն).

Խմենք, ընկերք, անկենք պարպենք,
Տառապանք ցավ մեկդի նետենք,
Խնդանք, զի այս պարահանդես
Ուրախության է ասպարեզ։
Վայրկենի մը յերջանկություն՝
Կը փարատե վիշտ տրտմություն.
Այսպես ըսած են մեր նախնիք,
Վորք անցուցին կյանք յերջանիկ։

Ա. — Մանչուկ, գինի բեր։
Բ. — Ողի ալ բեր.
Գ. — Սուրճ մը բեր։
Ա. — Մեր բարեկամը միշտ սուրճ կը խմե, առավոտուն կ'ելնե սուրճ, գիշերը կը պառկի սուրճ, ցերեկը սուրճ. ինչու ողի չեք խմեր. սուրճը կնիկներուն առաջին ըմպելիքն է։
Գ. — Իրավունք ունիք։

Ա. — Ե՛հ, բարեկամ. զգայուն սրտերու գիտե՞ք ինչպես կ'ազդե այս ողին, ուրախ սրտերուն առջև դրախտ կը բանա, տխուրներուն ալ դիմացը դժոխքը կը հանե. բաց ի ասոնցմե մարդուս օգտակար է, ինձի համար քնարին թելերեն ավելի հաճելի յեն ողիի գավաթները, առավոտուն կը խմեմ վորպեսզի սիրտս վոգի առնու, ցերեկը նախաճաշիկեն առաջ կը խմեմ, վոր ախորժակս բացվի, նախաճաշիկեն վերջն ալ կը խմեմ, մարսողության կ'օգնե, իրիկուն ըլլալուն պես կը խմեմ, պառկելու ատենս ալ կը խմեմ, շուտ կը քնացնե։ Տեսակ մը հարուստներեն չեմ, վոր ունեցած ստակովնին տուներ կը շինեն, պարտեզներ ծախու կ'առնեն, վորոնց ամենն ալ աշխարհի վրա պիտի մնան, յես ունեցած ստակովս ողի կ'առնեմ ու կը խմեմ, աշխարհի վրա բան մը չեմ ձգեր, ինչ վոր ունիմ ամենքն ալ մեկտեղ գերեզման պիտի տանիմ, գերեզմանին բերանը մեծ է, ամենն ալ մեջը կ'առնե։ Մանչուկ, գավաթները լեցուր. (Մանչուկը կը լեցնե)։ Խմենք, կենդանության (Կը խմե)։
ԴԻՄԱԿԱՎՈՐ ՄԸ. — Բարև, Պարոն։
Ա. — Բարի յեկար, օրիորդ, նստեցեք։
ԴԻՄԱԿԱՎՈՐԸ — (Նստելով) Մեզ խաբեցիր, այնպես չէ՞. առջի գիշերը թատրոնեն յելած ժամանակդ խոսք տված եյիր, վոր զիս պիտի գտնայիր։
Ա. — Ներեցեք, ուրիշ անգամուն չեմ խաբեր. ի՞նչ կը հրամմեք... ի՞նչ կը խմեք... ի՞նչ կ'ուզեք։
ԴԻՄԱԿԱՎՈՐԸ — Ձեզ կ'ուզեյի. մինչև առտու սպասեցինք մորս հետ։
Ա. — Ի՞նչ կը խմեք։
ԴԻՄԱԿԱՎՈՐԸ -- Ողի։
Ա. — Կեցցես, օրիորդ. (լեցնելով), հրամմեցեք։
ԴԻՄԱԿԱՎՈՐԸ — Շնորհակալ եմ (կը խմե)։
Ա. — Կ'ուզե՞ք ինձի հետ պարել։
ԴԻՄԱԿԱՎՈՐԸ — Բոլորով սրտիվ։ (Կը պարեն)։

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՒՅՆՔ, ԼԵՎՈՆ

ԼԵՎՈՆ — (Ինքնիրեն) Վաղ առտու կանուխ չելլուր, կանուխ գամ, մայրս դարձյալ պիտի սրդողի. վաղ առտու պիտի պոռա. Լևոն, տղաս, ուր կ'երթաս այսքան կանուխ. ինչ պատասխանելու եմ... (Կը նստի) Մանչուկ, սուրճ մը բեր։ Անպատճառ չերթալու եմ, սերն է վոր կը կանչե. սիրո հրամանները մորս հրամաններեն առաջ կատարելու եմ։

Ա. — Հոգնեցա՞ք, պարոն։

ԴԻՄԱԿԱՎՈՐԸ — Այո, այո, նստինք։

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՒՅՆՔ, ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, ՍՈՖԻ դիմակներով

ՍՈՖԻ — Հիմա հանգիստ ես քիչ մը. այնպես չե՞։

ԹԱՓԱՌ. — Այո, այո, կերածներս դուրս հանեցի, խմածներս ալ մեկտեղ, միայն թե գլխու ցավ ունիմ... և վոտներս վոր... չեն ուզեր քալել, թե վոր պարոն Թովմասն ալ ինձի պես յեղած է, արթնցած պիտի ըլլա և մեզ փնտռելու ցաւեն չէ։

ՍՈՖԻ — Ըհ, մի հուսար, մինչև առտու մեռելի պես կը քնանա. այդ կողմեն ապահով յեղիր, բայց...

ԹԱՓԱՌ. — Ուրեմն մենք մեր գործման նայինք։ Մանչուկ, մանչուկ, անուշեղեն բեր։

ՍՈՖԻ — Ա՛հ, ճամբան վորքան նեղություն տվիր ինձի, գինով. պատե ի պատ զարնվելով, իյնալով, ցլնելով, վերջն ալ դրան մը առջեն նստար. պատուհաններեն մեկն սկսավ պոռալ ինձի, ըսելով թե՝ «ընկերդ ինչո՞ւ գինիի տակառեն դուրս հանեցիր»։ Ամոթես կաս-կարմիր կտրվեցա. փառք աստուծո, վոր դիմակես հայտնի չեղավ, մինչև հիմա ասանկ վոր ձանքի հանդիպած չեյի։

ԹԱՓԱՌ. — Վնաս չունի. փառք տուր աստուծո, վոր վողջ առողջ հոս կը գտնվինք հիմա։

ՍՈՖԻ — Հոս կը գտնվինք, բայց յես կասկածի մեջ եմ տակավին, տնեն դուրս յելած ժամանակնիս այնքան պոռացիր, վոր կիրակոսը արթնցավ. ու մեր գտնված սենյակը յեկավ... թե վոր ամուսինս արթնցնե։

ԹԱՓԱՌ. — Ամուսինդ ինչո՞ւ պիտի արթնցնե։

ՍՈՖԻ — Պարահանդես, պարահանդես կը պոռայիր բարձր ձայնով, հասկնալով վոր պարահանդես գացինք. պիտի իմանա մեր խարդախությունը և...

ԹԱՓԱՌ. — Պիտի կարծե թե յես կ'արգիլեյի քեզի պարահանդես յերթալը և քնացած պիտի ըլլա, մեկզի ըրե այդ խորհուրդները, մեր զվարճությանը նայինք. անուշեղենդ կեր, անուշիկս։

ԼԵՎՈՆ — Սա կնիկներեն մեկը պարելու հրավիրեմ։ (Կ'երթա Սոֆիին կ'երկնցնե ձեռքը, Թափառնիկոս կ'ելնե, վրան նետ կը պարեն):

Ա. — Յես ալ սա կնկան հետ պարեմ։ (Կ'երթա Սոֆին կ'առնե կը պարեն)։

ԹԱՓԱՌ. — (Պարած ատեն իյնալով) Ա՜հ. վոտքս ցավցուցի։

ԼԵՎՈՆ — Ներեցեք, տիկին, ձեզի վար ձգելուս։

ԹԱՓԱՌ. — Բան մը չէ, պարոն... (Սոֆին փնտռելով) բայց Սոֆին ուրիշի վիզը փաթթեր է, ինչ... ուրիշի մը հետ կը պարե... ուրիշի հետ գլուխը պլլված... ուրիշի մեջքեն բռնած... ուրիշի հետ գլխի տված... ըլլալո՞ւ բան է, տես, յես վոր իրեն համար կը մեռնիմ... ուրիշի հետ խաղա. գլխ ի նախանձ կը հրա... կը մեռնիմ... ուրիշի հետ խաղա. դիս ի նախանձ կը հրապուրե... Կանայք նախանձոտ են... յես չեմ նախանձիր, բայց ինչո՞ւ ուրիշի հետ կը խաղա, ասիկա նախանձել չէ, գինքը հոգալ է

ՍՈՖԻ — Ուֆ... հոգնեցա...

ԹԱՓԱՌ. — Կեցցես, Սոֆի. դիս կը թողուս և ուրիշի հետ կը պարես։

ՍՈՖԻ — Այնպես բարկությամբ կը խոսիս. իբր թե պարելը սերել ըլլար։

ԹԱՓԱՌ. — Յես չեմ ուզեր տեսնել քեզ ուրիշի... վիզը պլլված...։ Մանչուկ, մանչուկ, գինի բեր։ (Նարս խաղացողները կ'սկսին կռվիլ)։

Ա.— Պարոն, հրամայե, գինիները բերեն։

Բ.— Կարգը քուկդ է։

Ա. — Խաղի մեջ կարգ կ'ըլլա՞, կորսնցնողը կը վճարե. ընդհանուր սովորություն մ'է։

Բ.— Փարիզի՞ սովորութիւնն է աս։

Ա.— Պիտի սորվիս դուն ալ...

Բ.— Շատախօսութիւն պէտք չէ։ (Կ'սկսին կռուիլ)։

Ա.— Ինծի շատախօս...

ԹԱՓԱՌ.— (Մոտենալով) Պարոնայք, մի կռուիք ամօթ է, հայութեան պատիւը պահելու կը պարտաւորինք, ուր որ ալ ըլլանք. աստեղ պարահանդէս է, ամեն ազգէ մարդ կայ... չէ՞ք ամչնար, պարահանդէսին ամեն ազգերու պատուոյն արժանաւորներն են... հաշտուեցէք։

Ա.— Դուն մեր գործին մի խառնուիր։

Բ.— Դուն գնա սիրուհւոյդ քովը նստէ, զինքը համոզելու աշխատէ, և ծառայութեան պատիւը պահէ։

Ա.— Պարահանդէսի մէջ կրթութիւն տալու չեկեր է։

Բ.— Դուն քու սիրուհիդ կրթէ։

Ա.— Դուն քու պատիւդ պաշտպանէ։

ԹԱՓԱՌ.— Յես...

Բ.— Սիրուհւոյդ պատիւը պաշտպանէ։

ԹԱՓԱՌ.— Յես...

Ա.— Տեղդ նստէ դուն...

Բ.— Անխելք մարդ։

ԹԱՓԱՌ.— Յես վոր...

Ա.— Անպիտան մարդ...

Բ.— Քու կարծիքդ քեզի։

Ա.— Դուն ալ սիրուհւոյդ։

Բ.— Անամօթ...

Ա.— Սրիկա... ստակները տուր, պարոն, վերջը գէշի պիտի յերթայ։

ԹԱՓԱՌ.— Յես ալ ձեզի մարդ կարծեցի։

Ա.— Կորի ակե, անպիտան մարդ։ (Կը հրէ Թափառնիկոսն, վորն վոր գլտորելով կ'իյնա)։ Ստակները պիտի տաս։

Բ.— Բարեկամ, ստակ չունիմ, (Վազելով պարահանդէսէն կ'ելնէ. Լեւոնն ալ կը մեկնի)։

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՒՅՆՔ, ԹՈՎՄԱՍ, ՄԱՐԹԱ, ՆԻԿՈ դիմակներով

ՄԱՐԹԱ — Ահ, դուն պարոն Մելքիսեդեկյանն ես, չը կրցի ձեզ ճանչել, շատ ծերացած եք։

ԹՈՎՄԱՍ — Ի՞նչ կ'ըսեք, տիկին, այն ժամանակէ ի վեր, ուր կը սիրէյի քեզի, տասը տարի կայ. ձեր դեմքն ալ փոխուեր է, և երկու մարդու կերպարանքին տակ յես ալ ինչպես կրնայի ձեզ ճանչնալ։

ՄԱՐԹԱ — Կ'աղաչեմ, չըլլայ վոր մեր գաղտնիքը հայտնեք, ինչպես վոր քիչ մը առաջ փեսայիս առջին. մանավանդ թե հիմակվան գործերնուս ալ արգելք կ'ըլլայ. եհ, ուրեմն, խրկենք Նիկոն, վոր աղջին անդին փնտռէ։

ԹՈՎՄԱՍ—Այո, այնպես ընենք. սրամիտ տղու մը կը նմանի, բայց զգուշութեամբ վարվելու է, չ'ըլլայ վոր մեր հոս գալն իմանալով ի փախուստ աճապարեն։ Նիկո, ինձ մոտիկ ըրէ. գնա Թափառնիկոսն հարցուր, մի ըսեր, վոր պիտի ծեծենք. մեկը ակռայի ցավ ունի, անոր համար կ'ուզենք, հրամմե գա, այսպիսի համոզական խոսքերով քովի սենյակներուն մեջը բեր, վոր հոն աղվոր մը ծեծենք։

ՆԻԿՈ — Շատ աղեկ, շատ աղեկ։

ԹԱՓԱՌ.— Եհ, ինչու լուռ կեցեր ես, խոսէ։

ՍՈՖԻ — Ի՞նչ խոսիմ...

ՆԻԿՈ — (Գինի խմողներուն քով յերթալով Ա.-ին ականջին ի վայր) Պարոն Թափառնիկոս աստվածաբույժն չեկա՞վ հոս, մեկը ակռայի ցավ ունի պիտի կանչենք վոր...

Ա.— (Մեկուսի) Խաղ մը խաղամ ասոր... (Ձայնը փոխելով) Վորու՞ ակռան կը ցավի։

ՆԻԿՈ — Տիկնոջ մը...

Ա.— Ձեր փնտռածը յես եմ, բայց հիմա չեմ կրնար գալ. վասնզի կինս հոս մինակ չեմ կրնար թողուլ (Սոֆի աղջիկը ցուցնելով)։

ՆԻԿՈ — Անիկա ալ մեկտեղ թող գա, պարոն։

Ա.— Բայց յես յերկու վոսկի կ'առնեմ, վերջեն բան մը չըսեն։

Բ.— Ի՞նչ կա, ընկեր, ու՞ր պիտի յերթաք։

Ա.— Վոչինչ. մեկը կը կանչե, շուտ պիտի դառնամ։

ՆԻԿՈ — (Ցած առ Ա.,) Հիվանդը պարահանդեսին մեջ է. սա քովի սենյակը. կ'աղաչեմ, պարոն ատամնաբույժ, շուտ յեղիր յերթանք։

Ա.— Հիմա, հիմա, ահա կուգամ։

ՆԻԿՈ — (Թովմասին յերթալով) Գտա, գտա, ձայն մի հանեք։

Ա.— (Ինքնիրեն) Մեկ յերկու վոսկի առնեմ։

Բ.— Ի՞նչ խոսեցաք, յեղբայր։

Ա.— Բան մը չէ։

ԹՈՎՄԱՍ — Ո՞ւր են։

ՆԻԿՈ — (Մատովը ցցունելով) Ահա քու կինդ ալ անոր քովը կը նստի։

ԹԱՓԱՌ. — Յե՛լ, Սոֆի, պարենք։ (Կ'ելնեն)։

Ա. — Յե՛լ, օրիորդ, յերթանք։ (Դուրս կ'ելնեն)։

Բ. — Մեր բարեկամը մեզի մինակ թողուց և ուր յերթալը չիմացուց։

Գ. — Ով գիտե, սատանայություն մը ըլլալու է։

(Յերաժշտությունը կ'սկսի, ամենքը կը պարեն քանի մը վայրկյան)

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՒՅՆՔ. Ա., ՄԱՐԹԱ, ԹՈՎՄԱՍ, ՆԻԿՈ

Ա. — (Պոռալով) Ի՜նչ իրավամբ կը ծեծեք զիս, Պարոն, քթես բերնես արյուն հանեցիք։

ԹՈՎՄԱՍ — Սխալեցանք. դուն սխալեցուցիր, մենք բժիշկ կը փնտռենք։ (Թափառնիկոս ու Սոֆի չեն լսեր պարելու վրա)։

Ա. — Եհ, Պարոն, մարդ ծեծելը դյուրին բան չէ, պիտի խեղդեյիք զիս։

ԹՈՎՄԱՍ — Սխալեցանք։

Ա. — Սխալեցա՞ք, պիտի խղդեյիք զիս և սխալեցաք, սխալեցաք։

ԹՈՎՄԱՍ — Կարծեցինք, վոր...

Ա. — Կարծեցի՞ք, պիտի մեռցնեյիք զիս և կարծեցիք... կարծելով պիտի մեռնեյի։ (Քթեն բերնեն արյուն կը վազե) Եհ, փոխարինություն կը պահանջեմ, Պարոն, դատի պիտի քաշեմ ձեզի։

ԹՈՎՄԱՍ — Ներեցեք։

Ա. — Ներեմ... պիտի մեռնեյի յես...

ՄԱՐԹԱ — (Ցած առ Թովմաս) Գինով է... ոսկի մը առ, կը լռե։

ԹՈՎՄԱՍ — Մանչուկ, մեր բարեկամին ոսկի բեր։

Ա. — Ինչ է ե... (Մեկուսի) Գոնե ոսկի մը վաստկեցանք։ (Բարե-կամներուն քովն յերթալով)։

Բ. — Ի՞նչ յեղար, բարեկամ։

Ա. — Վարպետություն մը ընել ուզեցինք, ծեծ կերանք, ինչ գիտնամ, ոսկի մը խմեմ յերթանք. արյունը տես ինչպես կը վազե քթես։ (Կը խմե, կը մեկնին յերեքը մեկտեղ)։

ՍՈՖԻ — Բավ է, նստինք, քիչ մը հանգչինք։

ԹԱՓԱՌ. — Շատ աղեկ։

ԹՈՎՄԱՍ — Նիկո, փնտռե նայինք... բայց այս անգամուն պես չսխալինք.

ՆԻԿՈ — Դուք անհոգ յեղեք, յես պիտի գտնեմ զանոնք (Թափառնիկոսին քովն յերթալով)։ Պարոն Թափառնիկոսը տեսա՞ք հոս։

ԹԱՓԱՌ. — (Մեկուսի) Նիկոյին ձայնն է։ (բարձր՝ ձայնը փոխելով) Ի՞նչ պիտի ընեյիք։

ՆԻԿՈ — Ճշմարիտը կուզե՞ս հասկնալ, պիտի ծեծեյինք, վասն զի իր կինը թողեր, Պարոն Թովմաս կ'ըսեն, վաճառականի մը կինը կը սիրե. նամակները բռնեցինք, վորոնք Պարոն Թովմասի գրպանն են։

ԹԱՓԱՌ. — (Մեկուսի) Նամակները առեր են։ (Գրպանները խառնելով) Իրավ վոր յես չը տեսա զինքը։ (Մեկուսի) Նամակները հոս չեն։

ՆԻԿՈ — Թե վոր տեսնելու ըլլաք զինքը, մի զրուցեք թե պիտի ծեծենք, վորպեսզի չի փախչի։

ՍՈՖԻ — (Մեկուսի) Ո՜վ աստված իմ, իմացվեր է։

ՄԱՐԹԱ — Կը տեսնե՞ք, մեր Նիկոն ինչ վարպետությամբ կը փնտռե։

ԹՈՎՄԱՍ — Յես ալ ան կը դիտեմ։

ՍՈՖԻ — Բռնվեցանք, Պարոն Թափառնիկոս, ըսածիս պես է գործը, Կիրակոսը իմացավ մեր տնեն դուրս յելնելը և ամուսնույս իմաց տվավ. վոր յելեր հոս յեկած է։

ԹԱՓԱՌ. — Յես ալ ավանակի պես նամակները ձեր տունը թողեր եմ. վարպետությամբ մը զանոնք գրպանեն գողնալու

ճար մը փնտռելու չէ, վերջը ինծի թող. ես կրնամ արդարացնել մեզի:

ՍՈՖԻ — Ի՞նչպես գողնալու չէ:

ԹԱՓԱՌ. — Բոլը կ'երթաս, կը քծնիս, չորսմեն իրեն գինի հրամցընելով խոսակցության կը բռնես, սիրո վրա կը խոսիս և կամացուկ մը կը գողնաս գրպանեն:

ՍՈՖԻ — Թե որ զիս ճանչե:

ԹԱՓԱՌ. — Ձայնդ փոխելու ես:

ՍՈՖԻ — Թե որ դիմակս վար առնե:

ԹԱՓԱՌ. — Չկրնար առնել, քաղաքավարության դեմ է:

ՍՈՖԻ — Փորձենք ուրեմն:

ԹԱՓԱՌ. — Քաջալերվե, Սոֆի, թե որ հաջողելու ըլլաս, մեծ հաղթանակ մը կանգնած պիտի ըլլաս, քեզ տեսնեմ: (Սոֆի Թովմասին քով կ'երթա): Տեսնենք սա խաղը ինչպես պիտի վերջանա:

ՍՈՖԻ — (Առ Թովմաս): Գինի կը հրամմե՞ք, Պարոն:

ԹՈՎՄԱՍ — Ո՞վ է այս կինը:

ՄԱՐԹԱ — Պարահանդեսներու մեջ այսպիսի անծանոթ կանայք շատ կը գտնվին, որք անմիտներ որսալու համար կը պտտին:

ԹՈՎՄԱՍ — Գինի՞ ուզեցիք, օրիորդ:

ՍՈՖԻ — Այո, Պարոն Թով... (Մեկուսի) Քիչ մնաց որ անունը պիտի տայի:

ԹՈՎՄԱՍ — Հրամմե՛ խմե՛:

ԹԱՓԱՌ. — Տեսնենք պիտի կարենա՞ հաջողիլ:

ՍՈՖԻ — (Առ Մարթա) Դուք չե՞ք խմեր, պարոն.

ՄԱՐԹԱ — Շնորհակալ եմ:

ՆԻԿՈ — (Պտտելով) Եթե չկարենամ ձեռք բերել սա անամոթ սրիկաները...

ԹԱՓԱՌ. — (Ցուրտի) Թե որ ձեռք անցնինք: խայտառակ պիտի ըլլանք աշխարհի առջև:

ԹՈՎՄԱՍ — (Առ Մարթա ցած) Ասիկա համարձակ կնկան մը կը նմանի. կրնանք իրեն հարցնել և տեղեկություններ քաղել, հարցնենք անգամ մը, կարելի չէ որ տեսած ըլլա: Օրիորդ, ձեզի քանի մը հարցումներ ունիմ ընելիք, կը բարեհաճի՞ք պատասխանել:

ՍՈՖԻ — (Մեկուսի) Եղելության տեղեկանամք, (Բարձր) Հարցուցե՛ք, պարոն, հոժար կամքով պատասխանելու պատրաստ եմ, ինչ որ ալ ըլլա ձեր հարցմունքը:

ԹՈՎՄԱՍ — Ապրիս, աղջիկս, շատ օրեր տեսնես, անունդ ի՞նչ է:

ՍՈՖԻ — Անունս... անունս... իրավ որ միտքս չի գար... Թերեզա չէ... Թերեզա:

ԹՈՎՄԱՍ — Կարգվա՞ծ եք:

ՍՈՖԻ — Չէ, ես չեմ ուզեր կարգվիլ և գերի ըլլալ, ասանկ ինքնիր գլխուս խաղաղ կյանք մը կը վարեմ:

ԹՈՎՄԱՍ — (Ցած առ Մարթա) Ըսածիս պես լիրբ աղջիկ մ'է: (Բարձր) Ձեզի հարցնելիքս սա չէ որ, տեսա՞ք Պարոն Թափանիկոսը:

ՍՈՖԻ — Թափանիկոս... Թափանիկոս... Ո՞վ է սա մարդը:

ՄԱՐԹԱ — Ատամնաբույժ մը:

ՍՈՖԻ — Ակռանի՞դ կը ցավի:

ՄԱՐԹԱ — Ակռա՛...

ՍՈՖԻ — Հասկցա... հասկցա ով ըլլալը, Սրբեկյան ատամնաբույժն կը հարցնեք:

ԹՈՎՄԱՍ — Ճիշտ:

ՍՈՖԻ — Բարեկամս է, ծանոթություն ունիմ հետը, ծեր, նախանձորդ կին մը ունի:

ՄԱՐԹԱ — (Մեկուսի) Ուրիշ կնիկներ ալ կը սիրե:

ԹՈՎՄԱՍ — Տեսա՞ք զինքը հոս:

ՍՈՖԻ — Չտեսա, վասն զի հոս չեկած չէ, թե որ գալու ըլլար, անպատճառ զիս պիտի գտներ:

ԹՈՎՄԱՍ — Աս կողմերը ուրիշ պարահանդեսներ ալ կան այնպես չէ՞:

ՍՈՖԻ — Այո, կան, ինչու այսքան բարակ բարակ հարցումներ. ի՞նչ կա, պատմեցեք ինձի եղելությունը, և կը խոստանամ ձեզի ծառայություն մը ընելու:

ԹՈՎՄԱՍ — Եհ, օրիորդ Թերեզա, աս Թափանիկոսը աղեկ մարդու չնմանիր, սրիկայի մեկն է:

ԹԱՓԱՌ. — (Ինքնիրեն) Իմ գովեստս կ'ընեն:

ՍՈՖԻ — Մի սրդողիք, հանդարտեցեք, տեղն ի տեղ հայտնեցեք ինձի ձեր գաղտնիքը, թերևս կրնամ ձեզի օգտակար ըլլալ, բայց առաջ մեկ մեկ հատ տնկենք: Մանչուկ, մանչուկ, գինի բեր:

ՄԱՐԹԱ — Այո, թող պատմե, ինչ ձուն բերավ մեր գլխուն անորենը, և կ'ըսե թե յուր կինը նախանձոտ է:
ՆԻԿՈ — Անիծյալ մարդ, ինչպես ծեծեց տիկինը:
ԹՈՎՄԱՍ — Կինս ակռայի ցավ ունիմ ըսելով զինքը տունը կանչել տվավ:
ՍՈՖԻ — Վասն զի քաղաքիս մեջ շատ համբավ ունի: Ատամնաբուժության արվեստը գրեթե նորեն հնարեց. իմս ալ յերկու յերեք անգամ ակռաներս նայեցավ. սուտ չեմ կրնար խոսիլ, ապերախտություն ըրած կ'ըլլամ: յերկու ժամվան մեջ բուժեց, ձեռքը շատ թեթև է, բնավ չցավցուներ: (Մեկուսի) Նամակը գտնելու մեկ ճարը:
ԹՈՎՄԱՍ — Ատամնաբույժին յեկած ժամանակը կինս ակռայի ցավեն կը մեռներ, թող ստեր, անպատիվ կին:
ՍՈՖԻ — Ինչո՞ւ համար ստել, մեզ չէ՞... կրնա՞ք ըսել ինծի թե ո՞վ եք դուք:
ԹՈՎՄԱՍ — Ներեցեք, ով ըլլալս չեմ կարող հայտնել, վորպեսզի ձեր առջեն ալ անպատիվ չըլլամ: Վերջապես այս ատամնաբույժը զիս գինով ըրավ:
ՍՈՖԻ — Վորպեսզի ակռային ցավեն չվախնաս:
ԹՈՎՄԱՍ — Անկողնույս մեջ պառկեցուց զիս:
ՍՈՖԻ — Վորպեսզի հանգիստ ըլլաս:
ԹՈՎՄԱՍ — Մեկ յերկու ժամու չափ քնանալեն վերջը ձայն մը դպավ ականջս, վոր զիս կը կանչեր:
ՄԱՐԹԱ — Յես եյի կանչողը:
ՆԻԿՈ — Մենք ալ դուրսը կ'սպասեյինք:
ԹՈՎՄԱՍ — Մեկեն ի մեկ արթնցա և սա պարոնին հետ ալ վիճաբանություն ըրինք:
ՍՈՖԻ — Վիճաբանությո՞ւն... և ինչո՞ւ:
ԹՈՎՄԱՍ — Յերբ ըսավ վոր Թափառնիկոսը կինս կը սիրե, և թե խոսք մեկ ըրեր են զիս խաբելով պարահանդես յերթալ. կին մը իրեն գործակից գտնելով իր ամուսինը մատնե. (Սոֆի, վոր Թովմասին ձախ կողմը նստած է նամակը գրպանեն կը գողնա): Կրնա՞ք գուշակել թե ինչ ստորճան քարասիրտ կին մը ըլլալու յե, վոր հանդգնի այսպիսի չարագործության ձեռք զարնել:
ՍՈՖԻ — (Մեկուսի) Նամակը գողցա:

ԹՈՎՄԱՍ — Առջի բերան չհավատացի պարոնին ըսածներուն, իսկ յերբ կնկանս նամակը տեսի, վոր Թափառնիկոսին գրած եր, այն ատեն իրազգած յեղա, ու հագուստս փոխելով ծեր հասակիս մեջ փողոց ինկա, վոր իրենց հետքը գտնելով արդար վրեժխնդրություն պահանջեմ, և պարոն Թափառնիկոսի կինն ալ այնքան համեստ բարեպաշտ մեկն է, ինքն անձամբ մեր տունը յեկավ, աչքերեն արտասուք կը վազեյին. ի՜նչ անպատվություն ընտանիքի համար: խեղճ Մարթա:
ՍՈՖԻ — Բայց արդեն Թափառնիկոսի կինը սիրվելու տեղ մը չունի, պառավ, ցնդած, ճմռքած ծերերին մեկն է:
ՄԱՐԹԱ — (Մեկուսի) Համբերելու յե:
(Բազմությունը կամաց կամաց յերթալ կ'սկսի):
ԹԱՓԱՌ. — (Ինքնիրեն) Խոսակցություննին դեռ չլմնցավ:
ԹՈՎՄԱՍ — Թեպետ և այնպես, յերիտասարդությունը գեղեցիկ եր, չքնաղ կին մ'եր, պաշտելի եյակ մ'եր:
ՍՈՖԻ — Վերջապես նամակը...
ԹՈՎՄԱՍ — Նամակը յես կարդացի դողալով...
ՍՈՖԻ — Թշնամություն ըլլալու յե, պետք չե վոր ամեն կնկան խոսքին և ստորագրությամբ գրված նամակներուն պարունակությանը հավատք ընծայեք: Վասն զի շատ անգամներ այնպիսի սուտ խոսքերով և կեղծ գրություններով մարդիկ խաբվելով, հանիրավի կը մեղադրեն իրենց կիները ու վեճի մը ծննդյան առիթ կուտան, ուստի լավ մտածեցեք, կարելի յե թշնամանք մը կա...
ՆԻԿՈ — Ինչ թշնամանք... տիկինը անանկ ծեծեց վոր, խեղճին վոտքը ձեռքը կապեց:
ՍՈՖԻ — Յեվ զինքը գտնելու համար հո՞ս յեկաք:
ԹՈՎՄԱՍ — Այնպես է... Դուք չտեսա՞ք զինքը:
ՍՈՖԻ — Այո, Պարոն, վոչ. թե վոր հոս ըլլար, անպատճառ զիս պիտի տեսներ. ավելի ես կուզե՞ք ձեզի հայտնապես խոստովանիմ. Թափառնիկոս իզմե ուրիշ կին մը չսիրեր. և զձեզ ապահովելու համար, կ'երդվըննամ, վոր յես եմ իր սիրուհին. ուստի ձեր այս խոսքերը բոլորովին անտեղի յեն և կասկածնիդ անհիմն, ինչ ատեն կ'ըսեք վոր ձեր կինը կը սիրե:
ՄԱՐԹԱ — (Մեկուսի) Ավելի գեշ:

ՍՈՖԻ — Պարոն Թափառնիկոս զիս սիրելու շատ մը խրատունք յերևան կբերեր. կինը հարյուր տարվան դուռը զարկեր ներս մտեր է. մինչդեռ ինքը դեռ քառասուն տարվան յերիտասարդ մը՝ ծերության դռնեն դուրս, ինչպես կրնա հետը ապրիլ. ասկե զատ կինը զզվելի բնություն մը ունի. շատ նախանձորդ է կ՚ըսե։

ՄԱՐԹԱ — (Մեկուսի) Ինչեր կըխոսի լիրբը։ (Բարձր) Յերթանք մենք, քանի վոր նամակները մեր քովն են այսոր կամ վաղը զիրենք պիտի գտնենք, վրեժնիս կը լուծենք։

ԹՈՎՄԱՍ — Շատ աղեկ, յերթանք։

ՍՈՖԻ — Կ՚զչարիմ, Պարոն, վոր չկրցի ձեր ծառայության մեջ գտնվիլ, նաև կը խղճամ վրադ, վոր այդ ծեր հասակին մեջ թշնամիի մը խարդախության հավատալով, կնոջդ վրա այնքան զրպարտություններ դիզեցիր, գնա՛ տունդ, հանգիստ յեղիր... բայց միայն բարովի առեն ալ խմենք, թե վոր կը հաճիք իմ ձեռքես գավաթ մը գինի ընդունիլ։ (Կը լեցնե) Հրամմեցեք։

ԹՈՎՄԱՍ — Կենդանություն։

ՍՈՖԻ — Անուշ անմահություն։

ԹՈՎՄԱՍ — Կ՚աղաչեմ թե վոր հոս գալու ըլլան մ՚ըսեր, վոր զիրենք փնտռեցինք, վոր չը փախչին. թե վոր կ՚ուզես քեզի ստակ ալ կուտամ։

ՍՈՖԻ — Այդ մասին անհոգ յեղեք։

ԹՈՎՄԱՍ — Մնա՛ բարով։

ՍՈՖԻ — Յերթաք բարյավ։ (Թովմաս, Մարթա, Նիկո, կ՚երթան։)

Տ Ե Ս Ի Լ Զ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ ՅԵՎ ՍՈՖԻ

(Դրսեն անձրեվի ձայն կը լսվի)

ԹԱՓԱՌ. — Կեցցես Սոֆի։

ՍՈՖԻ — Տեսա՞ր, ինչպես հաջողեցա. կ՚ըսեք վոր կանանց ձեռքեն գործ չի գար։

ԹԱՓԱՌ. — Ի՞նչ ըսիր, ի՞նչ ըսիր։

ՍՈՖԻ — Քեզի գրած նամակս գրպանեդ ինկեր է մեր տունը,

անոնք ալ առեր բացեր կարդացեր են, հիմա ճարպիկություն մը հնարելու չեն ինքզինքնին արդարացնելու համար։

ԹԱՓԱՌ — Նամակները չը գողցա՞ր գրպանեն։

ՍՈՖԻ — Մեկ հատ մը միայն կար, անիկա առի։

ԹԱՓԱՌ. — Տուր տեսնեմ, տար աստված, վոր քու գրածդ ըլլար, վասն զի գրպանիս մեջ յերկու նամակ կային, մեկը քուկդ է, մյուսը ուրիշի մը...

ՍՈՖԻ — Ուրիշի... ուրիշի... ո՞վ է այս ուրիշը։

ԹԱՓԱՌ. — Առևտրական գործերու վրայոք նամակ մը։

ՍՈՖԻ — Կը ստեք, Պարոն, ի՞նչ է այն նամակին իմաստը, պատմե ինձի։

ԹԱՓԱՌ — Ճշմարիտը կ՚ուզես, ընտանեկան գաղտնիք մ՚է, զոր սրտիս մեջ պահեր եմ։

ՍՈՖ — Ե՛հ, Պարոն Թափառնիկոս, պարահանդեսի մեջ մեզնե ուրիշ մարդ չմնաց։ (Դիմակը հանելով) Դիմակնիս վար առնենք և այնպես խոսինք. (Թափառնիկոսին դիմակը կը հանե)։ Մինչև այսոր քեզմե գաղտնիք մը ծածկած չունիմ, թե վոր կ՚ուզես ինձի հավատարիմ մնալ և իզմե սիրվիլ, ինչ վոր ալ ըլլա այդ գաղտնիքը, զոր սրտիդ մեջ պահեր ես, կը պարտավորիս ինձի հաղորդելու, ապա թե վոչ, շուտով պիտի հասկնամ, վոր ինե ուրիշ կին մ՚ալ կը սիրես։ Թող մեր սիրո շղթայն այս վայրկյանեն խորտակվի, եհ, գիտես վոր մեծ ամոթ է մարդու մը յերկու կնիկ սիրել։

ԹԱՓԱՌ. — Չե, անուշիկս, չե, սիրունիկս, քեզմե զատ ուրիշ մը սիրած չունիմ և չպիտի ունենամ, սերս քեզի նվիրած եմ. կ՚ուզեմ վոր միշտ քու քովդ մնա. ինչու՞ ասանկ կասկածներու կ՚երթաս։ Այն նամակը աղջիկիս ուղղյալ է, և ինչպես վոր ձեզի հայտնի չե, նշանված է, ուրիշ նորելուկ պատանի մը կ՚ուզե իրեն գրավել աղջիկս, ահա աս է գործը...

ՍՈՖԻ — Ապրիս... կեցիր հիմա կարդամ նամակը և յերթանք, վասնզի անձրևը դադրելիք չունի (կարդալով)։ «Առ Պ. Թովմաս Մելքիսեդեկյան»։ Ա՛հ, սխալմամբ ուրիշ նամակ առած ենք, ասոր գրերը չեն կարդացվիր... շատոնց ի վեր գրված է իմ ամուսնույս ուղղյալ.

ԹԱՓԱՌ. — Կարդա տեսնենք մեջը...

ՍՈՖԻ — (Կարդալով) «Անցյալ... ու...՝յեկեղեցիեն... յելած ժամանակդ... չեն կարդացվիր վոր...

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՒՅՆՔ, ՄԱՐԹԱ, ԹՈՎՄԱՍ, ՆԻԿՈ

ԹՈՎՄԱՍ — (Վազելով) Աս անձրևին մեր պիտի չերթանք։
ԹԱՓԱՌ. — Դիմակները...
ՄԱՐԹԱ — Ի՜նչ անձրև։
ԹԱՓԱՌ. — (Ձեռքովը յերեսը ծածկելով) Ո՞ւր փախչինք։
ՍՈՖԻ — Դիմակները...
ՄԱՐԹԱ — Յեկեք, հասեք, Նիկո...
ԹՈՎՄԱՍ — Վայ շուն շան վորդիներ...
ՆԻԿՈ — Ո՞ւր է, բռնեցեք ծեծեմ...
ԹԱՓԱՌ. — Փախչինք։ (Թափառնիկոս յեվ Սոֆի դռնեն դուրս յելնելու կը ջանան։ Մարթա Թափառնիկոսին շրջազգեստեն բռնած կը քաշե, Թովմաս աղիս անդին փոզկոտելով Սոֆին բռնել կ'աշխատի. Թափառնիկոսի յեվ Սոֆիի մեյմեկ վոտքը դուրս՝ փախչելու կը ջանան, վորք կարգիլեն Թովմաս ու Մարթա):

ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

(Թափառնիկոսի տան մեջ սրահ մը, յերկու սենյակ դիմացե դիմաց, աջ կողմը պատուհան մը, վոր փողոցը կը նայի)։

ՏԵՍԻԼ Ա.

ՅԵՐԱՆՅԱԿ — (Աթոռի վրա նստած թաշկինակ ի ձեռին աչերը կը սրբե) Սեր... սեր. այս գիշեր ալ վանեցիր արտեվանններես այն անուշ նինջը, վոր սիրահարյալ սրտերու ամժամանակյա հանկուցիչն է. բարե, կը փախչի՞ս աչքերես, զրկվեցա յես քեզմե. միայն արտասուք թափել մնաց ինձի բաժին և այն այս յերկրաստարդ հասակիս մեջ։ Ամբողջ գիշեր թաշկինակ ի ձեռին արտասուքս սրբելով ժամերուն անցնելուն կը սպասեյի անկողնույս մեջ... Ո՜վ աստված իմ, սիրո թակարդին մեջ ինկողներուն ինչ դժվար է յելլել քնանալը... սիրակտնեն հեռու։ Ո՜հ, նինջդ անուշակ, անհաշտ թշնամիդ սիրո, ուր ես, յեկուր ծանրացիր արտեվանններուս վրա և ցրվե մտքես դառն խորհուրդները, վորք զիս գերեզման պիտի մղեն։ Ահ, Լևոն, չքնաղդ իմ Լևոն, քեզմե հեռու մնացալ եմ յես, քու ներկայութենդ և վոր հոգի կուտա ինձի, կը սիրեմ զքեզ մահու չափ, կյանքս քեզի հետ անցնելու վորոշած եմ, քեզի նվիրած եմ իմ սիրտս, քեզի համար ստեղծված եմ... թող հայրս սպառնալյոք խրոխտա և անեծք թափե գլխուս, ընդունայն է... թող մեր սիրո ամրապինդ շղթայն քակքակել աշխատի, անօգուտ է. չպիտի հաջողվի իր բարբարոսական ձեռնարկութենը։ Ա՜հ, Լևոն, առաջին անգամ վոր տեսա զքեզ, սիրեցի, քու մեկ նայվածքդ հրապուրեց զիս և յերբ խոսիլ սկսար, բառերը սիրարույր շուրթերեդ սահելով սիրտս մտան վիրավորեցին զանիկա, վոչ վոք կրնա բուժել այն վերքը բայց քեզմե։ Քու շունչդ զեփյուռի պես քաղցր է, և յերբ քաղցրաբույր շուրթերեդ սկսի փչել անուշ բուրումն, կըծավալի շուրջանակի. իբր թե անուշահոտ յուղի սրվակի բերանը բացվեր, իսկ յերբ շուրթերդ անշարժ դիրք մը առնուն, վարդի նախանձն կը հուզին. աղջիկ մ'եմ, չեմ կարող նկարագրել, բանաստեղծ մը ըլլալու եյի վոր ճիշտ քու պատկերդ ընեյի, և աղջիկ մը այսպիսի պատանի մը չ'պաշտե, զոհ սիրե... ինչպես սիրտս կը բաբախե։ (Պատուհանեն նայելով) Ինչ կտեսնեմ, Լևոնն է... արդյոք կը սխալի՞մ։ (Աչքը սրբելով) Նա ինքն է։ (Ասդին անդին վազելով) Զիս զրկելու կուգա, հասիր, Լևոն, միս մինակ եմ... հասիր անգամ մը փարիմ քեզի։ (Յնորածի պես) Յեկո՛ւր վարդագեղ այտերեդ սիրո պտուղներ քաղեմ (Միտս վազելով)։

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՒՅՆ, ՆԻԿՈ

ՆԻԿՈ — (Վազելով) Փախան թշվա...
ՅԵՐԱՆՅԱԿ — (Առանց Նիկոյին յերեսը նայելու կը պոռա) Ա՛հ, իմ սիրուն Լևոնիկս...

ՆԻԿՈ — Ի՞նչ կընեք, օրիորդ, պիտի խեղդեք զիս։
ՅԵՐԱՆՅԱԿ — Ա՛հ դուն...
ՆԻԿՈ — Ես ի՞նչ հանցանք ունիմ... ես բանեցի, անոնք փախան։
ՅԵՐԱՆՅԱԿ — Ահ, ես եմ, մի՛ բաժնվիր։
ՆԻԿՈ — Թող զիս, երթամ գտնեմ։
ՅԵՐԱՆՅԱԿ — (Միշտ պլլված) Ա՛հ, կուզես զիս թողո՞ւլ։
ՆԻԿՈ — Օրիորդ... Տիկին, փախուցի՞ր։
ՅԵՐԱՆՅԱԿ. — Դուն կատես զիս... դուն, Լեւոն։
ՆԻԿՈ — Խելքդ գլուխդ բեր։
ՅԵՐԱՆՅԱԿ — Դուն Լեւոնն ես, որ ուրիշի կերպարանօք կը ներկայանաս։
ՆԻԿՈ — Ես Նիկոն եմ, ձեր ծառան։
ՅԵՐԱՆՅԱԿ — Զիս խաբել կուզես... պատուհանեն տեսա դուն Լեւոն...
ՆԻԿՈ — Օրիորդ, Լեւոնը չեմ ճանչնար, և ոչ ալ Լեւոնն եմ։
ՅԵՐԱՆՅԱԿ — Լեւոնն ես դուն, Լեւոն...
ՆԻԿՈ — Լեւոնն ես... Լեւոնն ես... աս ի՞նչ փորձանքի հանդիպեցանք, բանի Լեւոն ըսել կ'ուզե զիս... Թող զիս երթամ, գործ ունիմ, օրիորդ, ես չեմ Լեւոնը, սատկի շուն շանորդին ով որ է. ես Լեւոնը չեմ գիտեր։
ՅԵՐԱՆՅԱԿ — Դուն Լեւոնն ես, դուն ինքզինքդ չես ճանչնար։
ՆԻԿՈ — Ըսելիք չմնաց, կարելի չէ որ ես սխալած ըլլամ։
ՅԵՐԱՆՅԱԿ. — Հերիք է, մի տանջեր զի՛ս, քեզի համար կյանքս վտանգի մեջ դրած եմ։ (Պագնելով) Որքան կը փափաքեյի քեզ համբուրել. և դուն զիս չես պագներ։
ՆԻԿՈ — Համբուրեմ, տիկին... համբերե... համբուրե քիչմը, հիմա կը համբերեմ... համբուրեմ ըսել կուզեմ. ես աստնկ բան ըրած չունիմ... քաջալերվե, Նիկո։ (կըհամբուրե) Ահ... (Լեւոնը դրան առջեւ կը տեսնվի)։ Ծունկերս կըդողդղան (Յերանյակ աթոռի վրա կիյնա)։

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՆՈՒՅՆՔ, ԼԵՎՈՆ

ԼԵՎՈՆ — (Վազելով) Ինչ կը տեսնեմ, ո՜վ ուխտադրուժ աղջիկ.. ինձի այնքան գգվանք և հիմա ծառային հետ. ապերախտ ծառա. (Նիկոն կը ճռե) ըրածդ ի՞նչ է

ՆԻԿՈ — Ըրածս... ըրածս... ես ի՞նչ գիտնամ, բան մ'ը կընեմ... ես ծառա մ'եմ, ինչ որ հրամայե օրիորդը, զայն կատարելու պարտավոր եմ.. ինծի կըսե որ դուն Լեւոնն ես... ես Լեւոն չեմ, կըսեմ, անիկա կը պնդե թե ես Լեւոնն եմ. եհ, ըսի, հարկավ ինքը իմեն աղեկ գիտե ով ըլլալս, ինչ ըսեմ, մինչեւ հիմա ինքզինքս Նիկո գիտեյի, սխալած եմ, Լեւոն եմ եղեր... ո՜վ գիտե, ինչ շունշանորդի սիրականին մեկն է աս Լեւոնը, դուք կը ճանչնաք զինքը թերեւս, համբուրե զիս ըսավ. ես, որ մինչեւ հիմա աս բառը շատ քիչ անգամ լսած եմ, գործողությունն ալ տեսա. և դուն կը հարցնես թե ինչ է ըրածս, աղվոր հարցմունք։
ՅԵՐԱՆՅԱԿ — (Սթափելով) Ուր եմ ես... (Լեւոնը տեսնելով) Ահ, Լեւոն դուն... դուն...
ԼԵՎՈՆ — Ես... ես... կարծեմ անհարմար ժամանակին յեկա... ճիշտ այն կետին, որ Նիկոն համբույր կը թափեր այտերուդ։
ՅԵՐԱՆՅԱԿ — Նիկոն .. Նիկոն... ահ, քնացած ժամանակս... թերեւս...
ԼԵՎՈՆ — Ա՛հ, թշվառական... (կըզարնե Նիկոյին, որ կը փախչի)։
ՅԵՐԱՆՅԱԿ — Ի՞նչ է Նիկոյի հանցանքը։
ԼԵՎՈՆ — Դեռ կըհամարձակի՞ս հարցնելու, դռնեն ներս մտած տեսնեմ քեզ կըհամբուրեր, և դուն անխոս...
ՅԵՐԱՆՅԱԿ — Միթե դուն չեյի՞ր, որ կուգայիր։
ԼԵՎՈՆ — Ի՞նչ կըսեք, ես հիմա յեկա։
ՅԵՐԱՆՅԱԿ — Պատուհանեն տեսա որ կ'ուգայիր... չգիտեմ վրաս թմրություն մը յեկավ, աթոռի վրա ինկա... և...
ԼԵՎՈՆ — Նիկոն իմեն առաջ մտած ըլլալուն պահվեցա, որ յելնե վերջը մտնեմ, յերբ տեսա որ յելնելիք չունի, դուռն ալ բաց եր, մտա, և տեսա որ...
ՅԵՐԱՆՅԱԿ — Ներե, ցնորյալ սիրուհվույդ... ուրեմն Նիկոն սխալմամբ (լալով) Թշվառ եմ ես...
ԼԵՎՈՆ — Սրբե արցունքդ, կըներեմ քեզի...
ՅԵՐԱՆՅԱԿ — Բոլոր գիշերը չքնացա .. մեկը չկրցի գտնել որ խրկեյի քեզի իմաց տալու թե գայիր. մես մինակ եյի... և հիմա որ առտու յեղավ...
ԼԵՎՈՆ — Նամակդ առնելուս պես շուտով տնեն յելա պարահան-

դես գացի, հոն ալ քիչ մը նստա, տուն դարձա որ պառկիմ քնանամ... չկրցի քնանալ որ ..

ՅԵՐԱՆՅԱԿ — Ի՞նչ նամակ... յես չգրեցի։

ԼԵՎՈՆ — Դուն ցնորած յես. գրածդ չե՞ս հիշեր. մանավանդ իմացուցած եյիր թե այս առտու կանուխ գամ։

ՅԵՐԵՆՅԱԿ — Կը սխալիս, Լևոն...

ԼԵՎՈՆ — Ի՞նչպես կը սխալիմ, իմ նամակս ալ ընդունած ըլլալդ գրած եյիր։

ՅԵՐԱՆՅԱԿ — Յես նամակ չառի քեզմե... վ՞րու հետ խրկեցիր։

ԼԵՎՈՆ — Մեր ծերուկ Անթառամին հետ. և ինչպես որ ապսպրած եյիր, պատվիրեցի որ խոհանոցին պատուհանեն վար նետե։ Բայց... նստելու աթոռ չունի՞ք հոս։

ՅԵՐԱՆՅԱԿ — Զարմանալի բան... սա խուցին մեջ աթոռ կա, յերթամ բերեմ։ (Յերթալու վրա)։

ԼԵՎՈՆ — Թո՛ղ ինձի յես բերեմ։

ՅԵՐԱՆՅԱԿ — Ի՞նչպես կրնա ըլլալ որ ինձի նամակ գրե և յես ալ պատասխանը խրկեմ... բոլորովին անծանոթ են ինձի այս նամակագրությունները... խոհանոցին մեջ փնտռեմ նայիմ իր նամակը։

(Կ'երթա)

ՏԵՍԻԼ Դ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, վերջը ԼԵՎՈՆ, ՅԵՐԱՆՅԱԿ

ԹԱՓԱՌ. — (Վազելով) Շունչս հատավ վազելեն, այնչափ խայտառակություն... խեղճ Սոֆիս ալ լեռներ կըվազեր, իյնալով յելնելով. տես սա յերկու ցնդած պառավներուն ըրածը մեզի բռնելու համար պարահանդես յեկած են... թե որ իմացվի առնք... ով կըկանչե գիս իր տունը... անպատիվ յեղա (Աթոռի վրա կընստի)։

ԼԵՎՈՆ — (Աթոռ բերելով) Ահ, Յերանյակ, քու սիրույդ համար...

ԹԱՓԱՌ. — Ահ, իմ սիրույս համար... (Փասով կըծեծե) ահ, իմ սիրույս համար .. ուրիշ տեղ մը վորոշենք տեսնվելու համար... առանձին միանք... քեզի կըպատմեմ հորդ ատամնաբուժությունը։ (Միջս ծեծելով) Շատ կը սիրեմ զքեզ... լեզվով չեմ կրնար բացատրել, ուր միայն թե... փառով... թե

որ ինձի համար գրելու ըլլալս... հասցեն այսպես ըլլա. առ Յ. Գ. Կ. Լևոն, Սիրահարյալներու փողոց, թիվ 20.

ԼԵՎՈՆ — Ինչու կը զարնեք, Պարոն։

ԹԱՓԱՌ. — Շատ կը սիրեմ զքեզ...

ՅԵՐԱՆՅԱԿ — Բավ է, բավ, բարբարոս մարդ, չե՞ս ամչնար ուրիշ կնիկներ կը սիրես այդ տարիքիդ մեջ։

ԹԱՓԱՌ. — Դե՞մ կըխոսիս։

ՅԵՐԱՆՅԱԿ — Այո, կըխոսիմ. ասիկա իմ հոգիս է, դուք զայն մեռցնել կ'ուզեք... կըսիրեմ զինքը, ամուսինս է. կ'իմանա՞ք։

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՒՅՆՔ, ՍՈՖԻ

ՍՈՖԻ — Շունչս հատավ վազելեն... քեզ կորուսի... ի՞նչ ընեմ, ո՞ւր պահվիմ։

ԹԱՓԱՌ. — Մի խոսիր, գնա պահվե սա խուցին մեջ։

ԼԵՎՈՆ — կը խնդրեմ, Պ. Թափառնիկոս, լսե աղաչանքս, աղջիկդ ինձի տուր, զինքը յերջանիկ պիտի ընեմ, կ'աղաչեմ, անգութ մ'ըլլար, իր սիրովը կ'այրիմ, կը տոչորիմ։

ԹԱՓԱՌ. — Ինչ որ կուզեք ան ըրեք, կորսվեցեք, աչքս չտեսնե։ (Կընստի աթոռի վրա)։

ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՒՅՆՔ, ԹՈՎՄԱՍ

ԹՈՎՄԱՍ — Վերջապես ձեռք բերի զինքը, բարև, Պարոն։

ԹԱՓԱՌ. — (Աթոռեն յելնելով) Հրամմեցեք Պ. Թովմաս... այսքան կանուխ... յերեկ գիշեր աղվոր զվարճացանք, բավական գինի խմեցինք... յես ալ հիմա արթնցա... գիշերվան հագուստս կը նստիմ։ (Մեկուսի) Կեղծենք։

ԹՈՎՄԱՍ — Ձեզի հետ խոսելու յեկա։

ԹԱՓԱՌ. — Կրնաք խոսիլ... բայց առաջուց ըսեք ինձի, Տիկինին ցավը ինչպե՞ս յեղավ։

ԹՈՎՄԱՍ — Շատ հանգիստ է, ձեզի ալ բարև ըրավ։

ԹԱՓԱՌ. — Վողջ ըլլա, խեղճը վո՞րքան կը տանջվեր։

ԹՈՎՄԱՍ — Ձեզի քանի մը խօսք պիտի զրուցեմ, բայց մի սրդողիք։

ԹԱՓԱՌ. — Սրդողի՞լն ինչ ըսել է, հրամմեցէք խօսեցէք... սուրճ մը բեր, Նիկո։

ԹՈՎՄԱՍ — Դուն սրիկային մէկն ես... դուն անառակին մէկն ես... դուն սինլքորին մէկն ես... դուն բարբարոսին մէկն ես... դուն խարդախ մէկն ես... վերջապէս մարդու կերպարանքով իշուն մէկն ես...

ԹԱՓԱՌ. — Ո՞վ ըսաւ։

ԹՈՎՄԱՍ — (Պոռալով) Ո՞վ կարծեցիր զիս... կինս առնես պարահանդէս տանի՞ս։

ԹԱՓԱՌ. — Հիւանդ էր, ուրախութեան համար տարի։

ԹՈՎՄԱՍ — Զիս կը խաբէք, սրիկաներ, աշխարհի առջև քեզ իբրև սրիկա մէկն ներկայացնելէն յետքը վրէժս ալ պիտի լուծեմ։

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՒՅՆՔ, ՄԱՐԹԱ

ՄԱՐԹԱ — Աստուած փորձանքնիդ տայ։

ԹԱՓԱՌ. — Աս ո՞վ է։

ՄԱՐԹԱ — Տես ով եմ։

ԹԱՓԱՌ. — Պարոնը կարծեմ իմ կինս է։

ՄԱՐԹԱ — Այդպէս է, անիծից ծնունդ. ինչպէս, շատ ապշե՞ր է

ԹԱՓԱՌ. — Ի՞նչ բան։

ՄԱՐԹԱ — Սոխակի պէս կը խօսի՞ր։

ԹԱՓԱՌ — Ո՞վ։

ՄԱՐԹԱ — Տատրակի պէս կընայի, այնպէս չէ՞։

ԹԱՓԱՌ. — Ի՞նչ ըսել կուզեք։

ՄԱՐԹԱ — Ըսել կ'ուզեմ որ սիրամարգի պէս պճնասէր եւ ինչպէ՞ս էր գնդասեղի ցաւը... տակէ շիտակ բանս պիտի չերթանք,

ԹՈՎՄԱՍ — Պատասխան տուր, ո՞ւր կը գտնուի հիմա իմ կինս։

ԹԱՓԱՌ. — Ինձի՞ կը հարցնեք։

ՄԱՐԹԱ — Համբերեցէք, Պարոն Թովմաս, հիմա ամէնն ալ յերև-

վան պիտի գան, նախ և առաջ սա հագուստս փոխեմ (Սոֆին մտած խուցը կը մտնէ)։

ԹԱՓԱՌ. — (Մեկուսի) Ի՞նչպէս պիտի կրնանք ազատիլ։

ՄԱՐԹԱ — (Սոֆին ցուցնելով) Ահա ձեր կինը, նամակ մըն ալ ունի ի ձեռին...

ԹՈՎՄԱՍ — Սատանորդի կին, կը խաբես զիս... ի՞նչ նամակ է անիկա, կարդա՛ մտիկ ընենք։

ՍՈՖԻ — Ներէ, իմ սիրելի ամուսինս, (կը կարդա). «Առ Պ. Հ. Թովմաս Մելքիսեդեկեան։

ԹՈՎՄԱՍ — Ինձի համար է... չըլլա՞ որ առևտրական գաղտնիք մը ըլլա։

ՍՈՖԻ — (Կարդալով).

«Սիրեցյալդ իմ, անցյալ որ յեկեղեցվույն դրան առջին կեցած ինձի սիրո նշաններ կուղղեիր ձեռքովդ... Քովս յեղող մէկ քանի կնիկներ տեսան ու կասկածի գացին, կ՛աղաչեմ ուրիշ անգամ զգուշանաս... Թափառնիկոսին տուն չգտնված ժամանակը...

ՄԱՐԹԱ — (Մեկուսի) Աս ի՞նչ է...

ՍՈՖԻ — (Շարունակելով) առտուներն են... կրնաք գալ ու տեսութիւն ընել ինծ։

ՄԱՐԹԱ

ԹՈՎՄԱՍ — (Մեկուսի) Ով աստուած իմ, ուրկէ գտար այդ նամակը...

ՍՈՖԻ — Ձեր գրպանէն...

ԹԱՓԱՌ. — Դուն սրիկային մէկն ես... դուն անառակին մէկն ես... դուն ծերացած ցնդած ցմդկած պառաւին մէկն ես... կինս ալ անանկ է... զիրար կը սիրեք, անամօթներ, յերիտասարդներէն ամչցէ՛ք։

ԹՈՎՄԱՍ — (Շփոթած) Ցէ՞ս։

ԹԱՓԱՌ. — Եզական դերանուն եզակի Ա. դէմք ուղղական

ՄԱՐԹԱ — Մե՞նք։

ԹԱՓԱՌ. — Եզական դերանուն հոգնակի ուղղական Ա. դէմք։

ԹՈՎՄԱՍ — Անոնքին...

ԹԱՓԱՌ. — Մակբայ։

ԹՈՎՄԱՍ — Սուս...

ԹԱՓԱՌ. — Ածական։

ՏԵՍԻԼ Ը.

ՆՈՅՆՔ, ՆԻԿՈ

ՆԻԿՈ — Ամէնքն ալ հոս են...
ՅԵՐԱՆԵԱԿ — Ա՛հ, իմ սիրուն Լեւոնս...
ՆԻԿՈ — Կը հիշես, օրիորդ, քիչ մը առաջ ես Լեւոն էյի... ինչ ազեկ էր Լեւոնութիւնը։
ԹՈՎՄԱՍ — (Ցած առ Մարթա) Ի՞նչպես եղավ վոր աս նամակը իրենց ձեռքը կ'անցնի.
ԹԱՓԱՌ. — (Ցած առ Սօֆի) Թէ վոր այս նամակը չգտնայիր։
ԼԵՎՈՆ — (Ցած առ Յերանեակ) Անգամ մը քեզի հետ ամուսնանամ։
ՄԱՐԹԱ — (Ցած առ Թովմաս) Ի՞նչ պիտի ընենք։
ՍՕՖԻ — (Ցած առ Թափառնիկոս) Տեսնենք ինչ պիտի վորոշեն։
ԹՈՎՄԱՍ — (Ցած առ Մարթա) Պատիժէս չազատելու համար անուշի կապենք։
ՄԱՐԹԱ — (Ցած առ Թովմաս) Յես ալ այն պիտի ըսէի։
ԹԱՓԱՌ. — (Ցած առ Սօֆի) Անուշութեամբ լմնցնենք աս խաղը։
ԹՈՎՄԱՍ — Ձեք խօսիր...
ԹԱՓԱՌ. — Ի՞նչ պիտի խօսիմ. իմ կինս կ'ըսես։
ԹՈՎՄԱՍ — Հապա դուն վոր իմինս կը սիրես։
ՍՕՖԻ — Յեվ տիկինը, վոր իմ ամուսինս կը սիրէ։
ՄԱՐԹԱ — Յեվ դուն վոր...
ԹԱՓԱՌ. — Դատի ելլալու չենք, վորպեսզի խռովունքը յերևան չելնէ։
ԹՈՎՄԱՍ — Անպատիվ պիտի ըլլանք ամենքնիս ալ։
ՍՕՖԻ — Թող ըլլանք, խռովունք կ'ուզենք մենք...
ՄԱՐԹԱ — Անամօթներ... ինչ խռովունք ունիք խռովունք ունենալու։

ՏԵՍԻԼ Թ.

ՆՈՅՆՔ, ՄԱՐԳԱՐ

ՄԱՐԳԱՐ — Բարև, Պարոնայք և Տիկնայք։
ԹԱՓԱՌ. — Բարի յեկար, Պարոն Մարգար, մեր դատը դուն տես. պարոնը իմ կինս կը սիրէ, յես ալ անորինը կը սիրեմ. խռովունքը վորձէ քով կը մնա։

ՄԱՐԳԱՐ — Դուք արդեն դատը կտրեր էք, կռիվ պետք չէ, հաշտըվեցեք։
ՅԵՐԱՆԵԱԿ — Հապա յես, վոր Լեւոնը կը սիրեմ։
ՄԱՐԹԱ — Պայմանձե։
ՄԱՐԳԱՐ — Ահա յես ալ հրապարակավ կը հայտնեմ միտքս, իմ փափաքս ալ ան է, վոր Յերանեակը Լեւոնի հետը ամուսնանա, և մեծապես շնորհակալ եմ վոր առաջուց իմաց տվավ։
ՅԵՐԱՆԵԱԿ — Պարոն Մարգարի ցուցուցած մարդասիրութենեն գոհ եմ, և ահա կը խոստանամ մինչև վերջին շունչս Լեւոնի հետ ապրիլ։
ՄԱՐԹԱ — Յեվ դուն կը խոստանաս ինծի հավատարիմ մնալ։
ԹԱՓԱՌ. — Այո։
ՄԱՐԹԱ — Այս յեղելութիւնները պիտի մոռցվին... չեղածի պես...
ԹԱՓԱՌ. — Այո. անանկ պիտի ըլլա։
ԹՈՎՄԱՍ — (Առ Սօֆի) Ձեր ակռայի ցավն ալ կ'անցնի՞։
ՍՕՖԻ — Կ'անցնի։
ԹԱՓԱՌ. — Ամենքնիս ալ ուխտենք իրարու հավատարիմ մնալ, զիրար սիրենք և այս գաղտնիքը մեր մեջ պահենք. վորպեսզի պատիժեն չազատի։
ՄԱՐԹԱ — Ահ, վորքան վոր չար ընավորութիւն ունենաս, դարձյալ կը սիրեմ զքեզ (Կը պագնէ Թափառնիկոսը)։ Ասանկ պարագաներու մեջ չեմ կրնար արտասուքս զսպել։ (Լալով) Յերբ կոկսին համբույրները բերնես վազեն, արցունքն ալ աչքես կը հոսի. դուն զիս լավ մը չես ճանչցեր, քեզի համար կը մեռնիմ յես։
ԹՈՎՄԱՍ — (Լալով) Զիս հարտասուս շարժեցիր, իմ սիրուն Սոֆիս... վորքան ժամանակ է վոր շուրթերս այտերուդ դպած չեյին։
ԼԵՎՈՆ — Ա՛հ իմ Յերանեակս։
ՅԵՐԱՆԵԱԿ — Ահ, իմ Լեւոնիկս։
ՆԻԿՈ — Հապա, օրիորդ, վոր զիս Լեւոն ըրիր։
ՄԱՐԹԱ — Աշխատե, աղջիկս, Լեւոնը սիրելու։
ԹՈՎՄԱՍ — Առավոտ յեղավ, յերթանք, Սոֆի.
ԹԱՓԱՌ. — Բարի յեկուր, անուշիկս։
ՄԱՐԹԱ — Ըհ, բերանդ պագնեմ։

ՏԵՍԻԼ Ը.

ՆՈՒՅՆՔ, ՆԻԿՈ

ՆԻԿՈ — Ամէնքն ալ հոս են...
ՅԵՐԱՆՅԱԿ — Ա՜հ, իմ սիրուն Լեւոնս...
ՆԻԿՈ — Կը հիշես, որկորդ, քիչ մը առաջ չես Լեւոն էիր... ի՜նչ աղեկ եր Լեւոնութիւնը։
ԹՈՎՄԱՍ — (Ցած առ Մարթա) Ի՞նչպես չեղաւ վոր ատ նամակը իրենց ձեռքը կ'անցնի։
ԹԱՓԱՌ. — (Ցած առ Սոֆի) Թէ վոր այս նամակը չգտնայինք։
ԼԵՎՈՆ — (Ցած առ Ցերանյակ) Անգամ մը քեզի հետ ամուսնանամ։
ՄԱՐԹԱ — (Ցած առ Թովմաս) Ի՞նչ պիտի ընենք։
ՍՈՖԻ — (Ցած առ Թափառնիկոս) Տեսնենք ինչ պիտի վորոշեն։
ԹՈՎՄԱՍ — (Ցած առ Մարթա) Պատիժէն չազատելու համար անուշի կապենք։
ՄԱՐԹԱ — (Ցած առ Թովմաս) Ցես ալ այն պիտի ըսէի։
ԹԱՓԱՌ. — (Ցած առ Սոֆի) Անուշութեամբ լմցնենք ատ խաղը։
ԹՈՎՄԱՍ — Ձեր խօսքը...
ԹԱՓԱՌ. — Ի՞նչ պիտի խօսիմ. իմ կինս կոխես։
ԹՈՎՄԱՍ — Հապա դուն վոր կինս կը սիրես։
ՍՈՖԻ — Ցեվ տիկինը, վոր իմ ամուսինս կը սիրէ։
ՄԱՐԹԱ — Ցեվ դուն վոր...
ԹԱՓԱՌ. — Դատի չելլալու չենք, վորպեսզի իրաւունքը չերեւան չելնէ։
ԹՈՎՄԱՍ — Անպատիվ պիտի ըլլանք ամեննիս ալ։
ՍՈՖԻ — Թող ըլլանք, իրաւունք կ'ուզենք մենք...
ՄԱՐԹԱ — Անամօթներ... ի՜նչ իրաւունք ունիք իրաւունք ունենալու։

ՏԵՍԻԼ Թ.

ՆՈՒՅՆՔ, ՄԱՐԳԱՐ

ՄԱՐԳԱՐ — Բարեւ, Պարոնայք և Տիկնայք։
ԹԱՓԱՌ. — Բարի չեկար, Պարոն Մարգար, մեր դատը դուն տեսպարոնը իմ կինս կը սիրե, ցես ալ անորինը կը սիրեմ. իրաւունքը վորմէ քով կը մնա։

ՄԱՐԳԱՐ — Դուք աըդեն դատը կորեր եք, կռիվ պետք չե, հաշտըվեցեք։
ՅԵՐԱՆՅԱԿ — Հապա չես, վոր Լեւոնը կը սիրեմ։
ՄԱՐԹԱ — Պաղանձե։
ՄԱՐԳԱՐ — Ահա ցես ալ հրապարակավ կը հայտնեմ միտքս, իմ ամուսնափափաքս ալ ան է, վոր Ցերանյակը Լեւոնի հետը ամուսնանա, և մեծապես շնորհակալ եմ վոր առաջուց իմաց տվավ։
ՅԵՐԱՆՅԱԿ — Պարոն Մարգարի ցուցուցած մարդասիրութենեն գոհ եմ, և ահա կը խոստանամ մինչև վերջին շունչս Լեւոնի հետ ապրիլ։
ՄԱՐԹԱ — Ցեվ դուն կը խոստանա՞ս ինձի հավատարիմ մնալ։
ԹԱՓԱՌ. — Այո։
ՄԱՐԹԱ — Այս չեղելութիւնները պիտի մոռցվին... չեղա՞ծ պես...
ԹԱՓԱՌ. — Այո. անանկ պիտի ըլլա։
ԹՈՎՄԱՍ — (Առ Սոֆի) Ձեր ակռայի ցավն ալ կ'անցնի՞։
ՍՈՖԻ — Կ'անցնի։
ԹԱՓԱՌ. — Ամենքնիս ալ ուխտենք իրարու հավատարիմ մնալ, գիրար սիրենք և այս գաղտնիքը մեր մեջ պահենք. վորպեսզի պատիժէն չազատի։
ՄԱՐԹԱ — Ահ, վորքան վոր չար բնավորութիւն ունենաս, դարձյալ կը սիրեմ զքեզ (Կրպազնե Թափառնիկոսը)։ Աստնկ պարագաներու մեջ չեմ կրնար արտասուքս զսպել։ (Լալով) Ցերբ կոկոին համբույրները բերնես վազել, արցունքն ալ աչքես կը հոսի. դուն գիս լավ մը չես ճանչցեր, քեզի համար կը մեռնիմ ցես։
ԹՈՎՄԱՍ — (Լալով) Ձիս հարստասուս շարժեցիր, իմ սիրուն Սոֆիս... վո՞րքան ժամանակ է վոր շուրթերս այտերուդ դպած չեյին։
ԼԵՎՈՆ — Ա՜հ իմ Ցերանյակս։
ՅԵՐԱՆՅԱԿ — Ահ, իմ Լեւոնիկս։
ՆԻԿՈ — Հապա, որկորդ, վոր գիս Լեւոն ըրիր։
ՄԱՐԹԱ — Աշխատե, աղջիկս, Լեւոնը սիրելու։
ԹՈՎՄԱՍ — Առավոտ եղավ, ցերթանք, Սոֆի.
ԹԱՓԱՌ. — Բոլս չեկուր, անուշիկս։
ՄԱՐԹԱ — Ըհ, բերանդ պագնեմ։

ԹԱՓԱՌ. — Ըհ, լեզուդ խածնեմ։
ՍՈՑԻ — (Մեկուսի) Ինչպես վոր ձեռքս խածավ։
ՄԱՐԹԱ — Ձեռքերդ սիրեմ։
ԹԱՓԱՌ. — Սիրես սիրե, կշտացիր։
ՆԻԿՈ — Ինձմե զատ ամենքն ալ վոտքի վրա յեն։
ԹԱՓԱՌ. — Ի՞նչ կը խնդաք (կ'երգե)

Հոս գյուղոց մ'ե բարոյական,
Կառավարիչն ե ձեր խղճի ձայն,
Թարբերդությունք անոր դասեր,
Վորոնց մենք ենք դասատուներ։
(Ամենքը մեկեն յեղանակավ) Ի՞նչ ծանր պաշտոն,
Մնաք բարյավ, հանդիսականք,
Կաղաչեմք մեզ ալ չմոռնաք,
Ներակրեցեք մեզ նյութապես,
Վոր կերակրիք բարոյապես.
(Ամենքը յերթալու վրա)

ՆԻԿՈ — Հայպա որխորդը, վոր գլխ Լեոն ըրավ։

ՎԵՐՋ

ՅԵՐԿՈՒ ՏԵՐՈՎ ԾԱՌԱ ՄԸ

Կատակերգություն յերկու արարվածով

Ա Ն Ձ Ի Ն Ք

ԱՆՏՈՆ — Վաճառական

ԹԵՈՓԻԼԷ — Սեղանավոր

ՄԱՐԳՐԻՏ — Անտոնի աղջիկն

ՑԵՐՎԱՆԴ — Թեոփիլեյի հորեղբորորդին

ԲԻՐԱԲ — Կոմիկի մայրը

ԿՈՄԻԿ — Ծառա Անտոնի և Թեոփիլեյի

Ա Ն Ձ Ի Ն Ք

ԱՆՏՈՆ — Վաճառական

ԹԵՈՓԻԼԷ — Սեղանավոր

ՄԱՐԳՐԻՏ — Անտոնի աղջիկն

ՅԵՐՎԱՆԴ — Թեոփիլեյի հորեղբորվորդին

ԲԻՐԱԲ — Կոմիկի մայրը

ԿՈՄԻԿ — Ծառա Անտոնի և Թեոփիլեյի

ՅԵՐԿՈՒ ՏԵՐՈՎ ԾԱՌԱ ՄԸ Հ. Հ. Պարոնյանի բոլորովին անտիպ մնացած յերկերեն մին է, որ գտնելու և հրատարակելու անհուն բախտավորությունը կը պարտինք Հրանտ Էֆ. Ասատուրի բարյացակամ գրասիրությանը։ Մեր ձեռնարկած այս դժվար գործը արդեն Հրանտ Էֆ.ի մեզ ընծեռած այնքան գիտակից խորհուրդներուն ու թանկագին աշխատակցությանը շնորհիվ միայն կարելի եղավ ի գլուխ հանել. և մենք հոս հրապարակավ կը հայտնենք իրեն մեր սրտագին շնորհակալությունը։

ՅԵՐԿՈՒ ՏԵՐՈՎ ԾԱՌԱ ՄԸ Պարոնյանի առաջին գործերեն է, քանի որ հեղինակը հազիվ 22 տարեկան էր զայն գրած ատենը և առաջին գործի մը բոլոր անխուսափելի թերությունները՝ անփորձություն, տեսակ մը տարտամություն կը զգացվին անոր մեջ, և կ'երևա այդ պատճառներով է, որ Պարոնյան զայն մեկդի դրած ու հրատարակած չէր։ Բայց մյուս կողմեն այնքան իրական Պարոնյանը կա անոր մեջ իր անակնկալ գյուտերովը, սրամիտ կատակներովը և ամբողջ piece-ին վառվռուն ու կենդանի ընթացքովը, որ ամբողջությունը շատ ներկայանալի ու արժեքավոր յերկ մը յեղած է։

Հետո ուրիշ տեսակետով ալ մեր այս աշխատությունը հրատարակելը ունի իր անհուն նշանակությունը։ Վորովհետև այս առաջին յերկը Պարոնյանի հետզհետե ունեցած արտադրություններուն հետ ուսումնասիրելով ու բաղդատելով է, որ պիտի կարենանք ճշգրտորեն հասկնալ ու թափանցել Պարոնյանի գրականության հետզհետե ստացած ձևափոխությանց ու իր տաղանդին վերջնական հասունության փուլերուն։ Ասոր հաջորդող ՊՌՈՒՅՖՆ ալ արդեն, որ նույնպես անտիպ է և զոր սակայն դժբախտաբար հեղինակը ավարտած չէ և վորուն ձեռագիրը հատակտորային

վիճակի մէջ անցած է մեր ձեռքը, պիտի ճանչցնէ մեզի Պարոնյանի աշխատութեան բուն յեղանակը և թանկագին ուժանակ մը պիտի ըլլայ գրականութեան պատմութեամբ հետաքրքրուողին ձեռքը Պարոնյանի գրելու կերպը ուսումնասիրելու համար։

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐԸ

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Մեծ սրահ մը, յերկու կողմ սենյակներ

ԱՆՏՈՆ, ԿՈՄԻԿ

(Կոմիկը աթոռի մը վրա կը քնանա. Անտոնը սիկառ ի ձեռին սենյակեն կ'ելլէ և Կոմիկը չտեսնալով)

ԱՆՏՈՆ— (Չորս կողմ փնտռելով) *Ո՞ւր գացեր է թշվառականը. բոլոր գործերս յերեսի վրա թողուցի և յերկու ժամե ի վեր է, որ զինքը կը փնտռեմ։* (Մինչ փնտռելով) *Մարդ մը փընտռել ու չգտնալը բավական տանջանք է ինծի համար, բայց համբերութիւնս կը հատնի, ո՜հ.* (ուժգնակի) *Կոմիկ, Կոմիկ, Կոմիկ։*

ԿՈՄԻԿ— (Մեկեն ի մեկ կ'արթննա ու տերը չտեսնար) *Ո՜հ, աստված...* (դողալով) *ինչ դող... ինչ սոսկում... իշու մը ձայն ըլլալու էր, որ այսքան վախ պատճառեց ինծի,* (տերը կը տեսնե) *ինչ կը տեսնեմ տերս... ինքն է...* (Առ Անտոն) *տէ՛ր, կարծեմ թե զիս կանչեցիք, ավասիկ եմ։*

ԱՆՏՈՆ— Ո՞ւր կորսվեր էիր, յերկու ժամե ի վեր քեզ կանչելեն հոգիս բերանս յեկավ։

ԿՈՄԻԿ— (Մեկուսի) *Յեթե քառորդ մըն ալ կանչեր հոգին բերնեն դուրս պիտի յելլեր։* (Բարձր) *Ի՞նչ կ'ուզեք, տէ՛ր. հրամաններուդ պատրաստ եմ։*

ԱՆՏՈՆ— Կուզեմ որ պապանձիս, և աթոռ մը բերես։

ԿՈՄԻԿ— Լավ։

ԱՆՏՈՆ— Տակավին կը խոսի՞ս։

ԿՈՄԻԿ— (Աթոռը կը դնե) *Հրամմե՛, տէր, նստեցե՛ք։ հանգչեցեք, որպես զի հոգինիդ դարձյալ իր տեղը գտնա։*

Ն—(Կը նստի) Արդէն այսօր քիչ մը տկարութիւն ունեցի, այս տկարութեանս վրայ յերկու ժամ շարունակ քեզ փնտռել և պտտիլը բոլորովին տկարացուց զիս։ Ըսէ ուրեմն, ո՞ւր կորսուեր էյիր։

ԿՈՄԻԿ—Կորսուած չէյի, տէր. հոգնութիւն առնելու համար քիչ մը աթոռի վրա նստա. ապահով յեղիք, վոր ձեր ծառան յերբեք չկորսուիր։

ԱՆՏՈՆ—Լավ, զիս փնտռող մը յեղա՞վ։

ԿՈՄԻԿ—Մեր պարտատէրներեն բավական ձեզ փնտռողներ յեղան, բայց յես ամենուն ալ պատասխանեցի. վոմանց քաղաքավարութեամբ և վոմանց անքաղաքավարութեամբ, վոմանց անուշութեամբ և վոմանց խստութեամբ. ամենուն ալ հարցումներուն համեմատ պատասխանելով, յերբեմն մարդկօրեն յերբեմն իշօրեն, վերջապէս առանց ձեր պատիվույն արատ մը բերելու՝ ամենն ալ վռնտեցի. աղեկ չըրի՞, տէր։

ԱՆՏՈՆ—Յես ալ ըլլայի քեզի պէս պիտի ընէյի։ Շատ աղեկ ըրեր ես. կրակ մը բէր աս սիկառս վառեմ։

ԿՈՄԻԿ—Շատ աղեկ։ (Կ'երթա)։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՆՏՈՆ, առանձին

ԱՆՏՈՆ—Թէպէտ և յերբեմն յերբեմն զիս կը բարկացնէ, բայց դարձյալ շատ գոհ եմ իրմէ։ Ճշմարիտը խօսելով ինքզինքս յերջանիկ կը սեպեմ այսպիսի ժրաջան ծառա մը ունենալուս վրա։ Խեղճ Կոմիկ, բոլոր օր իմ յետևէս կը վազէ, կրակ, ջուր և այլն բերելու համար. ի վերա այսր ամենայնի այս պաշտոնը լավ կրթեց զինքը և կը հուսամ, վոր քիչ ժամանակեն յերևելի ծառա մը կրնա ըլլալ։ Ասկեց ի զատ տնտեսական գիտութեան այնքան հմուտ է, վոր անոթութենէ մեռնելու կէտն ալ հասնի, դարձյալ իր յոթն փարա ամսականեն սատակ մը չվատներ. այո, այո, պէտք է վոր իր գովեստը ընեմ։ Հագած հագուստները՝ զորս քսան և հինգ տարի առաջ իմ հարսանյացս գիշերը իրեն շնորհեր էյի՝ այնպէս մաքուր կը պահէ, վոր տասնուվեց տարվան որբորդ մը ան-

գամ չկրնար պահել, և յեթե վողջ մնա, հարյուր տարի ալ կրնա հագնիլ։ Ասոնց ամենը մեկդի թողլով, գանք իր մեկ հատկութեանը, զոր նվազ մարդիկ ունին. իր հավատարմութիւնը կ'ուզեմ ըսել, այո, իր հավատարմութեամբն է, վոր այսքան սիրելի յեղած է ինձի։ Ահա այսպիսի հատկութիւններով զարդարված ծառա մըն է։ Մրջյունի պէս ժրաջան, ճագարի մը պէս մաքուր և շունեն ավելի հավատարիմ։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԿՈՄԻԿ ՅԵՎ ՆՈՒՅՆ

ԿՈՄԻԿ—(Վազելով) Տէր, կրակ չկրցի գտնել. տան մէջ ծակ ծուկ չձգեցի, ամեն տեղ նայեցի, չկա. յեթե ուզեք յերթամ կրակի տեղ պաղ ջուր բերեմ. սառղջարար է։

ԱՆՏՈՆ—Դուն յերթալով ապուշ կը լինիս, տեսած ունի՞ս, վոր ջրով սիկառս վառեն։

ԿՈՄԻԿ—Ջրով սիկառ մարելնին շատ անգամներ տեսեր եմ, բայց վառածնին դժբախտաբար վոչ. աղեկ միտքս կը գա, ձեր կողակիցը հոգին ավանդած գիշերը, աստված վողորմի հոգվույն, տուփ մը լուցկի առեր էյի իր կանթեղը վառելու համար. գործս լմնցնելէս հետո զանոնք աս գրպանիս մէջը դրի. կարծեմ թե հոս են. (կը փնտռէ) վասնզի յես բնավ բան մը կորուսած չունիմ, յեթե ուզեք վառեմ, ահա գտա։

ԱՆՏՈՆ—Թող կենա, Կոմիկ. (լալով) այս լուցկիները սրտիս մէջ նոր վէրքեր կը բանան. (լռություն) յերջանիկ էյի յես կողակցիս հետ. իսկ յերբ զինքը կորուսի, յերջանկութիւնս ալ մեկտեղ կորսվեցավ, և հիմա այսպէս թշվառ... և...

ԿՈՄԻԿ—Մի լար, տէր, պարապ տեղ մի թափեք ձեր արցունքները. հիմա ավելի յերջանիկ էք, ինչու վոր բոլոր օր կ'ուտեք, կ'ըմպեք, կը քնանաք, ասկեց անդին ի՞նչ յերջանկութիւն կ'ուզեք ունենալ. անփույթ յեղէք, անփույթ. անցյալը մտքերնիդ բերելով ապառնիդ մի թշվառացնեք իզուր. անհոգ յեղիր, տէր, յես ամեն բան կարգի կը դնեմ. թե վոր յերթաք քիչ մը քնանաք, աղեկ կ'ընեք։

ԱՆՏՈՆ—Լավ ըսիր, յերթամ քիչ մը քնանամ, վորպես զի տխուր հիշատակները մտքես յելլեն. ժամե մը կը գամ, հոս գտնալու յեմ զքեզ։
ԿՈՄԻԿ – Միշտ հոս պիտի ըլլամ։ (Անտոն կ'երթա, Կոմիկ անոր յետեվեն կ'երթա մինչեվ սենյակին դուռը)։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԹԷՈՓԻԼԷ ՅԵՒ ՆՈՒՅՆ

ԹԷՈՓԻԼԷ—Ահ, յեթե զինքը գտնամ բղիկ բղիկ պիտի ընեմ, ինչ ըսել է, տեր մը ամբողջ որ իր ծառան փնտռելու յելլե ըլլա (Դեպի Կոմիկ կ'երթա)։
ԿՈՄԻԿ—(Յետ կը դառնա ու տիրոջը հետ կը զարնվի) Ա՜հ, գլուխս... ուֆ... դո՞ւք եք, տեր... զի՞ս կանչեցիք, ահավասիկ եմ։
ԹԷՈՓԻԼԷ—Հո՞ս ես. թշվառական. ի՞նչ գործ ունիս հոս։
ԿՈՄԻԿ—Ներեցե՛ք, տե՛ր. ձեր գալստյանը կ'սպասեյի։
ԹԷՈՓԻԼԷ—Տված նամակս տեղը տարի՞ր։
ԿՈՄԻԿ—Այո, գեղեցիկ օրիորդի մը հանձնեցի զայն. յեթե ուրիշ մըն ալ ունիք, տվեք տանիմ։
ԹԷՈՓԻԼԷ—Վո՛չ. պատասխանը առի՞ր։
ԿՈՄԻԿ—Այո, տեր։
ԹԷՈՓԻԼԷ—(Բարկությամբ) Ինչո՞ւ չես տար ուրեմն։
ԿՈՄԻԿ—Տալու բան չկա, տեր. պատասխանը բերնիս մեջն է. ինծի ըսին, վոր նամակավ մը ձեզ պիտոր պատասխանեն։
ԹԷՈՓԻԼԷ—Լավ, թե վոր նամակը բերելու ըլլան, առանց ուշանալու ինծի բեր։
ԿՈՄԻԿ—Շատ աղեկ։
ԹԷՈՓԻԼԷ—Յես յերթամ Մարսիլիայի նամակ գրելու. վասն զի շոգենավը այս իրիկուն կը մեկնի. թե վոր Յերվանդը հոս գալու ըլլա, զուրցե իրեն թե զինքը տեսնել կ'ուզեմ։
ԿՈՄԻԿ—Քանի մը գիշեր է, վոր Պ. Յերվանդը տեսած չեմ։
ԹԷՈՓԻԼԷ—Ի՞նչպես. յերեկ գիշեր հոս չե՞ր։
ԿՈՄԻԿ—Վոչ, տեր։
ԹԷՈՓԻԼԷ—Յերվանդը յերեկ չեկա՞վ։
ԿՈՄԻԿ—Վոչ, տեր։

ԹԷՈՓԻԼԷ—Առջի իրիկուն հո՞ս եր։
ԿՈՄԻԿ—Վոչ, տեր։
ԹԷՈՓԻԼԷ—Բայց ո՞ւր է։
ԿՈՄԻԿ—Վոչ, տեր։
ԹԷՈՓԻԼԷ—Ի՞նչպես վոչ։
ԿՈՄԻԿ—Ո՞ւր ըլլալը կը հարցնեք։
ԹԷՈՓԻԼԷ—Այո։
ԿՈՄԻԿ—Կարծեմ թե... թե... թե...։
ԹԷՈՓԻԼԷ— Թե՛յ կը խմե, ինչ կ'ընե, ըսե համարձակ, մի վախնար։
ԿՈՄԻԿ—Թեյ խմել չէ, տեր. այսինքն օրիորդ Մարգրիտի հետ կ'անցնե իր ժամերը, դուք զինքը նամակատուն կը խրկեք, անիկա շիտակ Մարգրիտի տունը կ'երթա, միշտ անոր հետ կը նստի։
ԹԷՈՓԻԼԷ Ինչ կը նշանակե այս ամենը։
ԿՈՄԻԿ—Այն կը նշանակե, վոր կը սիրե օրիորդ Մարգրիտը։
ԹԷՈՓԻԼԷ—Յերվանդեն այսպիսի լուր մը յերբեք չեյի սպասեր. ինչ է իցե, բայց լավ գիտե՞ս վոր...
ԿՈՄԻԿ—Այսքան կ'ըսեմ, վոր անցյալ շաբաթ զինքը Մարգրիտի բակչացը մեջ տեսի. (մեկուսի) ուր եր թե յես ըլլայի Յերվանդին տեղ. (բարձր) այո, տեր, հիմա կրնաք գտնել։
ԹԷՈՓԻԼԷ—Շատ աղեկ, պետք է, վոր միշտ ինծի իմաց տաս ասանկ բաները. յես յերթամ զինքը տեսնալու, բայց դարձած ժամանակս կ'ուզեմ, վոր քեզ հոս գտնամ, ապա թե վոչ բղիկ բղիկ կ'ընեմ զքեզ (կ'երթա).

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԿՈՄԻԿ, առանձին

Բղիկ բղիկ ընել զիս, աս ալ աղեկ, հիրավի անասունները ինծմե հարյուր հազար անգամ ավելի յերջանիկ են։ Անոնք բոլոր որ կ'աշխատին, իսկ գիշերները կը հանգչին. այլ յես գիշեր ցերեկ շարունակ կ'աշխատիմ, միշտ արթուն. բնավ հանգիստ չունիմ. հազիվ թե մեկ տերս կը քնանա, մյուսը կ'արթննա, մեկը կ'երթա, մյուսը կը գա. յերկուքն ալ մեկզմեկու ներհակ բնություններու տեր. յերկուքին ալ քմացը համեմատ խոսելու պարտավոր եմ. անտանելի վիճակ.

մեկը մխիթարել, մյուսը շողոքորթել. բայց զարմանալին ալ այն է, որ հազիվ հազ կրնամ մայր մը հոգալ։ Թե որ մեկ տեր մը միայն ունենայի, մայրս անոթութենե պիտի մեռներ և այն ատեն... (կը լա)։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՄԱՐԳՐԻՏ ՅԵՎ ՆՈՒՅՆ

ՄԱՐԳՐԻՏ—Կոմիկն է... այո, ինքն է, ինչո՞ւ կը լա արդյոք. Կոմիկ (գլուխը դպչելով), Կոմի՛կ... Կոմի՛կ...։

ԿՈՄԻԿ—Ահ, դո՞ւք եք, օրիորդ։

ՄԱՐԳՐԻՏ—Այո, չես եմ, ի՞նչ ունիս, ինչո՞ւ կուլաս։

ԿՈՄԻԿ—(Լալով) Թշվառությանս վրա կ'ողբամ, տիրուհիս. ի՞նչ ընեմ ծառա մ'եմ. մես մինակ եմ. մխիթարիչ մը չունիմ. ո՜հ, անմխիթար պիտի մեռնիմ։

ՄԱՐԳՐԻՏ—Մի՛ վախնար, չես մեռնիր դու. ես երթամ հայրս խրկեմ որ գա քեզ մխիթարե։

ԿՈՄԻԿ—Չե՛, չե՛, չե՛. չեմ ուզեր։

ՄԱՐԳՐԻՏ—Շատ աղեկ. քիչ մը գնա հոսկից, վասն զի առանձին ըլլալ կը փափաքիմ։

ԿՈՄԻԿ—Լավ, երթամ. (խորը կը պահվրտի)։

ՄԱՐԳՐԻՏ—Ո՞ւր եք, թե Յերվանդը շուտով հոս գար ու խոսակցեինք քիչ մը... ի՞նչ ընեմ, կը սիրեմ զինքը... բայց հայրս տակավին չգիտեր. և ի՞նչ, մի՞թե պիտի բարկանա, երբ գիտնա, որ ես Յերվանդը կը սիրեմ. չեմ հուսար. վասն զի Յերվանդը ազնիվ սիրտ մը ունի և մանավանդ թե անդիի ծայր սեր իմ վրաս, ոտքի ձայն կը լսեմ... ինքն է... ի՞նչ քալված... այո, չեմ խաբվիր... իմ սիրելիս Յերվանդն է... ի՞նչ դեմք... ի՞նչ անուշ նայեցվածք։

ՏԵՍԱՐԱՆ Է.

ՅԵՐՎԱՆԴ ՅԵՎ ՆՈՒՅՆՔ

Յերվանդ հազիվ թե կը զրկե զՄարգրիտ

ԿՈՄԻԿ—Ե... ե... եյ, պարոն, ի՞նչ կ'ընես... ո՞ւր ենք։

ՅԵՐՎԱՆԴ—Ի... ի... ի՞նչ կա։

ԿՈՄԻԿ—Ի՞նչ կը փնտռես հոս... ինչո՞ւ կը վախցնես օրիորդը։

ՅԵՐՎԱՆԴ—Զինքը վախցնելու համար չեկա։

ՄԱՐԳՐԻՏ—Յես բնավ չվախցա։

ԿՈՄԻԿ—Անիրավ. օրիորդը առանձին ըլլալ կը փափաքի և դու չեկեր իր հանգստությունը կը վրդովես. կորի՛ր. . կորիր... կըսեմ։

ՄԱՐԳՐԻՏ—Ո՜հ, աստված...։

ՅԵՐՎԱՆԴ—Ո՞ւր կորսվիմ. ի՞նչ ընեմ, ապուշ ե։

ԿՈՄԻԿ—Օրիորդներու սիրտը գրավելու համար պետք է որ քիչ մը քիթդ բերանդ շտկես և ապա ներկայանաս անոնց. դու ապուշի մեկն ես, և ի՞նչպես կ'ուզես որ օրիորդը քեզ սիրե... ո՜հ, անիծյալ, գնա, գնա չե նե...։

ՅԵՐՎԱՆԴ—Բայց...։

ԿՈՄԻԿ—Բայց մայց չեմ հասկնար, կորի՛ր, կ'ըսեմ քեզի. չե՛թե չկորսվիս, կ'երթամ Մարգրիտի հորը ամեն բան կը պատմեմ։

ՄԱՐԳՐԻՏ—(Առ Յերվանդ) Գնա, գնա, ապուշ է։ (Յերվանդ կ'երթա յերբեմն յերբեմն հետս դառնալով):

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ԿՈՄԻԿ ՅԵՎ ՄԱՐԳՐԻՏ

ԿՈՄԻԿ—(Բարկությամբ) Աղեկ որ շուտով հասա, և ազատեցի զձեզ։ Նայե՛ սա տխրան անպատուհին, որ հոս չեկեր շողոքորթությամբ ձեր ազնիվ սիրտը գրավել կ'ուզե. և մանավանդ թե ձեր հանգստությունը կը վրդովե. վասն զի, ինչպես որ ինձի ըսիք, առանձին ըլլալ կ'ուզեյիք, այնպես չե՞, տիրուհիս։

ՄԱՐԳՐԻՏ—Այո, բայց քեզի չվերաբերյալ բաներու մեջ ինչո՞ւ կը նետվիս։

ԿՈՄԻԿ—Հապա վո՞րի կը վերաբերի. մինչ կը տեսնեմ, որ պատանի մը հոս կը գա և ձեզ սիրել կ'ուզե, ի՞նչպես կ'ուզեք, որ անտարբեր մնամ, յիրրեք չեմ կրնար հանդիսատես լինիլ այսպիսի տեսարանի մը. իբրև ծառա չեմ ուզեր, որ Պ. Յերվանդը հոս գա և ձեզի հետ խոսակցի։ Մի՛ նայիք, որ ծառա մ'եմ, սաանկ բաներու բավական տեղյակ եմ. (մեկուսի) օրիորդը չես կրնամ իրեն սիրելի մը ըլլի. (բարձր) ո՜հ, օր-

որդ. դուք ալ անանկ մէկը պէտք էք սիրելու, որ չեմ կրնար հասկնալ։ Տիրուհի, ձեզի յերկու խօսք ունիմ ըսելու. կ՚ընդունի՞ք չէ նէ ոչ։

ՄԱՐԳՐԻՏ—Շուտ յեղիր, ղուրցն։

ԿՈՄԻԿ—Ինչպէս ըսեմ, քաջալերութիւն պէտք է… անկարելի բան… ա՜ֆ… զգլխցա ասանկ խօսք մը բանալուս վրա… ահ… կ՚զգամ… քաջալերվէ, Կոմիկ… ուֆ… բուֆ…։

ՄԱՐԳՐԻՏ—Ինչո՞ւ այնքան ա՜ֆ… բուֆ… շուտ յեղի՛ր, ըսէ։

ԿՈՄԻԿ—Ջերմ ունիմ, որիորդ, ջերմ…։

ՄԱՐԳՐԻՏ—Ինչո՞ւ բժիշկի մը չես յերթար ուրեմն։

ԿՈՄԻԿ—(Մեկուսի) Աստուած իմ, քաջալերութիւն ունենալու համար բժիշկի՞ յերթալու յեմ. (բարձր) ա՜հ, որիորդ… տիրուհիս… գիտնամ որ չպիտի բարկանաք։

ՄԱՐԳՐԻՏ—Բայց ձանձրացուցիր զիս։

ԿՈՄԻԿ—Չեմ կրնար ըսել որ…

ՄԱՐԳՐԻՏ—Ուրեմն վաղվան ձգէ։

ԿՈՄԻԿ—Ոչ, չէ, համբերեցէք, ըսեմ, ըսելիքս աս է որ կը սի… սի… սի… րե… քեզ…

ՄԱՐԳՐԻՏ—Ո՞վ կը սիրէ։

ԿՈՄԻԿ—(Մեկուսի) Միայն մ գիրը մնաց, ան ալ ըսելուս պես կ՚ըլլա կը սիրե…մ, քիչ մըն ալ համարձակութիւն յեղավ գնաց. (բարձր) որիո՛րդ, որիո՛րդ, կը սիրեմ զքեզ։ (Մեկուսի) Ո՜հ, փրկվեցա, այս մ գիրը շատ քրտնեցուց զիս, վերջապես ըսի, ի՜նչ ուրախութիւն (կը ցատկռտէ)։

ՄԱՐԳՐԻՏ—Ա՞յս էր որ յերկու ժամէ ի վեր չէյիք կրնար արտասանել. յես արդեն գիտեմ, որ զիս կը սիրես ինչպէս որ ծառայի մը պարտքն է իր տիրուհին սիրել. հայտնի բան մ՚է։

ԿՈՄԻԿ—(Մեկուսի) Դարձյալ սխալ հասկցավ։ (Բարձր) Այդպէս սիրել չէ, որիորդ, դուք չհասկցաք, կը սիրեմ զձեզ։

ՄԱՐԳՐԻՏ—Սիրելը քանի՞ տեսակ է։

ԿՈՄԻԿ—Համրած չունիմ, բայց այն սերը… սերը… զոր ունիմ ձեր վրա, միշտ կը տանջէ զիս։ Դուք ալ զիս կը սիրե՞ս։

ՄԱՐԳՐԻՏ—(Քայլ առ քայլ կ՚երթա յերեսն հեռու դառնալով) Անբան։

ԿՈՄԻԿ—(Յետեվեն յերթալով) Որիորդ…։

ՄԱՐԳՐԻՏ—(Կրկին) Անկիրթ։

ԿՈՄԻԿ—(Կրկին) Տիրուհիս…։

ՄԱՐԳՐԻՏ—(Կրկին) Ապուշ։

ԿՈՄԻԿ—(Կրկին) Սիրուհիս…։

ՄԱՐԳՐԻՏ—(Կրկին) Ապերախտ։

ԿՈՄԻԿ—(Կրկին) Ծառա մ՚եմ։

ՄԱՐԳՐԻՏ—Անասուն։ (Կ՚երթա)։

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ԲԻՐԱԲ (Կամաց կամաց գալով), ԿՈՄԻԿ

ԿՈՄԻԿ—Թշվառութիւն թշվառութեան վրա։ Ինչ ըսել է Յերվանդը հոս գա ու իմ տիրուհվոյս հետը խոսի, գրկվի պադվանդը ավլի, և այլն, և այլն։ Ինչո՞ւ ձգեմ որ որիորդ Մարգրիտը ուրիշ մը սիրե, քանի որ յես ողջ եմ։ Ի՞նչ, ծառա լինելուս մարդ չե՞մ աշխարհիս վրա, միթե ծառաները զգացմունք չունի՞ն. միթե որիորդներու վրա սեր չունի՞ն. մանավանդ ինձի պես լուսավորյալ ծառա մը, որ յերկու տարանց կը ծառայե։ Այո, պետք է որ յես Մարգրիտն սիրեմ, և թե որ չհաջողիմ, կ՚երթամ գլուխս կը մեռցնեմ։

ԲԻՐԱԲ—(Խնդալով) Ո՞ւր կ՚երթաս, Կոմիկ։

ԿՈՄԻԿ—Ձգե զիս, միշտ տանջանք, նեղութիւն, վիշտ, ցավ, ամենն ալ իմ վրաս կը թափթփին, աշխարհիս վրայի բոլոր գեշութիւնները իմ բոլորտիքս կը պատեն. ո՜հ, այս կյանքը անտանելի յէ։

ԲԻՐԱԲ (Թեվեն կը բռնե) Ի՞նչ ունիս, զավակս։

ԿՈՄԻԿ Ունեցածներս տակավին հիմա ըսի…։

ԲԻՐԱԲ—Անոնք կ՚անցնին, բան մը չէ։

ԿՈՄԻԿ—Այո, կ՚անցնին, բայց յե՞րբ։ Մինչև որ անոնք անցնին, իս ալ մեկտեղ պիտի անցնեն. ձգե զիս։

ԲԻՐԱԲ—Բայց ինչո՞ւ այնքան այլայլած ես։

ԿՈՄԻԿ—Ի՞նչու չպիտի այլայլիմ. չե՞ս գիտեր, որ գեղեցիկ որիորդներու տեսքը աղքատները կ՚այլայլեն միշտ։

ԲԻՐԱԲ—Հետաքրքրութենես պիտի ճաթիմ…։

ԿՈՄԻԿ—Մի ճաթիր, համբերե, ըսեմ. ահա բոլոր սրտիս մեջ ունեցածներս քեզի կը պատմեմ։ Հարկավ կը ճանչնաք որիորդ

Մարգրիտը, այսինքն իմ տիրոջս աղջիկը, հետևապես իմ տիրուհիս, և վերջապես Յերվանդին սիրուհին. կը սիրեմ զինքը, բայց կը ցավիմ, վոր չպիտի կրնամ նպատակիս հասնիլ։

ԲԻՐԱԲ—Որիորդ Մարգրիտը, տիրոջդ աղջիկը, տիրուհիդ, Յերվանդին սիրուհին, բան մ'ալ չհասկցա, ասոնց չորսը մեկե՞ն սիրել կ'ուզես։

ԿՈՄԻԿ—Վո՛չ, վո՛չ, քեզի ալ խոսք հասկցնելու համար յերկու շաբաթ առաջ պատրաստվելու յե. որիորդ Մարգրիտը կը սիրեմ։

ԲԻՐԱԲ—Անիկա ալ զքեզ կը սիրե՞։

ԿՈՄԻԿ—Վոչ թե միայն չսիրեր, այլ նաև կ'ատե զիս։

ԲԻՐԱԲ—Ուրեմն ինչ ատեն վոր նա քեզի չսիրեր ինչպես...

ԿՈՄԻԿ—Հազարումեկ հարցումներ կ'ընես. զզվացա քեզի խոսք մը ըսելուս, յեթե անիկա ալ զիս սիրելու ըլլար, գործը կը լմննար կ'երթար։ Բայց յես միշտ կը պաշտեմ Մարգրիտը, ինչ ընեմ, կը սիրեմ զինքը։

ԲԻՐԱԲ—Բռնությամբ չես կրնար սիրելի ըլլալ Մարգրիտի, նայե վոր ուրիշ կերպով իր սիրտն գրավես. յես յերթամ, ժամե մը կը գամ։ (Կերթա)։

ԿՈՄԻԿ (Սենեկին դռան կրթնած կը կենա)։

ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ՅԵՐՎԱՆԴ, ՄԱՐԳՐԻՏ (թեւ թևի տված), ԿՈՄԻԿ

ՄԱՐԳՐԻՏ—Ի վերջո դարձյալ մեկզմեկ տեսնալու բարեբախտությունն ունեցանք։

ՅԵՐՎԱՆԴ—Այո՛, բայց ձեր ծառան, այն ապուշը վորչափ անկիրթ է, ձեր առջևը այնքան նախատեց զիս, վոր յեթե քիչ մ'ալ խոսեր, վոտներուս տակ պիտի ճզմեյի զինքը։

ՄԱՐԳՐԻՏ—Այո, շատ անկիրթ է, և զարմանալին ալ հոս է, վոր իր վիճակին չնայիր և զիս սիրել կ'ուզե։

ՅԵՐՎԱՆԴ—(Բարձրաձայն կ'խնդա) Հա՛... հա՛... հա՛...

ԿՈՄԻԿ—Ի՞նչ է այն, դարձյալ յերկուքնիդ մեկտեղ։

ՅԵՐՎԱՆԴ—Այո՛, պարոն։

ԿՈՄԻԿ—Տիրուհիս, չվախնաք լավ մը ծեծեմ զինքը։

ՅԵՐՎԱՆԴ—Ի՞նչ...

ՄԱՐԳՐԻՏ—Կորի՛ր գնա։

ԿՈՄԻԿ—Կորսվի՛մ։ (Ներսեն Կոմիկը կը կանչեն)։

ՄԱՐԳՐԻՏ—Հայրս է։

ԿՈՄԻԿ—Այո՛, ինքն է։

ՆԵՐՍԵՆ—Կոմի՛կ, Կոմի՛կ։

ՅԵՐՎԱՆԴ—Ի՞նչ ընեմ։

ԿՈՄԻԿ—Գետնին տակ անցի՛ր։

ՄԱՐԳՐԻՏ—Փախի՛ր։

ՅԵՐՎԱՆԴ—Համբույր մը։

ՆԵՐՍԵՆ—Կոմի՛կ, Կոմի՛կ։

ԿՈՄԻԿ—Տե՛ր, տե՛ր։

ՄԱՐԳՐԻՏ—(Առ Յերվանդ) Գնա։

ՅԵՐՎԱՆԴ—Յեկուր, մեկզմեկ գրկենք։

ՄԱՐԳՐԻՏ—Ատենը չե... գնա՛։

ԿՈՄԻԿ—Հարմար ատենն է. յես ալ հոս եմ, գրկվի՛նք, պագըվի՛նք։

ՆԵՐՍԵՆ—Կոմիկ։

ԿՈՄԻԿ—Տեր։

ՅԵՐՎԱՆԴ—Յերթամ։ (Կ'երթա)։

ՄԱՐԳՐԻՏ—Գնա՛։

ՆԵՐՍԵՆ—Կոմի՛կ։

ԿՈՄԻԿ—(Դուռը կը բանա) Տեր, ավասիկ եմ (Կ'երթա)։

ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

ԱՆՏՈՆ, ՄԱՐԳՐԻՏ

ԱՆՏՈՆ—Դո՛ւ յես, Մարգրիտ, ի՞նչ կ'ընես հոս։

ՄԱՐԳՐԻՏ—Առավոտնե ի վեր խուցիս մեջ նստելեն ձանձրացա, քիչ մը դուրս յելա, վոր զվարճանամ։

ԱՆՏՈՆ—Շատ աղեկ, Կոմիկը ո՞ւր գացեր է։

ՄԱՐԳՐԻՏ—Չգիտեմ, բայց այն Կոմիկը... այն կոպիտը...

ԱՆՏՈՆ—Ի՞նչ է։

ՄԱՐԳՐԻՏ—Շատ ապուշ է. կամակոր է, ինչ վոր ըսեմ դեմ կը կենա, ամեն բանի կը խառնվի, յերբեմն, յերբեմն ալ անանկ պատասխաններ կը տա, վոր կը վախցնե զիս. արջու պես կը խոսի, իշու պես կը պոռա։ Շատ կը վախնամ իրմե։

ԱՆՏՈՆ—Ձե, չեմ հավտար այդ խոսքերուդ, չեմ հուսար, վոր

Կոմիկը այնչափ գազանաբար ըլլի. շատ աղեկ ծառա մ'է, մանավանդ թե սրամիտ է, բայց դուք ինչու համար իրմե այսքան դժգոհ էք:

ՄԱՐԳՐԻՏ—Հայր իմ, ձեր առջևը վոչխարի մը պես է. բայց յերբ դուք կ'երթաք, գայլի կերպարանք կ'առնե: Անցած օրը խեղճ մայրը յեկեր էր զինքը տեսնալու, անանկ գազանաբար վարվեցավ հետը, վոր խեղճ մայրը սկսավ լալով վող-բալ: Անոգուտ մարդ մ'է, իրեն ալ օգուտ մը չունի, վերջապես այլանդակ մեկն է, և թե վոր տանեն չերթա, մեր պատիվն ալ պիտի արատե:

ԱՆՏՈՆ—Մի վախնար, աղջիկս, իր գործերը ծանոթ են ինձի և չեմ հուսար, վոր այնչափ վատ ըլլա, վորչափ վոր դուք կ'ըսեք: Շատ կը սիրեմ զինքը և կ'ուզեմ ինձի փեսա ընել:

ՄԱՐԳՐԻՏ—Ի՞նչ կը լսեմ:

ԱՆՏՈՆ—Շատ խելացի ծառա մ'է և քեզի հարմար ամուսին մը, այնպես չէ՞:

ՄԱՐԳՐԻՏ—Հայր իմ, ի՞նչպես կրնա ըլլել, վոր յես այն կոպիտին հետ...

ԱՆՏՈՆ—Կոպիտին հետ չէ, Կոմիկին հետ կ'ըսեմ:

ՄԱՐԳՐԻՏ—Անկարելի բան մ'է ինձի համար, յես Ցերվանդը կը սիրեմ:

ԱՆՏՈՆ—Ա՞յս էր ուրեմն Կոմիկեն դժգոհ ըլլալուդ պատճառը...

ՄԱՐԳՐԻՏ—Չե, հայր իմ, չէ:

ԱՆՏՈՆ—Հասկցա, ասոր վրա յերկարորեն կը խոսինք, յերթանք ճաշելու (կ'երթան):

ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

ՑԵՐՎԱՆԴ առանձին

Չկրցի գոնե րոպե մը իրեն հետ խոսիլ, ինչ դժբախտություն, կարծեմ թե հայրը չհավանիր, վոր իր աղջիկը սիրեմ. հայր մը, վոր իր աղջկանը զվարճությանը կը նախանձի, աղեկ վոր յես հայր չունիմ: Մարգրիտ... ինչ անուշ անուն, կ'սիրեմ այս անունը, ինչ ընեմ, բայց Կոմիկը, (Կոմիկ մորը հետ կը մտնե) այն գազանը, անասունը, էշը, ավանակը...

ՏԵՍԱՐԱՆ ԺԳ.

ԿՈՄԻԿ, ԲԻՐԱԲ, ՑԵՐՎԱՆԴ

ԿՈՄԻԿ—Պարոն, վո՞րի համար են այն տխողոսները:

ՑԵՐՎԱՆԴ—Ձեզի համար չէ:

ԲԻՐԱԲ—Ուտվելու բա՞ն է, ինչ է. փորս վորչափ անոթի է:

ԿՈՄԻԿ—Պարոն, յեթե կ'ուզես օրիորդ Մարգրիտը սիրել, պետք է վոր զիս մեծարեք, վորպեսզի ձեզի հանգիստ թողում:

ՑԵՐՎԱՆԴ—(Գետնեն բարեվելով զԿոմիկ) Այո, միշտ կը մեծարեմ զձեզ (մեկուսի) օրիորդ մը սիրելու համար, ավանակ մը մեծարելու յեմ:

ԿՈՄԻԿ—(Մեկուսի) Մարգրիտի անունը լսելուն պես ինչպես կակուղցավ. այո, բայց Մարգրիտն յես ալ կը սիրեմ:

ԲԻՐԱԲ—(Յուրովի) Զավակս այս աստիճան հասեր է:

ՑԵՐՎԱՆԴ—Ի՞նչ ազնիվ սիրտ ունիք, Պարոն Կոմիկ, ինչո՞վ կրնամ ձեզի ծառայություն մը ընել, հրամայեցեք, վոր կատարեմ:

ԿՈՄԻԿ—Ինձի մեծ ծառայություն մը ըրած կ'ըլլաք, յեթե քիչ մը մեզ մինակ ձգեյիք:

ՑԵՐՎԱՆԴ—Շատ աղեկ (կը բարեվե կ'երթա)

ՏԵՍԱՐԱՆ ԺԴ.

ԿՈՄԻԿ և ԲԻՐԱԲ

ԿՈՄԻԿ—Տեսա՞ր, մայրս, ինչպես պատվել կուտամ ինքզինքս:

ԲԻՐԱԲ—Յես ալ այն կը դիտեյի, գիտնալ կ'ուզեմ թե ինչու համար այսքան պատիվ կ'ընե քեզի:

ԿՈՄԻԿ—Վասն զի պատվո արժանի յեմ, այս պարոնը, վոր գնաց, միշտ հոս կը գա ու օրիորդ Մարգրիտն կը փնտռե, հետը խոսակցելու համար. բայց յես հանդարտ չեմ թողուր զիրենք, քանզի յես ալ կը սիրեմ օրիորդ Մարգրիտը և իրավունք ալ ունիմ, վասն զի իմ տիրուհիս է անիկա: Այս խոսքերը մեկդի թողունք և մեր տունը յերթանք, ուտենք, ըմպենք, զվարճանանք, ի՞նչ կա ուտելիք:

ԲԻՐԱԲ - Մեր տունը ուտելիք հացէն ուրիշ գրեթէ բան մ'ալ չունինք. վաղը իրիկուն կ'ուտենք։

ԿՈՄԻԿ—Աղեկ գաղափար, թէ որ վաղը մեռնինք. ինչպէ՞ս պիտի ուտենք, չէ, չէ, յերթամ տերերուս տուներեն ուտելիք առնեմ ու յերթանք ուտենք (թեւ թեւի կը տան կ'երթան)։

ՎԵՐՋ Ա. ԱՐԱՐՎԱԾՈՒՅՆ

ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԿՈՄԻԿ, ԲԻՐԱԲ

*ԿՈՄԻԿ—(*Կը բարեւեն զիրար*) Յեկո՜ր, յեկո՜ր։*

ԲԻՐԱԲ—Հանգիստ թող զիս։

ԿՈՄԻԿ—Բայց յեկո՜ւր նստինք, որ կերածնիս մարսեցնենք։

ԲԻՐԱԲ—Զգէ՛ որ նստիմ։

*ԿՈՄԻԿ—(*Աթոռի մը վրայ կը նստեցնէ մայրը*) Մայրիկ, կենացս մէջ ասանկ ուրախ գիշեր մը անցուցած չեյի։*

ԲԻՐԱԲ—Դեմքերնուդ վրա կը փայլի ունեցած ուրախութիւննիդ, բայց, թէ որ տերդ գա ու քեզի այսպես զվարթ տեսնէ, ի՞նչ կ'ըսէ։

ԿՈՄԻԿ—Վո՞ր տերս։

ԲԻՐԱԲ—Քանի՞ տեր ունիս։

ԿՈՄԻԿ—Յերկու, յերկու։

ԲԻՐԱԲ—Տարօրինակ բան մ'ալ այս է։

ԿՈՄԻԿ—Կը սխալիք, մայրիկ. յես մարդ տեսեր եմ, որ տասը ծառա ունի, յես որ յերկու տեր ունիմ, տարօրինա՞կ բան է, չէ, չէ...։

ԲԻՐԱԲ—Յեթէ իմանան քու տերերդ, որ յերկու զատ-զատ մարդիկներու կը ծառայես, ի՞նչ կ'ըսեն։

ԿՈՄԻԿ—Յես հիրավի յերկու տեր ունիմ, բայց թէ որ յերկուքը մեկզմեկու հետ խառնեմ, հազիվ թէ ամբողջ տեր մը կըրնամ կազմել։

ԲԻՐԱԲ—Շատո՞նց ի վեր է, որ յերկու տեր ունիս։

ԿՈՄԻԿ—Այո, մեկը շատ հին է, պապես մնացած. իսկ մյուսը նոր, և Մարգրիտի հայրն է։

ԲԻՐԱԲ — Խելքս չհասնիր. բայց...

ԿՈՄԻԿ — Մի վախնար, մայրիկ. անանկ մեկ վարպետությամբ մը կը ծառայեմ, որ ոչ մեկը և ոչ միւսը կրնան բան մը հասկնալ. նայե, ինչ կ'ընեմ. մեկը կը քնացնեմ, միւսը կ'արթնցնեմ. մեկուն այո կ'ըսեմ, և միւսին՝ ո՛չ. վերջապես չեմ ձգեր անանկ ժամ մը, հորում յերկուքն ալ գլխ կանչեն. բայց ինչու համար յերկարօրեն ասոնց վրայօքը խոսիլ, գանք մեր կերակուրներուն վրա: Ի՞նչ անուշեղեններ եղին որ կերանք, թագուհիներու արժանի խմորեղեններ, ո՜հ, յերբեք չպիտի մոռնամ հավկիթով շինված շաքարեղենները, որոնք բերնիս մեջ կարծես թե սառի պես կը հալեյին. բայց այն գինին վորչափ ուրախ կ'ընե յեղեր մարդս. յեթե հարուստ մեկն ըլլայի, զվարթ ըլլելու համար, ամեն օր առտուընե մինչև իրիկուն գինի կը խմեյի: Այս Պուտոյի գինին մարդս կը քաջալերե գիտե՞ք: Չեմ գիտեր, բայց գինի չխմած ինքզինքս հիմակվան պես քաջասիրտ չեյի գտնար. (Թեոֆիլե կը մտնե) ինչ ցնծություն. (ուժգնակի) ինչ ուրախություն. յեթե այս միջոցին որիորդ Մարգրիտը դեմս յելլե, իսկույն վիզը կը պլլեմ, համբույրներ կ'առնում իր վարդակարմիր այտերեն (տերը կը տեսնե) և... և... և...

ԲԻՐԱԲ — Ինչո՞ւ չես շարունակեր:

ԿՈՄԻԿ — Քաջալերությունս կորսուի:

ԲԻՐԱԲ — Ի՞նչ է:

ԿՈՄԻԿ — Լաւ:

ԲԻՐԱԲ — Ըսե, ըսե:

ԿՈՄԻԿ — Տերս է, տերս է:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԹԵՈՖԻԼԵ ՅԵՎ ՆՈՒՅՆՔ

ԹԵՈՖԻԼԵ — Այս վո՞րքան ուրախ կը տեսնեմ դքեզ, Կոմիկ:

ԿՈՄԻԿ — Տե... տե.. տե... ր:

ԲԻՐԱԲ — Անանկ խոժոռադեմ մեկն է, որ զավակս վախցուց, և լեզուն կորուց:

ԹԵՈՖԻԼԵ — (Բարկությամբ) Ի՞նչ կա, ինչո՞ւ պապանձեր ես:

ԿՈՄԻԿ — Տե... տեր... պա... պա... պատիվ ունիմ ձեզի ներկայացնելու իմ մեկ հա... հա... հատիկ մա... մա... մայրս:

ԹԵՈՖԻԼԵ — Տիկին, ձեր զավակն է այս:

ԲԻՐԱԲ — Այո, պարոն:

ԹԵՈՖԻԼԵ Բայց քեզի չնմանիր:

ԲԻՐԱԲ — Ոչ, իրեն կը նմանի:

ԹԵՈՖԻԼԵ — Ինչո՞ւ չես պատասխաներ:

ԲԻՐԱԲ — Վասն զի կարողություն չունի:

ԿՈՄԻԿ — Տեր, պատասխանելու բան մը չկա:

ԹԵՈՖԻԼԵ — Քեզի կը հարցնեմ, թե ինչո՞ւ այնչափ այլայլած ես, պատճառը ըսե:

ԿՈՄԻԿ — Պատճառը այն է, որ ուրիշ անգամներ յերբ գլխ կանչելու ըլլայիք, իսկույն կը պատրաստվեյի ձեզի պատասխանելու. բայց այս անգամ հանպատրաստից դիմացս յելաք, և ըսելիքս մոռցա:

ԹԵՈՖԻԼԵ — Այսքան վախկո՞տ ես:

ԿՈՄԻԿ — Ձեր կերպարանքը չգիտեմ թե ինչու համար այնչափ վախ տուավ ինձի:

ԲԻՐԱԲ — (Մեկուսի) Թե որ արջ մը ըլլար, զավակս այսքան չեր վախնար:

ԹԵՈՖԻԼԵ — Չեմ ուզեր, որ դիմացս յելած ժամանակդ ասանկ տեսնամ քեզի, կ'ուզեմ որ համարձակ ըլլաս և ամեն հարցումներուս շուտով պատասխանես, ապա թե ոչ կը վռնտեմ դքեզ:

ԿՈՄԻԿ — Չե... չե, տեր, միշտ համարձակությամբ պիտի պատասխանեմ:

ԹԵՈՖԻԼԵ — Յերվանդը տեսա՞ր:

ԿՈՄԻԿ Այո, տեր:

ԹԵՈՖԻԼԵ — Ո՞ւր:

ԿՈՄԻԿ — Ի գոգն Մարգրիտի:

ԹԵՈՖԻԼԵ — Խեղճ տղա. բոլոր իր ստացվածքը վտանգի մեջ կը դնե Մարգրիտի համար. շա՞տ կը սիրե Մարգրիտը:

ԿՈՄԻԿ — Ի՞նչ կ'ըսեք, տեր, Մարգրիտի վրա ունեցած սերը այնպիսի սաստկությամբ բորբոքած է իր սրտին մեջ, զոր մարելը անհնար է:

ԲԻՐԱԲ — Այո, զավակս իրավունք ունի. վասն զի մենք խմելու անգամ ջուր չենք կրնար գտնել:

ԿՈՄԻԿ—Դո՞ւ ինչ կը ծախես։
ԹԵՈՖԻԼԵ—Յես ալ գիտեմ ասանկ ըլլալը, բայց ի՞նչ ընելու յեմ զէնքը սիրո ճիրաններեն ազատելու համար. վասն զի կը սիրեմ զէնքը, յեղբօրորդիս ե. մինչդեռ յեղբայրս հոգին ավանդելու վրա յեր, իր դողդոջուն ձեռքերովը զիս գրկեց ու ըսավ, թե ահա քեզի կը թողում իմ Յերվանդս, յես ալ յերդում տվի, վոր մինչև վոր մեռնիմ Յերվանդին վրա հոգ տանիմ. բայց ինչ ընելու յեմ այսպիսի պարագայի մը մեջ։ Ի՞նչ խելք կը տաս ինձի, Կոմիկ։
ԲԻՐԱԲ—(Մեկուսի) Զավակս խելք տալու ալ սկսեր ե։ Աստված հետն ըլլա։
ԿՈՄԻԿ—Ի՞նչ խելք կրնամ տալ, մինչև վոր Յերվանդի սրտին մեջ ունեցած սերը իմ սրտիս մեջ չփոխադրենք, անկարելի բան ե, վոր կարենանք Յերվանդը ազատել։
ԹԵՈՖԻԼԵ—Ի՞նչ ըսել կ'ուզես։
ԿՈՄԻԿ—Ձեզի հավատարիմ ըլլալս հայտնելու համար, ինչ ընեմ, յես պիտի ստիպվիմ Մարգրիտն սիրել, վորպես զի Յերվանդը ազատի։ Յեվ այս բանիս համար ժամ առաջ ձեռնամուխ ըլլալու յենք, վասն զի Յերվանդը քանի մը շաբաթեն կրնա գերեզման իջնալ։
ԹԵՈՖԻԼԵ—Ի՞նչ կ'ըսես։
ԿՈՄԻԿ—Այո, տեր. յես շատ ջանացի Յերվանդը համոզելու, իսկ նա Մարգրիտը հիշելուն պես խելքը կը կորսնցնե և...
ԹԵՈՖԻԼԵ—Ուրեմն կարելի յեղածին չափ կ'աշխատիմ յես զէնքը Մարգրիտի գրկեն հափշտակելու։ (Բարկությամբ) Յերթամ զէնքը առնեմ ու տանս մեջ բանտարկեմ, Մարգրիտն ալ խայտառակ ընեմ... բայց... անգթություն մըն ե... վորքան անագորույն մեկը ըլլալու յե, վոր կարենա յերկու փափկասնունդ յեակներու հետ ասանկ գազանաբար վարվիլ։ Չե... չե, յերթամ Պ. Անտոնի նամակ մը գրեմ և հասկըցնեմ իրեն ամեն բան. անիկա ալ իր կողմեն պետք յեղած տնօրինությունները կատարե, և ասանկով կրնանք Յերվանդը ազատել. մնաք բարով, տիկին. դուն ալ հոս սպասե, վոր նամակը առնես տանիս։ (Կ'երթա)։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՆՏՈՆ, ԲԻՐԱԲ, ԿՈՄԻԿ

Անտոն փայտի մը կրթնելով կամաց կամաց կը գա

ԿՈՄԻԿ—Ան մյուսն ալ։
ԲԻՐԱԲ—Ա՞յս ե մյուս տերդ։
ԿՈՄԻԿ—Այո։
ԲԻՐԱԲ—Յերկուքն ալ մեկզմեկե ցած։
ԿՈՄԻԿ—Չե, ասիկա մյուսեն բարձր ե։
ԲԻՐԱԲ—Յես յերթամ, ինչո՞ւ իս սպասեցնել կը տաս, կը վախնամ աս մարդեն։
ԿՈՄԻԿ—Կայնե, ասոր ալ ներկայացնեմ զքեզ։
ԱՆՏՈՆ—Միշտ անհանգիստ, միշտ հիվանդ. ինչ պիտի ըլլի վիճակս։ Հո՞ս ես, Կոմիկ։
ԿՈՄԻԿ—Այո, տեր։
ԱՆՏՈՆ—(Կը նստի) Անկողինեն հիմա յելա. շատ տկար եմ. չգիտեմ թե պատճառը ինչ ե։ Լուր մը ունի՞ս։
ԿՈՄԻԿ—Վոչ լուր ունիմ և վոչ մուր, միայն մայր մը ունիմ, վոր պատիվ հանձին կը համարիմ զայն ներկայացնելու ձեր մեծությանդ։
ԲԻՐԱԲ—Բարի լույս, պարոն։
ԱՆՏՈՆ—Աստուծո բարին, տիկին. ինչպե՞ս եք։
ԲԻՐԱԲ—(Առ Կոմիկ) Ի՞նչ ըսեմ։
ԿՈՄԻԿ—(Բարկությամբ) Աղեկ եմ, ըսե՛։
ԲԻՐԱԲ—Աղեկ եմ։
ԿՈՄԻԿ—Ո՛չ, այսչափ տարիներե ի վեր միայն բարի լույս մը սորվեր ես. յես ալ ամեն տեղ քեզ կը գովեմ, ըսելով թե իմ մայրս ուսումնական ե, ճարտասան ե, և դուն...
ԲԻՐԱԲ—Յերկար կ'ընես, Կոմիկ, ահա ըսի վոր աղեկ եմ։
ԱՆՏՈՆ—(Առ Բիրաբ) Ի՞նչ կը խոսիք մեկզմեկու հետ։
ԲԻՐԱԲ—(Առ Կոմիկ) Ի՞նչ ըսեմ։
ԿՈՄԻԿ—Տեր, լուսահոգի հորս համար կը խոսինք։
ԱՆՏՈՆ—Աղեկ ատեն գտեր եք։ Քիչ մը առաջ Մարգրիտի հետ եյի և քու վրայով շատ գանգատներ կ'ըներ. կրնա՞ս ըսել ինձի պատճառը։

ԿՈՄԻԿ—(Մեկուսի) Մի՛շտ պատճառ կը հարցնէ: (Բարձր) Պատճառը այն է, որ չեմ ձգեր զինքը անծանօթ յերիտասարդներու հետ խօսակցի:
ԱՆՏՈՆ—Որո՞ւ հետ կը խօսակցի:
ԲԻՐԱԲ—(Առ Կոմիկ) Յես յերթամ:
ԿՈՄԻԿ—(Առ Բիրաբ) Կայնէ:
ԱՆՏՈՆ—Բայց ի՞նչ յերկար խօսք է, որ լմննալիք չունի, կը բարկացնեք զիս, առաջ իմ հարցումներուս պատասխան տուր և վերջը խօսէ մօրդ հետ:
ԲԻՐԱԲ—(Առ Կոմիկ) Յերթամ, յերթամ:
ԿՈՄԻԿ—Լաւ:
ԱՆՏՈՆ—Զըսե՞ս, որո՞ւ հետ կը խօսի:
ԿՈՄԻԿ—Յերվանդին հետ, շատ կը սիրէ Յերվանդը. միշտ անոր վրա կը խորհի, անոր վրա կը խօսի. գրեթէ անոր համար կ'ապրի, յեկո՛ւ տես որ Յերվանդը չսիրեր զինքը:
ԱՆՏՈՆ—Յերվանդը չսիրե՞ր Մարգրիտը:
ԿՈՄԻԿ—Ոչ, մանաւանդ թէ կ'ատէ:
ԱՆՏՈՆ—Ուրեմն ճա՛ր մը մտածելու յենք Մարգրիտը ազատելու համար:
ԿՈՄԻԿ—Գիշեր ցորեկ մտածմունքս այն է. բայց բան մը չկրցի գտնալ: Դուք որ իր հայրն եք, Մարգրիտը մեկուսի առնելու յեք, և իրեն խրատ տալու յեք, որ այսպիսի աղայական զվարճութիւններէն յետ քաշվի. իսկ յեթէ մեկը սիրել կ'ուզէ, ահա յես պատրաստ եմ. քանի որ Յերվանդը չսիրեր զինքը, ձեր աղջիկը թշվառութեան վիհը կ'իյնա և կը տկարանա օր քան զօր. վասն զի, ինչպես որ կ'ըսեյին նախնիք, սերը յերկու կողմեն ըլլալու է: Ահա իմ խորհածս և գտածս:
ԱՆՏՈՆ—Բայց Մարգրիտը կուզե՞ քեզ սիրել:
ԿՈՄԻԿ—Ինչո՞ւ համար չպիտի ուզէ: Յես մարդ չե՞մ:
ԱՆՏՈՆ—Դու ալ մարդ ես. բայց...
ԿՈՄԻԿ—Տէր, յես ձեր աղջկանը բարութիւն մը ընելու համար հանձն կ'առնում այսպիսի ծանր պաշտօն մը. յեթէ չեք ընդունիր... դուք գիտեք...:
ԱՆՏՈՆ—Ինչպե՞ս կրնա ըլլալ որ Յերվանդը իմ աղջիկս չսիրէ. անցյալ օր զինքը տեսի և այնչափ քաղաքավարութեամբ

վարվեցավ հետս, ինչպես որ ծառա մը կ'ընէ իր տիրոջը:
ԿՈՄԻԿ—Ձեզի հետ քաղաքավարութեամբ վարվիլը յերբեք չարգելուր, որ ձեր աղջիկը ատէ:
ԱՆՏՈՆ—Ուրեմն բան մը խորհինք որ...
ԲԻՐԱԲ—Յես ալ կը խորհիմ քիչ մը:
ԿՈՄԻԿ—Բարեկամներուս ալ կ'ըսեմ, թող անոնք ալ քիչ մը մտածեն:
ԱՆՏՈՆ—Այո՛, (Առ Կոմիկ) դուն գնա Յերվանդը ինծի կանչէ:
ԿՈՄԻԿ—Շատ աղեկ, տէր (Կ'երթա):
ԱՆՏՈՆ—Դու ալ գնա Մարգրիտը կանչելու:
ԲԻՐԱԲ—Լաւ. ծառա յեմ:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԱՆՏՈՆ

ԱՆՏՈՆ—Տարօրինակ բաներ, Մարգրիտը իր հոգին կուտա Յերվանդի համար, և Յերվանդը իր ատելութիւնները Մարգրիտի համար, անհաւատալի դեպք: Բանի մեջ բան կա: Ինչ վոր ըլլա հարկավ յետքեն պիտի հասու ըլլամ: Հիմա յերկուքն ալ կը գան և կը խօսիմ իրենց հետ. ահա Յերվանդը կը գա:

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՅԵՐՎԱՆԴ ՅԵՎ ՆՈՒՅՆ

ՅԵՐՎԱՆԴ—Ծառա յեմ, տէ՛ր:
ԱՆՏՈՆ—Շատ կը բաղձայի ձեզի հետ առանձին տեսութիւն մը ընելու:
ՅԵՐՎԱՆԴ—Շնորհակալ եմ:
ԱՆՏՈՆ—Նախ ձեզի բան մը պիտի առաջարկեմ, որուն ոչ չպիտի ըսեք:
ՅԵՐՎԱՆԴ—(Մեկուսի) Արդյոք Մարգրի՞տը ձեռքես առնել պիտի: (Բարձր) Տէր, խօսեցէ՛ք:
ԱՆՏՈՆ—Ընտանիքի մը յերջանկութիւնը պիտի խօսվի, յեթէ առաջարկելիքս չընդունիք: Իմ աղջիկս Մարգրիտը...
ՅԵՐՎԱՆԴ—(Մեկուսի) Յես գիտեյի որ Նորա համար պիտի խօսի, ի՞նչ պիտի ըսե արդյոք:

ԱՆՏՈՆ — Գիտեք որ ձեր վրայ սատանիկ մեր ձգած ըլլալուն ըրածը չգիտեր, և դուք, պարոն, կը մերժեք յուր սերը.
ՅԵՐՎԱՆԴ — Ցե՞ս, վո՞չ յերբեք, ի բոլոր սրտե կը սիրեմ զինքը։
ԱՆՏՈՆ — Բայց Կոմիկը ինձի ըսավ, որ դուք չեք սիրեր զինքը։
ՅԵՐՎԱՆԴ — Խաբեր է ձեզ. այն ձեր ծառան Մարգրիտը ինձի հետ տեսնալուն պես աչքուծ կը կարի և չթողուր որ խոսակցինք. կը սիրեմ Մարգրիտը և սիրելին չպիտի դադրիմ։
ԱՆՏՈՆ — Կոմիկը սատանի բաներ ըներ, ընալ չելի հուսար։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՄԱՐԳՐԻՏ ՅԵՎ ՆՈՒՅՆՔ

ՄԱՐԳՐԻՏ — (Հօրը ձեռքը պագնելով) Հա՛յր։
ՅԵՐՎԱՆԴ — (Մարգրիտի ձեռքը պագնելով) Օրիորդ։
ԱՆՏՈՆ — Ի՞նչ կ'ըսես, Մարգրիտ, կը սիրե՞ս Յերվանդը։
ՄԱՐԳՐԻՏ — Ո՛հ, (Յերվանդի վիզը պլլվելով) կը սիրեմ Յերվանդը։
ՅԵՐՎԱՆԴ — Տե՛ր, (ի ծունկ իջանելով) վերջ տուր մեր թշվառութեանց։
ՄԱՐԳՐԻՏ — Հայր, (ի ծունկ իջանելով) կարելի յեղածին չափ շուտ։
ԱՆՏՈՆ — Յելե՛ք, անմեղ եակներ. (Առ Յերվանդ) քեզի կը տամ Մարգրիտը, քուկդ է։
ՄԱՐԳՐԻՏ — Ի՞նչ յերջանկութիւն։
ՅԵՐՎԱՆԴ — Անհուսալի յեր այսքան շուտ։ Այն գաղան Կոմիկը, որ կ'ուզեր մեզ զատել, մեր ժամ առաջ միանալուն պատճառ յեղավ։
ԱՆՏՈՆ — Այո, յերթամ զինքը գտնամ և աղեկ մը ծեծելեն զկնի վռնտեմ զինքը, չար ծառա. (ձեռքերնին կը բռնէ) յերթանք, զավակներս, մեկտեղ. ձեզի ալ կը հրամայեմ, որ Կոմիկը տեսնալնուդ պես չարաչար պատժեք զինքը։
ՄԱՐԳՐԻՏ — Ի՞նչ ուրախութիւն։
ՅԵՐՎԱՆԴ — Վա՛ սեր...։ (կ'երթան)։

ՏԵՍԱՐԱՆ Է.

ԿՈՄԻԿ

ԿՈՄԻԿ — (Մտնելով, յեվ ձեռքը փետրե ավելով մը կ'ավլե) Աղեկ ճամբա բանեցուցի Յերվանդը Մարգրիտեն զատելու համար. մեկ տեղս մեկ կերպով համոզեցի, մյուսը ուրիշ կերպով. կը հուսամ, որ պիտի հաջողիմ։ Ի՞նչ յերանութիւն ինձի համար, որ 30 տարիէ ի վեր ծառայութեան փափուկ պաշտոնը կը վարեմ, և հիմա Մարգրիտն ինձի կնութեան պիտի առնեմ։ Յերվանդի համար բավական զրպարտութիւններ դիզեցի Անտոն տիրոջս. Թեոփիլե տիրոջս ալ Մարգրիտը բամբասեցի. հիմա յերկու կողմն ալ պիտի զատե, որ Մարգրիտն յես առնեմ. ըղձալի դատ։ Յեթե Մարգրիտն իս սիրելու հավանի (միշտ ավլելով), այն ատեն բազմոցներու վրա պիտի նստիմ, Մարգրիտն ալ քովս, մայրս ալ մեկ կողմս (կը ցատքե). ինչ ուրախութիւն։ Միայն թե Յերվանդը ինձի հետ պիտի թշնամանա. հոգ չէ. բավական է, որ Մարգրիտը առնե զինքը. գեղեցիկ որբուհի մը ամուսին ըլլալու համար հարկավ վոխերիմ մը պիտի ունենայի. այս բնական է. թող այն ալ Յերվանդը ըլլա։ Ո՞վ գիտե, թե վորչափ նախատվեցավ խեղճը. տերս տակավին նամակը չառավ, յեթե առնե կարդա զայն, ավելի պիտի սրդողի Յերվանդի դեմ։ Խեղճ Յերվանդ, կը ցավիմ զինքը, յեթե իմանա որ Մարգրիտը յես պիտի առնեմ, վորչափ պիտի հուսահատի արդյոք. այն ատեն ալ յես վոտք կ'ելլեմ և իմ մայրս իրեն կուտամ. ինչ կ'ուզե տակավին, ինձի ալ հայր կ'ըլլա։ Պատրաստ զավակ մը գտնալը ամեն մարդուն բաղդը չէ. մայրս ալ գեղեցիկ կնիկ մ'է (միշտ կ'ավլե), միայն թե, քիչ մը քիթը մեծ և ճակատը դուրս յելած է. քթին մեծութիւնը վնաս մը չի տար իր գեղեցկութեանը։ Շատ խելացի չէ, միայն թե խելք չունի. վերջապես ճարտասան կնիկ մըն է, բայց ինչ ընե խեղճը, որ խոսիլ չգիտեր, բայց կը սորվի, տակավին պզտիկ է, դեռ յերեկ լրացուց իր վաթսուներորդ տարին։ Բայց հիմա իմ հարսանիքիս վրա խորհիմ և ապա մորս վրա։ Բազմոցները աղեկ մը սրբեմ, որ տիրոջս աչքը մտնամ. մեկը կը գա։

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ԹԵՈՓԻԼԵ ՅԵՎ ՆՈՒՅՆ

ԹԵՈՓԻԼԵ — Լմնցուցի նամակը. ամենն ալ մանրամասնաբար գրեցի եւ կը հուսամ, վոր Պ. Անտոնը իր տունը չընդունիր ասկից յետքը Յերվանդը։

ԿՈՄԻԿ — Շատ աղեկ, տեր, նամակը հիմա կը տանիմ։

ԹԵՈՓԻԼԵ — Մի ուշանար, վոր ժամ առաջ պատեհ առնեմ Յերվանդը. ընավ զինքը չտեսա այսոր. Մարգրիտի հետ ըլլալու չե դարձյալ։

ԿՈՄԻԿ — Այո, տեր, միշտ մեկտեղ են։

ԹԵՈՓԻԼԵ — Այն անառակ աղջիկը խեղճ տղուն կորստյանը պատճառ պիտի ըլլա։

ԿՈՄԻԿ — Հոգ մի ընեք, տեր, այս նամակավ կրնաք հաջողիլ։

ԹԵՈՓԻԼԵ — (Նամակը սեղանի վրա կը ձգե) Նամակը հոս կը ձգեմ, առանց ուշանալու տար (կ'երթա)։

ԿՈՄԻԿ — Շատ աղեկ, տեր։

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ԲԻՐԱԲ ՅԵՎ ՆՈՒՅՆ

ԲԻՐԱԲ — Դարձյա՜լ գործի վրա յես։

ԿՈՄԻԿ — Յե՞րբ դատարկ տեսար զիս։

ԲԻՐԱԲ — Ի՞նչ լուր ունիս։

ԿՈՄԻԿ — Բերկրալի լուրեր ունիմ քեզի հաղորդելու. Մարգրիտն ինծի կնության պիտի առնում. Յերվանդն ալ հայր։

ԲԻՐԱԲ — (Զարմանքով) Յերվանդը հա՞յր։

ԿՈՄԻԿ — Այո՛, այո՛, հայր պիտի ըլլա ինծի. չե՞ս ուզեր։

ԲԻՐԱԲ — Բայց ի՞նչպես.

ԿՈՄԻԿ — Ո՜ֆ յերկար կ'ընես... քու երիկդ պիտի ըլլա։

ԲԻՐԱԲ — Կը հավանի՞ արդյոք. յեթե ընդունի զիս կնության, գեշ չըլլար։ Բայց ի՞նչպես հուսամ, վասնզի յես ծեր եմ։

ԿՈՄԻԿ — Ի՞նչ փույթ ունի. Յերվանդը արդեն հնությունը շատ կը սիրե. դու ալ հին ես. ահա կ'երթա կը լմննա։

ԲԻՐԱԲ — Կնիկներուն հիներն ալ տակավին պատիվ ունին յեղեր։

ԿՈՄԻԿ — Անշուշտ։

ԲԻՐԱԲ — Գեշ չպիտի ըլլա, խելքս հասավ։

ԿՈՄԻԿ — Առաջ յես Մարգրիտը առնեմ, յետքն ալ դու Յերվանդին հետ կը կարգվիս։ Հարսանյաց համար գնա անուշեղեններ ծախու առ, վորպեսզի դու ալ քու կողմեդ Մարգրիտի ընծա մը ըրած ըլլաս։

ԲԻՐԱԲ — Շատ աղեկ, յես յերթամ առնելու. բայց իմ գործս ալ լմնցուր։

ԿՈՄԻԿ — Հոգ մի ըներ։

ԲԻՐԱԲ — Ի՞նչ գիտնամ, նայինք, մեծ է զորություն աստուծո (կ'երթա)։

ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ԱՆՏՈՆ, ՅԵՐՎԱՆԴ, ՄԱՐԳՐԻՏ, թեվ թեվի տված յեվ ՆՈՒՅՆ

ԿՈՄԻԿ — Ի՞նչ կը տեսնեմ, Մարգրիտը Յերվանդին թեւը մտած։
Ա՜հ, աս վո՞րքան թշվառ եմ յես։

ԱՆՏՈՆ — (Առ Կոմիկ) Անիծյալ, քեզ մինչեւ հիմա հավատարիմ ծառա մը կը ճանչեյի. բայց հիմա ամեն գործերուդ հասու ըլլալով, իմացա վոր վատթարին մեկն ես։

ՄԱՐԳՐԻՏ — Բանի վոր կը հիշեմ ինծի ըրածները, այնպես կուգա ինծի, վոր առնեմ զինքը գազաններու առջեւը նետեմ։

ՅԵՐՎԱՆԴ — Բայց ինծի ըրածները, ա՜հ, թշվառական, յերկու կտոր ալ ընեմ քեզ դարձյալ չեմ կըշտանար։

Կոմիկ մնաց լուռ, ավելը ձեռքեն կ'իյնա

ԱՆՏՈՆ — Անխիղճ մարդ. ասանկ գաղտնի դարան կը լարես յերկու անմեղ եյակները կորսնցնելու համար։

ՄԱՐԳՐԻՏ — Այո, հայր.

ՅԵՐՎԱՆԴ — Յեթե մի րոպե միայն պատմելու ըլլանք իր գազանային վարքը, շաբթվան մեջ հազիվ կրնանք լմնցնել։

ԿՈՄԻԿ — (մեկուսի) Վորչափ ալ բարեկամ ունիմ։

ԱՆՏՈՆ — Ինչո՞ւ լուռ կը կենաս։

ԿՈՄԻԿ — Ի՞նչ ընեմ, տեր։

ԱՆՏՈՆ — Պատասխան տուր ըսածներուն։

ԿՈՄԻԿ — Բոլորն ալ զրպարտութիւն է։

ԱՆՏՈՆ — (Նամակը կը տեսնէ կ'առնէ) Աս ի՞նչ է, նայիմ, ինծի համար է, այո՛ (կը բանայ). Մեծապատիւ տէր, յեղբօրորդիս Յերվանդը ձեր աղջիկին վրա սեր ձգած ըլլալուն ողորմելի վիճակի մէջ կը գտնուի, ուստի կ'աղաչեմ, որ զինքը չընդունիք ձեր տունը. ստորագրութիւն Թեոփիլե։

ՅԵՐՎԱՆԴ — Ո՛վ աստված։

ՄԱՐԳՐԻՏ — Ի՞նչ կը նշանակէ աս։

ՅԵՐՎԱՆԴ — Կոմիկին հարցուցէք։

ԱՆՏՈՆ — Ի՞նչ կը նշանակէ այս նամակը։

ԿՈՄԻԿ — Տէ՛ր, նամակը դուք կարդացիք և նշանակութիւնը ինծի՞ կը հարցնեք, ի՞նչ գիտնամ ես։

ԱՆՏՈՆ — Աս ալ քու սատանայութիւնդ է (ականջէն կը բռնէ), անըրան անասուն։

Ներսէն — Կոմի՛կ, Կոմի՛կ։

ԿՈՄԻԿ — Բանս բուսավ, հիմա մյուս տերս ալ պիտի գա, աս որքան թշվառ եմ ես։

ԱՆՏՈՆ — Ի՞նչ էր պատճառը, որ աս յերկուքը բաժնել կ'ուզեյիր մեկզմեկի։

Ներսէն — Կոմի՛կ, Կոմի՛կ։

ԿՈՄԻԿ — Աս ալ ընավ միտքես անցած չեր։

ԱՆՏՈՆ — Ո՞վ է քեզ կանչողը։

ԿՈՄԻԿ — Սա... սա... տանտ (ձեռքերովը յերեսը կը ծածկէ)։

ՅԵՐՎԱՆԴ — Շատ կ'ուզեյի որ այս վիճակի մեջ տեսնամ զքեզ։

ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

ԹԵՈՓԻԼԵ ՅԵՎ ՆՈՒՅՆՔ

ԹԵՈՓԻԼԵ — (Յերվանդը Մարգրիտի հետ կը տեսնա կ'ապշի.) Մեր ծառան տեսա՞ք։

ԱՆՏՈՆ — Ո՞վ է ձեր ծառան։

ԹԵՈՓԻԼԵ — Կոմիկը, Կոմի՛կ։

ԱՆՏՈՆ — Դու ալ խե՞նդ ես, ի՞նչ ես, Կոմիկը իմ ծառաս է։

ԹԵՈՓԻԼԵ — Կասակ ընելու ատեն չունիմ, շուտ ինծի յեթե տեսա՞ք զինքը։

ԱՆՏՈՆ — Ի՞նչպես կրնա ըլլալ որ...

ԹԵՈՓԻԼԵ — Սիրտս կը նեղեք, կարեւոր գործեր ունիմ, պիտի յերթամ, ըսէ՛ք։

ԱՆՏՈՆ — (Առ Կոմիկ) Յերեսդ բաց, ձեռքերդ վար առ։

ԹԵՈՓԻԼԵ — Այո՛, ահա իմ ծառաս, ի՞նչ իրավունքով ականջեն բռներ եք։

ԱՆՏՈՆ — Իմ ծառաս է։

ԹԵՈՓԻԼԵ — Ոչ, իմս է։

ԱՆՏՈՆ — (Առ Կոմիկ) Որո՞ւն ծառան ես։

ԿՈՄԻԿ — Ձեր ծառան եմ.

ԹԵՈՓԻԼԵ — Բայց յես...

ԿՈՄԻԿ — Այո՛, ձեր ծառան եմ։

ԱՆՏՈՆ — Հիմա կը հասկնամ, ինծի ալ կը ծառայես, Պարոն Թեոփիլեյի ալ. չեմ ուզեր, որ ասկէ յետքը իմ տունս գաս, կորիր գնա (կը հրէ). բայց յեկուր հանէ հագուստները և կորիր գնա (կը հրէ). անանկ գնա։

ԿՈՄԻԿ — Տէ՛ր։

ԱՆՏՈՆ — Շուտ յեղի՛ր, հանէ՛։

ԿՈՄԻԿ — (Կը հանէ վրայի հագուստը) Բայց առանց հագուստի...։

ԹԵՈՓԻԼԵ — Յես ալ չեմ ուզեր, որ աչքիս յերեւաս, կորի՛ր (կը հրէ)։

ՅԵՐՎԱՆԴ — Հօրեղբայր իմ, ինծի համար ալ բավական զրպարտություններ ըրած է ձեզի, բոլորն ալ սուտ են, և յես որեւորդ Մարգրիտը կը սիրեմ, ինչպես որ ան ալ զիս։

ԹԵՈՓԻԼԵ — Շատ աղեկ, (Առ Կոմիկ) վայրենի գազան, (կ'երթա)։

ԱՆՏՈՆ — (Առ Կոմիկ) Անըրան անասուն (կ'երթա)։

ՅԵՐՎԱՆԴ — (Առ Կոմիկ) Է՛շ, ավանակ, (կ'երթա)։

ՄԱՐԳՐԻՏ — (Խղճալով) Կը խղճամ քու վրադ, բայց ինչ՞ու։ Զիս թշվառացնեյիր պիտի, յեթե հայրս չիմանար քու սատանայությունները։ Անիծյալ, տխմար, ապուշ, (կ'երթա)։

ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

ԿՈՄԻԿ առանձին

Քիչ մը առաջ մեկը իմ ծառաս է, կ'ըսեր ինծի համար, միյուսն ալ իմ ծառաս է կ'ըսեր, հիմա յերկուքն ալ զիս թողուցին. ո՜հ թշվառությանս։ (Բիրաքը կամաց կամաց գալով

դուռն առջեւ կը կենայ ձեռքը սակառ մը) *Ի՞նչ ընեմ, ո՞ւր չերթամ։*

ՏԵՍԱՐԱՆ ԺԳ.

ԲԻՐԱՔ ԵՒ ՆՈՅՆ

ԲԻՐԱՔ — Աս շաքարեղէններն ալ վերջափ ծանր են։

ԿՈՄԻԿ — Յետեւ մայրս գայ ու գլխս ասանկ մերկ տեսնայ, ի՞նչ պիտի ըսէ արդյոք։

ԲԻՐԱՔ — (Յուռովի) *Անկարելի բան, վասն զի Յերվանդը հիմա տեսայ, յերեսս անգամ չնայեցավ. ինչպե՞ս կրնա ըլլալ, որ իրեն հետ ամուսնանամ։*

ԿՈՄԻԿ — Խեղճ մայրս կը հուսար, որ Յերվանդը պիտի առներ իրեն ամուսին։ Ո՜հ թշվառությանս. Յերվանդին Մարգրիտը առնելը ինծի ալ մահս տվավ մորս ալ. ինչ աղեկ կ'ըլլար, թե որ Մարգրիտը յես առնեյի և մայրս ալ Յերվանդը առներ, ասանկով յերկրապարդ հայր մը պիտի ունենայի, բաղդը կը ծիծաղի զիս։

ԲԻՐԱՔ — (Կոմիկը կը տեսնե) *Զավակս, դարձյալ գործի վրա յե. վասն զի զգեստները հաներ ե, Կոմիկ, ի՞նչ լուր ունիս, հարսնիքները յե՞րբ պիտի կատարվին, յես շաքարեղենները առի։*

Կոմիկ Չպատասխաներ

ԲԻՐԱՔ — Ինչու՞ լուռ կը կենաս, գործերդ ավրեցուցի՞ր, ի՞նչ ըրիր, որ ասանկ կը խորհիս։

ԿՈՄԻԿ — Բան մը չկա։

ԲԻՐԱՔ — Հարսանյաց հանդեսը յե՞րբ պիտի կատարվի։

ԿՈՄԻԿ — Կատարվեր լմնցեր են, Յերվանդը առավ Մարգրիտը։

ԲԻՐԱՔ — Բայց Յերվանդը իս կ'ուզեր առնել ըսեր, խաբեցի՞ր զիս։

ԿՈՄԻԿ — Քեզ խաբելու համար չըսի, բայց անանկ յեղավ. ասկից ի զատ յերկու տերերս ալ իս վռնտեցին։

ԲԻՐԱՔ — Յեվ ի՞նչպես։

ԿՈՄԻԿ — Ի՞նչպես պիտի ըլլա, հազիվ թե մեկ տիրոջս հրամանները կատարելու յետեւ եյի, մյուս տերս ալ սկսավ կանչել զիս. մեկուն այո, մյուսին ո՛չ, ըսելով, իմացվեցավ, որ յերկու տերանց ծառայողներեն մեկն ալ յես եմ. մեկը գալի

կերպարանք մանալով կարծես կ'ուզեր գլխս ուտել. մյուսն ալ առյուծի նման բզիկ բզիկ ընելու կը ջանար զիս. ականջս կը քաշեր, ապտակ կ'իջեցներ իմ նազելի այտերուս, ասդին անդին կը հրեր. նույն միջոցին քեզ կը հիշեյի, ահա ասանկ խաղք խայտառակ ըլլալեն զկնի՝ զգեստներս ալ առին վրայես և հիմա ասանկ մնացի. այս վիճակը շատ վողորմելի վիճակ մըն ե. առաջ ինչ եր նե դարձյալ ծառա մըն եյի, այլ հիմա...

ԲԻՐԱՔ — Անփետուր աքաղաղի դարձեր մնացեր ես։

ԿՈՄԻԿ — Ի՞նչ ընենք։

ԲԻՐԱՔ — Ի՞նչ պիտի ընենք, հիմա ազատ ես, վասն զի տեր բան չունիս, ազատ ես, ինչ որ ուզես կրնաս ընել. մի վախեր ինչ ընենք, յեկուր շաքարեղենները ուտենք գոնե։

ԿՈՄԻԿ — Իրիկվան ուտելու հաց ունի՞նք։

ԲԻՐԱՔ — Հաց չկա. ես արդեն յերկու օր ե ի վեր հաց չեյի ուտեր, որ հարսնիքին գիշերը շատ ուտենք։

ԿՈՄԻԿ — Շաքարեղենները գնա ծախե և հաց ծախու առ։

ԲԻՐԱՔ — Չեմ կրնար ծախել։

ԿՈՄԻԿ — Բայց ինչ ընելու յենք այս իրիկուն։

ԲԻՐԱՔ — Անոթի մնալու յենք. ահա այս ե յերկու տերանց ծառայություն ընողներուն վերջը. իմ թշվառությանս ալ պատճառ յեղար (կ'երթա)*։*

ԿՈՄԻԿ — (Կը կենա գլուխը ծռած ու կամաց կամաց լալով կ'երթա ըսելով) *Այս ի՞նչ դժբախտություն ե գլխուս յեկավ.*

ԾԱՆ. — Պարոնյանի ձեռագիրը հոս կ'ավարտի. բայց հաջորդ եջին վրա սա հավելվածական քանի մը տողերն ալ կան, զորս Պարոնյան կ'երևա վերջին քանի մը տողերուն տեղ դնել կ'ուզեր։

ԲԻՐԱՔ — Անոթի մնալու յենք. ահա այս ե, յերկու տերանց ծառայելով ուրիշը սիրողներուն վիճակը։

Կոմիկը կը կենա գլուխը ծռած ու կամաց կամաց կերթա

Վարագույրը կ'իջնա

ՎԵՐՋ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅԱՆ

դուռն առջեւ կը կենա ձեռքը սակառ մը) Ի՞նչ ընեմ, ո՞ւր յերթամ։

ՏԵՍԱՐԱՆ ԺԳ.

ԲԻՐԱԲ ՅԵՎ ՆՈՒՅՆ

ԲԻՐԱԲ — Աս շաքարեղեններն ալ վորչափ ծանր են։

ԿՈՄԻԿ — Յեթե մայրս գա ու գիս ասանկ մերկ տեսնա, ի՞նչ պիտի ըսե արդյոք։

ԲԻՐԱԲ — (Յուռովի) Անկարելի բան, վասն զի Յերվանդը հիմա տեսա, յերեսս անգամ չնայեցավ. ինչպե՞ս կրնա ըլլալ, վոր իրեն հետ ամուսնանամ։

ԿՈՄԻԿ — Խեղճ մայրս կը հուսար, վոր Յերվանդը պիտի առներ իրեն ամուսին։ Ո՜հ թշվառությանս. Յերվանդին Մարգրիտը առնելը ինձի ալ վնաս տվավ մորս ալ. ինչ աղեկ կ'ըլլար, թե վոր Մարգրիտը յես առնեյի և մայրս ալ Յերվանդը առներ, ասանկով յերիտասարդ հայր մը պիտի ունենայի, բաղդը կը ծիծաղի գիս։

ԲԻՐԱԲ — (Կոմիկը կը տեսնե) Զավակս, դարձյալ գործի վրա յես. վասն զի զգեստները հաներ ես, Կոմիկ, ի՞նչ լուր ունիս, հարսնիքները յե՞րբ պիտի կատարվին, յես շաքարեղենները առի։

Կոմիկ չպատասխաներ

ԲԻՐԱԲ — Ինչու լուռ կը կենաս, գործերդ ավելցուցի՞ր, ի՞նչ ըրիր, վոր ասանկ կը խորհիս։

ԿՈՄԻԿ — Բան մը չկա։

ԲԻՐԱԲ — Հարսանյաց հանդեսը յե՞րբ պիտի կատարվի։

ԿՈՄԻԿ — Կատարվեր լմնցեր են, Յերվանդը առավ Մարգրիտը։

ԲԻՐԱԲ — Բայց Յերվանդը իս կ'ուզեր առնել ըսիր, խաբեցի՞ր գիս։

ԿՈՄԻԿ — Քեզ խաբելու համար չըսի, բայց անանկ յեղավ. ասկից ի զատ յերկու տերերս ալ իս վռնտեցին։

ԲԻՐԱԲ — Յեվ ի՞նչպես։

ԿՈՄԻԿ — Ի՞նչպես պիտի ըլլա, հազիվ թե մեկ տիրոջս հրամանները կատարելու յեռևեյի, մյուս տերս ալ սկսավ կանչել գիս. մեկուն այո, մյուսին վոչ ըսելով, խճճվեցավ, վոր յերկու տերանց ծառայողներեն մեկն ալ յես եմ. մեկը գալլի

կերպարանք մանալով կարծես կ'ուզեր գիս ուտել. մյուսն ալ առյուծի նման բղիկ բղիկ ընելու կը ջաներ գիս. ականջս կը քաշեր, ապտակ կ'իջեցներ իմ նազելի այտերուս, ասդին անդին կը հրեր. նույն միջոցին քեզ կը հիշեյի, անաասանկ խաղք խայտառակ ըլլալեն զկնի՝ զգեստներս ալ առին վրայես և հիմա ասանկ մնացի. այս վիճակը շատ վողորմելի վիճակ մըն է. առաջ ինչ եր նե դարձյալ ծառա մըն եյի, այլ հիմա...

ԲԻՐԱԲ — Անփետուր աքաղաղի դարձեր մնացեր ես։

ԿՈՄԻԿ — Ի՞նչ ընենք։

ԲԻՐԱԲ — Ի՞նչ պիտի ընենք, հիմա ազատ ես, վասն զի տեր բան չունիս, ազատ ես, ինչ վոր ուզես կրնաս ընել. մի մտածեր ինչ ընենք, յեկուր շաքարեղենները ուտենք գոնե։

ԿՈՄԻԿ — Իրիկվան ուտելու հաց ունի՞նք։

ԲԻՐԱԲ — Հաց չկա. ես արդեն յերկու օր է ի վեր հաց չեյի ուտեր, վոր հարսնիքեն գիշերը շատ ուտենք։

ԿՈՄԻԿ — Շաքարեղենները դնա ծախե և հաց ծախու առ։

ԲԻՐԱԲ — Չեմ կրնար ծախել։

ԿՈՄԻԿ — Բայց ի՞նչ ընելու յենք այս իրիկուն։

ԲԻՐԱԲ — Անոթի մնալու յենք. ահա այս է յերկու տերանց ծառայության ընողներուն վերջը. իմ թշվառությանս ալ պատճառ յեղար (կ'երթա)։

ԿՈՄԻԿ — (Կը կենա գլուխը ծռած ու կամաց կամաց լալով կ'երթա ըսելով) Այս ի՞նչ դժբախտություն է գլխուս յեկավ.

ԾԱՆ. — Պարոնյանի ձեռագիրը հոս կ'ավարտի. բայց հաջորդ եջին վրա սա հավելվածական քանի մը տողերն ալ կան, զորս Պարոնյան կ'երևա վերջին քանի մը տողերուն տեղ դնել կ'ուզեր։

ԲԻՐԱԲ — Անոթի մնալու յենք. ահա այս է, յերկու տերանց ծառայելով որևորդ սիրողներուն վիճակը։

Կոմիկը կը կենա գլուխը ծռած ու կամաց կամաց կերթա

Վարագույրը կ'իջնա

ՎԵՐՋ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅԱՆ

Պ Ռ Ո Ի Յ Գ

Կատակերգություն յերեք արարվածով

Պռուցքը Հ. Հ. Պարոնյանի անավարտ մնացած մէկ թատերգությունն է, զոր գտնելու բարեբաղդությունը կը պարտինք Հ. Եփ. Ասատուրի։

Բեմը շատ ինքնատիպ բան մը ըլլալ կ՚երեւա այն վիճակին մէջ որով մեր ձեռքը հասած է։

Ձեռագիրը, որ մեր ձեռքը հասած է, ճիշտ այն տեղեն կը սկսի, ուրկէ մենք ալ սկսած ենք. առաջին բավական թերթեր դժբաղդաբար ինկած կորսված են. իսկ առաջին արարվածին հետո արդեն Պարոնյան չէ շարունակած, պարզապես հատակագիծներ, խոսակցության և տեսարաններու հատակոտորներ ձգելով։

Տ Ե Ս Ի Լ Ը.

ՂՈՒԿԱՍ, հետո ՄԱՐԳԻՐԻՏ

ՂՈՒԿԱՍ — Այս որվան համար այս դասը կը բավե, դաս մ'որ տեսական և գործնական չեղավ և զոր լավ ըմբռնեցին: Անպիտաններ, այնչափ ալ մարդս ավանակի տեղ դնել կ'ըլլա՞մի... չերկու ձի կերակրեյի ավելի շահավոր կըլլայի և սիրտ չեյի հատցուներ... արժանապատվություն, զգացում, խիղճ չունին մարդիկ:

ՄԱՐԳԻՐԻՏ — Ինչո՞ւ բարկացար դարձյալ:

ՂՈՒԿԱՍ — Մի հարցներ, դուն ես բարկության պատճառը, դուն դրիր սրտիս մեջ բարկության հուրը, զոր կ'արծարծեն այժմ մեր պարոն փեսաներն, անկիրթները:

ՄԱՐԳԻՐԻՏ — Ի՞նչ ըրին խեղճերը:

ՂՈՒԿԱՍ — Ի՞նչ պիտի ընեյին դեռ... սեղանը լափեցին:

ՄԱՐԳԻՐԻՏ — Բայց վերջապես մին մեր աղջկան ամուսինն է, մեր զավակն է:

ՂՈՒԿԱՍ — Կ'ատեմ ես այն զավակներն, որ իրենց հայրը կը սիրեն միմիայն անոր քսակը հատցնելու համար, անոր ստակովը իրենց փորվայնին պարարելու համար, սիրամարգի պես զարդարվելու համար, կառքերով պտըտելու, թատրոններ, պարահանդեսներ յերթալու համար: Հայր մը սիրվելու չե հայր ըլլալուն համար, խնայվելու չե հոր քսակին, խնայվելու չե հոր մը սրտին... անպիտաններ... (կը մեկնի):

Տ Ե Ս Ի Լ Թ.

ՄԱՐԳԻՐԻՏ, հետո ՄԱՐԳԱՐ

ՄԱՐԳԻՐԻՏ — Խոսք չհասկնար, որ զգացունես իրեն, թե պայման ունի չորս տարի զիրենք տանը մեջ պահելու: Պայման

մը, ինչ վոր ալ ըլլա, հարցվելու յեն յերկու կողմն, և անոնք միթե հանցավո՞ր են հարցնելով իրենց պայմանները։ Ցերկու ցերեկ ամսվան մեջ քաշածներս աստված միայն գիտե. և ասոնք հերիք չեյին, Վարդիկն ալ խնդիր մը հարույց...

ՄԱՐԳԱՐ — Հոս եք, Տիկին։

ՄԱՐԳՐԻՏ — Ժամանակին հասար։ Մեր հոգեկան ցավոց բժիշկն ես դուն, յերբ անկեղծ խորհուրդներու պետք ունենանք՝ զքեզ կը կանչենք։

ՄԱՐԳԱՐ — Շատ կը բարձրացնեք զիս, Տիկին։

ՄԱՐԳՐԻՏ — Ձեր ազնվությունն է այդ։ Չգիտեմ ինչպես մտեր է Վարդիկին մտքին մեջ կարգվելու գաղափարը։

ՄԱՐԳԱՐ — Վարդի՞կը... բայց ինձի հասակակից է նա...

ՄԱՐԳՐԻՏ — Թերևս քանի մը տարիք ալ ավելի ունի, և զարմանալին այն է, վոր զայն կնության ուզողը հազիվ քսանըհինգ տարեկան է։

ՄԱՐԳԱՐ — Քսանըհինգ հիսուներորդ,

ՄԱՐԳՐԻՏ — Այսոր աղջիկտեսի պիտի գան. չկրցի արգիլել աղջիկտեսը։ Թո՛ղ գան տեսնեն, հոգ չէ, միայն թե աշխատելու յես շրջել Վարդիկին միտքն այդ դիտավորութենեն։ Ամուսնույս բացած չեմ այս խնդիրը, վորպես զի նորանոր կռիվներու առիթ չտամ։ Ուստի կը խնդրեմ, վոր առանձին տեսակցեյիք Վարդիկին հետ և համոզեյիք զինքն, թե պարապ բան է իրեն համար աշխարհ մտնելը։

ՄԱՐԳԱՐ — Պիտի աղաչեյի, վոր այս պաշտոնն ուրիշի մը հանձնեյիք, վորովհետև յես վոլորապտույտ ճամբաներով չեմ կրնար խոսիլ, այլ և այլ քաղաքավարական ձևերով չեմ կրնար սքողել ինչ վոր կ'ուզեմ ըսել. պարզապես կ'ըսեմ իրեն, թե այս խենթություն է, ինքն ալ կը վիրավորվի. և չեմ ուզեր, վոր վիրավորվի ինձմե։

ՄԱՐԳՐԻՏ — Ոչ, ոչ, հասկցուր կերպով մը... փափուկ կերպով մը... վորովհետև, ինչպես գիտեք, ջղային է... չ'ըլլա վոր ջիղերուն դպչի... հոս կը ղրկեմ զինքը...

ՄԱՐԳԱՐ — Ձեր սիրույն համար կ'ընդունիմ ուրիշի մ'ալ հակակրությունը հրավիրել։

ՄԱՐԳՐԻՏ — Ոչ, ոչ... ձեր վրա մեծ համարում ունի։ Արդեն ինքն է, վոր կուգա... յես կը մեկնիմ (կը մեկնի)։

ՏԵՍԻԼ Ժ.

ՄԱՐԳԱՐ յեվ ՎԱՐԴԻԿ

ՎԱՐԴԻԿ — Ուշացաք կարծեմ։

ՄԱՐԳԱՐ — Կանուխ իսկ չեկա, բայց, վորպես կ'երևա, սպասողին համար ժամերը դանդաղ կը քալեն։

ՎԱՐԴԻԿ — Իմացաք անշուշտ վորոշումս...

ՄԱՐԳԱՐ — Այո։

ՎԱՐԴԻԿ — Առանձին ապրելե ձանձրացած՝ ուզեցի ընկեր մը ունենալ, վորպես զի մխիթարե զիս ցավոցս մեջ, քաջալերե հուսահատությանս մեջ, պաշտպանե զիս տկարությանս մեջ։

ՄԱՐԳԱՐ — Այո։

ՎԱՐԴԻԿ — Ի՞նչպես կը թվի ձեզ այս վորոշումս։

ՄԱՐԳԱՐ — Ամեն մարդ ազատ է յուր կարծյաց մեջ։

ՎԱՐԴԻԿ — Այսինքն վնասակար վորոշում մ'է։

ՄԱՐԳԱՐ — Ամեն մարդ տերն է յուր անձին և կրնա վորոշումներ տալ ի վնաս կամ հօգուտ յուր անձին։

ՎԱՐԴԻԿ — Այո, բայց կ'ուզեյի ձեր կարծիքն ալ իմանալ, վորովհետև ձեր խորհուրդներն անոր համար արժեք ունին, վոր անկեղծությամբ ու խելքով բաղադրված են։

ՄԱՐԳԱՐ — Իմ կարծիքովս, ասանկ վորոշումները գործադրվելու յեն առանց ուրիշներու հավանության հարցվելու. վորովհետև ամեն մարդ յուր կարծիքն ունի...

ՎԱՐԴԻԿ — Բայց ձեր կարծիքը կ'ուզեյի լսել, վորովհետև կը հարգեմ զձեզ իբրև հայր, գրեթե ձեր ձեռքը մեծցած եմ...

ՄԱՐԳԱՐ — Այո. (մեկուսի) խիղճս մեծ է։

ՎԱՐԴԻԿ — Պզտիկ աղջիկ մ'եյի, յերբ դուք դեռ յերիտասարդ կուգայիք մեր տունը յեղբորս հետ նարդ խաղալու համար։ Ուստի պարտ եր, վոր ձեզ դիմեյի ասանկ խնդրո մը համար, վորուն մեջ են իմ ներկայս ու ապագայս։

ՄԱՐԳԱՐ — Յեվ վորովհետև այսքան թախանձանոք կ'ստիպեք զիս կարծիքս հայտնելու, յես կ'ըսեմ թե մեր տարիքի մարդիկ ընավ խորհելու չեն այնպիսի նյութերու վրա, վորոց մեջ սեր կը խառնվի։

ՎԱՐԴԻԿ — Բայց յես ձե՞ր տարիքն ..

ՄԱՐԳԱՐ — Իմ տարիքս ունեցողներուն համար է իմ խոսքս... Իմ տարիքս ունեցողներն, այր թե կին, գոհանալու յեն ուրիշներու պզտիկ տղաները սիրելով, անոնց վրա գուրգուրալով, նորապսակներու յերջանկության վրա ուրախություն զգալով, այնուհետև առավոտուն մեկ մեկ գլուխ սաղմոս կարդալով, հետո գուլպա հյուսելով, և յերեկոյան դեմ քիչ մը օդ շնչելու համար դաշտը յելնել, յերիցուկ քաղել և արևուն ճառագայթներուն տակ չորցնել, վորպեսզի ձմեռն յեթե քրտնելու պետք ունենանք, յեփենք ու խմենք, իմ տարիքիս անձերն ավելի գերեզման մտնել պատրաստվելու յեն քան թե աշխարհ մտնելու.

ՎԱՐԴԻԿ — Չեմ հասկնար։

ՄԱՐԳԱՐ — Մեր տարիքին մեջ սերը կը թափե յուր տերևները. սերը վարսավեղ ծառերու մեջ կը բնակի։

ՎԱՐԴԻԿ — Ի՞նչ կուզեք հետևցնել։

ՄԱՐԳԱՐ — Կ'ուզեմ հետևցնել, թե յեթե յես ձեր տեղն ըլլայի և զիս կնության ուզեյին, բոլոր ուժովս կը մերժեյի. ներեցեք սակայն, այս իմ անձնական կարծիքս է...

ՎԱՐԴԻԿ — Ի՞նչու կը մերժեյիք։

ՄԱՐԳԱՐ — Անոր համար կը մերժեյի, վորովհետև գիտեյի թե, յերիտասարդի մը սերն ու միտումն գրավելու համար, միմիայն վոսկի ունեյի. և գիտեյի, թե յերբ ամուսնության մը մեջ մի միայն մետաղ կա՝ երիկն պարզապես հանք բանեցնելու համար կ'առնե այդ կինն, իբրև գետին մը, կը փորե գետինը, մինչև վոր հանքն սպառի, սպառեցնել հանքը, կը թողու գետինը։ Կ'աղաչեմ սակայն, չվիրավորվիք, իմ անձնական համոզումս է այս.

ՎԱՐԴԻԿ -- Բայց այդ յերիտասարդը կը սիրե զիս։

ՄԱՐԳԱՐ — Չեմ պնդեր թե չսիրեր, բայց յեթե յես քու տեղդ ըլլայի՝ չպիտի հավատայի այդ յերիտասարդին փաղաքշական հայտարարությանց, կեղծ սիրույն, շողոմարար շարժումներուն և ձևերուն. վորպես կ'իմանամ, յերիտասարդը հազիվ քսանըհինգ տարեկան կա, և ինչո՞ւ համար պիտի սիրե հիսուն տարեկան աղջիկ մը։

ՎԱՐԴԻԿ — Հիսուն տարեկա՞ն եմ յես։

ՄԱՐԳԱՐ — Ինձի համար կը խոսիմ, ինչո՞ւ դուք ձեզի համար կը

հասկնաք, որլորդ... քսանըհինգ տարեկան տղա մը... իմ զավկիս տեղը...

ՎԱՐԴԻԿ — Ըսել կ'ուզեք թե իմ զավկի՞ս տեղն է։

ՄԱՐԳԱՐ — Իմ մասիս կը խոսիմ յես...

ՎԱՐԴԻԿ — Կ'աղաչեմ, վոր ձեր մասին չխոսիք այլևս և իմ մասիս խոսիք։ Հինգ հարյուր վոսկի ունիմ, և այս յերիտասարդը ինձի հավնած է, ամո՞թ է։ Յես աղվոր չեմ...

ՄԱՐԳԱՐ — Ինչո՞ւ չըլլաք։

ՎԱՐԴԻԿ — Դժոխային դեմք մ'ունիմ, թխագույն, կատվի աչքեր ունիմ։

ՄԱՐԳԱՐ — Ինչո՞ւ այդպես կը խոսիք։

ՎԱՐԴԻԿ — Ծեր եմ, ցնդած եմ։

ՄԱՐԳԱՐ — Կ'աղաչեմ, այդպես մի՛ խոսիք, կը բարկանամ։

ՎԱՐԴԻԿ — Աշխարհիս բոլոր տգեղությունները իմ անձիս վրա կը կրեմ. բայց այս յերիտասարդը, զոր չտեսա տակավին՝ կ'ուզե զիս կնության առնել. հավանի՞մ, թե վոչ։ Յես դարձյալ իմ ընելիքս պիտի ընեմ. ձեր կարծիքն, իբրև պատգամ պիտի չընդունիմ անշուշտ։

ՄԱՐԳԱՐ — Յեթե յես ձեր տեղն ըլլայի՝ չեյի հավաներ։

ՎԱՐԴԻԿ — Կը խնդրեմ, իմ տեղս մի՛ ըլլաք դուք, ինձի համար խոսեցեք։

ՄԱՐԳԱՐ — Հասարակաց կարծյաց նայելով հավանելու չեմ։

ՎԱՐԴԻԿ — Ի՞նչ կ'ըսե հասարակաց կարծիքը։

ՄԱՐԳԱՐ — Ի՞նչ պիտի ըսե հասարակաց կարծիքը... արդեն յես այս լուրը դրսեն իմացա. քանի մը բարեկամներ հաղորդեցին ինձ։

ՎԱՐԴԻԿ — Ի՞նչ կարծիք հայտնեցին։

ՄԱՐԳԱՐ — Սա կարծիքը հայտնեցին. թե հարմար չդատեցին։

ՎԱՐԴԻԿ — Ի՞նչու համար հարմար չդատեցին։

ՄԱՐԳԱՐ — Յերիտասարդը շատ յերիտասարդ գտան։

ՎԱՐԴԻԿ — Չըսի՞ր իրենց, թե յես ալ ծեր չեյի. և իրմե մեծ ըլլալովս ալ կրնայինք շատ սիրով ապրիլ,

ՄԱՐԳԱՐ — Անոր ալ սա դիտողությունը ըրին, թե ձեր կարգըվելու տարիքն անցած եյիք, թե շատ դժբախտ կ'ըլլայիք, թե ձեր ստակին համար կ'առներ զձեզ.

ՎԱՐԴԻԿ — Չըսի՞ք թե կը սիրեր զիս, բոլոր սրտով։

ՄԱՐԳԱՐ — Ըսի, խնդացին։
ՎԱՐԴԻԿ — Ի՞նչու խնդացին։
ՄԱՐԳԱՐ — Կը խնդրեմ խոսիլ մի տար ինծի. վորովհետև անանկ բաներ ըսին, զորս չեմ կրնար ձեզի հաղորդել. յես չեմ ուզեր և ոչ մեկուն սիրտը վիրավորել. ինչպես պետք։
ՎԱՐԴԻԿ — Այսոր բոլորովին փոխված կը տեսնեմ ձեզ, ձեր անկեղծությունը և հանդարտ բնավորությունը կորսված եք, ձևերով կը խոսիք և քիչ մ'ալ կիրքով, մասնավորապես զիս վիրավորելու համար։ Կը կասկածիմ, վոր ձեր վրա ունեցած գաղափարս սխալ է յեղեր... ինչո՞ւ կը վախնաք ձեր կարծիքը պարզապես հայտնելու։
ՄԱՐԳԱՐ — (Հուզված) Յես վոչ մեկեն յերկյուղ ունիմ, այնքան խոսքերեն պարտավոր եյիք հասկնալ նաև իմ կարծիքս, և ստիպելու չեյիք զիս, իմ արժանապատվությանս դպչելով հայտնել ձեզ բացարձակորեն, թե ասանկ ամուսնություն մը կատակերգության մեջ միայն կրնա կատարվիլ։
ՎԱՐԴԻԿ — Բայց ինչո՞ւ բարկությամբ կը խոսիք... կ'երևի թե շահ մ'ունիք այս ամուսնության չկատարվելուն մեջ։
ՄԱՐԳԱՐ — (Ավելի հուզյալ) Շա՞հ, և ի՞նչ շահ կրնամ ունենալ... յես զքեզ սիրելուս համար կ'ըսեմ, թե վերջը պիտի զղջաս, գոնե, քեզի հասակակից մեկուն հետ կարգվեյիր... արարատ աշխարհ պիտի խնդա վրադ, ուսկից վոր անցնիս ծաղըր ու ծիծաղ պիտի հրավիրես վրադ... արևդ սիրեմ, մի՛ սրդողիր... ճշմարտությունն և այս... յես քու թշնամիդ ըլլալու եյի ըսելու համար քեզ, շատ հարմար ամուսնություն մ'է, թարմ ես, գեղեցիկ ես... փայլուն ապագա մը կ'ունենաս... ճիշտ կարգվելու տարիքն ունիս... չըսի առնք, ինչո՞ւ չըսի առնք... անոր համար չըսի, վոր չեմ ուզեր դժբախտություն պատրաստել քեզի... և այսպես անկեղծաբար խոսելովս անկեղծությունս կորսված յեղա քեզի համար։ Արևդ սիրեմ, մի՛ բարկանար։
ՎԱՐԴԻԿ — Հերի՛ք, հերի՛ք... յես վորոշած եմ ամուսնանալ, քու խորհուրդներուդ պետք չունիմ, դուն լավ անկեղծություն կեղծել գիտես...
ՄԱՐԳԱՐ — Յե՞ս... այնպես է, այնպես... իրավունք ունիս... հանցանքն իմս է, վոր ասանկ գործերու մեջ կը մտնեմ... կարգը-

վեցեք, կարգվեցեք, բայց հետո մի՛ ըսեք, թե յես պատճառ յեղա։
ՎԱՐԴԻԿ — Բնավ։
ՄՍՐԳԱՐ — Հավանական է, վոր շատ ալ յերջանիկ ապրիք, յերբեմն անհարմար կարծված ամուսնության մեջ ավելի ներդաշնակություն կը տիրե և ներդաշնակ ամուսնության մեջ դաշնակին կ'ավրվի... ըրե՛ք... բայց ինծի մի՛ սրդողիք։
ՎԱՐԴԻԿ — Չեմ սրդողիր, բայց կարելի յեր առանց վիրավորելու հայտնել ձեր կարծիքները։
ՄԱՐԳԱՐ — Յեթե վիրավորեցի՝ ներումն կը խնդրեմ։ Չեմ ուզեր, վոր վշտանաս։ Կարգվե՛, կարգվե՛, յես կ'աշխատիմ, վոր այս ամուսնությունը կարգադրեմ, աստուծով վերջը բարի կ'ըլլա։ Մահկանացվացս գուշակությունները շատ անգամ սխալ կ'ելնեն։
ՎԱՐԴԻԿ — Շնորհակալ եմ, դուն ալ ներե ինծի, յեթե վիրավորեցի զքեզ։
ՄԱՐԳԱՐ — Ներված է... կ'երթամ տեսնել յեղբորդ կինն, վորպես զի ըսեմ...
ՎԱՐԴԻԿ — Շատ լավ, ըսեք, վոր պարապ տեղ չզիմացրեն, վորոշումս վորոշում է։
ՄԱՐԳԱՐ — Այո, (կը մեկնի)։

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՎԱՐԴԻԿ

Պարտավոր չեմ բնավ այլևս այս մասին հնազանդիլ ծնողացս կամքին, վոր մերժեց ամեն յերիտասարդ... հինգ հարյուր վոսկվո գումար մ'ունիմ յեղբորս քով, կ'առնեմ և գիտեմ թե կ'ապրիմ. Թշնամյաց խոսքին կարևորություն չեմ տար...

ՏԵՍԻԼ ԺԲ.

ՆՈՒՅՆ, ԼԵՎՈՆ, ԹՈՐՈՍ, ՀՈՎՍԵՓ, ԹԱԳՈՒԿ

ԹԱԳՈՒԿ — (Դռան առջեվ) Հրամեցեք, այս սրահը, (կը մեկնի)։ Լևոն, Թորոս, Հովսեփ մի բոս միջե կը բարևեն Վարդիկը, վոր կոտրվելով կ'առնե բարևները յեվ կը մեկնի։

ԹՈՐՈՍ — (Առ Հովսեփ) Ո՞վ է այս կինը։

ՀՈՎՍԵՓ — Չեմ ճանչնար։ Բայց զարհուրելի կնիկ մ'է, վա՜յ ամուսնոյն։

ԼԵՎՈՆ — Յերեսը նայուելու բան չէ։

ԹՈՐՈՍ — Մեր Լեւոնին նշանուելիքը կարծեմ մեզի հոս հրամցընողն է... ազուորիկ էր, այնպէս չէ՞։

ՀՈՎՍԵՓ — Ազուոր է... ի՞նչ կըսես, Լեւո՛ն։

ԼԵՎՈՆ — Դուք գիտէք։

ՀՈՎՍԵՓ — Միջնորդ կինն ըսած էր, տարիքը պզտիկ է, բայց մեծ կ'երեւայ, մեծ չերեւար... հազիւ քսանը մէկ տարեկան կը ցուցնէ։

ԹՈՐՈՍ — Մեծ չէ. ես կը վախնայի, որ աղեկ աղջիկ մը ցույց պիտի տային մեզ ու սիրտերնիս պիտի կոտրեր։

ՀՈՎՍԵՓ — Բախտաւոր է Լեւոն, որովհետեւ սովըված ըլլալով անպատճառ ամուսնանալ՝ գլուխ պիտի ծռեր, եթէ աղեկ իսկ ըլլար՝ բախտը խնայեց իրեն։ Այսպէս, եթէ կարենանք հինգ հարյուր ոսկի կորզել՝ հարյուր հիսունն ինծի կուտա պարտքի տեղ, հարյուր քսանը քեզի, հարյուր հիսունով փոխանակագիրը կը վճարէ, որուն պայմանաժամը մօտեցած է, ութսուն ոսկիով ալ մանր մունր պարտքերուն ի հաշիւ կուտա, քիչ մը շունչ կ'առնէ, ատով սնանկութեան առաջքն ալ կ'առնուի։ Այնպէս չէ՞։

ԹՈՐՈՍ — Այո՛, այո՛... այնպէս չէ՞, Լեւո՛ն։

ԼԵՎՈՆ — Դուք գիտէք, հարկաւ կին մ'ունենալը սնանկութիւն հրատարակելէն նուազ վտանգաւոր է. պարտքերը գոցելու համար կնոջ մը հարկը զգացուցիք ինծ, ի՞նչ կրնամ ընել, ուրիշ պարագայի մը մէջ գէթ քանի մը տարիներ չեյի կարգուեր. բայց որովհետեւ պնդեցիք...

ԹՈՐՈՍ — Մեր պահանջքները վճարելու համար ուրիշ միջոց մը գտա՞ք...

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՆՈՒՅՆՔ յեվ ՄԱՐԳԱՐ

ՄԱՐԳԱՐ — Բարի յէք յեկեր. բարեկամներ, մեծապէս ուրախ եմ զձեզ հոս հանդիպելուս համար, սանկ այցելութիւնները կը սիրեմ յես։

ԹՈՐՈՍ — Բարենպատակ այցելութիւնները կը սիրվին միշտ։

ՄԱՐԳԱՐ — (Լեվոնը ցույց տալով) Կարծեմ, պարոնն է, որ...

ԹՈՐՈՍ — Այո՛, պարոնն է։

ՀՈՎՍԵՓ — Այո՛, ինքն է, պարոնը, որ այս տանը փեսա պիտի ըլլայ։

ՄԱՐԳԱՐ — Շատ ուրախ յեղա... շատ ուրախ...

ԹՈՐՈՍ — Մեր այս աւուր այցելութիւնը կէս պաշտօնական է. կ'ըմբռնե՞ք, աղջիկը տեսնել, պայմաններու վրայ խորհրդակցիլ, եւ գործը կարգադրել, որովհետեւ ալ ատեն ուշանալու շատ ժամանակ չունի, առեւտրական գործերով Անգլիա պիտի մեկնի եւ նորէն պիտի դառնայ, սանկ աղջիկտեսի պես բան մը, ինչպէս թէ...

ՄԱՐԳԱՐ — Աղջիկտես կ'իմանամ, բայց աղջիկտեսի մեջ աղջիկն անպատճառ տեսնել պէ՞տք է։

ԹՈՐՈՍ — Անշուշտ։

ՀՈՎՍԵՓ — Թէեւ քիչ մը տեսանք, բայց կ'ուզենք, որ անգամ մ'ալ...

ՄԱՐԳԱՐ — Շատ լաւ... (Քիչ մը խորհելեն հետո) այո՛, այո՛, ինչո՞ւ չէ... իրաւունք ունիք տեսնելու... մեր ալ պարտքն է... վայրկյան մը, կ'աղաչեմ (մեկուսի)։ յես քաջութիւն չունիմ ներկայացնելու իբրեւ հարսնցու, զրկեմ թող նստի, տեսնեն։ (կը մեկնի)։

ԹՈՐՈՍ — Հարուստներն քիչ մը հպարտ կ'ըլլան, յերբ աղջիկնին հանեն իրենց աղջիկները։

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՎԱՐԴԻԿ, հետո ՄԱՐԳԱՐ

Վարդիկ անուշ կը հրամցնե յեվ Թագուկ խանըմե, ամենքն ալ վոտքի վրա կ'առնեն անուշը, ապշած իրարու յերես նայելով։

ՄԱՐԳԱՐ — Կարծեմ թէ չհուսայիք, որ ան ըլլար, զո՞հ մնացի՞ք, մեր աղջիկը, շիտակը խօսելով, որովհետեւ տունեն չեմ յես, շատ համեստ աղջիկ է, բացուած չէ, եւ շատ ալ ամօթխած է. եթէ խեղճը հանցանք մ'ունի, մեծ ցուցնելն է, տարիքը շատ պզտիկ է։ Իմ ձեռքս մեծցած է. կրնա՞ք ինծի ըսել թէ ի՞նչ բանէ հառաջ կուգա ատ. որ քսան տարու մէջ քա-

ԹՈՐՈՍ — (Առ Յովսէփ) Ո՞վ է այս կինը:

ՅՈՎՍԷՓ — Չեմ ճանչնար: Բայց զարհուրելի կնիկ մ'է, վա՜յ ամուսնոյն:

ԼԵՎՈՆ — Ցերեկը նայուելու բան չէ:

ԹՈՐՈՍ — Մեր Լեւոնին նշանուելիքը կարծեմ մեզի հոս հրամցընողն է... աղուորիկ էր, այնպէս չէ՞:

ՅՈՎՍԷՓ — Աղուոր է... ի՞նչ կըսես, Լեւոն:

ԼԵՎՈՆ — Դուք գիտէք:

ՅՈՎՍԷՓ — Միջնորդ կինն ըսած էր, տարիքը պզտիկ է, բայց մեծ կ'երեւայ, մեծ չերեւար... հազիւ քսանը մէկ տարեկան կը ցուցնէ:

ԹՈՐՈՍ — Մեծ չէ. յես կը վախնայի, որ աւելի աղջիկ մը ցոյց պիտի տային մեզ ու սիրտերնիս պիտի կոտրէր:

ՅՈՎՍԷՓ — Բախտաւոր է Լեւոն, վասնզի սորված ըլլալով անպատճառ ամուսնանալ. գլուխ պիտի ծռէր, յեթէ տգեղ իսկ ըլլար՝ բախտը խնայեց իրեն: Այսպէս, յեթէ կարենանք հինգ հարյուր ոսկի կորզել՝ հարյուր հիսունն ինծի կուտայ պարտքի տեղ, հարյուր քսանը քեզի, հարյուր հիսունով փոխանակագիրը կը վճարէ, որուն պայմանաժամը մօտեցած է, ութսուն ոսկիով ալ մանր մունր պարտքերուն ի հաշիւ կուտայ, քիչ մը շունչ կ'առնէ, սատ սնանկութեան առաջքն ալ կ'առնուի: Այնպէս չէ՞:

ԹՈՐՈՍ — Այո, այո... այնպէս չէ՞, Լեւոն:

ԼԵՎՈՆ — Դուք գիտէք, հարկաւ կին մ'ունենալը սնանկութիւն հրատարակելէն նուազ վտանգաւոր է. պարտքերը գոցելու համար կնոջ մը հարկը զգացուցիք ինծ, ի՞նչ կրնամ ընել, ուրիշ պարագայի մը մէջ դեռ քանի մը տարիներ չէի կարգուեր. բայց վասնզի պնդեցիք...

ԹՈՐՈՍ — Մեր պահանջքները վճարելու համար ուրիշ միջոց մը գտա՞ք...

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՆՈՅՆՔ յեվ ՄԱՐԳԱՐ

ՄԱՐԳԱՐ — Բարի յէք յեկեր, բարեկամներ, մեծապէս ուրախ եմ զձեզ հոս հանդիպելուս համար, սակայն այցելութիւնները կը սիրեմ յես:

ԹՈՐՈՍ — Բարենպատակ այցելութիւնները կը սիրուին միշտ:

ՄԱՐԳԱՐ — (Լեւոնը ցույց տալով) Կարծեմ, պարոնն է, որ...

ԹՈՐՈՍ — Այո, պարոնն է:

ՅՈՎՍԷՓ — Այո, ինքն է, պարոնը, որ այս տանը փեսա պիտի ընենք:

ՄԱՐԳԱՐ — Շատ ուրախ յեղա... շատ ուրախ...

ԹՈՐՈՍ — Մեր այս աւուր այցելութիւնը կէս պաշտօնական է. կ'ըմբռնե՞ք, աղջիկը տեսնել, պայմաններու վրայ խորհրդակցիլ, և գործը կարգադրել, վասնզի տղան սպասելու շատ ժամանակ չունի, առեւտրական գործերով Անգլիա պիտի մեկնի և նորէն պիտի դառնայ, սանկ աղջիկտեսի պէս բան մը, որպէս թէ...

ՄԱՐԳԱՐ — Աղջիկտես կ'իմանամ, բայց աղջիկտեսի մէջ աղջիկն անպատճառ տեսնել պէտք է:

ԹՈՐՈՍ — Անշուշտ:

ՅՈՎՍԷՓ — Թէև քիչ մը տեսանք, բայց կ'ուզենք, որ անգամ մ'ալ...

ՄԱՐԳԱՐ — Շատ լաւ... (Քիչ մը խորհելեն հետո) այո, այո, ինչու չէ... իրաւունք ունիք տեսնելու... մեր ալ պարտքն է... վայրկյան մը, կ'աղաչեմ (մեկուսի). յես քաջութիւն չունիմ ներկայացնելու իրեն հարսնցու, ղրկեմ թող նայի, տեսնեն: (կը մեկնի):

ԹՈՐՈՍ — Հարուստներն քիչ մը հպարտ կ'ըլլան, յերբ աղջիկտեսի հանեն իրենց աղջիկները:

ՏԵՍԻԼ ԺԴ.

ՆՈՅՆՔ ՅԵՎ ՎԱՐԴԻԿ, հետո ՄԱՐԳԱՐ

Վարդիկ անուշ կը հրամցնե յեվ Թագուկ խանըմէ, ամենեն ալ ափսեի վրա կ'առնեն անուշը, ապշած իրարու յերես նայելով:

ՄԱՐԳԱՐ — Կարծեմ թէ չհուսայիք, որ ան ըլլար, գոհ մնացի՞ք, մեր աղջիկը, շիտակը խոսելով, վասնզի տունեն չեմ յես, շատ համեստ աղջիկ է, բացված չէ, և շատ ալ ամօթխած է. յեթէ խեղճը հանցանք մ'ունի, մեծ ցուցնելն է, տարիքը շատ պզտիկ է: Իմ ձեռքս մեծցած է. կրնա՞ք ինծի ըսել թէ ի՞նչ բանէ հառաջ կուգա ատ. որ քանի տարու մէջ քա-

տասուն ցույց տա, շատ հետաքրքիր յեղած եմ այս գաղտնյաց խորը թափանցելու, չեմ կրցած։
ՀՈՎՍԵՓ — Ինչու համար հարսը չհանեցիք։
ՄԱՐԳԱՐ — Ինչպես չհանեցինք։ Անուշ չըրի՞ն։
ՀՈՎՍԵՓ — Ա՞ն էր։
ՄԱՐԳԱՐ — Կարծեմ։ Ուրիշ ո՞վ կրնա ըլլալ։ Ինչպես դուք, յես ալ դրսեն եմ, կրնաք տանը քաշվելու ձեր կարծիքն հայտնել ինձ, շահ մը չունիմ...
ԹՈՐՈՍ — Ի՞նչ կ'ըսես, Լևո՛ն։
ԼԵՎՈՆ — Ի՞նչ ըսեմ։
ՀՈՎՍԵՓ — Գեղեցիկ է. բայց պատճառներ ունինք։
ԼԵՎՈՆ — Այո՛, պատճառներ ունինք։
ՄԱՐԳԱՐ — Ճաշակին հարմար չզատավ կարծեմ։
ԼԵՎՈՆ — Այո՛, այո՛, ճաշակիս շատ հարմար չեկավ։
ՀՈՎՍԵՓ — Հինգ հարյուր վոսկի...
ԹՈՐՈՍ — Ինձի տղեղ չերևցավ, միայն թե առաջին տեսությանս յերբ . . . . կարծես...
ՀՈՎՍԵՓ — Թեև առաջին կարգի աղվոր չէ, բայց տգեղ չսեպվիր։
ԹՈՐՈՍ — Կարծես սանկ անուշ հով մ'ունի։
ՀՈՎՍԵՓ — Ցես պիտի ըսեյի, առանց զգալու՝ ինքզինքը սիրցնելու հրապույր մը կարծես...
ԹՈՐՈՍ — Անմեղություն մը։
ՀՈՎՍԵՓ — Անբծություն մը։
ՄԱՐԳԱՐ — Իրավ, ամոթխածությունն է, վոր...
ԹՈՐՈՍ — Այնչափ մեծ ալ չցուցներ։
ՀՈՎՍԵՓ — Այո՛, այո՛։ Լևո՛ն, խոսե,
ՄԱՐԳԱՐ — Պարո՛նը պիտի առնե...
ԹՈՐՈՍ — Այո՛։
ՄԱՐԳԱՐ — Շատ յերջանիկ կ'ըլլաս, ամուսնական պատիվդ ապահոված կըլլաս։ Հավանություն տուր, թերևս սատկը քեզի կ'առնենք, յերթամ։
ԹՈՐՈՍ — Աս աղջիկը կ'առնվի։
ՀՈՎՍԵՓ — Այո՛, այո՛, սիրուն է, պարկեշտ է, բացված չէ։
ՄԱՐԳԱՐ — Յերեք հարյուր վոսկի միայն տալ կը հաճի իբրև (պռույգ։
ԹՈՐՈՍ — Դրամի համար չէ, բայց Լևոնի ճաշակին չեկավ։

ՀՈՎՍԵՓ — Այո՛, չհաճեցավ։
ՄԱՐԳԱՐ — Յեթե չհաճեցավ, տարբեր խնդիր, իսկ յեթե հաճեր, թերևս կրնայի քիչ մ'ալ փրցնել։
ԹՈՐՈՍ — Մեր ճաշակին հարմարեցավ։
ՄԱՐԳԱՐ — Բայց հոգվո գեղեցկությունը, սիրտ մ'որուն հատակը կրնա իյնալ ամեն նայվածք, հստակ, ջինջ ու պայծառ, վոր յերբեք պղտորված չէ, սիրտ մ'որուն տակը ճահիճ չգտնվիր. աչքերն անմեղություն կը հայտնեն, հապա շրթունքն, վորոնց վրա կը փայլի ամոթխածությունը։
ՀՈՎՍԵՓ — Յոթը հարյուր վոսկի կրնա՞ք տալ։
ՄԱՐԳԱՐ — Ճակատ մ'որ յերբեք արատավորված չէ, անուն մը, վոր գրուցված չէ, հավատարմություն մ'ունի, վոր...
ԹՈՐՈՍ — Ձե՞ք կրնար յոթը հարյուր վոսկի տալ...։
ՄԱՐԳԱՐ — Մարմնո գեղեցկությունն կրնա որ մը թառամիլ, բայց հոգվո գեղեցկությունը...
ՀՈՎՍԵՓ — Վեց հարյուր հիսուն վոսկի՞ ալ չեք կրնար տալ։
ՄԱՐԳԱՐ — Տո՛ւր ձեռքդ ինձի, յեթե այս որիորդը առնելու միտք ունիք, ըսեք ինձի, քանի՞ կ'առնեք։ (Ձեռները բռնելով)։
ՀՈՎՍԵՓ — Վեց հարյուր հիսուն վոսկիվ կ'առնենք։ Վեց հարյուր հիսուն վոսկի շատ չէ, յերիտասարդը տեսեք, յերիտասարդը։
ԼԵՎՈՆ — Այո՛, շատ չէ։
ՄԱՐԳԱՐ — Չորս հարյուր վոսկվո տվի։
ԹՈՐՈՍ — Քիչ է։
ԼԵՎՈՆ — Այո՛, շատ քիչ է, (մեկուսի) փոխանակագիրը չվճարվիր... չեմ ուզեր, չեմ ուզեր, դրամի համար չէ, բայց չեմ ուզեր... չսիրեցի...
ՄԱՐԳԱՐ — Հինգ հարյուր վոսկի կուտամ։
ԼԵՎՈՆ — Հինգ հարյուր վոսկի ըսիք... դրամի համար չէ... բայց ունի գեղեցկություն մը...
ՄԱՐԳԱՐ — Տո՛ւր ձեռքդ ինձի։
ԼԵՎՈՆ — Առե՛ք։
ՄԱՐԳԱՐ — Կը հավանի՞ք։
ԼԵՎՈՆ — Այո՛։

(Իրարու ձեռք բռնելու ատեն Ղուկաս կը մտնե)

ՂՈՒԿԱՍ — Խորհինք, խորհինք, կը պատասխանենք վերջնական կերպով և հետո կուգանք նշանտուքը կատարել...

ՏԵՍԻԼ ԺԵ.

Խիղճս հանդարտեցնելու համար լաւագոյն ընթացք մը չեյի կրնար բռնել. ահա աղջիկը, ահա յերիտասարդը... կամ լաւ ես, ահա հինգ հարյուր ոսկին, ահա յերիտասարդը, յեթե կ'ուզե կրնա առնել, թե ոչ, որու հոգը... սանկ խնդրո մեջ չեզոքութիւն պահելը շատ աղեկ է... յերթամ տեսնել զինքն ու ըսել...

ՏԵՍԻԼ ԺԶ.

ՄԻՀՐԱՆ, ՍԵՐՈԲԷ

ՄԻՀՐԱՆ — Յես ալ քեզ տեսնել կը փափաքեյի։ Ի՞նչպես բանալու յե... ի՞նչ ձեւով բանալու յե...

ՍԵՐՈԲԷ — Յես ալ միտք ունեյի ձեզի կարեւոր բան մը հաղորդելու... արժանապատւութեան խնդիր... ի՞նչպես ըսեմ...

ՄԻՀՐԱՆ — Գիտեք, որ յերկու ամիսե ի վեր բախտը հոս նետեց զմեզ։

ՍԵՐՈԲԷ Ճիշտ։

ՄԻՀՐԱՆ — Հոս կ'ուտենք, հոս կը խմենք, հոս կը պառկինք, հոս կ'ելնենք, հոս կը քնանանք, հոս կ'արթննանք։

ՍԵՐՈԲԷ — Այո, այո։

ՄԻՀՐԱՆ — Մտածեցի, որ խեղճ մարդն ի՞նչ պարտականութիւն ունի զմեզ կերակրելու մեր կնիկներովը։

ՍԵՐՈԲԷ — Մեծ ցաւ յեղած է ինձի ալ այդ կետը, և պիտի ըսեյի ձեզի, որ...

ՄԻՀՐԱՆ — Մեղք է մարդուն։

ՍԵՐՈԲԷ — Շատ ազնւութեամբ վարվեցաւ մեզի հետ։

ՄԻՀՐԱՆ — Որ մը բերնեն ծանր խոսք մը կը փախցնե ակամա և կը վիրավորե, ուստի պետք է որ մենք ալ քիչ մը ծախք ընենք։

ՍԵՐՈԲԷ — Շիտակը կ'ուզե՞ս, արդեն հայտնեց ինձի։

ՄԻՀՐԱՆ — Խոսքը մեր մեջ, ինձի ալ հայտնեց... ինձմե գլտցած մի ըլլար։

ՍԵՐՈԲԷ — Դուն ալ որպես թե յուր վարմունքեն հասկցած յեղիր... շատ բարկացեր է արդեն... մեծ հուզմամբ խոսեցաւ հետս։

ՄԻՀՐԱՆ — Յեթե այնպես է, ջանա զոհացնել զինքը։

ՍԵՐՈԲԷ — Ձեզի համար խոսեցաւ։

ՄԻՀՐԱՆ — Մեծ սխալ, ձեզի համար խոսեցաւ ինձի։

ՍԵՐՈԲԷ — Քեզի համար խոսեցաւ, յեղբայրս...

ՄԻՀՐԱՆ — Ինձի՞ համար...

ՍԵՐՈԲԷ — Այո։

ՄԻՀՐԱՆ — Ինձի ալ քեզի համար խոսեցաւ... ի՞նչ հարկ կար ասանկ ճամբով իմացնել մեզ։ Շատ անազնիվ մարդ է յեղեր... վար մարդ է յեղեր... վար մարդ է յեղեր...

ՍԵՐՈԲԷ — Կերակրեցիք զիս... մարդ աստուծո, ի՞նչ է մեր կերածը։

ՄԻՀՐԱՆ — Կերակուրի խոսք բերանն առնել... ի՞նչ տմարդութիւն... արդեն այս ընտանիքին մեջ... խոսիլ մի տար զիս... յերեցա, յերեցա... յեղբայր...

ՍԵՐՈԲԷ — Հապա յե՞ս... հապա յե՞ս... կնկանս յերեսը չեմ կրնար նայիլ։

ՄԻՀՐԱՆ — Իմին ալ կինս իմ յերեսս չնայիր... Իմս ավելի ծանր է... այս վիճակեն խալսելու միջոց մը խորհինք։ Իմինս անտանելի չէ. պատւի խնդիր կա մեջը... կարգվելես վերջը իմացա, թե կինս սիրական մ'ունի յեղեր... և այս իսկ է յեղեր պատճառ, որ ոչ վոք կ'առնե յեղեր... ա՜հ, իմ ցաւս, իմ ցաւս... Պետք է փախչիմ Արաբիո մեկ կողմը և փախուստով սրբեմ այն արատն, որ որև որ կըթանձրանա ճակտիս վրա.

Հոս կ'աւարտի վերջնական ձեւի մէջ գրուած ձեռագիրը յետ ասկէ անդին յեղածները հատակոտորներ յետ արարուածներու ծրագիրներ են միայն, զորս կը հրատարակենք Պարոնեանի աշխատութեան յեղանակին վրայ գաղափար մը տալու համար զինքը ուսումնասիրողներուն։

Կամ նամակ մը կը բռնուի և կամ սիրականը կը փախչի ու... (Անընթեռնելի)։

ԱՐԱՐՔ Գ.

(Ցեվգինե յեվ Միհրան իրարու բարձ, աթոռ նետելով կը կռվին)

— Ես կը գուշակեյի թե ասանկ պիտի վերջանար գործը։
— Այսպես պետք եր ըլլար, վոր ամեն բան լմնար.
— Արժանի չեյիր դուն ինձ ամուսին ըլլալու։
— Այո, քեզի պես խայտառակ կնոջ մ'ամուսին։
— Այսուհետև չեմ ուզեր զքեզ։
— Ես ալ չեմ ուզեր, միայն թե հարկ է, վոր հոգդ բացվի ամեն բան, հայտնվին ամեն գաղտնիք և տեսնվի, թե վորունն է իրավունքը։
— Քեզի պես մարդու իրավունք։

(Կռվելով տեսարան կուգան

(Սերոբե, Բրաբիոն, վոր կըհրե Սերոբեն վոր կ'իյնա)

— Ես կ'երակրեմ, վորպեսզի ուրիշները սիրես, ձեզի պես ամուսիններուն հետ այսպես վարվելու չե։
— Զե՞ք խպնիր։
— Ալ մեր մեջ ներդաշնակությունը կարելի չե վերահաստատել... այսոր պետք է, վոր յերթաս... հիմա կ'ուզեմ, վոր դուրս յելնես... դուրս... դուրս... (կը հրե)... դուրս... տունեն դուրս...
— Վո՛չ, չպիտի յերթամ... դուն ալ հետս պիտի գաս։
— Ծիծաղները ապաուհվույն համար պահել... ամենեն ավելի հարգական ձևերն անոր նվիրել... ժպիտ, ակնարկություններ անոր... գոնե ազնի՜վ ըլլար, անոր ընել... համակրություն ցույց տալ... գգվել... փայփայել, հնազանդիլ ապաուհվույն... այդ սատանային, այդ հրեշին և ինձի կըռնակ դարձնել... կնակի՞դ համար առի քեզի... դո՛ւրս (աթոռով զարնել կ'սպառնա), դո՛ւրս... չեմ ուզեր... չեմ ուզեր տեսնել դեմս մարդ մ'որ ամեն որ յուզերս հալեցնելու կը ծառայե ինձի... դո՛ւրս...
— Խենդեցա՞ր... կանանց դեշն վո՞րքան տգեղ է յեղեր...
— Վոչ։
— Իրավունք ունի... դուք ի՞նչ կարծեցիք մեզի...
— Մենք ձեր գերիներն ենք...

— Դուն մի խառնվիր...
— Առանց ստակի կարգվիլ, ստակ ուզել, առնել, հասցնել յերկու ամսվան մեջ, այնուհետև մեզի կրկին հոս բերել, բեռ ըլլալ, այսուհետև հնազանդելու չե յեղեր այս պարոններուն... հա, հա, ամուսիններ... դուն ալ դուրս գնա...
— Ալ այսուհետև կարելի չե միասին կենակցիլ...
— Ես կը մերժեմ...
— Չեմ ընդունիր...

(Խոսելով տեսարան կուգան Ղուկաս յեվ Մարգրիս)

— Բոլոր այս չարյաց պատճառը դու յես, կի՛ն։ Ես գիտեյի թե...
— Ինչո՞ւ յես ըլլամ... և ի՞նչ կա, փառք աստուծո...
— Ի՞նչ կա... տուն ըլլա ու կռիվ չըլլա...
— Ի՞նչ պիտի ըլլա տակավին, իրարու գլուխ կը պատռեն...
— Հիմա կըհաշտվին...
— Ո՛հ, չեմ կրնար դիմանալ... ամենն ալ դուրս յելնելու յեն տունես...
— Քիչ մը ինձի մտիկ ըրե...
— Առաջ յես պիտի խոսիմ...
— Վոչ, յես պիտի ըսեմ...
— Ամեներին խոսքս մտիկ չըներ...
— Ցերսս չնայիր...
— ... Զքաշվիր...
— Զըլլար։

— . . . . : . (Անըմբռնելի)
— Հաշիվներս տուր յերթամ... յերթամ։
— Ես ասանկ տուն չեմ կրնար նստիլ... խայտառակություն է հոս...
— Ինչո՞ւ։
— Ի՞նչ պիտի ըլլա... իմ նշանածս կը սիրեն հոս... աչք ունին վրան...
— Ո՞վ։
— Ձեր փեսան... հաշիվներս մաքրե, ու ստակն տուր, վոր

յերթամ... յես աղքատ եմ, բայց պատվավոր մարդ եմ։
— Տեղդ նստէ։
— Վոչ, վոչ...
— Յես ասանկ տուն չեմ տեսեր...
— Հիմա . . . . (Անընթեռնելի)
— . . . . (Անընթեռնելի) ալ չեմ նստիր։
— Կ'երթամ։
— Հաշիվներուս գրպարտություն չեմ ուզեր... հաշիվնիդ գի-տեք։
— Հիմա դուրս ելեք, գործեր ունինք... անպիտան։
— Սրիկա։
— Ինձի պես... (Անընթեռնելի) գողեր...
— Դուն ալ չես խաղնիր, հրեշտակի պես կնիկ ունիս և ըս-պասուհիին աչք կը տնկես։
— Կը վայլէ քեզ... մեծ պիտի ըլլաս...

— Այո, այո, իմ գործս ի՞նչ պիտի ըլլա... տվեք իմ ստակս և գիտեմ ընել ինչ վոր պետք է։
— Աս ի՞նչ մեջ յեկանք։
— Այս տեսակ կանայք գինով լի շիշերու պես են՝ քաշը վեր կը բարձրանա ու կը կոտրի, յեթե խիցը վեր չնետե։
— Պետք է հարգել։

Վ ե ր ջ

Շ Ո Ղ Ո Ք Ո Ր Թ Ն

Կատակերգություն յերեք արարով

ԱՆՁԻՆՔ

ԹԱԴԷ Միրահար Սոֆիի, 60 տարու
ԹԵՐԵԶԱ Քույր Թադեյի
ԱՐՇԱԿ Յեղբորվորդի Թադեյի, միրահար Սոֆիի
ԲԱՐԹԵՄ Ծառա »
ՊԱՊԻԿ Շողոքորթ
ՀՈՎՍԵՓ Հայր Սոֆիի
ՍՈՖԻ Դուստր Հովսեփա
ՏԻԳՐԱՆ Միրական Սոֆիի
ԳԵՎՈՐԳ Ծառա

ԱՐԱՐ Ա.

(Զարգարունի տուն)

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԹԱԴԷ, ԹԵՐԵԶԱ

ԹԵՐԵԶԱ — Առտուանց կանուխ ինծի հետ խօսիլ ուզելուդ պատճառն ի՞նչ է, եղբայր իմ։

ԹԱԴԷ — Կարեւոր գործի մը վրայով կուզեմ քեզի հետ խորհրդակցիլ։

ԹԵՐԵԶԱ — Աճապարանքով զիս տեսնել ուզելդ կասկածներ կը հարուցանէ մտքիս մէջ. արդեօք գէշ լո՞ւր մը պիտի առնեմ։

ԹԱԴԷ — Ընդհակառակն, լուր մը՝ որ ինծմէ աւելի քեզի ուրախութիւն պիտի պատճառէ։

ԹԵՐԵԶԱ — Չըսե՞ս որ բերկրալի լուր մը, քու ուրախութեանդ զիս ալ շուտ մը մասնակցելու համար էր, որ զիս տեսնել ուզեցիր։

ԹԱԴԷ — Այո, մեր ընտանիքին երջանկութիւն մը կը պատրաստուի։

ԹԵՐԵԶԱ — Կաղաչեմ, շուտ ըսէք։

ԹԱԴԷ — Ամուսնութեան մը վրայ է խնդիրը։

ԹԵՐԵԶԱ — Ամուսնութեա՞ն վրայ... (մեկուսի) արդեօք Արշակա վրայ ունեցած սէրս իմանալով մեզ կարգե՞լ որոշեց։

ԹԱԴԷ — Թէպէտեւ ես կրնայի ինք իր գլխուս գործը լմնցնել, բայց քենէ ալ խորհուրդ հարցնել ուզեցի անգամ մը։

ԹԵՐԶԱ — Հարկաւ, դուք ինծմէ մեծ ըլլալով, կրնաք աւելի աղէկ խորհիլ, և ես ալ միշտ ձեզի հնազանդելու պարտաւոր եմ (մեկուսի) ուր է թէ՝ ժամ առաջ լմննար սա գործը։

ԹԱԴԷ — Յեւ կրնաս ապահով ըլլալ, որ ընտրութեանս մէջ ալ չեմ խաբուիր։

ԹԵՐԵԶԱ — Այո՛, յեղբայր իմ։

ԹԱԴԷ — Յեւ ընտրածս օտարական մը չէ, դուն ալ կը ճանչնաս զինքը։

ԹԵՐԵԶԱ Թերեւս, (մեկուսի) Արշակն է, (բարձր) քու ընտրածդ յես ալ կընդունիմ, հայր իմ։

ԹԱԴԷ — Ապրիս, սիրելի քոյրս, շնորհակալ եմ, որ յեղբօրդ ըրածին և ընելիքին միշտ հաւանութիւն կուտաս և յերբեք ընդդիմութիւն չես ըներ։

ԹԵՐԵԶԱ — Յեւ ի՞նչպէս կրնամ ընդդիմութիւն ընել, քանի որ միշտ մեր ընտանիքին բարւոյն համար կաշխատիս։

ԹԱԴԷ — Յեւ իմ ընտրածս ալ մեր ընտանիքին պատիւը աւելի ևս պիտի աւելցնէ։

ԹԵՐԵԶԱ — Այո։

ԹԱԴԷ — Համեստ, ազնիվ բնաւորութեան տէր։

ԹԵՐԵԶԱ — Այո։

ԹԱԴԷ — Ըստ բաւականին ուսեալ, հեզաբարո, ամենուն հետ քաղցրութեամբ վարվող։

ԹԵՐԵԶԱ — Այո։

ԹԱԴԷ — Ինքն ալ դեռ հազիւ քսան տարեկան կա։

ԹԵՐԵԶԱ — Այո, (մեկուսի) ալ տարակույս չմնաց, Արշակն է։

ԹԱԴԷ — Ի՞նչպէս է ըրած ընտրութիւնս։

ԹԵՐԵԶԱ — Շատ աղեկ է, յեղբայր իմ, շատ աղեկ։

ԹԱԴԷ — Ըսել է որ դեմ չպիտի կենաս։

ԹԵՐԵԶԱ — Ամենեւին։

ԹԱԴԷ — Ապրիս, սիրելի քոյրս, յես ալ հիմա հանդարտ սրտով կը բանամ գործը. վերջապէս, սիրելի քոյրս, ահա այս՛ամենը նկատելով, որոշեցի՝ որ կարգվիմ.

ԹԵՐԵԶԱ — Ի՞նչ կըսես։

ԹԱԴԷ — Որոշեցի, որ կարգվիմ, սիրելի քոյրս։

ԹԵՐԵԶԱ — Դո՞ւն...

ԹԱԴԷ — Այո՛, յես, (շուրջը նայելով) ինե ուրիշ մարդ կա՞ հոս։

ԹԵՐԵԶԱ — Դո՞ւն պիտի կարգվիս։

ԹԱԴԷ — Այո՛։

ԹԵՐԵԶԱ — Դո՛ւն կնիկ պիտի առնես։

ԹԱԴԷ — Այո՛։

ԹԵՐԵԶԱ — Դո՛ւն պիտի նշանվիս։

ԹԱԴԷ — Այո՛։

ԹԵՐԵԶԱ — Դո՞ւն։

ԹԱԴԷ — Յես։

ԹԵՐԵԶԱ — Հա, հա, հա. դո՛ւն հա, հա, հա, պի... հա, հա, հա, տի... հա, հա, կար հա, գը... հա, հա, վիս, հա, հա, հա, հա, հա.

ԹԱԴԷ — Խնդալու ի՞նչ կա։

ԹԵՐԵԶԱ — Հա, հա, հա, հա։

ԹԱԴԷ — Ինչո՞ւ կը խնդաս. (Թերեզա կը խնդա) ալ համբերութիւնս կը հատնի (Թերեզա իբր թէ խնդալը բռնել կը ջանա յեվ չի կրնալուն՝ աւելի քահքահաձայն կը խնդա) բայց ի՞նչ կա խնդալու։

ԹԵՐԵԶԱ — Խնդալու բան մը չի կա (կը խնդա) բայց իմին խընդալս յեկավ (աւելի քահքահաձայն) փառք աստուծո, ի՞նչ կա խնդալու։

ԹԱԴԷ — Ի՞նչ գիտնամ, ըրածդ խենդութիւն է (Թերեզա կը խընդա) ալ հիմա կը ճաթիմ, կորի առջևես, անամօթ, սենյակդ քաշվե, խայտառակ, (Թերեզա խնդալով կերթա)։ Քի՛չ մնաց, որ առտուն փորձանքի պիտի հանդիպեյինք, սըվոր նայե մեյ մը, անզգամ, զինքը մարդու տեղ դրինք և խոսք հարցուցինք. յեթե գիտնայի, որ սանկ պիտի խնդար, կը կանչեյի՞ զինքը, իրեն խորհուրդ կը հարցնեյի։

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՒՅՆ, ՊԱՊԻԿ

ԹԱԴԷ — Այնպէս չէ՞, ճշմարիտը զրուցե։

ՊԱՊԻԿ — Այնպէս է։

ԹԱԴԷ — Տեսա՞ր ճշմարտախոս մարդը, զարմանալին հոս է, որ յես իրեն խնդալու խոսք մը չըրի։

ՊԱՊԻԿ — Զարմանալին հոն է, որ դուք իրեն խնդալու խոսք մը չըրիք։

ԹԱԴԷ — Յես իրեն ամեն բան տեղն ի տեղը պատմեցի։

ՊԱՊԻԿ — Դուք իրեն ամեն բան տեղն ի տեղը պատմեցիք։

ԹԱԴԷ — Մանավանդ թէ՝ իրեն ալ կարծիքը հարցուցի։

ՊԱՊԻԿ — Այո, իրեն ալ կարծիքը հարցուցիք։
ԹԱԴԷ — Իրաւունք չունիմ բարկանալու։
ՊԱՊԻԿ — Ի՞նչպես չունիք, բարկանալու լիուլի իրաւունք ունիք, և ինչո՞ւ պիտի զրկվիք բարկանալու իրաւունքեն։
ԹԱԴԷ — Խնդրոյն ինչ ըլլալը գիտե՞ք։
ՊԱՊԻԿ — Այո, գիտեմ։
ԹԱԴԷ — Կարծեմ չեք գիտեր,
ՊԱՊԻԿ — Ոչ, չեմ գիտեր։
ԹԱԴԷ — Միտքս դրի, որ Սոֆին կնութեան առնեմ. այս դիտաւորութեանս քրոջս հայտնեցի, առջի բերան ինքն ալ հաւանութիւն տուաւ, վերջը սկսաւ խնդալ. խնդալու ի՞նչ կա հոս։
ՊԱՊԻԿ — Խնդալու բան մըն ալ չկա։
ԹԱԴԷ — Եվ կարծեմ իմ ամուսնութեանս վրա բոլոր աշխարհ պիտի ուրախանա։
ՊԱՊԻԿ — Հարկավ։
ԹԱԴԷ — Կարծեմ ապօրինավոր բան մը չե ըրածնիս, մեկ մարդու մը կնիկ մը պետք է։
ՊԱՊԻԿ — Այո, պետք է։
ԹԱԴԷ — Սոֆին ալ սիրուն, աղվոր, մատղաշ աղջիկ մըն է, և կարծեմ զիս շատ պիտի սիրե, վրաս պիտի դողդողա։
ՊԱՊԻԿ — Ձեր անձին վրա անանկ հատկութիւններ ունիք՝ որոնցմով քաղաքիս աղջկանց սիրտը գրաված եք (Թադէ իր վրա ակնարկ մը կը ձգէ). շատ աղջիկներ կը ճանաչեմ, որոնք ձեզի սեր տված էին, բայց սիրտերնին չկրնալ բանալնուն համար հալեցան, մաշեցան և հողը գրկեցին։ Դեռ առջի օրը աղջիկ մը մեռավ այս աղջիկն ալ ձեր քալվածքին սիրահարված էր (Թադէ կը քալէ). աղջկան մեկն ալ ասկե ամիս մը առաջ մեռավ, այս աղջիկն ալ ձեր աչքերուն հափշտակված էր (Թադէ աչքերը կը դարձնէ). անցյալ շաբթու աղջիկ մը մեռավ, աս ալ ձեր խոսքին զարնված էր. ներեցեք ինձ ըսել, որ դուք մեծ ջարդ կընեք աղջիկներուն մեջ։ Մեկ խոսքով աղջկանց մաղձացավն եք։
ԹԱԴԷ — Մինչև հիմա չեյի գիտեր ասոնք։
ՊԱՊԻԿ — Ասոնցմե զատ դուք անանկ հարստութիւն մ'ալ ունիք, որ ասոնց ամենը կը գերազանցե։ Դուք կատարյալ փիլիսոփա մ'եք
ԹԱԴԷ — Ի՞նչ կըսեք,, սխալ չըլլա։
ՊԱՊԻԿ — Կարծյացս մեջ յերբեք սխալած չեմ։
ԹԱԴԷ — Բայց յես չեմ գիտեր փիլիսոփա ըլլալս։
ՊԱՊԻԿ — Հարկավ չպիտի գիտնաք, և այդ չգիտնալնիդ է, որ կապացուցանե թե՝ փիլիսոփա յեք, որովհետև փիլիսոփայք չեն գիտեր ինչ որ գիտեն, և ճիշտ ասոր համար է, որ յերեկլի փիլիսոփա մը ըսած է թե՝ «զայս միայն գիտեմ, զի ոչինչ գիտեմ»։
ԹԱԴԷ — Ահ, յեթե փիլիսոփա ըլլալս ժամ մը առաջ գիտնայի, յես գիտեյի թե՝ ինչպես կը պատասխանեյի քրոջս (ինքզինք ծանրէն ծախելով) և արդարև զարմանալի յե փիլիսոփայութիւնը, յերբեմն մարդուս անանկ կուգա, որ բան մը չգիտեր, ինչպես որ ինձի յեղավ հիմա, յերբեմն ալ անանկ կուգա, որ ամեն բան գիտե։ Ճշմարիտ փիլիսոփայութիւնը, կըսեն թե՝... փիլիսոփայական ճշմարտութիւն մ'է։
ՊԱՊԻԿ — Այո։
ԹԱԴԷ — Ամուսնութիւնն ալ փիլիսոփայութիւն մ'է, և ասկե կը հետևի թե՝ Սոֆիին հետ կարգվելս ապօրինավոր չէ։
ՊԱՊԻԿ — Ամենևին։
ԹԱԴԷ — Եվ մանավանդ թե խնդալու բան մ'ալ չկա։
ՊԱՊԻԿ — Բնավ յերբեք։
ԹԱԴԷ — Ուստի պետք է, որ հարսնիքը գալ շաբթու ընենք։
ՊԱՊԻԿ — Այո, գալ շաբթու ընելու յե, որովհետև ուշացնելու ըլլաք նե՝ բամբասանքի տեղի կուտաք։
ԹԱԴԷ — Չե, քիչ մը ուշացնելու յե։
ՊԱՊԻԿ — Ես պիտի ըսեյի, քիչ մը ուշացնելու յե, որովհետև շուտ ըլլա նե՝ ամեն մարդ կասկածի կերթա։
ԹԱԴԷ — Բայց չե, շուտ ընեմ պիտի։
ՊԱՊԻԿ — Իմ միտքս ալ ան յեկավ, շուտ ընելու յե, որովհետև ուշ ըլլա նե՝ չար լեզուները ուզածնուն պես մեկնութիւն կուտան։
ԹԱԴԷ — Վաղը պետք է, որ Սոֆիին հորը հետ այս գործին վրայոք խոսինք։

ՊԱՊԻԿ — Այո, միկտեղ կերթանք և կը խոսինք, ապահով յեղիր, վոր շատ գոհ պիտի ըլլա։
ԹԱԴԵ — Յերթանք ճաշելու և այս խնդրույն վրա ավելի յերկարորեն խոսելու։

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՒՅՆՔ, ԱՐՇԱԿ

ԱՐՇԱԿ — Հայր, կուզեյի ձեր հետ առանձին տեսնվիլ։
ԹԱԴԵ — Հիմա ժամանակ չունիմ, ասկեց զատ փիլիսոփաները չեն կրնար առանձին տեսնվիլ (կերթա, Պապիկը ձեռքով նշան կընե, վոր ինք ալ կուգա)։
ԱՐՇԱԿ — Փիլիսոփաները չեն կրնար առանձին տեսնվիլ. ինչ խոսք և ասիկա, խոսք մը, վորուն շարադրությունն ալ գեշ և, արտասանությունն ալ, բնավ քերականական կանոն չկա մեջը։
ՊԱՊԻԿ — Որ ըստ որե կը տկարանաս դուն, Արշակ, միտքդ շատ մի հոգնեցներ, շատ մը յերևելի հանճարներ ժամանակեն առաջ մեռած են իրենց միտքը շատ հոգնեցնելուն համար։
ԱՐՇԱԿ — Միտքս շատ չեմ հոգնեցներ, որը ընդամենը չորս հատոր փիլիսոփայական գիրքեր կը կարդամ և քանի չափ վոտանավոր կը գրեմ. որինակի համար հիմա սա վոտանավորը գրեցի (կը կարդա).

Մինչ արշալուսին արևն բարդ ի բարդ
Ո՛հ, ո՜հ, վիշտք մարդկայինք պայթ ի պայթ,
Ավա՜ղ, բա՜րե, յեղո՜ւկ, վա՜յ ինձ
Մեռ ի մեռ, շիթ առ շիթ, վեռ ի վեռ.

Սա ալ կա, վոր դեռ վրայեն անցած չեմ։
ՊԱՊԻԿ — Հիմա յերեսդ ի վեր գովել չըլլա, շատ վոտանավորներ տեսած եմ և զգածված չեմ, ինչու վոր անոնք բառերու կույտ են. իսկ ձերիններուն ամեն մեկ տողը, ամեն մեկ խոսքը, ամեն մեկ բառը, ամեն մեկ վանկը, ամեն մեկ յերկբարբառը, ամեն մեկ գիրը, ամեն մեկ ստորակետը, ամեն մեկ կետը, միտք մը, իմաստ մը, վոգի մը կը պարունակե։ Ասկեց զատ ձեր լեզուն շատ սահուն է, բառերը անանկ կանոնավոր կերպով և չափով իրարու քով դրված են, վոր

լեզուն բնավ չհոգնիր զանոնք արտասանած ժամանակը. որինակի համար, ինչպես սկսած եք առաջին տողը (Արշակ կը կարդա. Պապիկն ալ մատներուն վրա հանգերը կը համրե) խիստ ընտիր է, բայց սանք գրած ժամանակնիդ դժվարություն մը չե՞ք իմանար։
ԱՐՇԱԿ — Ուրիշ մը գրելու ըլլա նե կիմանա, բայց ինձի բնական ըլլալով, բնավ չեմ հոգնիր։
ՊԱՊԻԿ — Յել ինչո՞ւ վողբերգություններ չեք գրեր։
ԱՐՇԱԿ — Իմ գրելիք վողբերգություններս հասկնալու դերասան չկա. առջի որը քանի մը վողբերգություններ ձեռքս անցան, կարդացի, ով աստված իմ, վողբերգություն ըսվելու արժանի չեն. անունը բայեն առաջ և դրվեր, սեռի խնդիրը գլուխն առեր գացեր է, ներգործական բայը իր խնդիրը կը փնտռե, անուն բային իր բայը կը փնտռե, հաւկացյալ կա, հատկացուցիչ չկա, յերկու կանգուն յերկայնությամբ բառի մը քովը մեկ բթաչափ պզտիկությամբ բառ մը դրված է. խորթ բառերը մեջը կը վխտան, մեջը իմաստ չկա. վողբերգության կանոն չկա, քերականության կանոն չկա, ութը մասունք բանիի կանոն չկա, ճարտասանության կանոն չկա. որինակի համար, սա չորս տող է, ինքզինքս զովելու համար չեմ ըսեր, բայց տես, ինչ անուշ է (ձևերով կը կարդա) դեռ վրայեն ալ անցած չեմ։
ՊԱՊԻԿ — Շատ աղվոր է, ներեցեք, վոր հորդ քովը յերթամ (կելնե յեվ կը մտնե) անգամ մըն ալ կարդա, կաղաչեմ, սա վոտանավորը (կը կարդա)։
ԱՐՇԱԿ — Դեռ վրայեն ալ անցած չեմ։
ՊԱՊԻԿ — Յավոք սրտի կը բաժնվիմ ձեր վոտանավորեն (կելնե կը մտնե) մոռցա ըսելու, վոր ապել տալինք սա վոտանավորը։
ԱՐՇԱԿ — Չեմ հուսար, վոր այս վոտանավորը շարելու կարող գրաշար գտնըվի, գիտեք թե՝ վորչափ ցավալի է զգալ և ուրիշներուն չկրնալ զգացնել։
ՊԱՊԻԿ — Շատ ցավալի է։
ԱՐՇԱԿ — Մարդս այս ցավուն չկրնալով դիմանալ, կը մեռնի իսկ։
ՊԱՊԻԿ — Յես շատերը կը ճանչնամ, վոր զգացածնին ուրիշներուն

չկրնալ զգացնելուն համար մեռեր են։ Դուք աղեկ կը գիտնաք։

ԱՐՇԱԿ — Օրինակի համար, սա վոտանաւորը գրած եմ, բայց միտքը ի՞նչ է, ի՞նչ իմաստ կը պարունակէ, ի՞նչ աշխատով գրված է, մտնող հասկացող չկա, կարդամ ու մտիկ ըրէ (կը կարդա). դեռ վրայեն ալ անցած չեմ։

ՊԱՊԻԿ — Կը ցավիմ, վոր հասկցող չի կա (կերթա)։

ՏԵՍԻԼ Դ.

ԱՐՇԱԿ, ՎԵՐՋԸ ԲԱՐԹԵՄ

ԱՐՇԱԿ — Կիրթ ճաշակի տեր է սա մարդը, խիստ քիչեր կան անոր նման, վոր վոտանավորի մը հարգը ճանչնան։ Բայց թողունք հիմա այս խոսքերը և մեր սիրո վրա խորհինք։ Յերկու ամիսե ի վեր է, վոր բուռն սիրով մը կը սիրեմ Սոֆին և միշտ սիրույս վրա վոտանավորներ կը գրեմ։ Ի՞նչ ընեմ, կը սիրեմ, բանաստեղծ եմ, բավական ատեն պահեցի այս գաղտնիքը, և յերբ այսոր հորս բանալու պատրաստվեցա, ժամանակ չունիմ ըսավ։

ԲԱՐԹԵՄ — (Ավել ի ձեռին). Տան մեջ բան մը կը դառնա այսոր, բայց չի կրցի հասկնալ։

ԱՐՇԱԿ — Բարթեմ, սանկ քիչ մը յերեսս նայե (Բարթեմ կը նայի) բան մը գուշակեցի՞ր։

ԲԱՐԹԵՄ — Այո, գուշակեցի, վոր քանի մը որե ի վեր խիստ տխուր եք, և թե որ քան վոր տկարանալու վրա յեք, այնպես վոր տեսնողը պիտի կարծե թե՝ ուրիշ գերեզմանատուն մը փոխադրելու համար քեզի գերիզմանեն հաներ են և չկրնալով փոխադրել մոռցեր են առջի գերեզմանիդ մեջ թաղելու։

ԱՐՇԱԿ — Ի՞նչ կը նշանակե այդ տկարությունը։

ԲԱՐԹԵՄ — Կը նշանակե, թե կերակուր քիչ կուտեք։

ԱՐՇԱԿ — Ի՞նչ կը նշանակե կերակուր քիչ ուտելը։

ԲԱՐԹԵՄ — Կը նշանակե թե՝ (մեկուսի) կերակուրները ձեզի աղ չեն բավեր, ինչպես նաև մեզի (բարձր) կը նշանակե, թե ախորժակ չունիք։

ԱՐՇԱԿ — Ահ, Բարթեմ, (թևեն բռնելով) յերբ աչքերս գոցվին՝ Սոֆին կը տեսնեմ, յերբ աչքերս բացվին՝ Սոֆին կը փնտռեմ,

և ահա այս է տկարությանս պատճառը. թող պարկայք[15]) կենացս թելը կարեն յեթե յիրենք չպիտի արժանանամ Սոֆիին ամուսին ըլլալու. թող անողոք ժամանակը իր հաստ մանգաղովը հնձէ զիս, յեթե ճակատագիրք կը խաբեն զիս, և դուք, ով Ողիմպոսի[16]) գագաթը նստող Աստվածք, (Բարթեմը վեր կը նայի) թափեցեք ձեր կայծակները իմ վրա, (Բարթեմը վախնալով փախչիլ կուզե) շանթահարեք զիս, յեթե սիրույս առարկան ինձ չպիտի շնորհեք. այո, կայծակնահար ըրեք զիս։

ԲԱՐԹԵՄ — Ձգե վոր փախչիմ։

ԱՐՇԱԿ — Մի վախնար, Բարթեմ. ասոնք բանաստեղծական պարծվածքներ են, ո՜հ, Բարթեմ, գիտես արդեն, վոր Սոֆին կը սիրեմ։

ԲԱՐԹԵՄ — Այո, գիտեմ։

ԱՐՇԱԿ — Չըլլա, վոր մեկու մը ըսես։

ԲԱՐԹԵՄ — Չեմ ըսեր։

ԱՐՇԱԿ — Յերթամ քիչ մը հանգչելու, հայրս գալուն պես ինձի իմաց տուր։

ԲԱՐԹԵՄ — Շատ աղեկ։

ՏԵՍԻԼ Ե.

ԲԱՐԹԵՄ, ՎԵՐՋԸ ԹԵՐԵԶԱ

ԲԱՐԹԵՄ — Սըվոր նայե մեյ մը. քիչ մնաց, վոր վախես շունչս պիտի կտրեր, յելեր ինձի կըսե, վոր բանաստեղծական պարծվածքներ են յեղեր. գետնին տակը անցնին բանաստեղծությունդ ալ, պարծվածքներդ ալ. սանկ մարդ վախցնել կըլլա՞, աս ի՞նչ թեթևություն է. արդեն քաշածներս քիչ եյին, մեյ մ՚ալ աս ելավ, (աթոռի մը վրա կը նստի) ծառայության պես տաժանելի բան չկա... ինքզինքս ճանչցած օրես ի վեր իմ անձիս համար բնավ աշխատած չունիմ, ինչու վոր անձիս տերը չեմ. նստիլ ուզած ատենդ յե՛լ կըսեն, յելնել ուզած ատենդ՝ նստե կըսեն։ Առտվնե մինչև իրիկուն ասդին վազե, անդին վազե, գիշերները մինչև ժամը տասը նստե, առտուն ալ կանուխ յել, մարդս չհիվընդնար, հարկավ կը հիվընդնա, բայց իմ գործերս այնչափ

շատ են, որ հիվանդ ըլլալու ժամանակ չեմ կրնար գտնել։ Հազիվ թեքիչ մը պիտի նստիս, որիորդը կը կանչէ (կըն-կան ձայնով) Բարթեմ, Բարթեմ, ի՞նչ կա, սա գլխարկը որիորդ Մարիցային տար և ըսէ, որ ճերմակ ծաղիկները հանէ ու տեղը կարմիր դնէ։ Կերթաս սա գործը կը լմնցնես, կուգաս, մեյ մ'ալ անդիեն Արշակը կը կանչէ — Ի՞նչ կա, սա նամակը որիորդ Սոֆիին տար, սպասէ ու պատասխանը բեր. աղեկ որ շատ անգամներ նամակը ձգելուս պես կառնեմ կը քալեմ ու պատասխան չգրեց, կըսեմ, ինչու որ պատասխանը բերելու ըլլաս նէ՝ պատասխան մըն ալ ասկեց պիտի տրվի, սա պատասխան, ան պատասխան, սա պատասխան, ան պատասխան, սա պատասխան, ան պատասխան, (Թերեզա կը մտնէ) սա պատասխան, ան պատասխան, սա պատասխան, (Թերեզան տեսնելուն պես շուտով կսկսի ավլել)։

ԹԵՐԵԶԱ — Ի՞նչ կըսեյիր, Բարթեմ։

ԲԱՐԹԵՄ — Կըսեյի, թե այս տան մեջ շատ յերջանիկ կյանք մը կը վարեմ և թե մինչև վերջին շունչս ձեզի յերախտապարտ ըլլալու յեմ. (կավլե)։

ԹԵՐԵԶԱ — (Ինքնիրեն) Յեղբորս ամուսնությունը միտքս գալուն պես, չեմ կրնար խնդալս զսպել, խիստ ծաղրելի ամուսնություն մը պիտի ըլլա... և ամենուն բերանը պիտի իյնանք. բայց ինչ փույթ ինձի, ես իմ գործիս նայիմ, այսոր պետք է, որ սիրտս բանամ Արշակին. չեմ հուսար, որ սերս մերժե, ինչու որ ասկե առջի օր Պապիկը ըսավ, թե քեզի պես նորատի և ազնիվ կին մը ունենալը Արշակին մեծ պատիվ է. ուստի մեջերնիս խոսքը լմնցնելե վերջը՝ անգամ մ'ալ յեղբորս հարցընեմ, թեպետ և անիկա չհավանի ալ նէ՝ ես դարձյալ գործը կը լմնցնեմ... կարծեմ Արշակն է։

ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՒՅՆՔ, ԱՐՇԱԿ

ԱՐՇԱԿ — Հայրս դեռ ճաշեն չելա՞վ։

ԲԱՐԹԵՄ — Ոչ, ինձ հրամայեց, որ սա տեղը ավլեմ, կարելի յե, որ հիմա հոս գա։

ԱՐՇԱԿ — (Մեկուսի) Գալուն պես կը հայտնեմ գաղտնիքս իրեն։

ԹԵՐԵԶԱ — (մեկուսի) Հեռը խոսելու ժամանակն է, բայց սա ապուշը հեռացնենք նախ. Բարթեմ, գնա նայե դուռը բաց է։ (Բարթեմ կերթա) Քանի մը ժամանակե ի վեր տխրություն մը կը տեսնեմ վրադ, Արշակ, ի՞նչ է պատճառը արդյոք։

ԱՐՇԱԿ — Պատճառը մի հարցներ, Թերեզա, այն որ բանաստեղծ է, ժամանակ ժամանակ կը փոխվի։

ԹԵՐԵԶԱ — Բայց այդ պատճառը ինձմե պահելու չես, ինչու որ չորս տարու էյիր յերբ հայրդ ու մայրդ մեռնելով, անոք ու անօգնական մնացիր, և այն ատեն յեղբայրս քեզ հոս բերավ և իբր հայր դքեզ խնամելով...

ԲԱՐԹԵՄ — Բաց է։

ԹԵՐԵԶԱ — Գնա գոցե. դքեզ խնամելով մեծցուց և մենք ալ իրարու հետ իբր յեղբայր և քույր կը վարվեյինք այն ատենե ի վեր։

ԱՐՇԱԿ — Այո, Թերեզա, քեզի միշտ յերախտապարտ եմ։

ԹԵՐԵԶԱ — Այնչափ գաղտնիքներ կը հաղորդեյինք իրարու, մեկտեղ կը պտըտեյինք, մեկտեղ կը զվարճանայինք, իրարմե կասկածելու տեղի չունեյինք, և ի՞նչ է այսոր գլուխդ կախած յերեսս նայիլ չես ուզեր, (մեկուսի) ան ալ զիս կը սիրե, բայց ան ալ ինձի պես չհամարձակիր բացվելու։

ԲԱՐԹԵՄ — Գոցեցի։

ԹԵՐԵԶԱ — Գնա բաց։

ԱՐՇԱԿ — Ինչու՞ համար կուզես գաղտնյացս տեղեկանալ, որիորդ, միթե ամեն բան պ. Թադեյի հրամանով չ՞կատարվիր. պիտի կրնաս վիշտերուս դարման տանիլ, յերբ յեղբայրդ դեմ կենալ ուզե, (մեկուսի) ո՜հ, Սոֆի։

ԹԵՐԵԶԱ — (մեկուսի) Սկսավ բացվիլ, (բարձր) յեթե յեղբայրս դեմ կենա, ես կրնամ առանց անոր խոսքին ականջ կախելու...

ԲԱՐԹԵՄ — Բացի։

ԹԵՐԵԶԱ — Գնա գոցե. ես կրնամ առանց անոր խոսքին ականջ կախելու՝ քեզի դյուրություն ընել և դքեզ յերջանկացնել. ո՜հ, գաղտնիքդ մի պահեր ինձմե, Արշակ, կաղաչեմ, հայտնե սիրտդ։

ԲԱՐԹԵՄ — Գոցեցի։

ԹԵՐԵԶԱ — Գնա բաց։

ԲԱՐԹԵՄ — Որիորդ, թե որ կուզեք՝ վարը դրան քով կայնիմ,

ասկէց իմաց տուէք ինծի, բաց ըսէք նէ՝ կը բանամ, գոց ըսէք նէ՝ կը գոցեմ։

ԹԵՐԵԶԱ — Գնա դուռը բաց կըսեմ, մտիկ ընելու ժամանակ չունիմ։ Խօսէ, Արշակ։

ԱՐՇԱԿ — Ահ, Թերեզա, սէրը...

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՒՅՆՔ, ԹԱԴԷ

ԹԱԴԷ — (մեկուսի) Սէրը (բարձր) ձեր է Բարթեմը։

ԹԵՐԵԶԱ — Հոս չեկաւ, յեղբայր իմ։

ԹԱԴԷ — Հրամայած էյի իրեն, որ հոստեղը աւլէ. ո՞ր ծակը մտաւ անպիտանը։

ԱՐՇԱԿ — Հոս չեկաւ. հայր, քեզի խօսք մը ունեյի։

ԹԵՐԵԶԱ — Յեղբայրս, կուզեյի քեզի հետ առանձին տեսնուիլ։

ԹԱԴԷ — Հիմա ժամանակ չունիմ, շտապողական գործեր ունիմ կատարելու, առանձին թողէք զիս, (կերթայ) պէտք է որ վրաս գլուխս քիչ մը շտկեմ, այս հագուստներով չեմ կրնար Սոֆիին ներկայանալ... բայց ո՞ւր կորսուեցաւ սա թշուառականը... այս ծառան ինծի վողջ վողջ գերեզման պիտի իջեցնէ, սատկողս գլխուս փորձանք առեր եմ թշուառականը։

ԲԱՐԹԵՄ — Ե՛ս, օրիորդ, բանամ, թէ գոցեմ... դուք... ներս հոս...

ԹԱԴԷ — Խենդեցա՞ր, ի՞նչ յեղար։

ԲԱՐԹԵՄ — Չէ, տէր իմ։

ԹԱԴԷ — Ո՞ւր էյիր յերկու ժամէ ի վեր։

ԲԱՐԹԵՄ — Դուռը բացի։

ԹԱԴԷ — Վերջը՞։

ԲԱՐԹԵՄ — Վերջը գոցեցի։

ԹԱԴԷ — Ե՛յ, վերջը՞։

ԲԱՐԹԵՄ — Վերջը դարձյալ բացի։

ԹԱԴԷ — Ո՞վ էր այս հրամանները քեզի տվողը։

ԲԱՐԹԵՄ — Ձեր քույրը, օրիորդ Թերեզան։

ԹԱԴԷ — (Մեկուսի) Ամեն բան կը հասկնամ, ալ կասկածներս փարատեցան, Արշակա հետ առանձին մնալ ուզելուն համար անիկա հեռացնելու աշխատեր է, և որդին ներս մտած ատենս ալ «սէրը» կըսեր Արշակ։

ՏԵՍԻԼ Ը.

ՆՈՒՅՆՔ, ԹԵՐԵԶԱ

ԹԵՐԵԶԱ — Իմացա վոր դուրս պիտի ելնեք յեղեր, յեղբայր իմ, կը խնդրեմ, վոր դուրս չելած ինծի մտիկ ընելու հաճեյիք։

ԹԱԴԷ — Ըսէ տեսնեմ. դուրս չել, Բարթեմ։ Արդեն ըսելիքդ չես գիտեմ, կեցիր ըսեմ, Արշակը կը սիրես, այնպես չէ՞։

ԹԵՐԵԶԱ — Այո, յեղբայր իմ, և միտքս դրի զինքն ինծի ամուսին ընել։

ԹԱԴԷ — Ան ալ քեզ կը սիրէ՞։

ԹԵՐԵԶԱ — Այնպես կը հավատամ։

ԹԱԴԷ — Այս խնդրույն վրա իրարու հետ խօսա՞ծ էք։

ԹԵՐԵԶԱ — Ամենևին։

ԹԱԴԷ — Շատ աղեկ. սենյակդ քաշվէ, յես Արշակին հետ կը խօսիմ և պետք յեղածը կը տնօրինեմ, բավական է, վոր ան ալ քեզ սիրէ։

ԹԵՐԵԶԱ — Ինծի համար կը մեռնի։

ԹԱԴԷ — Յերանի թե ճշմարիտ ըլլար։

ԹԵՐԵԶԱ — Յես սենյակս կը քաշվիմ, յեղբայրս, և կը հուսամ, վոր չեք մոռնար ժամ առաջ Արշակին հետ խօսելու. յես ալ կը փափաքիմ, վոր ձեր ձեռքովը կատարվի այս գործն ալ, վորովհետև մեծ յեղբայրս եք (կերթա)

ՏԵՍԻԼ Թ.

ԹԱԴԷ, ՎԵՐՋԸ ԱՐՇԱԿ

ԹԱԴԷ — Քառասուն տարու աղջիկ քսան տարու յերիտասարդի մը հետ կարգվիլ կուզէ, թե վոր դեմ կենալու ըլլամ՝ տուն մեջ նստելու չէ, և կամ նստելու ալ ըլլամ՝ ամեն օր կռիվ ընելու չէ. սա ալ չքաշվելուն համար զիրար միացնելու չէ. բայց լոտը պիտի խնդա յեղեր, ի՞նչ ընենք, բավական է, վոր անոնք զիրար սիրեն. ահա Արշակն ալ կուգա։

ԱՐՇԱԿ — Հայր իմ։

ԹԱԴԷ — Նստէ, տղաս։

ԱՐՇԱԿ — Քեզի գաղտնիք մը ունիմ հաղորդելու։

ԹԱԴԷ — Այդ գաղտնիքը արդէն գիտեմ ես, միայն սա չափ ըսե ինծի, պիտի կրնա՞ս զինք երջանիկ ընել։
ԱՐՇԱԿ — Որչափ որ ձեռքես գա։
ԹԱԴԷ — Շատ կը սիրե՞ս զինքը։
ԱՐՇԱԿ — Հոգւույս պես։
ԹԱԴԷ — Ան ալ քեզ կը սիրե՞։
ԱՐՇԱԿ — Այնպես կը հուսամ։
ԹԱԴԷ — Որոշած եք իրարու միանալ։
ԱՐՇԱԿ — Այո։
ԹԱԴԷ — Աղեկ խորհեցա՞ք.
ԱՐՇԱԿ — Այո, շատ աղեկ խորհեցանք։
ԹԱԴԷ — Կուզե՞ս որ այս շաբթու խոսկապը ըլլի։
ԱՐՇԱԿ — Եթե կուզեք, այսօր, հիմա, այս ժամուս։
ԹԱԴԷ — Զինքը հոս կանչե՞մ։
ԱՐՇԱԿ — Ահ, գանձ մը կը պարգեւեք ինծի։
ԹԱԴԷ — Հիմա հոս բերել կուտամ, ձեռք ձեռքի տալով գործը կը լմնցնեմ։
ԱՐՇԱԿ — Ահ, որչափ բարի եք, հայր։
ԹԱԴԷ — Ես ալ ձեր սիրույն վկան կըլլամ։
ԱՐՇԱԿ — Երախտապարտ կընեք զիս։
ԹԱԴԷ — Ուստի բերել տամ։
ԱՐՇԱԿ — Այո, կառք մը վարձեցեք։
ԹԱԴԷ — Կառքը ի՞նչ պիտի ընենք։
ԱՐՇԱԿ — Ոտքով բերել տալը չվայլեր։
ԹԱԴԷ — Ի՞նչ կըսես, մեկ սենյակեն մյուս սենյակը կա՞ռք պիտի վազցնենք։
ԱՐՇԱԿ — Ո՞ր սենյակն է։
ԹԱԴԷ — Սա քովի սենյակն է։
ԱՐՇԱԿ — Ե՞րբ մտավ հոն։
ԹԱԴԷ — Հիմա ես խրկեցի։
ԱՐՇԱԿ — Հո՞ս եր։
ԹԱԴԷ — Վայրկյան մը առաջ հոս եր, ինծի հետ։
ԱՐՇԱԿ — Քեզի հետ ի՞նչ գործ ուներ։
ԹԱԴԷ — Քու վրա ունեցած սերը հայտնեց ինծի։
ԱՐՇԱԿ — Բայց ուսկի՞ց կը ճանչնա քեզ։
ԹԱԴԷ — Ի՞նչ ըսել է, մեկը իր եղբայրը չճանչնա՞ր։

ԱՐՇԱԿ — Դուն որո՞ւ համար կը խոսիս։
ԹԱԴԷ — Թերեզային համար, հապա դուն ո՞վ կարծեցիր։
ԱՐՇԱԿ — Ես Սոֆիին համար…
ԹԱԴԷ — Սոֆիի՞ն համար…
ԱՐՇԱԿ — Այո։
ԹԱԴԷ — Մեկ աղջիկը քանի՞ հոգի կառնե. Սոֆին ես պիտի առնեմ։
ԱՐՇԱԿ — Դո՞ւն պիտի առնես։
ԹԱԴԷ — Այո։
ԱՐՇԱԿ — Ոհ, հայր իմ, ասիկա զիս մեռցնել ըսել է։
ԹԱԴԷ — Լավ, գիտցիր, որ փիլիսոփա մը գիտե ինչ ընելիքը։
ԱՐՇԱԿ — Ո՛հ, բանաստեղծ մը չկրնար դիմանալ, որ…
ԹԱԴԷ — Դեռ կը խոսի՞ս, ապերախտ։
ԱՐՇԱԿ — Սոֆին զիս կը սիրե, հայր։
ԹԱԴԷ — Լա՛վ։
ԱՐՇԱԿ — Ո՛հ, չպիտի լռեմ, Սոֆին իմս է։
ԹԱԴԷ — Սոֆին իմս պիտի ըլլա։
ԱՐՇԱԿ — Ոչ, իմս պիտի ըլլա։
ԹԱԴԷ — Լա՛վ, կըսեմ։
ԱՐՇԱԿ — Չպիտի լռեմ։
ԹԱԴԷ — Ալ համբերությունս կը հատնի (վրան վազելով) ապերախտ։

ՏԵՍԻԼ Ժ.

ՆՈՒՅՆՔ, ՊԱՊԻԿ

ԹԱԴԷ — Տես ի՞նչպես լրբությամբ կը խոսի ինծի պես փիլիսոփայի մը։
ՊԱՊԻԿ — (ցած առ Թադե) Լիրբին մեկն է։
ԱՐՇԱԿ — Լսեցի՞ր, ինչպես անամոթաբար կը վիրավորե բանաստեղծ մը։
ՊԱՊԻԿ — (ցած առ Արշակ) Անամոթին մեկն է։
ԹԱԴԷ — Իմ առնելիք աղջիկս ձեռքես առնելու ելլելը տղայություն չե՞։
ՊԱՊԻԿ — (ցած առ Թադե) Տղային մեկն է։

ԱՐՇԱԿ — Այս տարիքին մէջ կարգվելու չելլելը խենդութիւն չէ՞։
ՊԱՊԻԿ — (ցած առ Արշակ) Խենթին մէկն է։
ԹԱԴԷ — Լաւ, լիրբ, աղջիկը ինծի համար հոգին կուտայ։
ՊԱՊԻԿ — (ցած առ Թադէ) Քեզի համար կը մեռնի։
ԱՐՇԱԿ — Աղջիկը զիս կը սիրէ։
ՊԱՊԻԿ — (ցած առ Արշակ) Քեզի համար կը խենթենայ։
ԹԱԴԷ — Սոֆին իմ կինս պիտի ըլլայ։
ՊԱՊԻԿ — (ցած առ Թադէ) Արդէն քուկդ է, թող ան ուզածին չափ սպասէ։
ԱՐՇԱԿ — Սոֆին իմս պիտի ըլլայ։
ՊԱՊԻԿ — (ցած առ Արշակ) Հարկաւ քուկդ պիտի ըլլայ, անոր խօսքերուն ականջ մի կախեր, զգուշցիր, վոր յես չեմ ուզեր, դուն առ, աղջիկը քենէ չբաժնվիր։
ԱՐՇԱԿ — Յես չեմ ուզեր, դուն առ։
ՊԱՊԻԿ — (ցած առ Թադէ) Յես քեզ չըսի՞, վոր անիկա տղայ է, աղջիկը քուկդ պիտի ըլլայ։
ԹԱԴԷ — Աղօթք ըրէ Պապիկին, վոր հոս գտնվեցավ, յեթէ վոչ կրնայի քեզ տունէս վռնտել այդպէս համարձակութեամբ խօսելուդ համար, դուն առ աղջիկը, յես չեմ ուզեր։
ՊԱՊԻԿ — (ցած առ Արշակ) Ի՞նչպես, խօսքս յելա՞վ։
ԱՐՇԱԿ — Յես չեմ ուզեր, դուն առ։
ՊԱՊԻԿ — (ցած առ Արշակ) Անիկա ձգեց, աղջիկը քեզի մնաց։
ԹԱԴԷ — Յես չեմ ուզեր։
ՊԱՊԻԿ — (ցած առ Թադէ) Սոֆին քեզի յեղաւ։
ԱՐՇԱԿ — Ո՜հ, հայր իմ, տուր ձեռքդ համբուրեմ զքեզ վշտացնելուս համար, (մեկուսի) միտքը փոխեցինք։
ԹԱԴԷ — Կը ներեմ քեզի, մեյ մընալ զգուշացիր հետս այսպէս վարվելու, (մեկուսի) աղջիկը ինծի մնաց։ (բարձր) Պապիկ, շնորհակալ եմ վոր մեր միջը մտնելով, մեծ կռիվ մը արգիլեցիր։
ՊԱՊԻԿ — Ձեր կռվույն մէջ մտնելով ձեզի հաշտեցնելը մեծ պատիվ կը համարիմ ինծի։
ԹԱԴԷ — (ցած առ Պապիկ) Պատրաստվինք Սոֆիին տունը յերթալու։
ՊԱՊԻԿ — (ցած առ Թադէ) Այո, մեկտեղ կերթանք։

ԱՐՇԱԿ — Տուր ձեռքդ սխմեմ, բարեխիղճ մարդ։
ՊԱՊԻԿ — Պարտքս է, (ցած առ Արշակ) Սոֆին քեզի մնաց, (ցած առ Թադէ) համոզեցի, վոր Սոֆին քեզի ձգե։
ԹԱԴԷ — Շնորհակալ եմ քենէ, Պապիկ, (ձախ ձեռքը կը բռնէ)։
ԱՐՇԱԿ — Յես ալ նույնպես, (աջ ձեռքը կը բռնէ)։
ՊԱՊԻԿ — Պարտքս կատարեցի։

(Վարագույր)

Ա Ր Ա Ր Բ.

(Հովսեփի տանը Գահիրէ)

Տ Ե Ս Ի Լ Ա.

ՏԻԳՐԱՆ, ՍՈՖԻ (Դռան առջև կեցած)

ՏԻԳՐԱՆ — Բայց չորս կողմդ նայէ, չըլլա որ մեզ մտիկ ընող մը ըլլա։
ՍՈՖԻ — Հանգիստ եղիր, սիրելիս, ես կը նայիմ։
ՏԻԳՐԱՆ — Ահա այսպէս, Սոֆի, հօրդ մերժողական պատասխանները ստիպեցին զիս ուրիշ միջոցներու դիմել քու հայրդ կակուղցնելով քեզ հետ ամուսնանալու համար։
ՍՈՖԻ — Բայց և այնպէս կրնա ըլլալ, որ այս միջոցը շատ սուղի նստի մեզի, որովհետև հայրս քանի մը օրէ ի վեր այնչափ տխուր է, որ կը վախնամ, թէ մի գուցէ այս տխրութիւնը մահ պատճառէ իրեն։
ՏԻԳՐԱՆ — Ո՛հ, մի՛ վախնար, կամաց կամաց կը վարժուի ատիկա, և թէ որ կուզէ այս դատէն ազատիլ ..
ՍՈՖԻ — Ինքն է, որ կուգա... հեռացիր, (Տիգրան կերթա, Սոֆի դուռը կը գոցէ) միշտ խոհուն, միշտ տխուր...

Տ Ե Ս Ի Լ Բ.

ՍՈՖԻ, ՀՈՎՍԵՓ

ՍՈՖԻ — Դարձյալ տխուր էք, հայրիկ։
ՀՈՎՍԵՓ — Ինչպէս կուզես, որ ուրախ ըլլամ, սիրուն աղջիկս, երբ տունս կործանելու փորձ կը փորձեն, երբ իմ ծեր տարիքիս մէջ զիս ողջ ողջ գերեզման իջեցնել կջանան

ՍՈՖԻ — Ցեղ մըն է այն, հայր իմ, որ...
ՀՈՎՍԵՓ — Չեմ ճանչնար, աղջիկս, միայն սա գիտեմ, որ ինծմէ հազար ոսկի առնելիք կը պահանջէ, մինչդեռ ես մեկէ մը ստակ առած չունիմ։
ՍՈՖԻ — Անհոգ եղէք, հայր իմ, արդարութիւնը շուտ կը հասնի։
ՀՈՎՍԵՓ — Դատերու մէջ ամենէն ուշ հասնողը արդարութիւնն է, սիրուն աղջիկս, և ինչ օգուտ երբ ես իմ կյանքէս զրկվիմ և զքեզ անոք ու անօգնական թողում։
ՍՈՖԻ — Այդ խոսքերովդ սիրտս կը հոշես, հայր իմ, կաղաչեմ, որ հանդարտիք. հարկավ պիտի գտնվի մեկը, որ այս փորձանքեն զքեզ ազատէ։
ՀՈՎՍԵՓ — Աստված լսէ բերնիդ, աղջիկս։
ՍՈՖԻ — Ցավ թէ որ անանկ մեկը գտնըվի, ինչ վարձատրութիւն կընես իրեն։
ՀՈՎՍԵՓ — Ինչ որ ուզէ, բավական է, որ սա փորձանքեն խալսիմ։
ՍՈՖԻ — (մեկուսի) Այս կերպով պիտի հաջողինք։
ՀՈՎՍԵՓ — Աչքս միշտ դրան վրա է, ինծ այնպես կուգա, որ մեկը պիտի գա և զիս բանտը պիտի տանի։
ՍՈՖԻ — Մտքերնուդ հանեցեք այդ կարծիքները, հայր իմ, հանդարտեցեք, քանի որ ձեր աղջիկը խոսք կուտա զձեզ այս փորձանքեն ազատելու։
ՀՈՎՍԵՓ — Ապրիս, աղջ կս։
ՍՈՖԻ — Միայն սա պայմանավ, թե...
ՀՈՎՍԵՓ — Ըսէ,
ՍՈՖԻ — Սա պայմանավ թե՝ ձեր ազատարարը ձեր փեսան պիտի ըլլա։
ՀՈՎՍԵՓ — Շատ աղեկ, աղջիկս, կը հավնիմ։
ՍՈՖԻ — Ցերթե այդպես է, ահա ես կերթամ (սենյակեն գլխարկն յեվ ծալն առնելով) քանի մը վայրկյանեն մեկը պիտի գա, քեզի հետ այս խնդրույն վրա խոսելու և միանգամայն խոստանալու, որ քեզ պիտի ազատե, բայց սա պայմանով թե...
ՀՈՎՍԵՓ — Զինքն ինծի փեսա ընեմ։
ՍՈՖԻ — Այո, (կերթա)։

Ա Ր Ա Ր   Բ.

(Հովսեփի տանը Գավիթը)

Տ Ե Ս Ի Լ   Ա.

ՏԻԳՐԱՆ, ՍՈՖԻ (Դրան առջեվ կեցած)

ՏԻԳՐԱՆ — Բայց չորս կողմդ նայե, չըլլա որ մեկ մարդ ըլլա մը ըլլա:

ՍՈՖԻ — Հանգիստ յեղիր, սիրելիս, չես կը նայիմ:

ՏԻԳՐԱՆ — Ահա այսպես, Սոֆի, հորդ մերժողական պատասխանները ստիպեցին զիս ուրիշ միջոցներու դիմել քու հայրդ կակուղցնելով քեզ հետ ամուսնանալու համար:

ՍՈՖԻ — Բայց և այնպես կրնա ըլլալ, որ այս միջոցը շատ սուղի նստի մեզի, վորովհետև հայրս քանի մը որե ի վեր այնչափ տխուր է, որ կը վախնամ, թե մի գուցե այս տխրութիւնը մահ պատճառե իրեն:

ՏԻԳՐԱՆ — Ո՜հ, մի վախնար, կամաց կամաց կը վարժվի ատիկա, և թե վոր կուզե այս ցաւեն ազատիլ ..

ՍՈՖԻ — Ինքն է, որ կուգա... հեռացիր, (Տիգրանն կերթա, Սոֆի դուռը կը գոցե) միշտ խոհուն, միշտ տխուր...

Տ Ե Ս Ի Լ   Բ.

ՍՈՖԻ, ՀՈՎՍԵՓ

ՍՈՖԻ — Դարձյալ տխուր եք, հայրիկ:

ՀՈՎՍԵՓ — Ի՞նչպես կուզես, որ ուրախ ըլլամ, սիրուն աղջիկս, յերբ տունս կործանելու փորձ կը փորձեն, յերբ իմ ծեր տարիքիս մեջ զիս վողջ վողջ գերեզման իջեցնել կաշխատին:

ՍՈՖԻ — Ցավ մը է այն, հայր իմ, որ...

ՀՈՎՍԵՓ — Չեմ ճանչնար, աղջիկս, միայն սա գիտեմ, որ ինձմե հազար վոսկի առնելիք կը պահանջե, մինչդեռ յես անոր մեկե մը սատակ առած չունիմ:

ՍՈՖԻ — Անհոգ յեղեք, հայր իմ, արդարութիւնը շուտ կը հասնի:

ՀՈՎՍԵՓ — Դատերու մեջ ամենեն ուշ հասնողը արդարութիւնն է, սիրուն աղջիկս, և ի՞նչ օգուտ յերբ յես իմ կյանքես զրկվիմ և զքեզ անոք ու անօգնական թողում:

ՍՈՖԻ — Այդ խոսքերովդ սիրտս կը հոշես, հայր իմ, կաղաչեմ, որ հանդարտիք. հարկավ պիտի գտնվի մեկը, որ այս փորձանքեն զքեզ ազատե:

ՀՈՎՍԵՓ — Աստված լսե բերնեդ, աղջիկս:

ՍՈՖԻ — Ցավ թե որ անանկ մեկը գտնըվի, ի՞նչ վարձատրութիւն կընես իրեն:

ՀՈՎՍԵՓ — Ինչ որ ուզե, բավական է, որ սա փորձանքեն խալսիմ:

ՍՈՖԻ — (մեկուսի) Այս կերպով պիտի հաջողինք:

ՀՈՎՍԵՓ — Աչքս միշտ դրան վրա է, ինձ այնպես կուգա, որ մեկը պիտի գա և զիս բանտը պիտի տանի:

ՍՈՖԻ — Մոքերնուդ հանեցեք այդ կարծիքները, հայր եմ, հանդարտեցեք, քանի որ ձեր աղջիկը խոսք կուտա զձեզ այս փորձանքեն ազատելու:

ՀՈՎՍԵՓ — Ապրիս, աղջիկս:

ՍՈՖԻ — Միայն սա պայմանավ, թե...

ՀՈՎՍԵՓ — Ըսե,

ՍՈՖԻ — Սա պայմանավ թե՝ ձեր ազատարարը ձեր փեսան պիտի ըլլա:

ՀՈՎՍԵՓ — Շատ աղեկ, աղջիկս, կը հավնիմ:

ՍՈՖԻ — Ցեթե այդպես է, ահա յես կե, թամ (սենյակեն գլխարկն յեվ շալն առնելով) քանի մը վայրկյանեն մեկը պիտի գա, քեզի հետ այս խնդրույն վրա խոսելու և միանգամայն խոստանալու, որ քեզ պիտի ազատե, բայց սա պայմանով թե...

ՀՈՎՍԵՓ — Ջինքն ինձի փեսա ընեմ:

ՍՈՖԻ — Այո, (կերթա):

ՏԵՍԻԼ Գ.

ՀՈՎՍԵՓ, ՎԵՐՋԸ ՊԱՊԻԿ

ՀՈՎՍԵՓ — Շնորհակալ եմ քեզմէ, աստուած իմ, որ սանկ բարեխիղճ դուստր մը պարգեւեր ես ինծի, դուստր մը, որ իր սիրականին միջոցաւ զիս պիտի ազատէ այս տագնապէն:

ՊԱՊԻԿ — (Դռնէն դուրս պոռալով) Պ. Հովսէփին անունը ձեր բերանը չվայլեր, յետե դուք չէք ճանչնար զինքը, ես աղէկ կը ճանչնամ, խայտառակ:

ՀՈՎՍԵՓ — Աս ո՞վ է:

ՊԱՊԻԿ — Պ. Հովսէփ ըսուած մարդը քաղաքիս մէջ մէկ հատիկ է, աշխարհիս մէջ իր նմանը չունի և դուն ո՞վ ես, որ զինքը անոր ասոր քով կը բամբասես, անզգամ, լիրբ, քսու, վատ, անամօթ:

ՀՈՎՍԵՓ — Չեմ ճանչնար զինքը...

ՊԱՊԻԿ — Ամէն մարդ իր անունը մեծ ակնածութեամբ կարտասանէ, անուն մը, որուն արտասանութիւնը ականջի խիստ անուշ է, անուն մը, զոր լեզուն կը սիրէ արտասանել, անուն մը, որ երկար ալ չէ, անուն մը, որ խորթ բառ մը չէ, անուն մը, որ ծայրը կոր ալ չկա. և դուն սանկ կոկիկ և կարճ անուն մը ի՞նչպես կը համարձակիս գէշ արտասանել, անամօթ. չլառ, վատ, քսու:

ՀՈՎՍԵՓ — (Դուրսը նայելով) Մարդ չկա, որո՞ւ հետ կը խօսի:

ՊԱՊԻԿ — Աղօթք ըրէ, որ Պ. Հովսէփը բարեխիղճ մարդ մ'է, ներողամիտ է: Ցեթէ անոր տեղ ուրիշ մը ըլլար, քեզ կախել կուտար. անզգամ. ամբարիշտ...

ՀՈՎՍԵՓ — Հանդարտեցէք, պարոն:

ՊԱՊԻԿ — Յել ի՞նչ կուզես այդ մարդէն, տունդ կործանեց է, ստա՞կ ուզեր է քենէ:

ՀՈՎՍԵՓ — Ամենևին ուզած չեմ, բոլորովին զրպարտութիւն է, (դռնէն դուրս պոռալով) յեթէ ստակ առեր եմ, ի՞նչու կը փախչիս, յեկուր ըսէ, յե՞րբ առեր եմ, յե՞րբ տվեր ես, ո՞ւր ուզեր եմ քեզմէ ստակ:

ՊԱՊԻԿ — Տեսա՞ր, անիրավ, յեթէ ինծի ընեյիր այդ խօսքերը, սիրով կը համբերեյի, բայց Պ. Հովսէփի պես մարդու մը,

որուն ամէն օր բարիքը կը վայելեն մարդիկ, ի՞նչ իրաւունք ունիս այսպես խօսելու, վատ, ապերախտ:

ՀՈՎՍԵՓ — Բոլորովին սուտ է:

ՊԱՊԻԿ — Ներեցէք, ձեր գլուխը ցավցուցի, բայց աշխարհիս մէջ կը գտնվին յեղեր այնչափ չար մարդիկ, որ համարձակին բամբասել ձեզի պես առատաձեռն մէկը, որ դեռ անցած տարի այնչափ ստակ բաժանեց աղքատաց:

ՀՈՎՍԵՓ — Չեմ հիշեր, ուրիշը չըլլա՞:

ՊԱՊԻԿ — Դուք եղէք, բայց ձեր ազնվականութիւնն է, որ չհի-շեր. որովհետև միշտ կուզեք, որ գաղտնի մնան ձեր ըրած բարիքները, և իրոք այնչափ գաղտնի կընեք, որ մարդ չիմանար:

ՀՈՎՍԵՓ — Ցես անգամ չիմացա, բայց կը ճանչնա՞ք այս վատին ով ըլլալը:

ՊԱՊԻԿ — Վատին մէկն է:

ՀՈՎՍԵՓ — Ինծի հետ այսպես վարվելու իրավունք ունի՞:

ՊԱՊԻԿ — Ամենևին:

ՀՈՎՍԵՓ — Պատմութիւնը ընե՞մ ձեզի:

ՊԱՊԻԿ — Կաղաչեմ, քիչ մը սպասեցէք (բաշկինակը կը հանէ, իբր թէ՝ անով ականջները կը բանա, աթոռը կը մոտեցնե յեվ ձախ ականջը Հովսեփին բերնին կրցնելով՝ մյուս ձեռքովը ականջը կը խփէ) սկսեցէք.

ՀՈՎՍԵՓ — Շատ զվարճալի պատմութիւն մ'է:

ՊԱՊԻԿ — (Խնդալով) Իրավ, շատ զվարճալի յէ, սանկ զվարճալի պատմութիւն բնավ լսած չեյի, (կը խնդա):

ՀՈՎՍԵՓ — Մարդ մը, որուն յերեսը տեսած չունեյի, անցյալ շաբթու ինծի դեմ դատ կը բանա, ըսելով՝ թե իրմէ հազար ղուշի փոխ առած ըլլամ. խնդալու բան չէ՞ ասիկա:

ՊԱՊԻԿ — Իրմէ հազար ղուշի փոխ առած ըլլաք, ահ, շատ խնդալու բան:

ՀՈՎՍԵՓ — Իրմէ փող մը անգամ ուզած չեմ, և չեմ ալ ուզեր. բայց կը զարմանամ, թե ի՞նչպես մարդ մը կրնա այսչափ սուտ խօսիլ:

ԳԵՎՈՐԳ — Տէր, մէկը յեկեր ձեզ տեսնել կուզե:

ՊԱՊԻԿ — Գիտցիր, որ մէկը խօսած ատեն անոր խօսքը ընդմիջելը անկրթութիւն է. շարունակեցէք:

ՀՈՎՍԵՓ — Յերկու անգամ դատի գացի, վոտքի վրա կայնելով վոտքերս թմրեցան, ուռեցան։
ՊԱՊԻԿ — Խեղճ վոտքեր, ահ, ձեր վոտքերը իմ սիրտը կը շարժեն, ինչու վոր անմեղ են ձեր վոտքերը և խիստ դժգույն, ահ, ձեր վոտքերուն պես մարդասեր և բարեգութ վոտք խիստ քիչ կը գտնվի։
ՀՈՎՍԵՓ — Յեթե պարտք ունենայի, չէյի՞ վճարեր։
ԳԵՎՈՐԳ — Տեր․ ․
ՊԱՊԻԿ — Բայց աս ի՞նչ անկրթություն է ուրիշի մը խոսքը կտրելը, ով վոր է, թող սպասե քիչ մը․ շարունակեցեք, կերևի թե՝ այս պատմության վերջը խիստ հետաքրքրական է։
ՀՈՎՍԵՓ — Յեթե պարտք ունենայի, չէյի՞ վճարեր։
ԳԵՎՈՐԳ — Տեր…
ՊԱՊԻԿ — Թող չտար, վոր շարունակե․ կաղաչեմ, շարունակեցեք։
ՀՈՎՍԵՓ — Յեթե պարտք ունենայի, չէյի՞ վճարեր, (մեկուսի) խոսքըս լմնցավ, շարունակեցեք կըսե։
ԳԵՎՈՐԳ — Ահա վեր կելլե։

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՒՅՆՔ, ԹԱԴԵ

ՊԱՊԻԿ — (Թադեյին՝ ցած) Ձեր անունը տալուս պես անանկ մեկ ուրախացավ, վոր չեմ կրնար բացատրել (Հովսեփին՝ ցած) ինչպես մարդ ըլլալնիդ իրեն համառոտ կերպով պատմեցի և շատ գոհ յեղավ (բարձր) պատիվ ունիմ ձեզ ներկայացնել Պ. Հովսեփ՝ վոր ազնիվ և մարդասեր անձ մըն է, (գլուխ կը ծռեն իրարու) կը ներկայացնեմ ձեզ Պ. Թադեն, վոր փիլիսոփա մարդ մըն է, (գլուխ կը ծռեն իրարու) կը ներկայացնեմ ձեզ Պ. Հովսեփը, վոր մեծ տուն մը ունի, այս երեք դատ մըն ալ ունի, (իրարու հարգանք) կը ներկայացնեմ ձեզ Պ Թադեն, վոր դատի վերաբերյալ գործերը իսկույն կը լմնցնե իր փիլիսոփայությամբը․ (իրարու հարգանք) կը ներկայացնեմ ձեզ Պ. Հովսեփին վոտքերը, (Հովսեփին վոտքը Թադեյի կը ցուցնե) վորք ազնիվ և աս որերըս քիչ մ'ալ ուռեցած են, (իրարու հարգանք) ուստի

կրնաք ձեր գործերուն վրա խոսակցիլ (ցած առ Հովսեփ) դատդ բաց իրեն, (ցած առ Թադե) ամուսնությանդ վրա խոսեցա, շատ գոհ յեղավ, խոսքը բաց իրեն։ (կերթա)։

ՏԵՍԻԼ Ե.

ՀՈՎՍԵՓ, ԹԱԴԵ

ՀՈՎՍԵՓ — Ասանկ դատ մը լսած ունեցի՞ք, վոր մեկը ուրիշե մը հազար վոսկի առնելիք պահանջե։
ԹԱԴԵ — Այո, բայց սերն ալ տարօրինակ բան մ'է գրեթե, շատ անգամ անհամբեր կընե մարդը և կարծեմ ինչ բանի համար հոս յեկած ըլլալս առաջուց իմաց տրվեցավ ձեզի։
ՀՈՎՍԵՓ — Այո, իմաց տրվեցավ, գիտեմ, աղջիկս կը սիրեք, ան ալ զձեզ կը սիրե, բայց կարծեմ պայման մըն ալ կա, վոր իմ դատս գլուխ պիտի հանեք։
ԹԱԴԵ — Այո, ձեր դատը յես անձամբ պիտի վարեմ, այս մասին անհոգ յեղեք։ Ձեր դատը փիլիսոփայություն է և փիլիսոփայությամբս պիտի կրնամ զայն վաստկիլ։
ՀՈՎՍԵՓ — Դատս փիլիսոփայությո՞ւն է ըսիր։
ԹԱԴԵ — Այո, փիլիսոփայությունը տեսակ տեսակ է, պատմական փիլիսոփայություն կա, ուր շատ մը պատմություններ կըլլան, իմացական փիլիսոփայություն կա, վոր ընդհանրապես ուղեղին և գանկին տապկելուն վրա կը խոսի, մաթեմաթիքական փիլիսոփայություն մ'ալ կա, վոր մարդուս հասակին համեմատ հագուստ շինելու արվեստը կը սորվեցնե․ ուստի, քանի վոր ձեր դատին մեջն ալ պատմություն, ուղեղ, և հագուստ կա, ձեր դատը կըսեմ փիլիսոփայական է։ Ձեր դատին վերջնական վորոշում մը տալու համար նախ գիտնալու յեմ, վոր իրավունքը վո՞ր կողմն է, վորպեսզի ըստ այնմ գործեմ։
ՀՈՎՍԵՓ — Իրավունքը իմ կողմս է։
ԹԱԴԵ — Անանկ է նե՝ դատը վաստկեցար։
ՀՈՎՍԵՓ — Բայց ան թշվառականն ալ կը պնդե, վոր իր կողմն է։
ԹԱԴԵ — Անանկ է նե ան վաստկեցավ։

ՀՈՎՍԵՓ — Բայց դատի մը մէջ յերկու հոգի կրնա՞ն իրաւունք ունենալ։

ԹԱԴԷ — Այո, ով որ տրամաբանութեան վրայ քիչ մը գաղափար ունի, ինծի հետ պիտի ըսէ, թէ միեւնոյն դատին մէջ յերկու հոգի կրնան իրաւունք ունենալ սա փաստաբանութեամբ, որ, եթէ յերկու կողմն ալ իրաւունք չունենային, ինչ հարկ կար դատ բանալու. ասկից զատ անանկ դարու մը մէջ կապրինք, ուր իրաւունքը ճաշակի տեղ անցած է, ամէն մարդ իրենը ունի։

ՀՈՎՍԵՓ — Ինձմէ առնելիք չունի, չեմ ճանչնար զինքը։

ԹԱԴԷ — Զինքը չճանչնալնիդ բնաւ չհետեւիր, թէ այդ պահանջը ճշմարիտ չըլլայ, շատ ճշմարտութիւններ կան, զորս մարդիկ չեն ճանչնար. իրենց չի ճանչնալնին չհետեւիր, թէ այդ ճշմարտութիւնները չկան։ (մեկուսի) Այսչափ խօսելիքս մտքէս չեր անցներ։

ՀՈՎՍԵՓ — Իրմէ ստակ առնելս չեմ գիտեր.

ԹԱԴԷ — Չէ՞ք գիտեր, տէր, փիլիսոփայութեան մեկ ճիւղն ալ աս է, ընդհանրապէս մարդիկ չեն գիտեր, ինչ որ գիտեն, և ճիշդ ասոր համար է, որ յերեւելի փիլիսոփայ մը ըսեր է, «զայս միայն գիտեմ զի ոչինչ գիտեմ»։ (մեկուսի) Չեմ կրնար հաւատալ որ այս խօսքերը ըսողը ես եմ։

ՀՈՎՍԵՓ — Եթէ յերկուքնիս ալ իրաւունք ունինք, դատը ո՞վ պիտի վաստըկի։

ԹԱԴԷ — Յերկուքնիդ ալ կը վաստըկիք, և հիմակվան դատերուն շատը այսպէս կը վերջանայ։

ՀՈՎՍԵՓ — Բայց...

ԹԱԴԷ — Սակայն անանկ ապացոյցներ ունիմ, որոնցմով կրնամ հաստատել, թէ իրաւունքը ձեր կողմն է, որովհետեւ պատմական օրինաց հարցուր հազարերորդ հոդվածին մէջ կը գրէ, որ յերբ մէկը ուրիշի մը ձեռք վերցնէ՝ կը տուժէ. ասկից կը հետեւի, թէ դուք իրմէ ստակ առած չէք։ (Մեկուսի) Մարդս ի հարկին կրնայ յեղեր խօսիլ։

ՀՈՎՍԵՓ — Ամենեւին ստակ առած չեմ։ (մեկուսի)։

ԹԱԴԷ — Ասկէ վերջը օրենք մ'ալ կայ, գիշերը առանց լապտերի պտըտողները կը բռնեն. սա ալ հայտնի ապացոյց մ'է, որ իրմէ բնաւ ստակ առած չունիք։

ՀՈՎՍԵՓ — Այո, առանց լապտերի տեղ մը գացած չունիմ։

ԹԱԴԷ — Ուստի դատը վաստըկեցաք։

ՀՈՎՍԵՓ — Աղջիկս քուկդ է։

ԹԱԴԷ — Կը սիրե՞ զիս։

ՀՈՎՍԵՓ — Յես ձեզ չեյի ճանչնար, աս առտու խօսքը բացաւ և ըսաւ, թէ ձեզի փեսայ պիտի ընեմ ինծի։

ԹԱԴԷ — Շնորհակալ եմ, այս դատը լմնցածեն ետեւ, հիմակուհիմա մնաք բարով, կրնայ ըլլալ, որ ինձմէ վերջը ուրիշ մ'ալ գայ և դատի վրայոք ձեր բերնեն խօսք առնել ուզէ, չըլլա, որ իրեն վստահիք։ (մեկուսի) Արշակեն կասկած ունիմ, որ հոս գայ (կերթա)։

ՏԵՍԻԼ Զ.

ՀՈՎՍԵՓ, ՎԵՐՋԸ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎՍԵՓ — Խելացի մարդը տես ինչպէս շուտ հասկըցաւ, որ յես պարտք չունիմ. քիչ մարդ կը գտնըվի, որ ասանկ օրինագիրքեն փաստ առաջ բերեն. յես թեպետեւ պարտք չունիմ, բայց օրենքի տեղյակ չըլլալուս, հազար ոսկին վճարել հարկ պիտի ըլլար. յեթէ այս փիլիսոփան չգար... մէկը կուգայ...

ՏԻԳՐԱՆ — Բարեւ...

ՀՈՎՍԵՓ — Գիտեմ հոս գալուդ պատճառը, զիս այնքան ապուշ կարծեցիր դուն.

ՏԻԳՐԱՆ — Չէ։

ՀՈՎՍԵՓ — Մտիկ ընելու ժամանակ չունիմ, խաբդախ, խաբեբայ։

ՏԻԳՐԱՆ — Հետս տեսնըվիլ ուզեր էք։

ՀՈՎՍԵՓ — Յես քու լարած վորոգայթներուդ չեմ բռնըվիր, դուն ինծի աղեկ նայէ։

ՏԻԳՐԱՆ — Գթութիւն։

ՀՈՎՍԵՓ — Գթութիւն չունիմ յես, այս կերպով զիս համոզել կաշխատիս, որ բերնես խօսք առնես։ Դատս քաղաքին մէջ ամենեն յերեւելի փաստաբանի մը հանձնեցի. այդ սուտութեան հեղինակը կախել պիտի տամ, կախելեն վերջն ալ գլուխը պիտի կտրեմ, և կամ նախ գլուխը պիտի կտրել տամ և ա-

պա կախել պիտի տամ. կախելէն վերջն ալ վեց տարի բանտը դնել պիտի տամ։

ՏԻԳՐԱՆ — Բայց...

ՀՈՎՍԵՓ — Աղջիկս անանկ մէկը գտաւ, որ այս պատը գլուխ պիտի՞ հանէ, և աղջիկս ալ անոր պիտի տամ։

ՏԻԳՐԱՆ — Այդ մարդը հոս չպիտի՞ գար։

ՀՈՎՍԵՓ — Այո, չեկավ, գնաց։

ՏԻԳՐԱՆ — (մեկուսի) Ի՞նչ կը դառնա, չեմ գիտեր.

ՀՈՎՍԵՓ — Ահ, յեթէ գտնայի սա անիծյալը։

ՏԻԳՐԱՆ — Բայց ո՞վ է այս անիծյալը։

ՀՈՎՍԵՓ — Բռնվելու ըլլա նե՝ կը տեսնաք. բայց չեմ ուզեր, որ դուք հոս կենաք, չեմ ուզեր, որ տունս վոտք կոխեք, դուրս յելլիր, վատ, խարդախ։

ՏԻԳՐԱՆ — (մեկուսի) Ապուշ, Սոֆին իմս պիտի ըլլա (կերթա)։

ՀՈՎՍԵՓ — Ինչ աղեկ բան է նախազգուշութիւնը, յեթէ փաստարանը առաջուց իմաց չտար, սըվոր կեղծավոր խոսքերուն պիտի խաբվէյի և բերնես խոսք պիտի փախցնէյի. յերթամ քիչ մը սենյակս հանգչելու. Գեվորգ, Գեվորգ. (կուգա) հոս կեցիր, աչքդ դրան վրա ըլլա, մեկը հիմա ուրախ լուր մը պիտի բերե, շուտով իմաց տուր ինձի (կերթա)։

ՏԵՍԻԼ Է.

ԳԵՎՈՐԳ, ՎԵՐՋԸ ԱՐՇԱԿ

ԳԵՎՈՐԳ — Ուրախ լուր ըսավ ու գնաց. յես ինչ գիտնամ, վո՞րը տխուր է, վո՞րն ուրախ։

ԱՐՇԱԿ — Ո՛ ո՛ ո՛, ձեր ազնվութիւնը հոս...

ԳԵՎՈՐԳ — Այո, հոս է։

ԱՐՇԱԿ — Ինչպե՞ս է, աղե՞կ է։

ԳԵՎՈՐԳ — Շատ աղեկ է, հիմա քովի սենյակը գնաց։

ԱՐՇԱԿ — Յես ձեզի համար կը խոսիմ, պարոն, և դուք ուրիշի մը համար կարծեցիք. սովորութիւն է, որ յերբ մեկը իրմե մեծին հետ խոսի, յերկրորդ դեմքով կը խոսի, դուք ձենե մեծերուն առջև վո՞ր դեմքով կը խոսիք։

ԳԵՎՈՐԳ — (դեմքը ցուցնելով) Այս դեմքով։

ԱՐՇԱԿ — Ատ ըսել չեմ ուզեր, դերանունները չե՞ս կարդացեր, յես, դուն, ան, մենք, դուք, անոնք...

ԳԵՎՈՐԳ — Անոնք հոս չեկած չունին։

ԱՐՇԱԿ — Ո՛չ, տգիտութիւն, տգիտութիւն, քերականութեան վրա ալ բնավ գաղափար չունիս դուն, չե՞ս գիտեր, թե ինչպես կը շինեն խոսքը։

ԳԵՎՈՐԳ — Չէ։

ԱՐՇԱԿ — Իրա՞վ չես գիտեր, թե գիրերը վանկ կը շինեն, վանկերը բառ կը շինեն, բառերն ալ խոսք կը շինեն։

ԳԵՎՈՐԳ — Մեր տունը անանկ բաներ չեն շիներ։

ԱՐՇԱԿ — Դուն ինձի համբերութիւն տուր, աստված իմ, բայց անուն մը կամ բառ մը կապել հարկ ըլլա նե, ի՞նչպես կը կապես։ Օրինակի համար, կողովը ի՞նչպես կը կապես։

ԳԵՎՈՐԳ — Ձեռքով։

ԱՐՇԱԿ — Բայց ինչո՞վ։

ԳԵՎՈՐԳ — Չվանով կը կապեմ, բեռնակրին շալակը կուտամ։

ԱՐՇԱԿ — Աստված իմ, ինչ տգետներ կը գտնվին յեղեր դեռ. սա վոտանավորը մտիկ ըրե, (կը կարդա) ի՞նչպես եւ դեռ վշտայեն ալ անցած չեմ։

ԳԵՎՈՐԳ — Յես կերթամ կոր...

ԱՐՇԱԿ — Ի՞նչ, կերթա՞ս կոր, կերթաս կոր, կոր, կոր, մեղա ըսե, մեղա ըսե, մեյ մ'ալ չըսես։

ԳԵՎՈՐԳ — Բայց կերթամ կոր ահա, չեմ գար կոր ա։

ԱՐՇԱԿ — Գրականութեան թշնամի սա «կոր»ը վերցուր (Գեվորգ գետինը կը նայի վերցնելու, բան մը փնտռելու պես) ականջի գեշ կուգա կոր։

ԳԵՎՈՐԳ — Բայց կերթամ կոր, գործ ունիմ։

ԱՐՇԱԿ — Ապուշ, տգետ, տխմար, ինչո՞ւ կերթաս կոր։

ՏԵՍԻԼ Ը.

ՆՈՒՅՆՔ, ՊԱՊԻԿ

ՊԱՊԻԿ — Ինչո՞ւ կերթաս կոր, թշվառական, քանի որ կեցի՛ր, կըսեն կոր։

ԱՐՇԱԿ — Ա՜հ, չես գիտեր, թե վորչափ բարկացուց զիս։

ՊԱՊԻԿ — Հապա իմին ծունկներս սկսան դողալ, կերթամ կոր,

լսելու պես գլուխս դարձավ, ինքզինքս բռնեմ ըսի, չը կրցա. մարդս կրնա՞ ասանկ պարագային մեջ ինքզինքը բռնել. բայց ինչո՞ւ կերթաս կոր։

ՏԵՍԻԼ Թ.

ՆՈՒՅՆՔ, ՀՈՎՍԵՓ

ՀՈՎՍԵՓ — Ի՞նչ կա, ի՞նչ յեղաք։

ԱՐՇԱԿ — Ահ, ձեր ծառան ականջս վիրավորեց, պարոն։

ՀՈՎՍԵՓ — Ի՞նչ, ականջդ վիրավորեց, մարդասպան (վրան կր վազե յեվ ծեծելով դուրս եր հանե) Ներեցեք, պարոն, դանակո՞վ վիրավորեց (ականջը նայելով)։

ԱՐՇԱԿ — Ո՞ւր էր, թե դանակով վիրավորեր։

ՊԱՊԻԿ — Վորչափ գեշ վիրավորված է, արյուն կը վազե։

ԱՐՇԱԿ — Վոտանավոր մը կարդացի իրեն, յես կերթամ կոր ըսավ, իրեն ըսի, վոր կերթամ կոր մ'ըսեր, ինչու վոր կոր մասնիկը ականջին անուշ չգար։ պետք եր ըսեր՝ ահա կերթամ, կամ յերթալու վրա յեմ, ասոնց մեջ տեսեք անուշություն մը կա, փափկություն մը կա, մինչդեռ կոոոոր...

ՊԱՊԻԿ — Մինչդեռ կոոոոր...

ՀՈՎՍԵՓ — Մենք ալ բան մը չըսինք ա։

ՊԱՊԻԿ — Պարոնն ալ բան մը չըսավ ա։

ՀՈՎՍԵՓ — Բայց կերթամ կորը և կերթամը միևնույն բա՞նը ըսել է։

ԱՐՇԱԿ — Հոգ չէ թե՝ միևնույն բանը ըսել ըլլա, թող միտքդ ծուռ հասկցվի՝ բավական է վոր ականջի անուշ գա, հիմա բոլոր գրագետները այս բանին վրա դարձուցին ուշադրություննին, ամեն տեղ մեծ կռիվներ կըլլան այս բանին վրայոք։

ՊԱՊԻԿ — Անցյալ շաբթու քիչ մնաց, վոր յերկու հոգի զիրար պիտի սպաննեյին յերկար բառի մը համար։

ԱՐՇԱԿ — Որինակի համար, ապակեպրոնացականություն, տես վորչափ յերկար է, և ականջի անուշ չգալուն համար գրագետները մերժեցին. յեթե քիչ մը կարեյին և ապաթյուն ընեյին, ան ատեն ամեն մարդ կընդուներ։ Որինակի համար՝ ապաթյուն, կոկիկ բառ մը, տես ա-պա-թյուն.

ՀՈՎՍԵՓ — Բայց ապաթյուն նշանակություն չունի։

ԱՐՇԱԿ — Նշանակություն չունենա փույթ չունի, բավական է, վոր կոկիկ բառ մե, որինակի համար սա վոտանավորը, (կը կարդա) տես վրային ալ անցած չեմ։

ՊԱՊԻԿ — Գիտե՞ք, դեռ վրայեն անցած չէ։

ՏԵՍԻԼ Ժ.

ՆՈՒՅՆՔ, ՍՈՖԻ

ՍՈՖԻ — (Շալն ու գլխարկը հանելով) (մեկուսի) Սա թեթևը հոս ի՞նչ բան ունի, (բարձր) հայր, յեկա՞վ ըսածս։

ՀՈՎՍԵՓ — Այո, աղջիկս, յեկավ։

ԱՐՇԱԿ — (մեկուսի) Ինչպես ինձի կը նայի։

ՍՈՖԻ — Հետը խոսեցաք, այնպես չէ՞։

ՀՈՎՍԵՓ — Այո։

ՍՈՖԻ — Դատը վերջացած է, հայր։

ՀՈՎՍԵՓ — Ի՞նչ կըսեք։

ՍՈՖԻ — Զինք տեսնելու գացած ատենս ինձ ըսավ, թե հորդ ըսե, վոր դատը վերջացած է, թե ինք ալ պիտի գա քեզի հետ խոսելու։

ՀՈՎՍԵՓ — Խոսեցավ հետս, բայց դատին վերջանալուն վրայոք խոսք մը չըսավ։

ՍՈՖԻ — Զըսա՞վ։

ՊԱՊԻԿ — (ցած առ Արշակ) Աչքը միշտ վրադ է։

ՀՈՎՍԵՓ — Բայց քանի վոր քեզի ըսած է, այդ բավական է, գնա, աղջիկս, քիչ մը հանգստացիր։

ՍՈՖԻ — (յերթալու վրա) Ինչ թեթևությո՜ւն...

ԱՐՇԱԿ — (մեկուսի) Ինչ գեղեցկությո՜ւն։

ՊԱՊԻԿ — Մեծ հանցանք մը գործեցի, ոհ, ներեցեք ինձ, կաղաչեմ։

ԱՐՇԱԿ — Ի՞նչ ըրիր։

ՀՈՎՍԵՓ — Ի՞նչ յեղավ։

ՊԱՊԻԿ — Վոճիր մը գործեցի։ Շնորհք ըրեք ինձ, շնորհք։

ԱՐՇԱԿ — Մա՞րդ սպաննեցիր։

ՊԱՊԻԿ — Ուր եր թե մարդ սպաննած ըլլայի։

ՀՈՎՍԵՓ — Տղա՞մ մը մեռցուցիր։

լսելուս պես գլուխս դարձավ, ինքզինքս բռնեմ ըսի, չը կրցա. մարդս կրնա՞ տանկ պարագային մեջ ինքզինքը բռնել. բայց ինչո՞ւ կերթաս կոր։

Տ Ե Ս Ի Լ Թ.

ՆՈՒՅՆՔ, ՀՈՎՍԵՓ

ՀՈՎՍԵՓ — Ի՞նչ կա, ի՞նչ յեղաք։

ԱՐՇԱԿ — Ահ, ձեր ծառան ականջս վիրավորեց, պարոն։

ՀՈՎՍԵՓ — Ի՞նչ, ակա՞նջդ վիրավորեց, մարդասպան (վրան կը վազե յեվ ծեծելով դուրս եր հանե) Ներեցեք, պարոն, դանակո՞վ վիրավորեց (ականջը նայելով)։

ԱՐՇԱԿ — Ո՞ւր եր, թե դանակով վիրավորեր։

ՊԱՊԻԿ — Վորչափ գեշ վիրավորված ե, արյուն կը վազե։

ԱՐՇԱԿ — Վոտանավոր մը կարդացի իրեն, յես կերթամ կոր ըսավ, իրեն ըսի, վոր կերթամ կոր մ՛ըսեր, ինչու վոր կոր մասնիկը ականջին անուշ չգար։ պետք եր ըսեր՝ անհա կերթամ, կամ յերթալու վրա յեմ, ատոնց մեջ տեսեք անուշություն մը կա, փափկություն մը կա, մինչդեռ կոոոոր...

ՊԱՊԻԿ — Մինչդեռ կոոոոր...

ՀՈՎՍԵՓ — Մենք ալ բան մը չըսինք ա։

ՊԱՊԻԿ — Պարոնն ալ բան մը չըսավ ա։

ՀՈՎՍԵՓ — Բայց կերթամ կորը և կերթամը միևնույն բա՞նը ըսել ե։

ԱՐՇԱԿ — Հոգ չե թե՝ միևնույն բանը ըսել չըլլա, թող միտքդ ծուռ հասկցվի՝ բավական ե վոր ականջի անուշ գա, հիմա բոլոր գրագետները այս բանին վրա դարձուցին ուշադրություննին, ամեն տեղ մեծ կռիվներ կըլլան այս բանին վրայոք։

ՊԱՊԻԿ — Անցյալ շաբթու քիչ մնաց, վոր յերկու հոգի զիրար պիտի սպաննեյին յերկար բառի մը համար։

ԱՐՇԱԿ — Որինակի համար, ապակետրոնացականություն, տես վորչափ յերկար ե, և ականջի անուշ չգալուն համար գրագետները մերժեցին. յեթե քիչ մը կարեյին և ապաթյուն ընեյին, ան ատեն ամեն մարդ կընդունեներ։ Որինակի համար՝ ապաթյուն, կոկիկ բառ մը, տես ա-պա-թյուն.

ՀՈՎՍԵՓ — Բայց ապաթյուն նշանակություն չունի։

ԱՐՇԱԿ — Նշանակություն չունենա վնա՞ս չունի, բավական ե, վոր կոկիկ բառ մե, որինակի համար սա վոտանավորը, (կը կարդա) տես վրայեն ալ անցած չեմ։

ՊԱՊԻԿ — Գիտե՞ք, դեռ վրայեն անցած չե։

Տ Ե Ս Ի Լ Ժ.

ՆՈՒՅՆՔ, ՍՈՖԻ

ՍՈՖԻ — (Շալն ու գլխարկը հանելով) (մեկուսի) Սա թեթեը հոս ինչ բան ունի, (բարձր) հայր, յեկա՞վ ըսածս։

ՀՈՎՍԵՓ — Այո, աղջիկս, յեկավ։

ԱՐՇԱԿ — (մեկուսի) Ինչպես ինձի կը նայի։

ՍՈՖԻ — Հետը խոսեցաք, այնպես չե՞։

ՀՈՎՍԵՓ — Այո։

ՍՈՖԻ — Դատը վերջացած ե, հայր։

ՀՈՎՍԵՓ — Ի՞նչ կըսեք։

ՍՈՖԻ — Զինք տեսնելու գացած ատենս ինձ ըսավ, թե հորդ ըսե, վոր դատը վերջացած ե, թե ինք ալ պիտի գա քեզի հետ խոսելու։

ՀՈՎՍԵՓ — Խոսեցավ հետս, բայց դատին վերջանալուն վրայոք խոսք մը չըսավ։

ՍՈՖԻ — Չըսա՞վ։

ՊԱՊԻԿ — (ցած առ Արշակ) Աչքը միշտ վրադ ե։

ՀՈՎՍԵՓ — Բայց քանի վոր քեզի ըսած ե, այդ բավական ե, գնա, աղջիկս, քիչ մը հանգստացիր։

ՍՈՖԻ — (յերթալու վրա) Ինչ թեթևությո՜ւն...

ԱՐՇԱԿ — (մեկուսի) Ինչ գեղեցկությո՜ւն։

ՊԱՊԻԿ — Մեծ հանցանք մը գործեցի, ոհ, ներեցեք ինձ, կաղաչեմ։

ԱՐՇԱԿ — Ի՞նչ ըրիր։

ՀՈՎՍԵՓ — Ի՞նչ յեղավ։

ՊԱՊԻԿ — Վոճիր մը գործեցի։ Շնորհք ըրեք ինձ, շնորհք։

ԱՐՇԱԿ — Մա՞րդ սպաննեցիր։

ՊԱՊԻԿ — Ուր եր թե մարդ սպաննած ըլլայի։

ՀՈՎՍԵՓ — Տղա՞մ մը մեռցուցիր։

ՊԱՊԻԿ — Ուր եր թե՝ այնպես ըլլար։
ԱՐՇԱԿ — Բայց ըսե, ի՞նչ կա։
ՀՈՎՍԵՓ — Շուտ ըրե, դատս...
ՊԱՊԻԿ — Կը խնդրեմ, վոր ներեք, մոռցա ձեզ իրարու ներկայացնելու, կը ներկայացնեմ ձեզ Պ. Հովսեփը, վոր Սոֆիին հայրն ե. կը ներկայացնեմ պ. Արշակը, վոր Պ. Թադեյին հոգեզավակն ե։
ԱՐՇԱԿ — Հովսեփ... ինչ անուշ և կոկիկ բառ։
ՀՈՎՍԵՓ — Շնորհակալ եմ, վոր պատիվ ունեցա ձեզի պես փիլիսոփայի մը (Սոֆին կը մտնէ) տունը հարս պիտի տամ իմ աղջիկս։
ՍՈՖԻ — Հայր, (մեկուսի) ի՞նչ կը լսեմ, (բարձր) հիմա նամակ մը ընկալա, վորուն մեջ կը հայտնըվի, թե դուք վռնտեր եք զինքը։
ՀՈՎՍԵՓ — Սխալ հասկցուցեր են քեզի, յես քու գրկածդ կը վռնտե՞մ. յես Տիգրանը վռնտեցի, այն խարդախը յեկած եր կեղծավորությամբ բերնես խոսք առնելու, յես ալ այնչափ ապուշ չեմ, վոր...
ՊԱՊԻԿ — Քու հայրդ այնչափ ապուշ չե, վոր...,
ՀՈՎՍԵՓ — Իրեն խաբվիմ։
ՊԱՊԻԿ — Իրեն խաբվի
ՀՈՎՍԵՓ — Այս Թշվառականը քանիցս աղջիկս ուզեց, յես ալ չտվի։
ՊԱՊԻԿ — Չ'տվիր ա...
ՍՈՖԻ — (մեկուսի) Շողոքորթ։
ՊԱՊԻԿ — Քու հայրդ գիտե քեզի ամուսին ընտրելիք անձը։
ՀՈՎՍԵՓ — Չեք գիտեր թե ինչ խարդախ ե։
ՊԱՊԻԿ — Խարդախին մեծն ե, ըսելը ավելորդ ե։
ԱՐՇԱԿ — Անանկ մեկը փեսա ընելը դրականության դեմ մեղանչել ե։
ՍՈՖԻ — (Ծուռ ծուռ Արշակին նայելով) (մեկուսի) Թեթև, քեզ չպիտի առնեմ։
ՊԱՊԻԿ — (ցած առ Արշակ) Ինչպես միշտ քեզի կը նայի։
ՀՈՎՍԵՓ — Ի՞նչպես կրնամ աղջիկս իրեն տալ։ Թեպետև աղջիկս ալ չուզեր զինքը։

ՊԱՊԻԿ — Չը տվիր։ Յերջանիկ ես, որիորդ, վոր ասանկ վորդեսեր հոր մը զավակ ըլլալու պատիվն ունեցեր ես։
ՍՈՖԻ — (մեկուսի) Ո՜հ աստված իմ, ի՞նչ ընելու յե։
ՀՈՎՍԵՓ — Գույնդ նետե՞ց, սենյակդ քաշվե, քու ընտրածդ պիտի առնես ահա։
ՊԱՊԻԿ — Քու ընտրածդ պիտի առնես ահա։
ՍՈՖԻ — (մեկուսի) Արշակը իմ ամուսինս չպիտի ըլլա (կերթա)։
ՀՈՎՍԵՓ — Գացեք քիչ մը քովը նստելու և հետը խոսելու. համոզեցեք զինք, վոր հայր մը միշտ իր զավակացը բարվույն համար կաշխատի։
ԱՐՇԱԿ — Իմ պարտքս ե. (մեկուսի) կեցցե Պապիկը, վոր գործը լմնցուցեր ե։
ՀՈՎՍԵՓ — Գիտե՞ք, վոր զարմանալի յեն այս աղջիկները։
ՊԱՊԻԿ — Այո, խիստ զարմանալի յեն, անդիի ծայր զարմանալի, աղջիկ մը տեսնելուս պես կսկսիմ զարմանալ. ինչո՞ւ, վորովհետև ինչպես վոր խիստ աղեկ բացատրեցիք, զարմանալի յեն այս աղջիկները։

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆՈՒՅՆՔ, ԹԱԴԵ

ՀՈՎՍԵՓ — Ո՜ո, պարոն Թադե, իրա՞վ ե, վոր դատը վաստկած եք։
ԹԱԴԵ — Այն դատը արդեն վաստկված ե, և վաղը իրիկուն մեզի պիտի հրամմեք գոհացուցիչ պատասխան մը առնելու համար։
ՀՈՎՍԵՓ — Չըսե՞ս վոր քու չերթալեդ վերջը ըսածդ յեկավ և ուզեց բերնես խոսք առնել, և յես վռնտեցի զինքը։
ԹԱԴԵ — (մեկուսի) Աղեկ նախատեսած եմ, Արշակեն ասանկ բան մը կը հուսայի։
ՀՈՎՍԵՓ — Աղեկ չըրի՞ զինքը վռնտելուս։
ՊԱՊԻԿ — Շատ աղեկ ըրիք։
ԹԱԴԵ — Այդպես ընելու եիք։

Տ Ե Ս Ի Լ ԺԲ.

ՆՈՅՆՔ, ԳԵՎՈՐԳ

ԳԵՎՈՐԳ — Տեր, մեկը յեկեր ձեզի հետ տեսնվիլ կուզե։
ՀՈՎՍԵՓ — Ներեցեք վոր յերթամ. (կերթա)։
ԹԱԴԵ — Բայց դեռ Աղջկան յերեսը չտեսանք, Պապիկ։
ՊԱՊԻԿ — Աղջիկը ձեր սիրովը կը հալի ու կը մաշի։
ԹԱԴԵ — Հայրն ալ անանկ ըսավ այս առտու, բայց ինչու չգար...
ՊԱՊԻԿ — Կարծեմ կուգա, ահա...

Տ Ե Ս Ի Լ ԺԳ.

ՆՈՅՆՔ. ՍՈՖԻ

ՍՈՖԻ — Ոհ, պարոն, գթություն։
ՊԱՊԻԿ — (ցած առ Թադե) Տեսա՞ր։
ՍՈՖԻ — Դուք բարի մարդ մ'եք։
ՊԱՊԻԿ — Բոլոր աշխարհը գիտե։
ՍՈՖԻ — Զգայուն մեկն եք։
ՊԱՊԻԿ — Հայտնի յե։
ՍՈՖԻ — Յերջանկությունս քու մեկ խոսքեդ կախված ե։
ԹԱԴԵ Այնպես ե։
ՍՈՖԻ — Կյանք կամ մահ պիտի տաս ինձի։
ԹԱԴԵ — Կյանք պիտի տամ։
ՊԱՊԻԿ — (մեկուսի) Տես, քեզի համար կը հալի։
ՍՈՖԻ — Մի մերժեր խնդիրքս։
ԹԱԴԵ — Չեմ մերժեր։
ՍՈՖԻ — Ազատե զիս։
ԹԱԴԵ — Ժամը հասած ե։
ՍՈՖԻ — Որհնյալ ըլլաս. ալ հիմա կըսեմ, Հայրս զիս Թեթև ապուշի մը նշանեց։
ԹԱԴԵ — Հե՜,
ՍՈՖԻ — Թեթև, ապուշ ավանակի մը։
ԹԱԴԵ — Ինձի՞ յե։
ՊԱՊԻԿ — Քեզի չե, սխալ ե։
ՍՈՖԻ — Դուք բարի մարդ մ'եք, բայց նշանածս ավանակին մեկն ե. ոհ, գթություն, գթություն։

(Վարագույր)

Ա Ր Ա Ր Գ.

(Թադեյի տան մեջ սրահ մը)

Տ Ե Ս Ի Լ Ա.

ԹԵՐԵԶԱ, ՊԱՊԻԿ

ԹԵՐԵԶԱ — Լսածիս նայելով, յեղբորս ամուսնությունը վերջնական կերպով վորոշված ե, այնպես չե՞։
ՊԱՊԻԿ — Այնպես ե։
ԹԵՐԵԶԱ — Յեվ թե այս գիշեր հոս պիտի գան յեղեր և խոսքկապը պիտի տրվի յեղեր։
ՊԱՊԻԿ — Պիտի տրվի յեղեր։
ԹԵՐԵԶԱ — Դուք ի՞նչ կարծիք ունիք այս ամուսնության վրա։
ՊԱՊԻԿ — Յես ձեր կարծիքեն եմ։
ԹԵՐԵԶԱ — Ի՞նչպես։
ՊԱՊԻԿ — Այսինքն, թե... վերջապես գիտեք հարկավ ձեր կարծիքը։
ԹԵՐԵԶԱ — Իմ կարծիքս այն ե, թե աշխարհի առջև խայտառակ պիտի ըլլանք։
ՊԱՊԻԿ — Իմ կարծիքս ալ աս ե։
ԹԵՐԵԶԱ — Ամեն մարդ ուզածին պես պիտի խոսի։
ՊԱՊԻԿ — Յես պիտի ըսեյի։
ԹԵՐԵԶԱ — Բնավ չխորհիր վոր վաթսուն տարեկանին կարգվող մեկու մը վրա ամեն մարդ բերնին յեկածը կրնա ըսել։
ՊԱՊԻԿ — Այո, կրնա ըսել։
ԹԵՐԵԶԱ — Մեկու մը ականջ չկախելով միտքը դրածը ընել կուզե։
ՊԱՊԻԿ — Այնպես ե։
ԹԵՐԵԶԱ — Հարկավ դուք իրեն ըսիք, վոր այս գործեն յետ կենա։

ՊԱՊԻԿ — Քանի՜ քանի՜ անգամներ։
ԹԵՐԵԶԱ — Յեվ ինքը մտիկ չըրավ։
ՊԱՊԻԿ — Ամենևին։
ԹԵՐԵԶԱ — Թողունք ուրեմն ուզածը թող ընե. իմ ամուսնությանըս վրա ըսելիք մը ունի՞ս։
ՊԱՊԻԿ — Ձեր ամուսնությունը խիստ կանոնավոր ե. ատոր ըսելիք չունիմ. ձեր և ձեր յեղբորն ամուսնության մեջ մեծ տարբերություն կա. օրինակի համար, ձեր յեղբայրը վաթսուն տարեկան ե և կուզե քսան տարու աղջկան մը հետ կարգվիլ. մինչդեռ դուք քառասուն տարու չեք և քսան տարու յերիտասարդի մը հետ կուզեք ամուսնանալ. քսան տարի տարբերություն կա մեջտեղը։ Ասկեց զատ դուք հարս ըլլալու բոլոր հանգամանքները ունիք. աղվոր եք, սիրուն եք, ներեցեք, յեթե այս խոսքերն ձեր յերեսին ի վեր կըսեմ։
ԹԵՐԵԶԱ — Մինչդեռ ինք ծերացած ե։
ՊԱՊԻԿ — Այո, ծերացած ե։
ԹԵՐԵԶԱ — Անոր համար կը սիրեմ քեզի, վոր միշտ ճշմարիտը կը խոսիս առանց քաշվելու։
ՊԱՊԻԿ — Բնավորությունս անանկ ե, ի՞նչ ընեմ։
ԹԵՐԵԶԱ — Յես չեմ հուսար, վոր աղջիկը զինք ուզե։
ՊԱՊԻԿ — Յես ալ չեմ հուսար։
ԹԵՐԵԶԱ — Մինչդեռ Արշակը ինծի համար հոգին կուտա։
ՊԱՊԻԿ — Քեզի համար կը խենթենա և չը խենթենա նե՝ խենթին մեկն ե։
ԹԵՐԵԶԱ — Յեղբայրս կարծեմ հետը խոսեցավ. այսոր պիտի հարցնեմ իրեն, կարծեմ, վոր ինքն ե յեկողը, կաղաչեմ քիչ մը հեռանայիք։
ՊԱՊԻԿ — Առանձին կը թողում զձեզ։

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՒՅՆՔ, ԹԱԴԵ

ԹԱԴԵ — (ինքնիրեն) Յես բարի մարդ մըն եմ յեղեր, բայց նշանածը ավանակին մեկն ե յեղեր, կրնաս նե հասկցիր, բարի մարդ մ'եմ յեղեր, բայց նշանածը ավանակ ե յեղեր. նշանածը յես եմ։

ԹԵՐԵԶԱ — Ի՞նչ կը խոսիս, յեղբայրս։
ԹԱԴԵ — Վոչինչ։
ԹԵՐԵԶԱ — Արդյոք կընա՞մ հարցնել ձեզ թե Արշակեն ինչ պատասխան առիր։
ԹԱԴԵ — Կրնաս հարցնել։
ԹԵՐԵԶԱ — Ի՞նչ ըսավ։
ԹԱԴԵ — Այդ Արշակ ըսվածը սրիկային մեկն ե, լիրբին մեկն ե։
ԹԵՐԵԶԱ — Ինչո՞ւ։
ԹԱԴԵ — Վորովհետև իրեն ըրած բարիքներս չարաչար գործածեց ինծի դեմ։
ՊԱՊԻԿ — Այո, չարաչար գործածեց.
ԹԵՐԵԶԱ — Չեմ կարծեր, վոր անիկա ապերախտ գտնվի մեզի դեմ։
ՊԱՊԻԿ — Յես ալ չեմ կարծեր։
ԹԱԴԵ — Իրավունք ունի՞ իմ նշանածիս տունը յերթալ և աներս խաբելով՝ նշանածս ձեռքես հափշտակելու համար խարդախության դիմել։
ԹԵՐԵԶԱ — Արշակն ալ ձեր նշանածը կը սիրե։
ԹԱԴԵ — Սիրել կուզե, բայց աղջիկն անոր յերեսն անգամ չնայիր. աղջիկը ինծի սեր տված ե։
ԹԵՐԵԶԱ — Բայց Արշակը զիս կը սիրե. (Պապիկին) այնպես չե՞։
ՊԱՊԻԿ — Այնպես ե։
ԹԵՐԵԶԱ — Սխալմունք մը ըլլալու յե հոս, յես չեմ հավատար։

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՒՅՆՔ, ԱՐՇԱԿ

ԹԱԴԵ — Դեռ բավական չեղա՞ն ըրածներդ, անամոթ։
ԱՐՇԱԿ — Ի՞նչ կա։
ԹԵՐԵԶԱ — Ի՞նչ պիտի ըլլա, Սոֆին կը կը սիրես յեղեր։
ԱՐՇԱԿ — Այո, Սոֆին կը սիրեմ, և քիչ ատենեն պիտի ամուսնանանք։
ԹԵՐԵԶԱ — Դուն չեյի՞ր, վոր ինծի համար կյանքդ կու տայիր։
ԱՐՇԱԿ — Ամենևին։
ԹԵՐԵԶԱ — Պապիկին ալ հազար անգամ ըսեր ես, վոր ինծի համար կը մեռնիս յեղեր, խելքդ կը թռցնես յեղեր (Պապիկը կերթա) ատոնց ամենը սուտ ե, սիրազրուժ, ապերախտ։

ԱՐՇԱԿ — Որբորդ, յես ատանկ բան մը մտքես անգամ անցուցած չեմ, թող թե բերանովս ըսած ըլլամ։
ԹԵՐԵԶԱ — Պալիկը սուտ պիտի խոսի։
ԱՐՇԱԿ — Անիկա քեզ ծաղրեր է։
ԹԵՐԵԶԱ — Ծաղրե՞ր է։
ԱՐՇԱԿ — Անշուշտ, կը հավատամ, վոր յես քեզի հետ ամուսնանամ, որբորդ։
ԹԵՐԵԶԱ Լավ, յերթանք հարցնենք Պալիկին, տեսնենք ըսածները սուտ են, թե իրավ։
ԱՐՇԱԿ — Յերթանք։

ՏԵՍԻԼ Դ.

ԹԱԴԵ

Ինչ վոր ալ ըլլա, գինքը տունես վռնտելու չեմ, չեմ կրնար համբերել, վոր իմ գիրկս մեծցած տղա մը, այսչափ լրբությամբ վարվի հետս. աս ատիճան հանդգնություն, աս ատիճան ապերախտություն բնավ տեսնված չե։

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՒՅՆՔ, ՍՈՖԻ յեվ ՏԻԳՐԱՆ

ՍՈՖԻ — Ահ, պարոն, դուն իմ ազատարարս պիտի ըլլաս։
ՏԻԳՐԱՆ — Դուն իմ փրկիչը պիտի ըլլաս։
ՍՈՖԻ — Դուն բարի մարդ մ'ես։
ՏԻԳՐԱՆ — Զգայուն սիրտ մը կը կրեք։
ՍՈՖԻ — Ազնիվ բնավորություն մը ունիք։
ՏԻԳՐԱՆ — Բարեխիղտ մեկը կերևաք։
ՍՈՖԻ — Խնդիրքս չպիտի մերժես։
ՏԻԳՐԱՆ — Իր վրա պիտի գթաս։
ՍՈՖԻ — Արշակը թեթև է։
ՏԻԳՐԱՆ — Դուն ծանր գլուխ մարդ մըն ես։
ՍՈՖԻ — Արշակը ապուշ է, խենդ է.
ԹԱԴԵ — Խենդին մեծն է։
ՏԻԳՐԱՆ — Դուն աղեկ կը խորհիս։
ՍՈՖԻ — Արշակը չեմ ուզեր

ԹԱԴԵ — Իրավունք ունիս չուզելուդ։
ՍՈՖԻ — Ո՛հ, մինչև վերջին շունչս յերախտապարտ պիտի մնամ քեզ։
ԹԱԴԵ — Չեմ ուզեր, վոր յերախտապարտ մնաս։
ՏԻԳՐԱՆ — Վորչափ բարի յեք։
ՍՈՖԻ — Ուրեմն պիտի կրնամ սիրածիս հետ միանալ։
ԹԱԴԵ — Անշուշտ իմ փափաքս ալ ան է, հայրդ հիմա հոս պիտի գա և այն գործը պիտի լմնցնենք և գալ շաբթու իմ կինս պիտի ըլլաս։
ՍՈՖԻ — Ի՞նչ, քո՞ւ կինդ.
ՏԻԳՐԱՆ — Իր կինը։
ԹԱԴԵ — Հապա դուք վորի՞ն կը կարծեյիք։
ՍՈՖԻ — Յես քու կինդ, հա՛, հա՛, հա՛։
ՏԻԳՐԱՆ — Սոֆին քուկին կինդ, հա՛ հա՛, հա՛...
ԹԱԴԵ — Խնդալու ի՞նչ կա։
ՍՈՖԻ — Յես քուկին կինդ, հա՛, հա՛, հա՛։
ՏԻԳՐԱՆ — Սոֆին քուկին կինդ, հա՛, հա՛, հա՛։

ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՒՅՆՔ, ԹԵՐԵԶԱ

ՏԻԳՐԱՆ — (Առ Թերեզա) Սոֆին պարոնին կինը հա՛, հա՛, հա՛։
ՍՈՖԻ — Յես իրեն կինը, հա՛, հա՛, հա՛։
ԹԵՐԵԶԱ — Սոֆին իրեն կինը, հա՛, հա՛, հա՛։

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՒՅՆՔ, ԲԱՐԹԵՄ

ԹԱԴԵ — Բայց ի՞նչ կա խնդալու։
ԹԵՐԵԶԱ — Սոֆին իրեն կինը, հա՛, հա՛, հա՛ (ամենքը քահքահածայն կը խնդան)։
ԹԱԴԵ — Իմին ալ խնդալս յեկավ (կը խնդա)։

ՏԵՍԻԼ Ը.

ՆՈՒՅՆՔ, ՊԱՊԻԿ

ՊԱՊԻԿ — Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, (մեկուսի) ինչո՞ւ կը խնդաս։

ԹԱԴԷ — Կորսուեցէք սըկէ ամենքնիդ ալ, խնդալու բան մը կա՞ հոս, ասանկ գործի մը վրա խնդալո՞ւ չէ։

ՊԱՊԻԿ — Ամենևին, մանավանդ թէ՝ լալու է. ինչո՞ւ կը խնդաք չե՞ք ամչնար։

ԹԱԴԷ — Ամենուդ դեմ դատ պիտի բանամ, և գիտեք, թե փաստաբան մը ի՞նչ կընե եթե ուզե։

ՍՈՖԻ — Պարոնը փաստաբա՞ն։

ԹԱԴԷ — Պապիկը ինե աղեկ գիտե փաստաբան ըլլաս, և քու հորդ դատն ալ յես վրաս առեր եյի։

ՏԻԳՐԱՆ — Դո՛ւն, հա՛, հա՛, հա՛, (ամենքը կը խնդան)։

ՏԵՍԻԼ Թ

ՆՈՒՅՆՔ, ՀՈՎՍԵՓ

ՀՈՎՍԵՓ — Ձեզ խնդումերես տեսնելուս վրա խիստ ուրախ եմ խոսե տեսնենք, Պ. Թադե. կարծեմ գոհ ես աղջիկես. աղջիկ մը, վոր քեզի համար կյանքն իսկ կը զոհե։

ԹԱԴԷ — Խիստ գոհ եմ, այո՛, այնպես է։

ՀՈՎՍԵՓ — Բայց այն խարդախը հոս ի՞նչ գործ ունի։

ՍՈՖԻ — Հայր, ասիկա խարդախ չե, ասիկա հոգվույս հատորն է։

ՀՈՎՍԵՓ — Կը հանդգնիս իմ առջև այսպես խոսելու, և հորդ մերժածը քեզի ամուսին ընտրելու. խարդախ մը, վոր, յեթե Պ. Թադեն առաջուց իմաց չտար ինձ, իմ բերնես խոսք պիտի առներ։

ԹԱԴԷ — Իմ յերթալես վերջը աս յեկավ, այնպես չէ՞։

ՀՈՎՍԵՓ — Այո՛։

ՍՈՖԻ — Ձենե առաջ պիտի յերթար, բայց դեպքը այնպես բերավ, վոր դուք իրմե առաջ գացած եք։ Հայր, յես Տիգրանին համար ըսած եյի քեզ, վոր դատեն քեզ պիտի ազատե։

ՀՈՎՍԵՓ — Բայց և այնպես յես զինքը չեմ ուզեր։

ՍՈՖԻ — Բայց և այնպես յես զինքը կուզեմ, և հոր մը բռնությունն ալ առ վոչինչ գրելով՝ կրնամ իրեն հետը միանալ. լավ խորհե, հայր, յեթե չես ուզեր վոր վորդիական պարտքես դուրս չելլեմ, և ահա, հայր, կը խոստովանվիմ, վոր Պ. Թադեն բնավ չեմ սիրեր, և ուրիշ մ'ալ չսիրեր, վորովհետև վաթսուն տարու մեկու մը կարգվելու չելնելը խնդացնելու համար աղեկ, իսկ կարգվելու համ. ր վոչ։

ՀՈՎՍԵՓ — Հապա դատը։

ՍՈՖԻ — Ահ, հայր, դատ չունիս, քու դատախազդ Տիգրանն եր, վոր այս միջոցներուն դիմած եր գլխ առնելու համար։

ՀՈՎՍԵՓ — Ի՞նչ կըսես։

ՏԻԳՐԱՆ — Գթությո՛ւն, գթությո՛ւն, դատ չունիմ ալ։

ԹԱԴԷ — Բայց յես դատ ունիմ, դատ պիտի վարեմ ամենուդ դեմ, և կը բողոքեմ։

ՏԻԳՐԱՆ և ՍՈՖԻ — Կրնաք բողոքել։

ՀՈՎՍԵՓ — Շատ կը ցավիմ, վոր աղջիկս քեզի չուզեր (Արշակ կը մտնե)։

ՏԵՍԻԼ Ժ.

ՆՈՒՅՆՔ, ԱՐՇԱԿ

ԱՐՇԱԿ — Յեվ ինչպե՞ս հնար է վոր ուզե։ Սոֆին ինձի համար ստեղծված է։

ՍՈՖԻ — Այո, մինչև վերջը ծաղրելու համար ստեղծված է, պարոն Թեթև։

ԱՐՇԱԿ — Թեթև...

ՍՈՖԻ — Յերթանք, հայր, հարսնիքի պատրաստություն տեսնելու և զիրենք խրատելու, վոր արժեքնին գիտնան ասկե յետքը (կերթան)։

ՏԵՍԻԼ ԺԱ.

ԹԱԴԷ, ՊԱՊԻԿ, ԱՐՇԱԿ, ԲԱՐԹՈՄ

(Թադե սենյակին վրա կը պտտի խորհելով։ Պապիկն ալ կը պտտի. Թադե դուրս կելլե յեվ Պապիկն առանց տեսնելու պըտտելը կը շարունակե, ահ, ահ, բուհ ընելով, այս միջոցին Արշակը կուգա)։

ԱՐՇԱԿ — Ձիս այսպես նախատե... այնչափ վոտնավորներ գրեմ և ինձի Թեթև ըսե. ո՛հ, չեմ կրնար դիմանալ, պետք է, վոր ինքզինքս թունավորեմ։

ԹԱԴԷ — Ո՛հ, տկարություն մը կուգա վրաս, և չեմ կրնար քալել, սիրտս կը բաբախե, ձեռներս կը թմրին, ծունկերս կը դողան, աչքերս կը մթագնին, չեմ տեսներ, ակնոց ալ չունիմ, ո՛հ, (կիյնա կը մարի)։

ԱՐՇԱԿ — Ջուր, ջուր, ջուր, ինչ բարեսիրտ մարդ, ով աստված իմ։ Ջուր, ջուր, ջուր, այսչափ վշտակից ըլլա ինձ, ջուր, ջուր։ (Բարթեմը փայտի մը վրա յերկու դույլ անցուցած կը բերե)։

ԲԱՐԹԵՄ — Ո՞վ պիտի խմե։ (Արշակը ջուր կը սրսկե յեվ կը տեսնե, վոր չի պիտի սրափի, դուրս կելլե, այն միջոցին Պապիկ ներս կը մտնե)։

ՊԱՊԻԿ — Ո՜հ, այս հարվածը պակաս եր, աս ալ յեկավ. Արշակ, դուն արժանի եյիր Սոֆիին, և քու ցնդած հայրդ ալ կուզեր, վոր առնե, ահ, վաթսուն տարիքին մեջ կարգվելու յելնելը խենդություն ե, հիմարություն ե։ (աչքերը կը բանա) Ո՜հ, կը մարիմ (իբրեվ թե կը մարի, Արշակը ներս կը մտնե), ահ, Արշակը բնավ առնելու չեր, Արշակ, թեթևին մեկն ե, իմաստակ ե, ինքզինքը բանի մը տեղ դրած ե։

ՏԵՍԻԼ ԺԲ.*)

ՆՈՒՅՆՔ, ՏԻԳՐԱՆ

ՏԻԳՐԱՆ — Խնդիրը լուսաբանվեցավ։

ԹԱԴԵ — (սրափած) Վո՞ր խնդիրը լուսաբանվեցավ։

ՏԻԳՐԱՆ — Որիորդ Սոֆիին խնդիրը։

ԹԱԴԵ — Ինչպե՞ս ..

ՏԻԳՐԱՆ — Խնդիրին մեջ թյուրիմացություն կա յեղեր։

ԱՐՇԱԿ — Յես հասկցա վոր այնպես ե ..

ԹԱԴԵ — Յես ալ հասկցա այնպես ըլլալը... ուրեմն Սոֆին կամուսնանա կոր ինձի հետ։

ԱՐՇԱԿ — Կարծեմ հայրս կը սխալի... Սոֆին ինձի հետ միայն կրնա ամուսնանալ։

ՏԻԳՐԱՆ — Ինչպես ըսի, թյուրիմացություն կա գործին մեջ, Սոֆին ձեր յերկուքին հետ ալ չամուսնանար։

ԹԱԴԵ — Ուրե՞մն...

ՏԻԳՐԱՆ — Սոֆին ինծի հետ պիտի ամուսնանա ..

ԹԱԴԵ — Բայց պարոն Հովսեփը իր աղջիկը ինձի խոստացած եր։

ՏԻԳՐԱՆ — Թյուրիմացություն... պարզ թյուրիմացություն։

ԱՐՇԱԿ — Իսկ ինձի հետ ամուսնությո՞ւնը։

ՏԻԳՐԱՆ — Միշտ թյուրիմացություն։

ԹԱԴԵ — Զարմանալի բան։

ԱՐՇԱԿ — Զարմանալի կամ վոչ, իրողությունը այն ե, վոր պարոն Հովսեփ պաշտոնապես իր աղջիկը, որիորդ Սոֆին, ինձի հետ նշանեց և ինձի ալ պաշտոն տվավ, վոր գամ այս բերկրալից լուրը ձեզի հաղորդեմ և միանգամայն ընդմիշտ ձեզի ազդարարեմ, վոր հույսերնիդ կտրեք որիորդ Սոֆիյեն... ուրեմն մնաք բարով (կը մեկնի)։

ՏԵՍԻԼ ԺԳ.

ԹԱԴԵ, ՊԱՊԻԿ, ԱՐՇԱԿ

ԹԱԴԵ — (Պապիկին) Ի՞նչ կըսես ասոր։

ՊԱՊԻԿ — Խնդրին մեջ թյուրիմացություն ըլլալու ե։

ԹԱԴԵ — Հապա դուն ինձի մինչև յետքը կըսեյիր, վոր Սոֆին ինձի համար հոգի կուտա...

ԱՐՇԱԿ — Ինձի ալ նույն բանը չեյի՞ր ըսեր... աս ի՞նչ հակասություն ե։

ՊԱՊԻԿ — Հակասության բան չի կա, այլ միայն թյուրիմացություն... յես թյուրիմացության բան մը ըսեր եմ, դուք թյուրիմացությամբ սխալ հասկցեր եք, պարոն Հովսեփ թյուրիմացության բաներ մը ըսեր ե... վերջապես ամենքս ալ թյուրիմացության զոհեր ենք։

ԹԱԴԵ — Ուրեմն թյուրիմացությամբ Սոֆին ձեռքե փախցուցինք։

ԱՐՇԱԿ — Ո՜վ թյուրիմացություն, ինչ անողոք հարված մը տվիր իմ բանաստեղծի փափուկ սրտիս.. յերազներս փշրվեցան թյուրիմացության ապառաժներուն վրա..

ՏԵՍԻԼ ԺԴ.

ՆՈՒՅՆՔ, ԹԵՐԵԶԱ

ԹԵՐԵԶԱ — Ի՞նչ կա... ձեզի հուզված և տխուր կը տեսնեմ կոր։

ՊԱՊԻԿ — Բան մըն ալ չի կա... պզտիկ թյուրիմացություն մը... վոր լուսաբանվեցավ։

ԹԵՐԵԶԱ — Ի՞նչ բանի մասին։

ՊԱՊԻԿ — Ամուսնական ծրագրի մը մասին...

ԹԵՐԵԶԱ — Խնդիրը Արշակի՞ն վրա յե։

ԳԱԳԻԿ — Ան ալ իր բաժինը ունի։

ԹԵՐԵԶԱ — Բայց թյուրիմացության բան չի կա... մենք իրար կը սիրենք։

ԱՐՇԱԿ — Ավա՜ղ, ափսո՜ս, բարե՜...

ԹԵՐԵԶԱ — Ի՞նչ կը նշանակեն այդ հուսահատական աղաղակները։

ԱՐՇԱԿ — Կը նշանակե վոր նորեն թյուրիմացության մեջ ինկանք։

ԹԵՐԵԶԱ — Ի՞նչպես... ուրեմն մինչև հիմա խաբվե՞ր եմ։

ԱՐՇԱԿ — Թյուրիմացվեր ես պարզապես։

ԹԱԴԵ — Բոլոր այս թյուրիմացություններուն վերջ տալու համար, յեկեք առայժմ յերեքս ալ հրաժարինք մեր ամուսնական ծրագիրներեն։

ԳԱԳԻԿ — Ահա իմաստուն խորհուրդ մը...ամուսնությունն արդեն ինքնին թյուրիմացություն մըն ե, և յերբ վաթսուն տարեկան մարդ մը կելլե քսան տարեկան աղջիկ մը առնելու թյուրիմացություններուն թյուրիմացությունը կը գործե... ահա միակ ճշմարիտ խոսքը, վոր թերևս ըրած եմ ամբողջ կյանքիս մեջ։

ԾԱՆՈԹՈՒԹ. — «Շողոքորթ»-ի տեսիլ ԺԲ-ից սկսած Յե. Ոտյանը իր կողմից ավելացնելով իր ծանոթության մեջ ասում ե՝

«... Համարձակեցա կատակերգությունը ամբողջացնել իմ կողմես ավելցնելով մեկ քանի տեսարաններ և լուծում մը տալով առեղծված կնճռոտության։

«Շատ հավանական ե, վոր Պարոնյան բոլորովին տարբեր և լավագույն կերպով պիտի վերջացներ իր խաղը, յեթե յերբեք ձեռնարկեր դայն ավարտելու»։

ՉՈՐՍ ՎԱՐԱԳՈՒՅՐՈՎ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՄԸ

ՎԱՐԱԳՈՒՅՐ Ա.

(Տեսարանն է Խորէն յեպիսկոպոսի պառկելու սենյակը։ Վարագույրը բացվելուն պես Նորին սրբազնությունը կ'երեվա աշխարհականի հագուստով, թիկնաթոռի մը վրա նստած՝ ձեռն ի ծնոտ խորհելով։ Բանի մը վայրկյան անցնելե յետք զանգակը կը զարնե, փոխրավորը ներս կը մտնե)։

ԽՈՐԵՆ — Ճամբու պատրաստություններ տես, քիչ օրեն Իզմիր պիտի յերթանք, և քիչ օրեն պիտի դառնանք։

ՓՈԽՐԱՎ. — Ձեր հրամանացը հնազանդելու պատրաստ եմ, սրբազան։

ԽՈՐԵՆ — Ճամբորդության համար հատկապես լաթ չինել տուր, այս հանդերձներովս չեմ կրնար ճամբորդել, ինչու որ շոգենավի մեջ կպղտորին։ Շոգենավի մեջ հագնելու համար սև քազմիրե բանտալոն մը, քաթիֆե ժիլե մը, չորս քրավաթ, հինգ զույգ բանթուֆլա, զույգ մը ակնոց, յերկու զույգ գուլպա...

ՓՈԽՐԱՎ. — Ծառա յեմ, սրբազան, Նոյ Նահապետին նավը դարձավ։

ԽՈՐԵՆ — Յերկու զույգ գուլպա, շոգենավին մեջ պառկելու համար փոքրիկ քարյոլա մը, անկե յետքը դիմք մը առ, որ շոգենավին մեջ գործածեմ, վորպեսզի այս դեմքս չավրվի, այս ամենը գնա առ և ստակները հրավիրակներեն ուզե։

ՓՈԽՐԱՎ. -- Շատ աղեկ։

ԽՈՐԵՆ — Յերթալու ի քեն սա նամակներն ալ Մարսելիո նամակատունը ձգե, պետքի բաներ մեջը գրած եմ, վոր ասկե յետքը ինձ ուղղվելիք նամակները սա հասցեյով գան - «Ամ Գեր. Խորեն սրբազան Գալֆայան, մականվանյալն Նարպեյ,

հեղինակ «Ալաֆրանկա» կատակերգութեան, թարգմանիչ Պոսյուէյի և քարոզիչ Իզմիր — Պեշիքթաշ միացյալ թաղից

ի Զմյուռնիա

Առաջնորդարան հայոց

Հ. Գ. Հոն չըր գտնվիմ նե՝ Պեշիքթաշ.

Հ. Գ. Հոն չըր գտնվիմ նե՝ Բերա.

Հ. Գ. Հոն չըր գտնվիմ նե՝ Բարիզ.

ՓՈՔՐԱՎ. — Շատ աղեկ, յերթալն ի քեն՝ այս հասցեյին համար հաւտուկ անվլոպ`եր շինել կուտամ, անոնք ալ նամակներով մեկտեղ բոստան կը ձգեմ։ (կերթա)։

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր Բ.

(Տեսարանն է Խորեն յեպիսկոպոսի խորհելու սենյակը)

ԽՈՐԵՆ — Զարմանալի բան... ամեն կողմե գլխ կուզեն... Ոստոսթը չգացի, Իզմի՞ր յերթամ մի, չե նե չերթամ... — յերթամ, յերթամ, բայց հոն վարպետ դերձակ մը կրնա՞մ գտնել. անա այս կետն է, վոր գլխ կը շվարեցնե։ Սա ալ կա, վոր Իզմիրցիք պիտի կրնա՞ն գլխ յերջանիկ ընել, այս կետը մութ է, չէ, չըլլար, չերթամ... յերթամ նե, ի՞նչ կըլլա... չերթամ նե, ի՞նչ կըլլա... գլխ առաջնորդ կուզեն յեղեր, յես ալ ինձի առաջնորդ մը կուզեմ, դյուրի՞ն է առաջնորդ մը գտնելը... վո՛չ, վո՛չ, չեմ յերթար, — չէ, չէ, յերթամ. չերթամ նե լրագրաց բերանը կիյնամ. վերջեն Պեշիքթաշն ալ ձեռքե կը փախցնեմ։ Ձէ, վորոշեցի, վոր յերթամ, բայց Պեշիքթաշեն ի՞նչպես բաժնվիմ, ո՜վ իմ յերջանիկ վայրկյաններս, (դառնապես կուլա), այո, դեռ յերիտասարդ եմ... (կը ցնորի) ի՞նչ կըլլա յեղեր... չեմ յերթար, չեմ յերթար, չեմ յերթար, յերբեք չեմ յերթար, Իզմիրն ալ գետնի տակն անցնի, Իզմիրցիներն ալ Վարդոտում, կայծակ Իզմիրի վրա, գլխ բաժնել կուզեն, չեմ ուզեր բաժնվիլ, (Երազյալ գեհենը կիյնա, այս միջոցին ենթակները ներս կը մտնան)։

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր Գ.

(Տեսարանն է Խորեն յեպիսկոպոսի վորոշում տալու սենյակը)

ԽՈՐԵՆ և ՀՐԱՎԻՐԱԿՔ

ՀՐԱՎ. — Արդյոք մեր ներկայությունն է, վոր ձեր սրբազնությունը շփոթեց։

ԽՈՐԵՆ — Վո՛չ... բան մը... բան մը չկա... ի՞նչու անանկ ըլլա... վոչինչ... ըստ վորում... զգայուն սիրտ մը... փափկություն... գլուխ՞ք, բանաստեղծ մը... ա՜, ա՜, բանտալոնս լայն ըլլալուն քիչ մը քեֆս ավրեցի... կաղաչեմ, չըլլա վոր կասկածիք, թե Իզմիր չեմ ուզեր կոր յերթալ։

ՀՐԱՎ. — Կը հուսանք, վոր սիրով պիտի հաճիք զմեզ հովվելու պաշտոնն ընդունիլ։

ԽՈՐԵՆ — Զեմ ըսեր, թե չեմ ուզեր գալ, բայց կրնան անանկ պարագաներ ըլլալ, վոր ստիպեն մարդս չերթալ։

ՀՐԱՎ. — Եյ, կան անանկ պարագաներ։

ԽՈՐԵՆ — Զեմ ըսեր, թե կան, բայց յեթե ըլլային, իրավ վոր շատ խիստ, շատ պիտի ցավեյի և վորուն համար իմ ցավակցությունս այժմեն կը հայտնեմ։

ՀՐԱՎ. — Ըսել է, վոր գալու չեք։

ԽՈՐԵՆ — Զեմ ըսեր, թե գալու չեմ։

ՀՐԱՎ. — Ըսել է, վոր գալու յեք։

ԽՈՐԵՆ — Զեմ ալ ըսեր, թե գալու յեմ։

ՀՐԱՎ. Ի՞նչ ըսել կուզեք։

ԽՈՐԵՆ — Ասանկ բաները բախտին ձգելու յե, կաղաչեմ, մտիկ ըրեք, թեք մի չիֆթ մը բռնեմ, թե վոր թեք ելլե նե՝ կերթամ, չիֆթ ելլե նե՝ չեմ յերթար, ասոր ըսելիք չունի՞ք յա։

ՀՐԱՎ. — Շատ աղեկ։

(Սրբազնությունը յերեք Ֆասուլյա կառնե, յերկուքը աջ ձեռքը յեվ մեկը ձախ ձեռքը դնելով, ձեռվները կը ցցե)։

ԽՈՐԵՆ — Նայեցեք ձեռվըներս գոց է, հիչ մեկերնիս չիտենք, թե վորն է չիֆթը. հիմա աջ ձեռքիս զարկեք, կը տեսնե՞ք, չիֆթ է, ըսել է, վոր չպիտի կրնամ յերթալ, բայց շատ կը ցավիմ չկրնալ յերթալուս վրա։ Կ՚աղաչեմ, շուտ մը հեռագիր քաշեցեք Իզմիր։

(Հրավիրակներեն մեկը գրիչը կառնե յեվ սա թելեգրաֆը կընե)։

«Պիզի առաջնորդ ուլաջաքլան թեք մի չիֆթ ոյանոըք՝ վէ Իզմիրե կելմամիշի լազըմ կըլտի նե ծըրինիզ ոլուր պիլտիրին կենե թեք մի չիֆթ մի ոյնայալըմ եոքսա թոքարա մը չեվիլերիմ»

Իմզա
Շնորհոքն Աստուծոյ
Հրավիրակլար

ՀՐԱՎ. — Մնաք բարով, սրբազան։

ԽՈՐԵՆ — Ցերթաք բարյավ, իրավ վոր ընավ չեյի ուզեր ասանկ ըլլալը (Հրավիրակները կերթան)։ Ցես ալ յերթամ, տուները պտտիմ, բոլոր կանանց ըսեմ, վոր զիս չը թողուն Իզմիր յերթամ։

ՎԱՐԱԳՈՒՅՐ Դ.

(Տեսարանն կը ներկայացնե ընդ. ժողով Պեշիքթաշցոց Այս ընդ. ժողովը կը բաղկանա յերկու անձե յեվ խանչոտ աթոռե)։

ՆԱԽԱԳԱՀ — Ինձի մտիկ ըրեք, առաջնորդնիս կուզեն ձեռքերնես հափշտակել, ասոր վրա պետք է վիճաբանինք, պաղ արյամբ խնդիրը քննենք, լուսաբանենք և վորոշում տանք, առաջնորդնիս չերթա, այո, չերթա. (բարձրաձայն) չերթա, չերթա։ (Չերթա, կրկնեցին Պեշիքթաշի լեռները յեվ լեռներու վիրոսմամբ վորոտվեցավ վոր չերթա)։

ԹՈՓԼՈ ՎԻՎԱՆ

Խորեն սրբազանը քահ-քահ կը խնդա, հրավիրակները լիբարու յերես կը նայեն։ Իզմիրի վարչությունը, Իզմիրի ծովեզերքը նստած՝ առաջնորդին գալուն կսպասե, քիչ մը անդին Հրեայք ալ Մեսիայի գալուն կը սպասեն։

«Մեղու» 1873, ապրիլ 21.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ. — Խառն ժողովի կողմից (տես № 10 ընտրված չորս կրոնական և չորս աշխարհական անձերից կազմված ժողովը վորին հանձնված էր ընտանեկան վեճերի կարգադրությունը։

2) ԱԶԳԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ. — Պոլսո հայոց հիվանդանոցը, վոր կոչվում է նաև Փրկիչ կամ Փրկչի հիվանդանոց, հիմնված և 1834 թ։

3) ՓՐԿԻՉ. — Տես (№ 2)։

4) ՋԵՆ ՀՈԳԵՎՈՐ. — Կրոնական բովանդակությամբ մի աշխատություն, վորի մի մասը հայատառ տաճկերենով է գրված, հեղինակություն Հակոբ Պատրիարք Նալյանի, Պոլիս 1757 թ։

5) ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ. — Այսպես կոչվում է ժողովածուն այն կանոնադրությունների, վորոնք հրատարակվեցին 1862 թ. և վորոնք վերաբերում են տաճկահայոց ազգային, յեկեղեցական և քաղաքական կյանքը վարող մարմինների կազմության և նրանց պարտավորությունների վորոշման։

6) ԱՐՎԵՍՏ ՅԵՐԿԱՅՆԱԿԵՑՈՒԹՅԱՆ. — «Առողջ, յերկայն և յերջանիկ ապրելու ուսումը»։ Հեղինակություն Անդրեաս Փոփովիչ Սուչավացի բժշկի. Պոլիս, 1850 թ։

7) ԹԱՂԱԿԱՆ. — Մի անդամը թաղական խորհրդի, վոր ընտրվում էր թաղեցիներից՝ տեղական դպրոցների և աղքատների նյութականով զբաղվելու և ժողովրդյան վեճերը կարգավորելու համար։

8) ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ. — Յերեսփոխանական ժողովի կողմից քվեների բացարձակ առավելությամբ ընտրված և սուլթանի հրամանով վավերացված 20 աշխարհականներից կազմված ժողովը, վոր վարում էր ազգային քաղաքական գործերը։

9) ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ. — Յերեսփոխանական ժողովի կողմից ընտրված 14 կրոնականներից կազմված ժողովը, վորին հանձնված էր տաճկահայերի կրոնական խնդիրների վերին հսկողությունը։

10) ԽԱՌՆ ԺՈՂՈՎ. — կրոնական (տես № 9) և քաղաքական (տես № 8 ժողովների միացյալ ժողովը։

11) ՄԱՍԻՍ. — 1852 թ. հիմնվել է Պոլսում իբր շաբաթաթերթ, շարունակվել է մինչև 1900-ական թվականները փոփոխակի և՛ իբր ամսաթերթ և՛ իբր օրաթերթ, հիմնադիր՝ Կ. Ութուճյան։

12) ԺԱՄԱՆԱԿ. — Կիսամսյա թերթ, Պոլիս. 1863—1864 թ. խմբ. Ստեփան Փափազյան։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՀ Арм. ССР
ԱՆ. Ա. МЯСНИКЯНА

13) ՄԱԼԱՔՈՖ. — Այսպես կոչվում էր լայն կոնքերով կանացի շրջազգեստը, որը գործածական էր մինչև անցյալ դարու կեսերը։ Բայց Մալաքոֆը միաժամանակ Սևաստոպոլը պաշտպանող նշանավոր ամրոցն էր, որը 1855 թ. գրավվեցավ։ Պարոնյանն այստեղ յերկու գաղափարների հետ բառախաղ է կատարում։

14) ՆՈՅ ՆԱՀԱՊԵՏ. — Ըստ հրեական առասպելի՝ Նոյ ազատվում է ջրհեղեղից իր ընտանիքի հետ, նրա տապանը (նավը) նստում է Արարատ լեռան վրա։

15) ՊԱՐԿԱՅՔ. — Դժոխքի յերեք աստվածուհիները, որոնք, ըստ առասպելի, հյուսում էյին մարդկային կյանքի թելը։ Նրանցից մեկը բռնում էր ալեկատը, մյուսը մանում էր, իսկ յերրորդը կտրում էր։

16) ՈԼԻՄՊՈՍ. — (Օլիմպոս)։ Անունն է այն լեռան, որ գտնվում է Մակեդոնիայի և Թեսալիայի միջև, որի վրա, ըստ Հունական առասպելի, բնակվում էյին աստվածները։

ԲԱՌԱՐԱՆ

Ա.

Ազգի ազգի — տեսակ տեսակ
Ալմաներեն — գերմաներեն
Ամոլ — զույգ ամուսիններ
Անագորույն — անգութ
Անուշադրի փոշի — նաշադիրի սպիրտ
Աշխարել — ողբալ
Աշխարհ մտնել — ամուսնանալ
Ասվի — բրդեղեն
Արտորալ — շտապել
Աֆյոն — քերիաթին

Բ.

Բանդալոն — շալվար
Բանբուշկա — մուճակ, տուֆլի
Բանը բուսավ — բանը բուրդ է
Բզիկ բզիկ անել — պատառոտել
Բիես — պիես
Բոկ — բոկոտն, բոբիկ
Բոստա — փոստ

Գ.

Գանակոծում — ծեծ

Դ.

Դեմք — Գործ է ածված դիմակի մտքով
Դրսեցի — ոչ տեղացի (ոչ պոլսեցի)

Ե.

Երիցուկ — մի անուշահոտ բույս, սիրել սիրել

Ը.

Ընկվիներ — ունքեր

Ժ.

Ժիլե — ժիլետ, բաճկոնակ

Ի.

Ի միջոց բառնալ — մեջ տեղից վերացնել
Ինչոր — ինչպես
Ի սպեսս — պետքի համար

Լ.

Լաթ — ջոր, կտավ

Խ.

Խալսել — ազատվել
Խել մը — մի խումբ, բավականաչափ
Խից — խցան
Խոսկապ — նշանդրեքից առաջ համաձայնություն
Խպնել — ամաչել, խիպ — ամոթ
Խռվել — զառամել

Ծ.

Ծաղ ու ճռավակ — ծաղր ու ծանակի առարկա
Ծեքեվեքել — դատարկաբանել

Կ.

Կականաբարձ — ողբաձայն լաց լինել
Կաղամար — թանաքաման
Կանգուն — կազ (յերկարութ. չափ, մոտավ. 1/2 մետր)
Կարկել (չար լեզուներ) — լռեցնել, փակել
Կից տալ — աքացի տալ

Հ.

Հանգուցիչ—հանգեցնող, հանգստացնող
Հասցունել—վերջացնել, սպառել
Հոսկից—այստեղից
Հրավիրակ—հրավիրող

Ճ.

Ճեպել—շտապել

Մ.

Մուճակ—մաշիկ, փոշնաման

Ն.

Նամակատուն—փոստ
Նաթուրա—բնություն, բնավորություն

Շ.

Շողոմարար—շողոքորթ

Ո.

Ունկնախից—ականջը փակող

Չ.

Չախել—հանդիմանել
Չիֆթ—զույգ
Չվառուական—թշվառական

Պ.

Պարարել—գիրացնել. փոխաբերական մտքով զմայլեցնել, հաճույք պատճառել, (հոգեպարար)
Պատրվակել — պատրվակ (բահանա) բերել
Պիտոր—պետք է որ
Պլըրվիլ—փարվել
Պորտոյի գինի—բորդոյի գինի
Պռույգ—ոճիր

Ս.

Սակառ—քթոց, կողով
Սանկ—այսպես
Սառ—սառույց
Սգվիլ—զուգվել, զարդարվել
Սեղանավոր—դրամափոխ, սառաֆ
Սրկե—այստեղից, սրանից
Սրվոր—սրան
Սուղ ծախել—թանկ ծախել
Սուղի նստիլ—թանկ նստել
Ստակ—դրամ, փող

Վ.

Վայլել—սազ գալ, վայելել
Վողոքել—սիրտը առնել, համոզել

Տ.

Տոտոփիկ—թութուշիկ, թումբուլիկ

Ց.

Ցմռսկած—զառամած

Փ.

Փախուկ—բախուկ, գիվահար, խելագար
Փոքրավոր—սպասավոր
Փրցնել—պոկել

Ք.

Քոզմիր—քիշմիր (կտորեղեն)
Քամեյա—կամեյա, գեմմա. մանր և կարծր քարի վրա փորագրված պատկեր
Քաբիճե—զաղիֆա, թամբիշ
Քառագյոզ—զարագյոզ, բառացի՝ սևաչյա. արևելքում փոքր եկրանի վրա ցույց տրվող ստվերապատկերների ներկայացում և այդ ներկայացման գլխավոր հերոսը
Քարյոլա—մահճակալ
Քրավադ—հագուստի վիզ, օձիք

Ֆ.

Ֆաթուրա—կերպասեղեն կտորների նմուշներ մի կազմի մեջ
Ֆառուլյա—[illegible]

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Խմբագրության կողմից	5
Պաղտասար աղբար	7
Ատամնաբույժն արևելյան	81
Երկու տերով ծառա մը	175
Պռույգ	211
Շողոքորթը	231
Չորս վարագույրով կատակերգություն մը	277
Ծանոթություններ	283
Բառարան	285

Գլ. 7487(ր) Հր. 2207 պ. 1570 տ. 1000

ՀՀ Ազգային գրադարան
NL0357052

49975

891.99
Ղ-34